Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3385

Дмитрій Шпунтъ
Тетиевъ

1872

82
U-58

ԻՎԱՆՕԷ

ՀԵՂԻՆԱԿ

ՎԷՕԼԹՐ ՍՓՕԹ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԵՍՆԿԼԻՍԱԿԱՆԷ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀԱՏՈՐ Գ.

ՑԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

Զմիւռնիա

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1873

Սակայն՝ ահաւասիկ ձեռքս բռնէ՝ իբրև նշան որ այսուհետև քեզի հետ կռփամարտելու փափաք չունիմ՝, քանի որ գրաւս կորուսի։ Վերջ տանք ամէն թշնամութեան։ Հիմակ հրէայն փրկանքի դատապարտեցաւ, քանի որ ինձն իր մորթը չփոխեր և հրէայ մնալու կ՝յամառի։

— Քահանան — ըսաւ Գլէմենդ — հրէին վերադարձին նկատմամբ իր վատահութիւնը կիրառէին կորոյս՝ ակամէն լաւ հարուած մ՝ընդունելէն վեր։

— Կարի՛ր, անզգամ՝, ինչ կ՝վայրաբանես վերադարձի վրայ — ըսաւ Ջնաւորը — միթէ յարգանքը վերցա՞ւ այս վայրէս։ միթէ ամէնքը ուրո՞ւրեն են և սպասաւորներ չմնացին։ Գիտցի՛ր, անպիտան, որ փոքր ինչ յոգնած էի երբ բարի ասպետին հարուածն ընդունեցի, ապա թէ ոչ անեսան պիտի կենայի իմ տեղս։ Բայց եթէ այս կիսին վրայ առնէի այսպանեա՝ այն ատեն պիտի հասկնաս որ միշտ ընդունածիս չափովը կ՝հատուցանեմ։

— Ամէնքիդ ալ լուեցէք — ըսաւ հրամանատարը — և դու, հրէայ, քու փրկանքիդ ճարը նայէ։ պէտք չունիս խնդրելու որ քուցիդ բոլոր քրիստոնեայ հատարակութեանց մէջ անիծեալ ցեղ մը կ՝համարուի, և վասն հ եղիր որ չենք կարող քու ներկայութեանդ հանդուրժել այս տեղ։ Ուստի ընելիք պարտկիդ վրայ մնացէ, մինչդեռ ես ուրիշ տեսակ գերի մը հարց ու փարձ ընելու պիտի երթամ։

— Արդեօք Գրօն-տը-Պէօյի զինուորներէն շատերը գերի ընկան — հարցուց Սև ասպետը։

— Փրկանք տալու կարող նշանաւոր գերի մը չկայ — պատասխանեց հրամանատարը։ — Սատրին կարդէ խել մը գերիներ կային և ամենց Ճամբայ առին որ երթան նոր տէրերը փնտռեն, վրէժխնդրութեան և շահու համար արդէն բաւական գործ տեսանք։ բոլոր խումբը սիրուն քառորդն իսկ չէր արժեր։ Իմ ակնարկած գերիս բաւական աւար մ՝է։ Զուարթներես կրօնաւոր մ՝է որ իր սիրուհւոյն այցի երթը էր։ Ձիով, ինչպէս որ կարող եմ դատել իր արդ ու զարդէն և երիսարին ճոխ թանկէն։ Ահա կ՝գայ արժանապատիւ եպիսկոպոսը՝ պալատականի պէս կայուտ։

Եւ նոյն պահուն՝ վառարակ հրամանատարին դալարաւէտ ամիտին առջև երևցաւ մեր բարեկամը՝ Ժորվէյի վանահայրը, Էյմէրը։ 45

ԳԻՇՈՒՄ ԼԳ

— Մարտիկներու ծաղիկդ,
Ի՞նչ ջրի մէջ է Ցիտոս Լարտիոս,
Մարդէ՞ն կ'ամանի վճիռներով գրաղած մարդու,
Որ ոյս 'ի մահ, այն՝ յաքսոր կ'դատապարտէ,
Ոսոր փրկանք կ'տայ կամ գուրթ, միւսին սպառնալիք։
Գոբիէլեան։

Գերի վանահօր կերպարանն ու կերպերը վիրաւոր դուռզուլթեան հետ խառն այլակերպ անապատութիւն և մարմնական սարսափ կը յայտնէին այլանդակ կերպով մը։

— Լաւ ուրեմն, ինչ կ'ուզէք, իմ տէրերս — ըսաւ նա այնպիսի ձայնով մ'որմէ այն երեք այլայլութիւնը կ'տեսնուէին։ — Ինչ կ'նշանակէ ձեր ընթացքը։ Թիւրք էք թէ քրիստոնեայ որ այսպէս կ'վարուիք եկեղեցւոյ պաշտօնէի մը հետ։ Միթէ գիտէք թէ ինչ ըսել է manus imponere in servos domini (Աստուծոյ ծառաներուն վրայ ձեռք երկընցընել)։ Իմ բոլոր արկղներս թալլեցէք, իմ գեղեցկահիւս նաւիորդս՝ որ կարտէնալի մ'արժանի էր, պատառ պատառ ըրէք. իմ տեղս ուրիշ մը յեղ կ'քանդիմ սպառնալեաց պիտի դիմէր, բայց ես ներող եմ, և եթէ իմ նժոյգներս ինձ դարձընէք, թէ որ իմ եղբայրներս արձակէք, իմ արկղներս ետ տաք, եթէ շուտ մը հարիւր պսակ (6 ֆրանք) վճարէք որպէս զի Ժօրվէյի մայր խորանին առջև պատարագ մատուցանեմ, և եթէ ուխտ ընէք մինչև գալ Հոգեգալստին հրէի մէս չուտել, այն ատեն թերևս այս յիմարական գործին վրայ բերանս չեմ բանար։

— Հայր սուրբ — ըսաւ վտարակներու պարագլուխը — յաւօր սրտի կ'իմանամ որ իմ զիւտրներուս կողմէ այդպիսի ընթացք մը կրած լինիս, որ քու հայրական յանդիմանութեան արժանի է։

— Ընթացք — կրկնեց քահանան՝ անտարբեր պարագլխին անուշ ձայնէն սիրտ առնելով — այնպիսի ընթացք քաջագոյն շան մ'անզամ չէր վայլեր ցուցընել, ուր Մեաց քրիստոնէի մը, և սուտուել քահանայի մը, և 'ի վեր քան ամենայն Ժօրվէյի սրբակրօն միաբանութեան վանահօր։ Ահա ասա է զինարբու և պերճ վիսպասան մ'որուն անունն է Ալէն-է

—Տէլ, որ մարմնական պատիժ տալու սպառնայ ինձ, մինչև անգամ մահացընել, եթէ իրեն չվճարեմ չորս հարիւր պսակ փրկանք՝ այն գանձերէն զատ՝ զոր իշնէ արդէն գողցած էր, նոյնպէս ոսկի շղթաներ և մեծագին մատանիներ, չեմ յիշեր այն ամէն բաներն որ կոշտ ձեռքեր խորտակեցին, ինչպէս իմ փոշիի տուփս և գանգուր շինելու համար իմ արծթէ ունելիներս։

— Անկարելի է որ Ալէն-է-Տէլ քեզի պէս բարձրագիր անձի մը հետ այդպէս վարուած լինի — պատասխանեց հրամանատարը։

— Եւ սակայն Նիկոդիմոսի Աւետարանին չափ ստոյգ է այս ըսածս — յարեց վանահայրը։ — Ձեր հիւսիսային աշխարհին յատուկ սոսկալի երդումներով պնդեց որ անտառին ամենէն բարձր ծառէն գիս պիտի կախէ։

— Մինթէ այդպէս իրօք ըսա՞ւ — հարցուց Լոքսլէյ։ — Ուրեմն, իմ վերապատուելի հայրս, կ'յորդորեմ քեզ անոր հրամանին հնազանդիլ. վասն զի Ալէն-է-Տէլ այսպէս անգամ մը խօսք տալէն ետև, իր խօսքը կ'պահէ անվրէպ։

— Կատակ ընել կ'ուզես — ըսաւ վանահայրը զարմացած և բռնաբռնսիկ ծիծաղով մը — և ես բոլոր սրտով կ'սիրեմ աղուոր կատակ մը . . . ։ Հա՛ . . . հա՛ . . . հա՛. բայց երբ խնդութիւնն բոլոր գիշեր տևէ, պէտք է առտու ծանրագլուխ լինիլ։

— Ես ալ խոստովանահօր մը պէս ծանրագլուխ եմ — պատասխանեց վտարակը — պէտք է որ կլորիկ փրկանք մը վճարես, տուրբ հայր, թէ ոչ հաւանական է որ վանական միաբանութիւնը պիտի հրաւիրուի նոր ընտրութիւն մ'ընելու, վասն զի ամիսոդ նորէն չպիտի նստիս։

— Մինթէ քրիստոնեայ էք — ըսաւ վանահայրը — դուք որ այդ չեղուն կ'գործածէք եկեղեցականի մը հետ։

— Քրիստոնեայ ենք անշուշտ, և այս բաւական չէ, քահանայ մի ալ ունինք մեր մէջ — պատասխանեց Լոքսլէյ։ — Թող մեր զուարթ երէցն առաջ անցնի, և հայր տուրբին բացատրէ Ս. Գրոց այն մասերն որ այս պարագայիս կ'վերաբերին։

Ճկնաւորն՝ կէս գինով կէս արթուն՝ իր կանաչ գգեստին վրայէն կրօնաւորի մաշած պատմուճանը կէս մը հագած՝ իր մանկութեան առեն ինչ որ կիսկտուր սորվեր էր միտքը բերաւ և ըսաւ.

— Հայր տուրբ, Deus faciat salvam benigniatem vestram. քարի առաքեցար այս անտառիս մէջ։

— Այս ինչ սրբապիղծ միմռութիւն է — գոչեց վանահայրը։ —

Բարեկամ, եթէ իրաք եկեղեցւոյ պաշտօնեայ մ՚ես, լաւագոյն գործ մ՚ըրած կ՚լինիս եթէ օգնես ինձ այս մարդոյ ձեռքէն ազատելու, քան թէ պարանոցիդ պէս այս տեղ ծեքծեքելու և ծռմրկելու։

— Իրաւ որ, վերապատուելի Հայր — ըսաւ Ճգնաւորը — քեզի համար ազատումի Ճար մը միայն կ՚տեսնեմ. մեզի համար այսօր Ս. Անդրէի տօնն է, և մեր տասանորդը կ՚հաւաքենք։

— Բայց յուսամ որ եկեղեցիէն ալ տասանորդ չէք առնուր, իմ բարեսիրտ եղբայրս — ըսաւ վանահայրը։

— Թէ եկեղեցական թէ աշխարհական գասէն կ՚առնունք — ըսաւ Ճգնաւորը — ուստի, Հայր սուրբ, facite vobis amicos de momone iniquitatis, անօրէնութեան Մամոնի բարեկամներու հետ հաշտեցէք, այս բարեկամութիւնը միայն կարող է քեզ դժուարութենէ ազատել։

— Սրտովին կ՚սիրեմ վաւելուն անտառորդը — ըսաւ վանահայրն՝ իր ձայնը մեղմելով — ծո, պէտք չէ որ ինձի հետ այդչափ խստիւ վարուիք. ես ալ որսորդութեան հրահանգաց վարժ եմ և կարող եմ յստակ և արիապէս փող հնչել և այնպէս զոչել որ ամէն կաղնի թնաց։ Ա՛ղէ, պէտք չէ որ ինձի հետ խստիւ վարուիք։

— Շեփոր մը ստէք անոր — ըսաւ Լօքսլէյ — պիտի դատենք անոր Ճարպիկութիւնն որու վրայ այնքան կ՚պարծի։

Էյմէր վանահայրը շեփոր մ՚առաւ և հնչիւն մը հանեց։ Հրամանատարը գլուխն օրեց։

— Ս. վանահայր — ըսաւ — զուարթագին հնչիւն մը կ՚հանես, բայց այն չփրկեր քեզ։ Ձենք կարող հաւանիլ, ինչպէս որ քաջասպետի մը վահանին վիպասանը կ՚ըսէ, արձակել քեզ լոկ փողի մը հնչիւնը լսելով. դու այն սեռակ նուագածուներէն ես որ գաղղիական նոր շնորհներով և դր-է-ր-ներով՝ անկլիական հին շեփորի ձայնապրեսը կ՚այլայլեն։ Վանահայր, այդ քու շեփորիդ վերջին շունչն քու փրկանքիդ յիսուն պսակ ես առեր։ Վասն զի որսորդութեան հին ձայներու ոյժն ու պարզութիւնը խանգարեցիր։

— Շատ լաւ, բարեկամ — ըսաւ վանահայրը դժկամակութեամբ — որսորդութեան մասին շատ բծախնդիր ես, բայց կ՚աղաչեմ փրկանքիս մասին աւելի իրաւասէր եղիր։ Մէկ խօսքով, քանի որ միանգամ և եթ՝ պարտաւոր եմ տասանորդը վառել, ինչ փրկանք կ՚պահանջէք որպէս զի Վօլտին փողոցը՝ առանց եռեւէս քառասուն մարդ ուղեղնալու՝ ազատօրէն պտըտիմ։

— Միթէ աւելի յարմար չ՚լինիր — ըսաւ գնդին տէ[illegible] հրա-

մանատարին ականջէն վար — որ վանահայրը հրէին փրկանքն որոշէ և հրէայն ալ վանականները։

— Դու անզգամ յիմար մ՚ես — ըսաւ հրամանատարը — քայց խորհուրդդ սքանչելի է։ Նայինք, հրէայ, առաջ անցիր, գիտէ անգամ մը սա հայր Էյմէրը, Ժօրվէյի հարուստ մենատանին վանահայրը, և ըսէ մեզ թէ ինչ փրկանք գնենք անոր վրայ։ Դու անոր մենատանին և կամուտը գիտես, և այս մասին տարակոյս չունիմ։

— Ո՛հ, անշուշտ գիտեմ — ըսաւ Իսահակ — ես առուտուր ըրած եմ այս վանականներուն հետ, ալիւր, գարի, պտուղ և շատ բուրդ գնած եմ անոնցմէ։ Ո՛հ, Ճոխ մենատան մ՚է. կեր ու խումը սքանչելի է, ամենէն պատուական գինին կ՚խմեն, Ժօրվէյի այս բարեմիտ վանականները։ Ո՛հ, եթէ ինձի պէս հէք տարագիր մ՚այնպիսի տան մը տէր լինէր և այնչափ տարեկան և ամսական հասոյթներ ունենար, շատ ոսկի և արծաթ պիտի տայի իմ գերութենէս ազատելու համար։

— Շանեբրես հրէայ — գոչեց վանահայրը — ո՛չ ոք քու անիծեալ անձէդ լաւ ես տեղեակ է որ մեր Աստուծոյ տուրը տունը՝ դպիրներու դասը շինելու համար պարտքի տակ ընկաւ . . .։

— Եւ ձեր շահմարանները համբարելու համար՝ անցած տարի՝ Կապքոնցի գինիով — ընդհատեց հրէայն — բայց այս, այս թեթև մէկ պարագայ մ՚է։

— Կ՚նայի՞ս սա անհաւատարիմ շունը — գոչեց վանահայրը — կ՚զոզանչէ իբր թէ մեր սրբակրօն միաբանութիւնը պարտքի տակ ընկաւ այն գինին համար զոր խմելու արտօնութիւն ունինք, propter necessitatem, et at frigus depellendum, — հրէն և ցուրտը փարատելու համար։ Թլփատեալ անզգամը մեր սուրբ եկեղեցւոյն դէմ կ՚հայհոյէ, և քրիստոնեայ մարդիկ անոր խօսքը մտիկ կ՚ընեն առանց պատժելու։

— Այս ամէնը մեր գործին օգուտ մը չունի — ըսաւ հրամանատարը։ — Իսահակ, ըսէ մեզ թէ ինչ գումար կարող է նա վճարել առանց անոր մորթին և մազին դպելու։

— Վեց հարիւր պսակի գումար մը — ըսաւ Իսահակ — և դարձեալ բարեսիրտ վանահայրն իր կակուղ աթոռին վրայ կրնայ նստիլ։

— Վեց հարիւր պսակ միայն — ըսաւ հրամանատարը ծանրօրէն — անով գոհ կ՚լինիմ, քաջորոշում մ՚ըրեր ես, Իսահակ, վեց հարիւր պսակ, այս է մեր վճիռը, պատուական վանահայր։

— Վճի՛ռ մը, վճի՛ռ մը — գոչեցին վտարականները։ — Նոյն իսկ Սողոմոն ասկից աւելի յարմար գումար մը չէր կրնար որոշել։

— Դատապարտութիւնդ լսեցիր, վանահայր — ըսաւ Լաբսլէյ։

— Դուք խենդ էք, տեարք իմ — ըսաւ վանահայրը։ — Այդչափ գումար մ՚ուր պիտի գտնեմ։ Եթէ Ժօրվէյի խորանին սկիհն և աշտանակներն իսկ ծախեմ հազիւ թէ այդ գումարին կէսին չափ կրնամ ձեռք ձգել, այս գործին համար հարկ պիտի լինի ինձ անձամբ երթալ՝ ի Ժօրվէ։ Իմ երկու քահանաներս իրրև պատանդ պահեցէք։

— Ցնորական պատանդներ են առաջարկած քահանաներդ — ըսաւ Լաբսլէյ — մենք քեզ պիտի պահենք, վանահայր, և անոնք պիտի ճամբայ հանենք որ երթան քու փրկանքդ բերեն։ Նոյն միջոցին պիտի մեծարենք քեզ բաժակ մը գինի և երէի պատառ մը. իսկ եթէ որսորդութիւն կ՚սիրես, հանդիսատես պիտի լինիս այնպիսի որսի մը զոր քու հիւսիսային բնիկներդ երբէք տեսած չեն։

— Դամ եթէ կ՚հաճիք — ըսաւ Իսահակ՝ վտարականերու շնորհը շահելու մտօք — վեց հարիւր պսակը բերելու համար մարդ կրնամ ղրկել, որպէս զի քովս առանդ կեցած գումարէ մ՚առնուն բերեն, բաւական է որ վերապատուելի վանականն ինձ պարտամուրհակ մը տալու բարեհաճի։

— Ուզածդ քեզի տալու պատրաստ է, Իսահակ — ըսաւ հրամանատարը — և դու՝ վանականին փրկանքին հետ քովդ ալ պիտի վճարես։

— Ի՞մս ալ — ըսաւ հրէայն։ — Ո՛ արիասիրտ որսորդներ, ես յուսահատ և ողորմելի մարդ մ՚եմ, եթէ յիսուն պսակ միայն վճարեմ, ինձ մնալիքը մուրացկանի մը դաւազանը պիտի լինի։

— Վանականն այդ կէտը պիտի վճռէ — պատասխանեց հրամանատարը։ — Դու ի՞նչ կ՚ըսես այս մասին, հայր Էյմէր։ Միթէ հրէայն մեծկակ փրկանք մը կարող է հատուցանել։

— Եթէ կարող է հատուցանել — պատասխանեց վանականը։ — Միթէ նա Եօրքցի Իսահակը չէ՞, Իսահակն՝ որ բաւական հարուստ է՝ Իսրայէլի տան ցեղերն՝ որ Ասորեստան իրրև գերի գացին, կարող է փրկել։ Ես զինքը շատ լաւ չեմ ճանչեր, բայց մեր մառանապետն ու գանձապետը շատ գործեր ըրած են անոր հետ, և համբաւը կ՚ըսէ թէ՝ իր Եօրքի տունն այնքան ոսկի և արծաթ ունի որ ամօթ է քրիստոնեայ երկրի մը համար այսպիսի բան մը։ Բոլոր քրիստոնեայ սիրտեր կ՚զարմանան որ այսպիսի կրծան իժեր ներուին պետութեան և նոյն իսկ տուրք եկղեցւոյ ծուծը քամելու, տարապայման վաշխերով և զօշապաղութեամբ։

— Ձեր հայրը — ըսաւ հրէայն — քիչ մը բարկութիւնդ մեղմէ և հանդարտէ։ Պաղաչեմ ձեր վերապատուութիւնը յիշելու որ մարդ մը չեմ բռնադատեր իմ ստակս փոխ առնելու։ Բայց երբ եկեղեցական և աշխարհական, իշխան և վանական, ասպետ և քահանայ Իսահակին տան դուռը զարնելու կ'գան՝ այդպիսի անմարդավար ոճով իրեն ստակը փոխ չեն առնուր։ Ան ժամանակ — բարեկամ Իսահակ կ'ըսեն, միթէ կ'հաճի՞ս պարտաւորել մեզ այս պարագայիս մէջ, վճարման պայմանաժամին ստակը կ'ընդունիս։ Թող Աստուած վկայ լինի խոստմանս։ Կամ այսպէս կ'ըսեն, բարեսիրտ Իսահակ, եթէ երբէք մարդու ծառայելու տրամադիր ես, ինքզինքդ այս առթիւ բարեկամ ցցուր։ Իսկ երբ պայմանաժամը կ'լրանայ, և իմ ստակս կ'պահանջեմ, ինչ կ'լսեմ, եթէ ոչ — դարշելի հրէայ, թող Եգիպտոսի անէծքը քու ցեղիդ վրայ իջնէ, և վերջապէս ամէն ինչ որ անոպայ և կոշտ խուժան մը կարող է գրդռել հէք օտարներու դէմ։

— Հայր սուրբ — ըսաւ հրամանատարը — որչափ որ հրէայ է, ըսածը քիչ շատ ճշմարիտ է։ Ուստի, դու ալ իր փրկանքն որոշէ, ինչպէս դա քուկդ որոշեց՝ առանց ծանր խօսքեր ըսելու։

— Ո՛չ ոք, այլ միայն մէկ latro famesus,* և այս խօսքին մեկնութիւնն ուրիշ անգամ պիտի տամ — ըսաւ վանահայրը — ուր՝ քրիստոնեայ եպիսկոպոս մ'անմկրտեալ հրէի մը հետ հաւասար կ'դասէ։ Բայց որովհետև կ'պահանջես որ այս թշուառականին փրկանքն ես որոշեմ, ահա կ'ըսեմ որ մեծ ֆեսատով պիտի ելնէք եթէ անորմէ հազար սպանիէ բէնների մը պակաս առնուք։

— Ահա վճի՛ռ մը, վճիռ մը — ըսաւ հրամանատարը։

— Վճիռ, ընտիր վճիռ մ'է — զոչեցին աղեղնաւորները — քրիստոնեայն իր կենցաղագիտութիւնը յայտնեց, և մեզի հետ աւելի վեհանձնութեամբ վարուեցաւ քան հրէայն։

— Նախահարցս Աստուած, ինձ օգնութեան հասիր — ըսաւ հրէայն — միթէ կործանեալ արարած մը ճշմ՞ալ կ'ուզես։ Այսօր անզաւակ եմ, և միթէ իմ ապրուստէս ալ դիս պիտի զրկես։

— Հրէայ, որչափ քիչ զաւակ ունենաս, այնչափ ծախսդ քիչ կ'լինի — ըսաւ Էյմէր։

— Աւաղ, տէր իմ — ըսաւ Իսահակ — ձեր օրէնքը չներեր դիտնալու թէ որչափ մեր հոգեծին զաւակը կապուած է մեր սրտին ջիղերուն հետ։ Ո՛ Ռեպեկա, իմ սիրական Ռաքէլիս դուստրը, եթէ այս

*Եւանգելի աւազակ։

ծառին մէն մի տերևն ոսկի լինէր, և մէն մի ոսկին իմն, այս բոլոր հարստութիւնը պիտի տայի իմանալու համար թէ արդեաք կենդանի՞ ես և նաղովբեցիին ձեռքէն ազատո՞ր ես։

— Միթէ աղջիկը սև մազեր չունէր — հարցուց վտարականերէն մին — և միթէ նուրբ և արծաթահիւս շղարշով մը ծածկած չէր իր երեսը։

— Այո՛, այո՛ — ըսաւ ծերունին, անհամբերութենէ զողզողալով ինչպէս երբեմն երկիւղէն։ — Յակոբայ օրհնութիւնը քու վրադ լինի. միթէ կրնա՞ս լուր մը տալ ինձ անոր վրայ։

— Ուրեմն քու աղջիկդ էր այն — ըսաւ վտարականը որ զոռոզ տաճարականին ձանկին ներքև ընկեր էր, երբ երկուքն մեր զօրաց կարդերէն անցան։ Աղեղս լարեր էի անոր նետ մ՝ուղղելու համար, բայց անոր խնայեցի օրիորդին պատճառաւ, որ թերևս իրեն ինամէր։

— Ո՛հ, պատասխանեց հրէայն — երանի՛ թէ նետդ նետէիր, եթէ նետդ աղջկանս սիրտն իսկ ծակէր։ Լաւագոյն է իր հարց գերեզմանը քան թէ վատաշուք և վայրենի տաճարականին անկողինը։ Ո՛ Եղիսաբիան, Եղիսաբիան, իմ տանս փառքը մարեցար։

— Բարեկամներս — ըսաւ հրամանատարն իր շուրջ կողմը նայելով — այս ծերունին հրէայ մ՝է, սակայն իր վիշտը սիրտս կ՝շարժէ։ Մեզի հետ անկեղծօրէն վարուէ, Իսահակ, ըսէ ինձ, միթէ հազար ոսկի վճարելովդ բոլորովին անարծաթ կ՝մնա՞ս։

Իսահակ՝ յանկարծ իր երկրային զանձերը յիշելով՝ որոց սէրը՝ անբուժելի տխրութեան մ՝ուժով, իր հայրական սիրոյն անդամ կ՝յաղթէր, զոյնը նետեց, կմկմայ և չկրցաւ ուրանալ որ դարձեալ տեղորդ դումար մ՝իրեն պիտի մնայ փրկանքը վճարելէն ետև։

— Լա՛ւ, թող այդպէս լինի, եթէ տեղի ստակ ևս ունենաս — ըսաւ հրամանատարը — դարձեալ անոր աչք չունինք։ Ուստից ստակի՝ որչափ հնարին է Պրայն տը Պուա-Կիլբերի ճիրանէն զատակդ ազատել, նոյնքան կարելի է եղջերու մը զարնել անծայր նետով մը։ Մենք Էյմէր վանահօր վրայ դրուած փրկանքի չափ պիտի պահանջենք քեզնէ, կամ լաւ ևս, հարիւր պսակի չափ պակաս, և այս հարիւր պսակի կորուստն ես պիտի կրեմ մասնաւորապէս և ասով իմ պարկեշտ զինակիցներուս ձեռաս մը չպիտի հասցընեմ. և այսպէս պիտի ազատինք այն քինախնդիր թշնամանքէն թէ մի և նոյն փրկանքի կ՝դատապարտենք հրէայ վաճառական մը և քրիստոնեայ եպիսկոպոս մը. իսկ քեզի վեց հարիւր պսակ պիտի մնայ որպէս դի պէտք եղած փրկանքը վճարես

աղջկանդ ազատութեան համար։ Տաճարականները կ'սիրեն արծաթէ դրամներու փայլն որչափ որ կ'սիրեն երկու գեղեցիկ սև աչաց փայլը։ Ուստի շուտով քու ոսկիներդ դնա հնչեցուր Պուա–Կիլպէրի ականջին՝ մեծապոյն ազէտից առաջն առնելու համար։ Ինչպէս որ իմ ուսահաւորդներս իմացուցին ինձ, տաճարականը սիրտ գտնես իր Ուխտին Ապարանը։ Մի թէ կ'հաւանիք ըսածիս, իմ՝ արի ընկերներս։

Գեղամարտիկներն՝ ըստ սովորութեան՝ հաւանեցան հրամանատարին խորհրդին, և Իսահակ՝ իմանալով որ իր աղջիկը տակաւին կենդանի է և կրնայ անոր ազատութիւնը ձեռք ձգելիանքով, իր երկիւղներուն կէսը փարատեց, վեհանձն Լաբալէյի ոտքն ընկաւ և իր մօրուսն անոր կոշիկներուն շփելով՝ անոր կանաչ վարպետական քղանցքը համբուրելու կ'ջանար։ Հրամանատարն ետ քաշուեցաւ, և հրէին ձեռքէն ինքզինքը պրծեց՝ արհամարհութեան նշաններ յայտնելով։

— Օ՛ն, ազատա մարդ, ոտք ելիր. ես բնիկ անկլիացի եմ և այդպիսի աբեւելեան երկրպագութիւններ չեմ սիրեր։ Աստուծոյ առջև ծունր դիր և չէ թէ ինձի պէս հէք մեղաւորի մ'առջև։

— Այո՛, հրէայ — ըսաւ վանահայրը — Աստուծոյ երկիրպագէ, որուն ներկայացուցիչն է իր խորանին սպասաւորը. և ո՛ գիտէ, եթէ անկեղծօրէն ապաշաւես և սուրբ Ռոպէրդի մասունքին պարգևներ մատուցանես, թերևս շնորհ գտնես քու անձիդ և քու Ռեբեկա աղջկանդ համար։ Կ'ցաւիմ այն նորաբոյս օրիորդին վրայ, վասն զի գեղանի և վայելուչ դէմք մ'ունի. զինքն Էշպիի գուպարին տեսայ։ Պուա–Կիլպէր մարդ մ'է որուն վրայ ազդեցութիւն ունիմ, ուստի ջանա իմ բարեխօսութիւնս ստանալ անոր մօտ։

— Աւա՛ղ, աւա՛ղ — գոչեց հրէայն — ամէն կողմէ ինձի դէմ աւարտուններ կ'ելնեն. իբրև Ճարակ կ'ընծայիմ Աստուծոյ կեղեքիչ ազգին։

— Եւ քու անիծեալ ազգդ ուրիշ ինչ Ճակատագիր ժառանգեց — հարցուց վանահայրը։ — Ի՞նչ կ'ըսէ այս մասին Ս. Գիրքը. verbum Domini projecerunt, et sapientia est nulla in eis — 'Ի քաց մերժէին զբանն Աստուծոյ, և իմաստութիւն ոչ բնակէր ընդ նոսա. propterea dabo mulieres eorum exteris — Տացէ զկանայս նոցա տարտաց, այսինքն՝ այս պարագայիս մէջ՝ տաճարականին. et thesauros eorum hæredibus alienis — և զգանձս նոցա այլոց — ինչպէս այժմ՝ այս բարեկիր որսորդներուն։

Իսահակ խորունկ հառաչ մը հանեց, ձեռներն սկսաւ ոլորել և

վերսին իր սրտմտութեան և յուսահատութեան մէջ ընկաւ։ Բայց վտա-
ռակաց պարապելու խը զանի մեկուսի կոչեց և անոր ըսաւ.

— Քաջ խորհէ, Խահակ, թէ ինչպէս պէտք է վարուիլ այս կրօ-
նաւորին հետ. կ'խրատեմ՝ քեզ որ անոր բարեկամութիւնը շահելու
հնարը փնտռես. սնափառ ու միանգամայն ընչասէր է նա, Խա-
հակ. շատ սաակի պէտք ունի իր շռայլութեանց հասնելու համար։
Կարող ես անոր ժլատութիւնը հեշտիւ գոհ ընել, վասն զի մի կարծեր
թէ կ'հաւատամ որ իրօք չքաւոր ես։ Ես քաջ գիտեմ, Խահակ, մինչև
անգամ այն երկաթէ արկղդ որու մէջ սաակի ծրարներ կ'պահես։ Ի՞նչ,
միթէ կարծես թէ չգիտե՞մ այն մեծ քարն որ ինձորենիին ներքև է՝
Նօրքի պարտիզիդ մէջ, և որ կ'ծածկէ փոքրիկ սանդուղ մ'ուսկից կա-
մարաձև նկուղ մը կ'ելնես։

Հրէայն մեռելի պէս գեղնեցաւ։ — Բայց իսկնէ մի վախնար բնաւ
— յարեց վտառակը — վասն զի մենք հին բարեկամներ ենք։ Միթէ
չե՞ս յիշեր այն հիւանդ մարտիկն զոր քու սիրուն աղջիկդ Ռեբեկա
գերութենէ ազատեց փրկանք տալով, և տունդ պահեց մինչև որ ա-
ռողջութիւնը գտաւ. յետոյ դու Ճամբեցիր զանի ձեռքն արծաթ մը
տալով։ Թէև վաշխառու ես, երբէք տակդ այնչափ լաւ տեղ շահու-
գրած չես որչափ որ գրիր այն փոքրիկ արծաթէ մարկը, վասն զի այս-
օր քեզի հինգ հարիւր պսակ շահեցուց։

— Ուրեմն դու այն մարդն ես զոր Աղեղնալար Ցիքրն կ'կոչենք —
ըսաւ Խահակ — ես ալ կ'մոռացէի որ քու ձայնդ ինձի անծանօթ չպի-
տի լինի։

— Այո՛, ես Աղեղալարն եմ — ըսաւ Հրամանատարը — ես Լօքս-
լէյն եմ, և ուրիշ անուն մ'ալ ունիմ։

— Բայց դու կ'սխալիս, իմ՛ քաջ Աղեղալարս — ըսաւ Խահակ —
այն կամարակապ նկղին նկատմամբ։ Երկինն վկայ՝ որ անոր մէջ ուրիշ
բան չկայ բայց եթէ քանի մ'ապրանք զոր քեզի տալու յօժար եմ.
Ինքօլնի հարիւր կանդուն կանաչ չուխայ՝ որմէ վերարկուներ կրնաս
շինել գինակիցներուդ, հարիւր հատ Սպանիոյ գեղձի փայտեր աղեղ-
ներ շինելու և հարիւր հատ ալ մետաքսէ լարեր՝ որ ամուր, կլոր և
անվթար են. բարեկիր Աղեղալար, այս բաները քու բարեկամու-
թեանդ համար քեզի պիտի ղրկեմ՝, եթէ նկղին վրայ ուրիշի խօսք
չբանաս, իմ քաջ որսորդս։

— Առնէտի պէս լռութիւն պիտի պահեմ այդ մասին — ըսաւ Հրա-
մանատարը — և հաւատի եղիր որ կ'վշտակցիմ քեզ աղջկանդ հա-

մար։ բայց ձեռքէս բան մը չգար, բաց դաշտի վրայ տաճարականներուն նիզակները շատ զօրաւոր են իմ աղեղնաւոր զօրականացս համար, և մեղկանցրուել փոշիի պէս։ Եթէ դիանալի միայն որ Ռեպեկան էր յափշտակուած օրիորդը՝ թերեւս ճար մը գտնէի, բայց այժմ պէտք է որ վարպետութիւն բանեցընենք։ Ասէ նայիմ, կ'ուզեմ որ այս մասին վանահօր հետ բանակցիմ։

— Ցանուն Աստուծոյ, եթէ կարող ես, իմ քաջ Աղեղչարս, օգնէ ինձ սիրասուն զաւակս գտնելու։

— Քու անպատեհ ժլատութեամբդ իմ ձգունքս 'ի դերն մի հաներ — ըսաւ հրամանատարը — և պիտի աշխատիմ անոր հետ խօսելով քեզի համար նպաստաւոր պայմաններ ստանալ։

Ան ատեն հրէին քովէն հեռացաւ, որ դարձեալ Լօքսլէյի հետեւեցաւ իբրև իր ստուերը։

— Էյմէր վանահայր — ըսաւ հրամանատարը — երթանք միասին սա ծառին ներքև։ Ա՛ըսեն թէ դու գինի կ'սիրես, նոյնպէս կնկան ժպիտը՝ քու ուխտիդ հակառակ։ Բայց այս կէտն ինձի շվերաբերիր։ Լսած եմ նաև որ զոյգ մը լաւ շուներ և քաջարշաւ երիվար մը կ'սիրես, և կարելի է որ այսպիսի մեծագին բաներ սիրելովդ՝ ոսկի քսակ մը չես մերժեր։ Բայց երբէք լսած չեմ որ դու հարստահարութիւն և անգթութիւն կ'սիրես։ Արդ՝ ահաւասիկ Խսահակն որ կ'հաւանի քեզի տալ քու զբօսանքդ շարունակելու միջոցներ, որ հարիւր արծաթ մարկ պարունակող պարկի մը մէջ կ'գտնուին, եթէ միայն քու միջնորդութեամբդ Տաճարական դաշնակիցդ հաճի հրէին դուստրն ազատ թողլու։

— Ազատ և միանգամայն անարատ, ինչպէս որ ձեռքէս յափշտակեց — ըսաւ հրէայն — թէ ոչ այդ սակարկութիւնը չեմ ընդունիր։

— Լռութիւն, Խսահակ — վրայ բերաւ վտարակը — թէ ոչ դաւոդ կ'թողում մէկդի։ Ի՞նչ ունիս ըսելու այս առաջարկութեանս վրայ, Էյմէր վանահայր։

— Այս խնդիրը բաւական կնճռոտ է — ըսաւ վանահայրը — վասն զի եթէ մէկ կողմէն բարի գործ մ'ընեմ, միւս կողմէ հրէի մը նպաստաւոր պիտի դառնայ, և այս բանս ալ իմ խղճիս կ'դպի։ սակայն եթէ Իսրայէլացին կ'ուզէ եկեղեցւոյն ծառայել գումար մ'ևս տալով մը ննջարանին շինութեան համար՝ ես ալ յանձն կ'առնում անոր աղջկան գործին խղճի մտօք օգնել։

— Ննջարանը շինել տալու համար մինակ քսան մարկ — ըսաւ վտա-

բակը . . . Հանդարտ կեցիր, Խաչակ . . . կամ՝ արծաթեմ աշտանակ-ներ խորանին համար մեր սակարկութիւնը չեն կրնար արդիլել։

— Բայց, իմ քաջ Աղեղալարս . . . — գոչեց Խաչակ մինչ ամենքը փորձ փորձելով։

— Խեղճ Հրէայ, խեղճ կենդանի, խեղճ որդ — ըսաւ վտարանին իր համբերութիւնը հատնելով — եթէ այդպէս շարունակես քու ժլատ առարկութիւններդ դնել կշռին մէջ՝ աղջկանդ կենաց և պատուոյն դէմ, երկին վկայ, երեք օրէն առաջ՝ երկրիս վրայ ունեցած գոյութեանս բէնէն իսկ պիտի կողոպտեմ։

Խաչակ դողդողաց և լուռ կեցաւ։

— Եւ ինչ երաշխաւորութիւն պիտի տաք ինձ այդ խոստումներու կատարման համար — հարցուց վանահայրը։

— Երբ Խաչակ քու մինչնորդութեամբդ յաջողի և գտնայ — ըսաւ Աղեղալարը — կ՚երդնում սուրբ Հիւպէրտի վրայ, որ եթէ խոստացած արծաթը չհամրէ, այնպիսի հաշիւ մը պիտի ունենայ ինձի հետ, որ քան անդամ նոյն դումարը վճարելը նախապատիւ պիտի համարի։

— Լաւ ուրեմն, Հրէայ — ըսաւ Էյմէր — քանի որ այս գործին պիտի մինչամնեմ, տուր ինձի քու թղթակալդ։ Բայց ուշ . . . լաւ ես ունիմ քսանչորս ժամ՝ ծամ՝ պահել քան թէ քու դրիչդ գործածել. բայց ուրիշ թուղթ ու դրիչ ուսկից գտնել պէտք է։

— Եթէ քու սրբազին խիղճդ կ՚ներէ քեզ Հրէի մը թղթակալը գործածել, կրնամ դրչին ճարը գտնել — ըսաւ Հրամանատարը, և աղեղը լարելով՝ իր նետով վայրի սագի մը նշան առաւ, որ իրենց գլխին վերևը կ՚սաւառնէր, իբրև առաջնորդ իր ընկերներուն երամին որ Հոլտէրնէսի հեռաւոր և թափուր ճահիճները կ՚գիմէին։ Թռչունը շրջելով վար ընկաւ նետահար։

— Ահաւասիկ, հայր սուրբ — գոչեց Հրամանատարը — քեզի շատ մը փետուրներ ծ.օրվոյի վանականներուն հարիւր տարի գրիչ մատակարարելու, միայն թէ տարեգիրներ գրելու չպարապին։

Վանահայրը նստաւ և հանգիստ շարադրեց նամակ մ՚առ Գրայն տը Պուա-Կիլպէր, և թուղթն ուշի ուշով կնքելէն ետև, Հրէին տուաւ ասոր ըսելով.

— Այս պիտի լինի անցագիր մը քեզի համար Դէմբլատովի տաճարանոցը, և ինչպէս որ կ՚յուսամ, անոր քու աղջկանդ ազատութիւնը հաւանականօրէն պիտի տան, եթէ դու ալ քու կողմէդ շահաւէտ

և վայելուչ առաջարկութիւններ ընես, վասն զի, հաւատի եղիր, որ Գուա–Կիլպէր բարի ասպետն այնպիսի միաբանութեան մ'անդամէ որ առանց փոխարէնի բան մը չհատուցաներ։

— Լաւ, վանահայր — ըսաւ հրամանատարը — քեզ աւելի ևս չպիտի պահեմ այս տեղ, միայն անդորրագիր մը տուր անոր հինգ հարիւր պսակ փրկանքի գումարին համար, իբրև իմ սեղանաւորս կ'ընդունիմ զանի, բայց եթէ իմանամ որ անոր կողմէ ճարուած այս գումարին փոխարէնը հատուցանելու մասին դժուարութիւններ կ'յարուցանես, սուրը Կուսն իմ հոգիս առնու եթէ մենատանդ չայրեմ, եթէ ասոր համար տասս տարի աւելի կանուխ կախուելու իսկ պատապարտուիմ։

Վանահայրն՝ Գուա–Կիլպէրին գրած համակէն նուազ յօժարամտութեամբ անդորրագիր մը տուղեց իր փրկանքին համար Եօրքցի Խաղակին վճարած հինգ հարիւր պսակի մասին և հաւատարմօրէն խոստացաւ այս գումարին փոխարէնը վճարել։

— Իսկ հիմակ — ըսաւ Էյմէր վանահայրը — պիտի խնդրեմ որ ետ դարձնես իմ ջորիներս և երիվարներս, նոյնպէս ազատ թողուս ինձ ուղեկից գտնուող կրօնաւորները, իմ թալլուած մատանիներս, գոհարներս և ճոխ զգեստներս վերադարձնես, քանի որ իմ փրկանքս վճարուած է։

— Քու եղբայրներդ, վանահայր — պատասխանեց Լօքսլէյ — իսկոյն ազատ պիտի թողուին, ըստ որում անիրաւութիւն պիտի լինի զանոնք պահելը. իսկ ձիերուդ և ջորիներուդ գալով՝ նոյնպէս քեզի պիտի յանձնուին, միանգամայն բաւական գումար մը տալով որպէս զի կարող լինիս Եօրք հասնելու, վասն զի անզթութիւն է զրկել քեզ ուղևորութեան միջոցներէն։ Իսկ մատանիներուն և գոհարներուն, ոսկի շղթաներուն և ուրիշ ասոնց նման առարկաներուն գալով՝ պէտք է քաջ իմանաս որ փափուկ խղճմտանքի տէր մարդիկ ենք, և չպիտի թողունք քեզի պէս մի պատկառելի անձի՝ որ պարտաւոր էր աշխարհիս ունայնութեանց անտարբեր մնալ, իր Ուխտին կանոնները դրժելու գործաւոր փորձութեան հանդիպիլ՝ մատանիներ, շղթաներ և ասոնց նման բաներ կրելով։

— Ձեր ըրածին վրայ մտածեցէք, տեարք իմ — պատասխանեց վանահայրը — եկեղեցւոյ կալուածոց ձեռք երկարնելէն առաջ. այս բաներն են՝ inter res sacras 'է Ռիմ–Դուէքական իրերու, և չգիտեմ թէ ինչ հեռևանք կրնայ տեղի ունենալ պիղծ ձեռքեր անոնց դպչելով։

— Ես անոնց հոգը պիտի տանիմ, վերապատուելի հայր — ըսաւ

Գօրմէնհըրսդի Ճգնաւորը — վասն զի ես ինքս պիտի կրեմ զանոնք։

— Բարեկամ կամ եղբայր — ըսաւ վանահայրն՝ իբրև պատասխան իր կասկածներու տրուած մեկնութեան — եթէ դու իրօք քահանայական կարգ ունիս, կ՚աղաչեմ քեզ խորհիլ թէ ինչ համար պիտի տաս քու մեծաւորիդ այսօրուան դէպքին մասնակից դառնալդ։

— Բարեկամդ իմ վանահայր — պատասխանեց Ճգնաւորը — պէտք է դիտնաս որ փոքրիկ թեմի մը կ՚վերաբերիմ, որուն միանգամայն թեմական եմ, և առնելիք տալիք չունիմ ոչ Եօրքի եպիսկոպոսին և ոչ Ժորվէյի աբբային և իր վանքին հետ։

— Դու բոլորովին ուղիղ շաւղէն դուրս կ՚դտնուիս — ըսաւ վանահայրը — դու այն խառնակ անձերէն մին ես՝ որ առանց հրամանի եկեղեցական պաշտօն վարելով ծէսերը կ՚վատթարեն և իրենց վստահող հոգիները վտանգի մէջ կ՚ձգեն, lapides pro pane condonantes eis, ֆոխանակ հացի քարինս պալվանոցս, ինչպէս որ կ՚ըսէ Աստուածաշունչը։

— Ո՛չ — ըսաւ երէցը — եթէ իմ ըղեղս լատիներէն լեզուով շաղած լինէի, այսչափ երկար ժամանակ չէր դիմանար։ Ես կ՚պնդեմ թէ եգիպտական օրինաւոր աւարտութիւն մ՚է ձեզի պէս գուռզ քահանաներն իրենց գոհարներէն և զարդերէն թեթևցընելը։

— Դո՛ւ ֆոպտոնոմիկ քահանայ մ՚ես — ըսաւ վանահայրը բարկութեամբ. excommunicabo vos. քեզ բանադրելով պիտի պատժեմ։

— Դու իզնէ աւելի գողի և հերետիկոսի կ՚նմանիս — ըսաւ կրօնաւորը նոյնպէս զայրանալով — չեմ ուզեր որ զիս իմ հօտիս առջև նախատեն, ինչպէս որ անամօթաբար կ՚նախատես, թէև ես ալ վերապատուելի եղբայր մը պարտիմ լինիլ քեզի համար։ ossa ejus perfringam, ֆորպոկէցէց ղոսկեր՝ ֆ՝, ինչպէս որ կ՚ըսէ Ս. Գիրքը։

— Էյ — դոշեց հրամանատարը — միթէ վերապատուելի հայրեր այսպէս զիրար կ՚թշնամանե՞ն։ Հանդարտ կեցէք, յիմար կրօնաւոր։ Իսկ դու տէր վանահայր, եթէ Աստուծոյ հետ տակաւին չհաղորդեցար, աւելի ևս մի՛ դրդռեր մեր երէցը. դո՛ւ ևս Ճգնաւոր, թոյլ տուր որ վերապատուելի հայրը խաղաղութեամբ իր Ճամբան շարունակէ, քանի որ իր փրկանքը վճարած է։

Զօրականները զայրացած կրօնաւորներն իրարմէ զատեցին՝ որ դարձեալ բարձրաձայն զիրար կ՚սաստէին անշահ լատիներէն լեզուաւ, զոր վանահայրն արագութեամբ կ՚խօսէր, իսկ Ճգնաւորը զօրութեամբ։ Ի վերջէ վանականն ըստ բաւականին ինքզինքին գալով հասկցաւ որ իր արժանապատուութեան արատ կ՚բերէ վտարակներու երէցի պէս քա-

հանային հետ կռուելով, և երբ իր հետևորդներն եկան իրեն միացան Ճամբայ ելաւ նուազ շքեղութեամբ և աւելի առաքելական պարզութեամբ, արտաքին աշխարհային ցոյցերու մասին, քան թէ երբ այն կողմերը հասաւ։

Կ'մնար միայն վանահօր և իր հաշուին համար հրէին վճարելիք գումարին հաստատման երաշխաւորութիւն մը պահանջել։ Հետևապէս՝ իր կնքովը վաւերացած պարտագիր մը տուաւ՝ ուղղեալ Եօրքի մէջ իր ցեղակից մէկ եղբօր, խնդրելով որ գրաբերին վճարէ հազար պսակ և անոր յանձնէ թղթին մէջ նշանակուած մէկ քանի ապրանքներ։

— Իմ քէվա եղբօրս քոմն են — ըսաւ նա խորունկ հեծեծելով — իմ մթերանոցիս բանալիները։

— Հապա կամարաձև նկղին բանալին — փսփսաց Լոքսլէյ անոր ականջին։

— Ո՛չ, ոչ, Աստուած չընէ — գոչեց Իսահակ — անիծեալ լինի այն ժամն երբ քեզ որ և է մէկն այս գաղտնիքը յայտնեց։

— Իմ պահպանութեանս տակն է այն — պատասխանեց հրամանատարը — և այնքան ստոյգ է ըսածս որչափ որ սա թղթի կտորն յիշատակած գումարը կ'արժէ։ Բայց ինչ կայ, Իսահակ, մեռար, ապրեցար, միթէ հազար պսակի վճարումն աղջկանդ վտանգը մոռցուց քեզ։

Հրէայն իր ոտից վրայ կանգ առաւ և ըսաւ. — Ո՛չ, հրամանատար, ոչ, իսկոյն պիտի մեկնիմ, միայն բարև դու, զոր չեմ կարող բարեկիր անուանել, և որմէ սակայն չեմ համարձակիր և չեմ ուզեր գէշ խօսիլ։

Բայց Իսահակի մեկնելէն առաջ՝ վտարակից պարագլուխն այս վերջին խրատը տուաւ անոր. — Առատաձեռն եղիր պարգևներուդ մասին, Իսահակ, և աղջկանդ ապահովութեան համար քսակդ մի խնայեր։ Հաւատա ինձ՝ որ անոր օգտին հակառակ ժլատութեամբ պահելիք ոսկիդ, այսուհետև այնքան վիշտ և նեղութիւն պիտի պատճառէ քեզ որպէս թէ կոկորդէդ վար զայն հալած թափէին։

Իսահակ խորունկ հառաչելով հաւանութիւն ցցուց և Ճամբայ ելաւ, երկու բարձրահասակ անտառորդներ՝ իբրև առաջնորդ և պաշտպան՝ իր հետն առնելով անտառէն դուրս ելնելու համար։

Սև ասպետն՝ որ այս զանազան դէպքերն հետաքրքրութեամբ նկատեր էր՝ այն ատեն վտարակներուն իր հրաժարական բարևը տուաւ, միանգամայն իր զարմանքը չկրցաւ զսպել այնքան վարչական կանոններ

տեսնելով այն մարդոց մէջ որ օրինաց սովորական պաշտպանութեան և ներգործութեան լուծը թոթուեր էին։

— Լաւ պտուղն, ազնիւ ասպետ — ըսաւ Լօքսլէյ — երբեմն վատ ծառի մը վրայ կ'աճի, և վատ ժամանակներ միշտ անխատն չարիք չեն արտադրեր միայն։ Այս ապօրէն վիճակին մէջ ապրելու ստիպեալ մարդոց մէջ կ'գտնուին անշուշտ այնպիսիներ որ ապերասանութիւնը չափաւորութեամբ գործածել կ'ուզեն, և այլք թերևս կ'վշտանան որ այսպիսի արհեստի մը հետևելու ստիպեալ են։

— Եւ եթէ չեմ սխալիր — ըսաւ Սև ասպետը — այժմ այն վերջիններէն մէկուն հետ կ'խօսիմ։

— Ազնիւ ասպետ — պատասխանեց վտարակը — մեզնէ իւրաքանչիւրն իր պաղտնիքն ունի։ Դու իմ վրայ կարծիք մ'ունենալու ազատ ես, և ես ալ քու վրայ կրնամ զանազան ենթադրութիւններ ընել, թէև մեր նեռերէն և ոչ մին նպատակին կրնայ չհասնիլ։ Բայց որովհետև չեմ աղաչեր որ դու քու գաղտնիքդ յայտնես ինձ, մի՛ դժկամակիր եթէ ես ալ իմն թաղուն կ'պահեմ։

— Ներողութիւն կ'խնդրեմ, քաջդ վտարակ — պատասխանեց ասպետը — քու յանդիմանութիւնդ արդարացի է։ Բայց թերևս վերջէն աւելի ակն յայտնի իրարու պիտի երևինք։ Առ այժմ, իրարմէ իբրև բարեկամ կ'բաժնուինք, այնպէս չէ՞։

— Ահաւասիկ իմ ձեռքս — գոչեց Լօքսլէյ — և կ'իշխեմ ըսել որ ճշմարիտ անկեղծայուղոյ մը ձեռքն է, թէև առ այժմ վտարակ կ'սեպուի։

— Ահաւասիկ և իմն — պատասխանեց ասպետը — և պատիւ կ'սեպեմ անձիս քուկդ սեղմելով։ Վասն զի՝ այն որ՝ չարիք գործելու անսահման իշխանութիւն ունենալովն, բարիք կ'գործէ, արժանի է գովեստից ոչ միայն ըրած բարեաց համար, այլև չարիք գործելէն խորշելուն համար։ Մնաս բարև, քաջդ վտարակ։

Այսպէս իրարմէ բաժնուեցան այս երկու անկեղծ ընկերները. և փականաւոր ասպետն իր պատերազմի մեծ նժոյգն աշտանակելով՝ անտառին մէջէն յառաջ ճեմեց։

ԴԼՈՒԽ ԼԴ

ՃՕՀՆ ԲՈՓՈՐԸ. Բարեկամդ իմ, ըսեմ պիտի քեզ,
թէ ի՞նչպէս շաւղիս վրայ իրօք օձ մ'է նա.
Եւ թէ իմ քայլն ո՛ր կողմը տանիմ,
իմ առջեւս կ'ելնէ։ — Մի թէ կ'իմանաս խօսքս։

ՃՕՀՆ ԲՈՓՈՐԸ։

Եւրոպի դղեկին մէջ մեծ խնջոյք կար. ՃՕՀՆ իշխանն՝ այս խնջոյքին հրաւիրեր էր աւագանին, եպիսկոպոսներն և կուսակցութեան պարագլուխներն՝ որոց օգնութեամբն իր փառասէր խորհուրդներն 'ի գործ դնել և իր եղբօրն աթոռն ելնելու կ'յուսար։ Վ.օլտմար Ֆիցուրս, իր ճարտար և քաղաքագէտ գործակատարը, գաղտնի կ'գործէր և կ'ջանար գինել զանոնք այն աստիճանի քաջութեամբ որ կարեւոր էր իրենց ղպացումները յայտնապէս երեւան հանելու համար։ Սակայն գաշնակցութեան մէկ քանի գլխաւոր անդամներու տարակայութեամբն իրենց ձեռնարկութիւնն ետ կ'մնար։ Ֆրօն-տը-Պէօյի՝ թէև կոշտ՝ այլ անպրդտելի և ժպիրհ արիութիւնը, տը Պրէսիի վառվռուն բնաւորութիւնն և անվեհեր վարմունքը, Պրայն տը Պուա-Կիլպէրի խորագիտութիւնը, գինուորական փորձառութիւնն և համբաւաւոր քաջասրտութիւնը պիտանի էին իրենց դաւադրութեան յաջողութեան համար, և մինչդեռ գաղտնի կ'անիծէին անոնց տարակայութիւնն որուն գրգիռը չէին կարող ըմբռնել, ոչ ՃՕՀՆ և ոչ իր պաշտօնեային չէին իշխեր քայլ մ'առնուլ առանց անոնց օժանդակութեան։ Նոյնպէս Իսահակ հրէայն անհետ եղած կ'երևէր, և անոր հետ իբրև փոխ առնուելիք ստակի մը պտմարի յոյսն, որ ՃՕՀՆ իշխանին արդէն նոյն հրէին կրօնակիցներուն հետ ըրած պայմանագրութեան համեմատ պիտի վճարուէր։ Այսպիսի փափուկ պարագայի մը մէջ դրամի պակասութիւնը կրնար վտանգաւոր դառնալ։

Դօրդիլպօնի անկման հետևեալ առտուն էր որ Եօրք քաղքին մէջ շփոթի ձայն մը տարածուիլ սկսաւ՝ թէ տը Պրէսի և Պուա-Կիլպէրը, իրենց Ֆրօն-տը-Պէօ դաշնակցին հետ գերի բռնուեր կամ սպաննուեր են։ Վ.օլտմար այս տարաձայնութիւնն ՃՕՀՆ իշխանին իմացուց, դիտելով որ կ'երկնչէր թէ այն լուրը ճշմարիտ չլինի, նա մանաւանդ անոր համար որ երեք ասպետները ճամբայ ելեր էին քանի մը

գինակիցներով՝ սաքսօն Սէտրիկին և անոր մարդոց վրայ յարձակումը ընելու մտօք։ Ուրիշ պարագայի մէջ՝ Իշխանն այս բռնաբարութեան գործն իբրև աղէտ կատակ մը պիտի համարէր, բայց հիմա՝ որ իր խորհուրդները կ'վրդովէր և կ'արգիլէր, յանցաւորներու դէմ սաստիկ զայրացաւ, դրժեալ օրինաց, հասարակաց անդորրութեան և մասնաւոր սեպհականութեան դէմ եղած ոճրին դէմ խօսեցաւ, այնպիսի կերպով մ'որ Ալֆրէտ թագաւորին կրնար վայել։

— Անօրէն ելուզակներ — գոչեց նա — եթէ երբէք Անկլիոյ գահն ելնեմ, այն աւազակներն իրենց յատուկ դղեակներու շարժական կամուրջէն պիտի կախեմ։

— Բայց Անկլիոյ թագաւոր լինելու համար — ըսաւ պաղութեամբ իր Ահիտոֆէլն, կարևոր է, ոչ միայն այն անօրէն ելուզակներուն ապարատութեան հանդուրժել, այլ նաև ձեր պաշտպանութիւնն անոնց շնորհել, թէև սովորաբար անոնց դրժած օրինաց պահպանութեան համար մեծ եռանդ մը կ'յայտնէք։ Արդ՝ արև. շատ աղուր օգնութիւն մը գտած պիտի լինէինք՝ եթէ այն գեղջուկ սաքսօններն Ձեր շնորհապայլութեան խորհուրդն 'ի գործ դնէին՝ իրենց աւատական կամուրջները կախաղաններու դարձընելով. և այն յանդուգն Սէտրիկն այնպիսի մարդ մը կ'երևի ինձ որ այդ կարծիքը կրնայ ունենալ։ Ձեր շնորհապայլութիւնը քաջ գիտէ թէ առանց Գրօն-տը-Պէօյի, տը Պրէսիի և Տանմարկանին գործել վտանգալի բան է, և սակայն բաւական առաջ գացինք և ընկերկիլը վտանգ կ'սպառնայ։

Ճօհն Իշխանն իր ձակատը զարկաւ անհամբեր, և յետոյ սկսաւ սենեկին մէջ վեր վար քալել։

— Մատնիչներն — ըսաւ — անպայմ մատնիչներ, որ այսպիսի փափուկ ձգնաժամի մը մէջ զիս երևսի վրայ կ'թողուն։

— Ո՛չ, յաւ ևս է որ ըսէիք անընդեղ յիմարներ — գոչեց Վ.օլտմար — վասն զի մեր կռնակն այսպիսի ծանր գործ մ'եղած ատեն անտարակոյս յիմարութիւններ կ'գործեն։

— Ի՞նչ պիտի ընենք — ըսաւ ճօհն Իշխանը, յանկարծ Վ.օլտմարի առջև կանգ առնելով։

— Չգիտեմ թէ ի՞նչ ընել պէտք է — պատասխանեց խորհրդատուն — եթէ ոչ ինչ որ արդէն պատուիրեցի որ ընեն։ Ա.յս դժբաղդութեան վրայ քեզի հետ վշտանալու գալէն ստաջ՝ անոր դարմանը գտնելու մտածեցի։

— Դու միշտ իմ՝ բարի հրեշտակս ես, Վ.օլտմար — գոչեց Իշխանը

— և քանի որ քեզի պէս դիւանապետ մ՚ունիմ ինձ խորհրդակից, ճօհն իշխանիս թագաւորութիւնը մեր տարեգրութեանց մէջ երևելի պիտի հանդիսանայ։ Բայց ի՞նչ հրամաններ տուիր։

— Տը Պրէսիի սեղակալ՝ Լուի Վինչէլպրէնտի պատուիրեցի որ ձի հեծնէ, փող հնչել տայ և դրօշակը պարզելով՝ շտապ Ֆրօն-տը-Պէօյի դղեակը դիմէ, որպէս զի մեր բարեկամներու օգնութեան համար ամէն ձեռքէն եկածն՝ի գործ դնէ։

ճօհն իշխանին դէմքը բարկութենէ կարմրեցաւ կամապաշտ տղեկի մը հպարտութեամբ, որ կարծէ թէ նախատինք մ՚ընդունած է։

— Ատուծոյ պատկերը վկայ — ըսաւ նա — դու մեծ պատասխանատուութիւն մ՚առեր ես վրադ, Վօլտմար, և չափազանց անձնապաստան ես որ փող հնչել կամ դրօշակ պարզել տուեր ես, այնպիսի քաղքի մը մէջ ուր ներկայ ենք, առանց յատուկ հրամանատար մ՚ունենալու։

— Ձեր ներողութիւնը կ՚խնդրեմ, Շնորհափայլ տէր իմ — ըսաւ Ֆլիցուրս, ներքնապէս իր տիրոջ անհեթեթ մնափառութիւնն անիծելով — բայց որովհետև ժամանակը ստիպողական էր և քանի մը վայրկենի կորուստն անգամ մեզի աղէտաբեր կրնար դառնալ, մտածեցի որ պատասխանատուութիւնը կարողեմ վրաս առնուլ՝ այսպիսի ծանր պարագայի մը մէջ որ Ձեր շնորհափայլութեան շահուց կ՚վերաբերի։

— Կ՚ներեմ քեզ, Ֆլիցուրս — պատասխանեց իշխանը ծանրօրէն։ — Դիտաւորութիւնդ անբասիր կ՚հանէ քու յանդուգն շտապդ։ Բայց ո՞վէ այս կողմն եկողը։ Խա՛չ վկայ, Պրէսին է, և ի՞նչ այլանդակ վիճակի մէջ կ՚երևի նա մեզի։

Արդարև Պրէսին էր նա «մտրակելէն արիւնլուայ, և արագաշարժութենէն կրակ ու բոց դարձած։» Իր ձէն ու զարդը նոր կատաղի պայքարի մը նշանները կ՚կրէին, վասն զի խորտակեր, տեղ տեղ աղայտուտեր և արիւնով արատեր էր, և դագաթէն մինչև մտրակը փոշիով և տղմով ծածկուեր էր։ Տը Պրէսի սաղաւարտը հանելով սեղանին վրա դրաւ և պահ մը կանգ առաւ որպէս թէ շունչ առնուլ կ՚ուզէր խօսելէն առաջ։

— Տը Պրէսի — ըսաւ ճօհն իշխանը — ի՞նչ կ՚նշանակէ այդ։ Խօսէ, կ՚հրամայեմ քեզ, միթէ սաքսոն երն ապստամբեցա՞ն։

— Խօսէ, տը Պրէսի՛ — ըսաւ Ֆլիցուրա՝ կրեթէ իր տիրոջ հետ միաձայն։ — Դու սովոր էիր մարդ լինելու, ո՞ւր է տաճարականը, ո՞ւր է Ֆրօն-տը-Պէօ։

— Տաճարականը փախուստ տուաւ — պատասխանեց տը Պրէսի — իսկ Ֆրոն-տը-Պէօն այլ ևս չպիտի տեսնէք։ Իր յատուկ դղեկին հրաւաւ գերաններուն ներքև կարմրագոյն գերեզման մը գտաւ, և ես միայն պրծայ այս լուրը բերելու համար։

— Սառնագին լուրեր են ատոնք մեզի համար — ըսաւ Վ.օլտմար — թէև կրակի և հրդեհի վրայ կ'խօսիս մեզի։

— Սակայն դեռ չյայտնեցի վատագոյն լուրը — պատասխանեց տը Պրէսի և իշխանին մօտ երթալով ծանր և հանդիսաւոր ձայնով մը շարունակեց.

— Ռիչարտ Անկլիա կ'գտնուի, ես զանի տեսայ և հետը խօսեցայ։

Ճօհն իշխանին գոյնը դարձաւ, երերաց և վար չընկնելու համար կաղնիէ նստարանի մը կռնակը բռնեց, իբրև մարդ մ'որ սրտին յանկարծ նետ մը կ'ընդունի։

— Դու կ'զաւանցես, տը Պրէսի — ըսաւ Ֆիցուրս — ըսածդ կարելի բան չէ։

— Եւ սակայն Ճշմարտութեան պէս Ճշմարիտ է — պատասխանեց տը Պրէսի — ես ինքս անոր գերին էի և հետը խօսեցայ։

— Դո՞ւ խօսեցար, ըսիր, Բլանդաժնէդ Ռիչարտի հետ — վրայ բերաւ Ֆիցուրս։

— Նոյն իսկ Բլանդաժնէդ Ռիչարտի հետ — պատասխանեց տը Պրէսի — Առիւծասիրտ Ռիչարտի հետ, Անկլիոյ Ռիչարտի հետ։

— Դո՞ւ անոր ձեռքը գերի ընկար — շարայարեց Վ.օլտմար — ուրեմն բանակի մը գլուխը կ'գտնուի։

— Ո՛չ, մինակ քանի մը վտարականներ բոլորտիքը կ'գտնուէին, և ատոնք ալ զինքը չէին Ճանչեր։ Իր բերնէն լսեցի որ անոնցմէ բաժնուելու կ'պատրաստուի։ Ռիչարտ այն վտարականներուն միացաւ որպէս զի Դօրդիլսդրնի պաշարման մէջ անոնց օգնէ։

— Այո՛ — ըսաւ Ֆիցուրս — արդարև Ռիչարտ այդ սովորութիւնն ունի, Ճշմարիտ թափառական ասպետ մ'է, յանդուգն արկածներու մէջ կ'նետուի, իր բազկին զօրութեան վստահելով իբրև նոր Պիյ կամ Տէվիս մը, մինչդեռ իր տէրութեան գործերն երեսի վրայ կ'թողու և իր անձին ապահովութիւնը վտանգի մէջ կ'գտնուի։ Տը Պրէսի, դու ի՞նչ ընելու գիտաւորութիւն ունիս։

— Ես — պատասխանեց Նորման ասպետը — ես առաջարկեցի Առիւծասրտին օգնել իրեն իմ նիզակներովս, բայց նա մերժեց։ Ուստի Հիւլ պիտի առաջնորդեմ նիզակաւորներս, նաև մը պիտի գրաւեմ և

Գլանտոր պիտի գնամ. այս վրդովելի ժամանակներու շնորհիւ, գործոն մարդ մը կրնայ միշտ պաշտօն մը գտնել։ Իսկ դու Վ. օլտմար, միթէ կ'ուզես վահան ու նիզակ առնուլ, քաղաքապետական դաւեր մէկդի ձգել և ինձի միանալով Աստուծոյ մեղի ղրկելիք բաղդին մասնակից լինիլ։

— Ես շատ ծեր եմ, Մօրիս, և աղջիկ մ'ունիմ — պատասխանեց Վ. օլտմար։

— Տուր աղջիկդ ինձի, Վ. օլտմար, իմ նիզակիս և մտրակիս շնորհիւն անոր արժանի վիճակ մը կրնամ գտնել — ըսաւ տը Գրէսի։

— Ո՛չ — պատասխանեց Վ. օլտմար — ես Ս. Պետրոս եկեղեցւոյն սրբավայրն ապաւէն մը պիտի փնտռեմ. արքեպիսկոպոսն իմ երդուեալ եղբայրս է։

Այս խօսակցութեան ժամանակ՝ ՃՕՀՆ իշխանը փոքր առ փոքր ուշաբրեցաւ և փարատեց այն թմրութիւնն որուն մէջ նեստոր էր զինքն անակնուներելի լուրը, և իր երկու կուսակիցներուն խօսքն մոխիկ ըրեր էր ուշադիր։

— Իսկնէ կ'հեռանան — ըսաւ իւրովի — ինձի հետ այնպէս կապուած են այսուհետև ինչպէս չոր տերև մ'իր ճիւղին երբ քամին անոր վրայ կ'փչէ։ Դժոխք և սատանաներ, միթէ ես չե՞մ կարող իմովսանն հնարք գտնել՝ երբ այս վատերը զիս կ'լքանեն։ — Նոյն պահուն ՃՕՀՆ իշխանը կանգ առաւ, և դիւական բացատրութիւն մը կար այն բռնապբօսիկ ծիծաղին մէջ, որով 'ի վերջէ անոնց խօսակցութիւնն ընդհատեց։

— Հա՛, հա՛, հա՛, իմ բարի ասպետներս — ըսաւ նա — մեր Տիրամօր լուսապսակը վկայ, ես կարծէի թէ իմաստուն մարդիկ էք, յանդուգն մարդիկ, պատրաստամիտ մարդիկ էք, և սակայն ահա հարստութիւն, պատիւ, զուարճութիւն 'ի բաց կ'մերժէք և ձեր ստանձնած աջնիւ խաղը կ'թողուք՝ ճիշտ այն միջոցին որ յանդուգն հարուածով մը կրնաք զայն վերատին շահիլ։

— Ես միտքդ չեմ հասկրնար — ըսաւ տը Գրէսի։ — Երբ միանգամ Առիւծասիրտ Ռիչարտի վերադարձը դուրսը հռչակուի, իսկոյն մեծ բանակի մը դլուխը պիտի տեսնէ ինքզինքն և այն ատեն մեր բանը պիտի բունի։ Ես պիտի յորդորեմ քեզ, տէր իմ, կամ Ֆրանսա խոյս տալ, կամ մայր թագուհւոյն պաշտպանութեան դիմել։

— Ես իմ ապահովութիւնս չեմ մտածեր — ըսաւ ՃՕՀՆ իշխանը գոռոզութեամբ — իմ եղբօրս բառ մը միայն ըսելով կարող եմ զայն ստա-

նալ։ Սակայն որչափ որ դու, տը Պրէսի, և դու, Վ.օլտմար, կ'շտապիք զիս թողլու, դարձեալ պիտի վշտանամ տեսնելով ձեր գլուխները Եօրքի Քլիֆֆօրտ դրան վրայ կախուած։ Մինթէ կարծեմ դու, Վ.օլտմար, որ նենգամիտ արքեպիսկոպոսը նոյն իսկ խորանին աստիճաններէն քեզ բռնելտալու պիտի արդիլէ, եթէ քեզ ձերբակալ ընելտալով Ռիչարտի հետ հաշտուի։ Իսկ դո՛ւ, տը Պրէսի, կ'մոռնաս որ Ռոպէրդ տ'Էսդուդվիլ քու և Հիւլի մէջ կ'գտնուի բոլոր իր զօրքովը, և թէ Էսէքսի կոմսն իր կուսակիցները կ'ժողովէ։ Եթէ Ռիչարտի դալէն առաջ. իսկ այս զօրաժողովներէն երկնչելու պատճառ մ'ունէինք, մինթէ այժմ կրնաս կասկած մ'ունենալ թէ անոնց պարապլուխներն ուրուն կողմը պիտի բռնեն։ Հաւատի եղիր որ Էսդուդվիլ բաւական զօրաւոր է բոլոր քու ապատ նիզակաւորներդ Հունպէրի մէջ հալածական վիճաբերելու։ — Վ.օլտմար և տը Պրէսի իրարու երես նայեցան գունատ և ահաբեկ։ — Մինչոց մը կայ միայն ապահովութեան — շարայարեց իշխանը, և իր ձեռքատը մթագին երևոյթ մ'առաւ — մեզի սարսափ աղդող մարդն միայնակ կ'ուղևորի, պէտք է որ անոր վրայ քալենք։

— Այդ բանն ես չպիտի ընեմ — լսաւ տը Պրէսի արտորնօք։ — Ես անոր դերին էի, իմ վրայ դուք ունեցաք, իր սաղաւարտին մէկ միետուրին անգամ չպիտի դպիմ։

— Ո՞վ ըսաւ քեզի որ անոր դպիս — պատասխանեց ճօհն իշխանը չարաշուք ժպիտովմը։ — Թերևս հիմակ ալ կ'երևնես կ'ըսես թէ հրաման տուի քեզի եղբայրս սպաննելու։ Ո՛չ, բանտը լաւագոյն է, փոյթ չէ, թէ Բրիտանիա, թէ Աւստրիա պտնուի այն բանտը։ Մինակ գործերն պիտի մնան այն վիճակին մէջ երբ մեր ձեռնարկութիւնն սկսանք։ Ա՛յուսայինք որ Ռիչարտ Գերմանիա պիտի մնայ իբրև դերի. լաւ, միթէ մեր հօրեղբայրը Ռոպէրտ Գարտիֆի դղեկին մէջ բանտաւոր չմնա՞ւ։

— Իրաւ է — ըսաւ Վ.օլտմար — բայց ձեր Հէնրի հաւն իր աթոռին վրայ փոքր ինչ աւելի ամուր նստեր էր. քան Ձեր շնորհափայլութիւնը։ Ես կ'ըսեմ թէ դիւաթաղին փորածն է ամենէ լաւ բանտը. չկայ զնդան մ'որ եկեղեցւոյ մը նկղին հաւասարի։ Այս է ահա իմ կարծիքս։

— Թէ բանտ լինի և թէ գերեզման — պատասխանեց տը Պրէսի — ես այդ գործին մէջ մատ ունենալ չեմ ուզեր։

— Վա՛տ — գոչեց իշխանը զայրագին — միթէ մեզ մատնելու միտք ունիս։

— Ես երբէք անձ մը չեմ մատնած — ըսաւ տը Պրէսի վերօրէն — զիս վատ անուանելու իրաւունք չունիք։

— Հանդարտէ, ասպետ — ըսաւ Վ.օլտմար — և դուք, տէր իմ, ներեցէք արիասիրտ տը Պրէսի խղճահարութեան. յուսամ թէ քիչ ատենէն խիղճը պիտի նուաճէ։

— Այդ բանը քու ճարտասանութենդ շատ վեր է, Վ.օլտմար — պատասխանեց ասպետը։

— Բարեսիրտ Մօրիս, ինդրեմ ահարեկ ձիու մը պէս մի խրտչիր — ըսաւ նենդամիտ քաղաքագէտը — և նախ քննէ քու ահ ու դողիդ պատճառը։ Դեռ երէկ քու միակ փափաքդ էր ճակատ առ ճակատ մաքառիլ Ռիչարտի հետ, և այս փափաքդ հարիւր անգամ բերնէդ լսեցի։

— Այո — ըսաւ տը Պրէսի — բայց ինչպէս որ ըսիր, դէմ առ. դէմ ճակատամարտիլ էր փափաքս։ Երբէք լսած չես իմ բերնէս անոր դէմ յանկարծուստ և անտառի մը մէջ միայնակ յարձակելու միտումը։

— Դու քաջ ասպետ մը չես եթէ այդ մասին խիղճդ կ'տարակուսէ քեզ — ըսաւ Վ.օլտմար։ — Մի մեծ Լանսլօ տը Լաք և Դրիսրէմ ճակատամարտի մէջ համբաւ ստացան, ոչ ապաքէն երևելի հանդիսացան մութ և անծանօթ անտառներու մէջ հսկայ ասպետներու դէմ մաքառելով։

— Այո, բայց կ'հաւատամ քեզ — վրայ բերաւ տը Պրէսի — որ ոչ Դրիսրէմ և ոչ Լանսլօ զատ զատ չպիտի համարձակէին Ռիչարտ Ռլանդաժնէդի դէմ մենամարտիլ, և կարծեմ թէ տոլոր չէին գնդի մը գլուխն անցնիլ լոկ մարդու մը վրայ յարձակելու համար։

— Դու յիմար ես, տը Պրէսի — ըսաւ Վ.օլտմար։ — Մենք քեզի ինչ կ'առաջարկենք, դու որ Ազատ Գունդերուն վարձեալ մէկ հրամանատարն ես և որուն տուրն ճօհն իշխանին ծառայութեան յատկացած է։ Քեզ թշնամին ցոյց կ'տան, և դու խղճահարութեամբ առարկութիւններ կ'ընես՝ մինչդեռ քու տիրոջդ նոյնպէս բարեկամներուդ, և քու բաղդդ, նոյնպէս մեր ամենուն կեանքն ու պատիւը վտանգի մէջ կ'գտնուին։

— Ես քեզի կ'ըսեմ — պատասխանեց տը Պրէսի անյողդողդ — որ նա իմ կեանքս ինձ բաշխեց։ Արդարև զիս իր ներկայութենէ հեռացուց և իմ նուէրս մերժեց, և հետևապէս ոչնպաստ և ոչ հաւատարմութիւն պարտաւոր եմ անոր, սակայն անոր դէմ իմ ձեռքս չպիտի վերցնեմ։

— Հարկ չկայ որ վերցընես — ըսաւ Վ. Օլսմար — մինակ Հուի Վինքէլպրէնան և քանի շատ նիզակաւորներդ ղրկէ։

— Դու քու Հրամանիդ ներքև բաւական ապերասներ ունիս այդ շահատակութիւնը գործելու — ըսաւ տը Պրէսի — այդպիսի գործ մը իմ զօրականներէս և ոչ մին սիտի կատարէ։

— Դու շատ կամակոր ես, տը Պրէսի — ըսաւ ՃՕՀՆ իշխանը։ — Մինթէ եռանդուն հաւատարմութեան և անձնուիրութեան այնքան յոյցեր տալէն ետև՝ դիս թողուլ կ'ուզես։

— Ես այդպիսի դիտաւորութիւն մը չունիմ — պատասխանեց ասպետը։ — Ասպետի մը վայել կերպով քեզ ամէն ատեն պաշտպանելու պատրաստ եմ, թէ կրկէսի, թէ ճակատամարտի մէջ. սակայն իմ պարտաւորութենէս դուրս են հուզկահարի նախճիրները։

— Մտեցիր, Վ. Օլսմար — ըսաւ ՃՕՀՆ իշխանը — քանի՛ ապերջանիկ իշխան մ'եմ։ Իմ հայրս, Հէնրի թագաւորը, հաւատարիմ պաշտօնեաներ ունէր. լսելով միայն թէ ըմբոստ քահանայէ մ'ազատիլ կը փափաքի, և խսկոյն Թոմաս Պէքէդի արիւնն, թէև սուրբ մարդ մ'էր նա, իր յաստուկ խորանին աստիճանները ներկեց։ Պրէսի, Մորվիլ, Պրիդօ, դուք աննենգ և ժպիրհ հպատակներ, դիտցիք որ ձեր անունը, ձեր ոգին մաքուր են, և թէև Ռէժինալտ Ֆիցուրս որդի մը ձգած է, այս որդին իր հօրը հաւատարմութիւնն ու արիութիւնը չժառանգեց։

— Թէ մին և թէ միւսը ժառանգեց — ըսաւ Վ. Օլսմար Ֆիցուրս — և քանի որ ուրիշ ճար մը չկայ, ես իմ վրայ պիտի առնում այս վտանգալի ձեռնարկութեան հոգը։ Սակայն իմ հայրս սուղ գնեց եռանդուն բարեկամի մը գովեստը, և Հէնրիին ցոյց տուած հաւատարմութեան նշանը չհաւասարիր բնաւ իմ ձեռնարկելիք գործիս, վասն զի լաւ ես ունիմ ասնացոյցին բոլոր սրբոց դէմ մաքառիլ քան թէ Առիւծասրտին դէմ իմ նիզակս վերցընել։ Տը Պրէսի, քեզի կ'թողում երերուն ոգիները հրահրելու պաշտօնը և ՃՕՀՆ իշխանին անձը պահպանելու հոգը։ Եթէ իմ ակնկալած լուրերս քեզի հաղորդեմ, մեր ձեռնարկութիւնն այս կասկածելի կերպարանը պիտի փոխէ։ Պայիկ — յարեց նա — իմ տունս վազէ դնա, և ըսէ իմ զինապանիս որ իմ զէն ու զարդս պատրաստէ։ Զայն տուր նաև Ստեփան Վ. Հրալի, Պրօտ Թորպէյի և Սբրինկլէյի երեք նիզակաւորներուն որ խսկոյն գան զիս գտնեն։ Նոյնպէս Հիւկ Պարտօնն՝ լրտեսապետին ապսպրէ որ պատրաստ գտնուի իմ հրամաններս ընդունելու։ Մնաս բարև, իշխանդ իմ, մինչև լաւագոյն ժամանակ։

Այս ըսելով Վօլտմար սենեկէն դուրս ելաւ։

— Իմ եղբայրս ձերբակալ ընելու կ'երթայ — ըսաւ ճօհն իշխանը տը Պրէսիին, այնպէս անխղճահար կերպով՝ որպէս թէ սաքսօն մ'էր ձերբակալ ընելիքը։ — Վստահ եմ որ իմ հրամաններս պիտի պահէ, և մեր սիրական Ռիչարտի անձին հետ պարտ ու պատշաճ ակնածութեամբ պիտի վարուի։

Տը Պրէսի ժպտելով միայն պատասխանեց։

— Մեր Տիրամօր լուսափայլ պսակը վկայ — ըսաւ ճօհն իշխանը — մեր հրամաններն այս մասին բացորոշ էին, թէև կարելի է որ դու չլսեցիր, քանի որ պատուհանին որմածակին մէջ մեկուսի հաղորդեցի անոր։ Ռիչարտի անձն անվնաս պահելու համար մեր կողմէ տրուած պատուէրներն ճշգրիտ և վճռական էին, և վայ Վօլտմարի գլխին եթէ անոնց դէմ շարժի։

— Ուրեմն դէշ չեմ ըներ եթէ անոր բնակարանն երթամ — ըսաւ տը Պրէսի — և Ձեր շնորհափայլութեան կամքն անոր կրկնեմ, վասն զի ձեր հրահանգն ականջիս ընաւ չհասնելուն, հաւանական է որ Վօլտմար ալ լսած չլինի։

— Ո՛չ, ո՛չ — ըսաւ ճօհն իշխանն անհամբեր — ստոյգ եղիր որ հրահանգս ըսեց նա, և ասկէ զատ՝ ուրիշ զբաղմունք մը պիտի տամ քեզի։ Մօրիս, արի մօտ եկուր, թող որ ուսիդ կռթնիմ։

Այս ընտանեկան դիրքով սրահին մէջ շրջան մ'ըրին, և ճօհն իշխանը՝ խիստ մտերմական երեսով մ'իր խօսքը շարունակեց այսպէս. — Սիրելիդ իմ տը Պրէսի, ի՞նչ կարծիք ունիս այս Վօլտմար Ֆիցուրսի վրայ։ Իմ դիւանապետս լինել կ'ուզայ. 'ի հարկէ պիտի մտածեմ այսպիսի բարձր պաշտօն մը տալէն առաջ՝ այնպիսի մարդու մ'որ կ'ցանէ թէ որչափ քիչ կ'յարգէ մեր արիւնն՝ այսպէս շուտ մը Ռիչարտի դէմ գինելովը։ Ստոյգ եմ որ այժմ դու կ'խորհիս թէ իմ համարում կորուսիր այս անախորժ պաշտօնը մերժելովդ։ Բայց ամենեին, Մորիս. ընդհակառակն՝ քու առաքինական հաստատամտութիւնդ կ'գովեմ։ Դան բաներ որոց կատարումը կ'փափաքինք, սակայն զայնս կատարողն ոչ կ'սիրենք և ոչ կ'յարգենք. և երբեմն անոնք որ մեր խնդիրը կատարելու կ'մերժեն, աւելի մեծ յարգ կ'ստանան մեր առջև այս դիմադրութեան համար։ Իմ տարաբաղդ եղբօրս ձերբակալութեան գործն այնքան մեծ իրաւունք մը կ'տայ դիւանապետութեան բարձր պաշտօնին հասնելու որչափ քու առաքինական և անվեհեր մերժումդ իրաւունք կը տայ քեզ մեծ մարէշալի պատգամը ստանալու։ Այս բանիս վրայ մտածէ, տը Պրէսի, և այժմէն այս պաշտօնը վարելու սկսէ։ 48

— Անհաստատ բռնաւոր — մրմռաց տը Պրէսի իշխանին քովէն հեռանալով — վայ անոնց որ քեզի կ'վստահին։ Արդարև, քու դիւանագիտդ, քու խղճիդ պահպանութիւնն ունեցողը, կարծեմ թէ դժուարին պաշտօն մը չպիտի ունենայ։ Բայց Անկլիոյ մեծ մարէշալ մը, այս պաշտօնը — յարեց նոյն իր թևը կարկառելով որպէս թէ սոյն իշխանութեան դաւազանը պիտի բռնէր, և սրահին մէջ աւելի գոռոզ քալուած մ'առնելով — այս պաշտօնն արդարև կ'արժէ որ մարդ 'ի պայքար ելնէ շահելու համար։

Այն ինչ որ Պրէսի սենեկէն դուրս ելաւ որ ճօհն իշխանը սպասաւոր մը կոչեց.

«Գնա ըսէ Հիւկ Պարտօնին, մեր լրտեսապետին, որ սատ գայ։ Վ.օլսմար Ֆիցուրսի հետ խօսելէն անմիջապէս եռք։

Լրտեսապետն պահեկէ մը ներս մտաւ, մինչդեռ ճօհն իշխանն մնայոյզ՝ սրահը վեր վար կ'չափէր քայլամոլար։

— Պարտօն — ըսաւ ճօհն — Վ.օլսմար ի՞նչ խնդրեց քեզմէ։

— Երկու հատ անվեհեր, հիւսիսային անտառներու տեղեակ և մարդու և ձիու հետքն որսնելու ճարպիկ մարդիկ։

— Եւ միթէ այն մարդիկը տուիր անոր։

— Ձեր շնորհակալութիւնն իմ վրայ թող վստահի — պատասխանեց լրտեսապետը։ — Այն մարդերէն մին Հէքսէմշայրի բնիկ է։ Դայնտէլի և Տէվիսդէլի աւազակներու հետքն հետևելու սովոր են, ինչպէս որ բարակը կ'հետևի վիրաւոր եղջերուին հետքին։ Միւսը՝ որ Եօրքշայր ծնած է, Շէրլուտի հրձուելի անտառին մէջ սոսկ իր աղեղին լարը հնչած է, ամէն յանցաւոր և ձորուտ վայրեր կ'ճանչէ, Եօրքի և Ռիչմոնտի մէջ գտնուած բոլոր սլուրակներն ու մեծ անտառները գիտէ։

— Քանի՞ է — ըսաւ իշխանը — միթէ Վ.օլսմար ասոնց հետ կ'մեկնի։

— Անմիջապէս — ըսաւ Պարտօն։

— Ի՞նչ հետևորդներ կ'առնու իրեն հետ — հարցուց ճօհն անհոգութեամբ։

— Կարճահասակ Թոլսպայ կ'ուղեկցի իրեն, նոյնպէս Վ.էտհրալ, զոր իր անզիջութեան համար Պողպատասիրտ կ'անուանեն, և երեք հատ հիւսիսային մարտիկներ որ Ռալֆ Միտլդօնի խմբին կ'վերաբերէին, և ասոնք ալ Սբանկիոյի Նիզակները կ'կոչուին։

— Շատ լաւ — պատասխանեց ճօհն իշխանը։

Ապա՝ պահ մը լուռ կենալէն ետև՝ յարեց.

— Պարտօն, մեր ձեռնարկութեան համար կարևոր է որ Մօրիս տը Պրէսիի վրայ 'ի մօտուստ հսկես, բայց այնպէս որ ինք չհասկընայ. ատեն ատեն իմացուր ինձ թէ ի՞նչ կ'ընէ, որո՞ւ հետ կ'խօսակցի, և ի՞նչ ընել կ'մտադրէ։ Այս մասին անհոգ մի լինիր, թէ ոչ պատասխանատու կ'մնաս։

Հիւկ Պարտօն յարգական ողջոյն մը տուաւ և քաշուեցաւ դնաց։

— Եթէ Մօրիս գիս մատնէ — ըսաւ ճօշն իշխանը — եթէ մատնէ գիս, ինչպէս որ իր վարմունքէն կ'կասկածիմ, գլուխը պիտի կորնչ տամ, եթէ երբէք Բիչարտ Եօրքի դուռն իսկ հասած լինի։

ԳԼՈՒԽ ԼԵ

Հիրկանեան անապատի վագր գրգռել,
Սովալլուկ առիւծի հետ 'ի կաց ելնել,
Չէ այնչափ վտանգաւոր քան արծարծել,
Մարած հուրն վայրագ կրօնամոլութեան։
Անոնոն։

Այժմ մեր պատմութիւնն Եօրքցի Իսահակին կ'դառնայ։ Ջորիի մը վրայ հեծած, որ վտարակին պարդևն էր, Հրէայն՝ իրեն իբրև ուղեցոյց և պաշտպան ընկերացող զօրականներուն հետ Ճամբայ ելեր էր դէպ 'ի Դէնբլստուլի ապարանն, որպէս զի իր աղջկան փրկանքին վրայ բանակցի։ Այս ապարանն Դօրդիլսդօնի կիսակործան դղեկէն օրուան մը Ճամբով հեռի էր, և Հրէայն կ'յուսար մութը չկոխած անոր հասնիլ։ Հետևապէս իր ուղեկիցներն անտառէն ելնելէն ետև՝ Ճամբեց արծաթէ դրամ մ'անոնց վարձ տալով, և յողնութիւնը տարածին չափ արագ արագ ընթանալ սկսաւ։ սակայն Ցաճարանէն չորս մղոն հեռի բոլորովին ուժաթափ մնաց, սուր ցաւեր կ'զգար իր կռնակին և անդամներուն մէջ, և արտովին կրած կսկիծներն մարմնական վիշտերէն տաստկանալով՝ լիովին անկարող եղաւ աւելի առաջ քալել և փոքրիկ ապաստանի մը մէջ օթևան առաւ, ուր իր ցեղէն Հրէայ ուաբբի մը կ'բնակէր՝ բժշկական արհեստին մէջ նշանաւոր, և որուն Իսահակ շատ ծանօթ էր։ Նաթան պէն Իսրայէլ իր վշտահար հայրենակիցն ընդունեց օրինաց հրամայած մարդասիրութեամբ, որով Հրէայք իրարու հետ կ'վարուէին։ Խնդրեց որ Իսահակ հանգիստ առնու և ամենէն ազգու դեղե-

ը գործածեց որպէս զի սարսափէն, յոգնութենէ, շարչարանքէն և ցուրտէն հէք հրէին վրայ եկած տենդը բժշկէ։

Հետևեալ օրն երբ Իսահակ կ'մտադրէր երթալ և իր ուղին շարունակել՝ Նաթան անոր դիտաւորութեան դէմ կեցաւ, ոչ միայն իբրև իր հիւրընկալն այլև իբրև բժիշկը։ Եթէ Ճարտայ երթաս՝ կարելի է կեանքդ կորուսես, կ'ըսէր անոր։ Բայց Իսահակ պատասխանեց թէ կենաց և մահու խնդիր էր իրեն համար նոյն տեղը Դէնբլատով գնալու։

— Դէնբլատով — գոչեց իր հիւրընկալը զարմանօք. և նորէն անոր երակը զննեց և իւրովի մրմնջեց։ — Իր տենդը դադրած է, սակայն իր միտքը փոքր ինչ շփոթ և խանդաբեալ վիճակի մէջ կ'երևի։

— Եւ ի՞նչ պատճառաւ Դէնբլատով չպիտի երթայի — պատասխանեց հիւանդը։ — Քեզի հետ կ'խոստովանիմ՝ Նաթան, որ այն տեղը բնակին մարդիկ որոց համար Աւետեաց երկրին արհամարհեալ որդիքն նախատանաց և դարշանաց առարկայ մ'են, սակայն դու արդէն գիտես թէ երբեմն տուրևաւի սոիպոզական դործեր մեզ այն արիունկշակ նազովրեցի զինուորներուն մէջ կ'մղեն, և մենք Տաճարականաց նոյնպէս Հիւրասէր ասպետներու ապարանքներն այցելութեան երթալու կ'ստիպուինք։

— Քաջ գիտեմ այդ բանը — ըսաւ Նաթան — բայց դու միթէ կ'անդիտանաս որ Լուկաս տը Պօմանուար, անանց Ուխտին գլխաւորը, որուն Մեծ Վարպետ անունը կ'տան, այս միջոցիս Դէնբլատով կ'գտնուի։

— Զգիտէի — ըսաւ Իսահակ — մեր Բարկի եղբայրներէն հասած գիրերը կ'իմացընէին որ Պօմանուար նոյն քաղաքն է, որպէս զի Գիլիպ թագաւորին օգնութիւնը խնդրէ սուլթան Սալատինի դէմ։

— Անկլիա գարձաւ նա մինչդեռ իր եղբայրներն իրեն չէին սպասեր — ըսաւ Պէն Իսրայէլ, և կ'գառնայ տաճարականաց կորովի և զինեալ բազուկով մ'որպէս զի զանոնք ուղղէ և սլատժէ։ Բարկութեամբ բորբոքած է այն ասպետներուն դէմ որ իրենց ուխտին հակառակ կ'շարժին և Բէլիարայ որդիք մեծ ահ ու դողի մէջ կ'գտնուին։ Անշուշտ անոր անունը լսած պիտի լինիս։

— Քաջ ծանօթ է ինձի — ըսաւ Իսահակ — հեթանոսներն այս Լուկաս Պօմանուարը՝ Նազովրեցիին օրինաց անթերի գործադրութեան համար իբր արիւնարբու մարդ մը կ'նկարագրեն, և մեր եղբարքը սարսափինացուց վայրագ կործանիչը և Աւետեաց զաւակներուն անապօրոյն թշնամին կ'անուանեն զանի։

— Եւ շատ յարմար անուն մը տուեր են անոր — ըսաւ Նաթան բժիշկը։ — Ուրիշ տաճարականներ թերևս զուարճութեան պատճառաւ իրենց պարտքը չկատարեն, և տակի ու արծաթի սիրոյն համար իրենց ուխտը մոռնան, բայց Պօմանուար ուրիշ տեսակ բնաւորութեան տէր մարդ է։ Հեշտասիրութիւնը կ'ատէ, հարստութիւնը կ'անպատնէ, և յաւաջ կ'նետուի որպէս զի մարտիրոսութեան պսակ ըստացը շահի։ Երանի՛ թէ Յակոբայ Աստուածն այս մարտիրոսութեան արժանի ընէ զինքն և իրենները։ Այս վէս մարդն իր ձեռքը աստիկ ծանրացուց Յուդայի զաւակաց վրայ, ինչպէս որ Դաւիթ իրն Եդոմի որդւոց վրայ ծանրացուցեր էր, և հրէի մը սպանութիւնն սարակինացիի մը մահուան չափ Աստուծոյ հաճելի ողջակէզ մը կ'սեպէ։ Մերցեղերու զօրութեան վրայ՝ անօրէն ստութիւններ կ'թափէ՝ որպէս թէ Սաղանի հնարք լինէին։ Երանի՛ թէ Աստուծոյ դատաստանին հանդիպի։

— Ինչ և է — գոչեց Իսահակ — պէտք է որ Դէնբլատով երթամ, եթէ իր կերպարանն հնոյի պէս եօթնապատիկ բորբոքած անգամ լինի մեղի դէմ։

Այն ատեն Նաթանի պատմեց Իսահակ իր ուղևորութեան պատճառը։ Ռաբբին մտիկ ըրաւ ուշադիր, և իր ժողովրդեան սովորութեան համեմատ՝ իր համակրութիւնը յայտնեց զգեստները պատռելով և գոչելով. — Ա՛հ, իմ աղջիկս, ա՛հ, իմ աղջիկս, վա՛յ, ինչ եղաւ Սիոնի գեղեցկութիւնն, վա՛յ, Իսրայէլ գերութեամբ կ'տառապի։

— Կ'նայիս — յարեց Իսահակ — ինչ դառն վիճակի մէջ եմ և հեռուապէս չեմ կարող մնալ։ Կարելի է Լուկաս Պօմանուարի ներկայութիւնն՝ քանի որ տաճարականաց պարապետն է, Պրայն սը Պուա-Կիլպէրի մոռադրած չար խորհուրդն արգիլէ, և կարելի է պատճառ լինի իմ սիրական Ռեպեկա դուստրս ձեռք ձգելու։

— Ուրեմն մեզնէ գնա — ըսաւ Նաթան Պէն Իսրայէլ — և իմաստուն եղիր, վասն զի իմաստութիւնն անվնաս պահեց Դանիէլն առիւծներու գուբին մէջ, և թերևս քեզի ալ օգնէ սրտիդ փափաքներն 'ի կատար հանելու։ Սակայն, եթէ կարողես, Մեծ Վարպետին ներկայութենէն խոյս տուր, վասն զի օրն 'ի բուն իր միակ բերկրանքն է արհամարհանօք վարուիլ մեր ժողովրդեան հետ։ Կարելի է որ՝ եթէ Պուա-Կիլպէրի հետ առանձնակի խօսիս, աւելի հեշտիւ յաջողիս, վասն զի կ'ըսեն թէ այն անիծեալ նպաստրեցիները միաբան չեն իրենց Տաճարանին մէջ։ Երանի՛ թէ Աստուած անոնց խորհուրդները խառնակէ և յաղթահարէ ամօթահար։ Բայց կ'պաղատիմ՝ քեզ, եղբայր,

նորէն դարձիր այս կողմն իբրև քու հօրդ տունը, և քաջայոյս եմ որ Ռեպեկան միասին պիտի բերես, իմաստուն Միրիամի այս արժանի աշակերտուհին, որուն դեղերն իբրև հմայութեան գործ անբաստանեցին հեթանոսները։

Հետևապէս Իսահակ հրաժարական բարև տուաւ իր բարեկամին, և ժամ մը ձիավարելէն ետև՝ Դէնբլատովի ապարանը հասաւ։

Տաճարականաց այս բնակարանը գեղեցիկ մարդերու և արուեստներու մէջ շինուած էր՝ զոր վերջին հրամանատարը բարեպաշտութենէ պարզև ըրած էր Ռխտին։ Ընդարձակ և ամուր է այս շէնքը, զգուշութիւն մ'որ երբէք ասպետներու ուշադրութենէ չէր վրիպած և Անկլիոյ վրդովեալ վիճակին պատճառաւ մասնաւորապէս կարևոր կ'համարուէր։ Սևաղբեստ երկու նիզակաւորներ շարժական կամուրջը կ'պահպանէին, մինչդեռ ուրիշ պահնորդներ՝ որ մի և նոյն վթագոյն հագուստն ունէին, պարիսպներու վրայ կ'սահէին սպալի քայլով՝ և որոնք ստուերներու կ'նմանէին քան թէ զինուորներու։ Ռխտին ստորին սպաներն ալ նոյնպէս սևեր հագած էին այն ատենէ վեր որ սպիտակ հագուստներու սովորութիւնն՝ ասպետներու և ձիապաններու հագածին նման, Պալէստինի լեռներէն առնուեր էր՝ սուտ եղբայրներու միաբանութեան մը կողմէն՝ որ ինքզինքին տաճարական կ'անուանէին և Ռխտին մեծ անպատուութիւն կ'բերէին։ Ասոնց առեն՝ ասպետ մը բակէն կ'անցնէր՝ իր սպիտակ վերարկուովը պլլուած, գլուխը կրծքին վրայ ծռած և թևերը խաչաձև բռնած կ'երևէր։ Եթէ դիպուածով իրարու հանդիպէին գաւթին մէջ՝ իրարու առջև կ'անցնէին, ծանր, հանդիսաւոր և անձայն բարև մը տալով, վասն զի այս էր Ռխտին կանոնը, Սուրբ Գրոց սա առածին համեմատ. «Շատ խօսելով մեղք չես կրնար ազատիլ» և «Կեանքն ու մահը լեզուին իշխանութեան ներքև են։» Մէկ խօսքով տաճարին հոգևորական մարդանաց խստութիւնը՝ որ երկար ժամանակէ վեր ցոփութեան և անառակութեան փոխուեր էր, կ'երևէր թէ յանկարծ Դէնբլատովի մէջ վերածներ էր՝ Լուկաս Պօմանուարի անաչառ ակնարկին ներքև։

Իսահակ դրան առջև կանգ առաւ, որպէս զի մտածէ թէ ինչ կերպով պիտի յաջողի դղեակը մտնել և կարելի եղածին չափ նպաստաւոր ունկնդրութիւն մը ստանալ, վասն զի քաջ գիտէր որ իր անբաղդ ազգին համար տաճարականաց Ռխտին կրօնամոլութիւնն ընդհատ վտանգաւոր չէր քան իրենց անօրէն պաղշտութիւնը, և թէ մէկ կողմէ իր կրօնն ապրելութեան և հալածանաց դրդիռ պիտի լինէր՝ մէս կողմէ

իր հարստութիւնն անսղբելի բունութեան և հարատևութեան գինքը պիտի ենթարկէր։

Նոյն պահուն՝ Պօմանուար՝ Տաճարանին արտաքին սմբոյներուն սահմանակից մէկ փոքրիկ պարտիզին մէջ ժուռ կ'գար և տրտում ու մտերմական կերպով կ'խօսակցէր Ուխտին մէկ անդամին հետ որ իրեն ընկերանալով՝ Պալէստինէն եկեր էր։

Մեծ Վարպետը տարեւոր մարդ մ'էր, ինչպէս որ իր երկար ճերմակ մօրուքն ու աղէրէկ ունքը կ'յայտնէին։ Իր յօնքը կ'հուլանաւորէին այնպիսի աչեր որոց կրակը չէին կրցած մարել տարիները։ Ամարկու պատերազմական, ներանձն (ascetic) պաշտօնատէր, իր վտիտ և դաժան դիմայ գծերը զօրականի վայրապութիւնը կ'պահէր, և նշանաւոր էր նաև նիհարութեան կողմէ, որ ճգնութեան արդիւնքն էր, և ինքնահաւան բարեպաշտի կրօնական գոռոզութեան կողմէ։ Սակայն Պօմանուար այս գժնեայ դիմօքն հանդերձ ունէր նաև հլանալի և աղնիւ բան մ'որ անշուշտ պարտաւոր էր թագաւորներու և իշխաններու մէջ իր պաշտօնին բերմամբ վարած բարձր պաշտօնին, և Ուխտին կանոնայ հլու արիական և քաջասրտիկ ասպետներու մէջ սովորաբար 'ի գործ դրած ծայրագոյն իշխանութեան։ Իր հասակն էր բարձր, և իր դնացքը սարիքէն և վստակէ անկուն՝ կանգուն էր և սիգապանծ։ Իր սպիտակ վերարկուին ձեւը ճշգրիտ էր և կանոնաւոր, նոյն իսկ Ս. Պէրնարի կանոնին համեմատ շինուած լինելով՝ այսինքն հաստ ասուէ, և ամբողջ կ'փակէր հագնողին մարմինն, իսկ ձախ ուսին վրայ կ'կրէր Ուխտին յատուկ ութանկիւն խաչը՝ կարմիր չուխայէ յօրինուած։ Ոչ մաշկեակ և ոչ աքիսենի զարդարեր էին այս զգեստը. 'ի շնորհս իր տիոց՝ Մեծ Վարպետին կրծոյը գառնուկի խիստ փափուկ մորթէ պատուաւ ունէր կանոնին ներածին չափ, շուրջանակի անոր բրդուելը զարդարուած, և ըստ օրինի այսչափով միայն կարող էր մուշտակի նման բան մը հագնիլ, քանի որ այն ատեն մուշտակը մեծ ճոխութիւն մ'էր։ Իր ձեռքն ունէր այն զարմանալի abacus կամ հրամանատարութեան գաւազանն որով ատէպ տաճարականները կ'ներկայէին։ Այս գաւազանին վերի ծայրն Ուխտին մէկ խաչը փորագրուած է բոլորակի մը վրայ։ Այս բարձրադիր անձին խօսակից ասպետը գրեթէ ըստ ամենայնի նոյն զգեստը հագեր էր, սակայն իր մեծաւորին ցոյց տուած ակնածութենէ կ'երևէր որ ուրիշ կողմէ հաւասարութիւն մը չկար անոնց մէջ։ Հրամանատարը՝ վասն զի այս էր իր աստիճանը, Մեծ Վարպետին հետ նոյն գծին վրայ չէր քալեր, այլ այնչափ ետև կ'կենար որչափ որ

պէտք էր՝ որպէս զի Պոմանուար՝ խօսելու առնն իր գլուխն անոր կողմը դարձնելու չտոխպուի։

— Գոնրատ — կ՚ըսէր Մեծ Վարպետը — իմ մարտերուս և վաստակներուս սիրական ընկերը, քու սրտիդ մէջ միայն կրնամ թափել իմ վիշտերս։ Քեզի միայն կարող եմ ըսել թէ քանի՛ քանի անգամ, այս տէրութեան երկիրը գալէն հետէ, փափաքեցայ մեռնիլ և արդարեւ լուն մօտ գնալ։ Բոլոր Անկլիոյ մէջ չկայ առարկայ մ՚որուն վրայ իմ աչքս հրճուանօք դադարի, բայց՝ ի մեր եղբարց շիրիմներէն որ կը գտնուին այն ամբարտաւան մայրաքաղաքին Դէմբլ եկեղեցւոյն մեծաշէն կամարներուն ներքև։ «Ո՛ արիասիրտդ Ռօպէրդ տը Ռօս, գոչեցի ներքնապէս՝ մինչեւ կ՚գիտէի խաչին այն ընտիր զինուորները, որ իրենց շիրմին վրայ քանդակեալ կ՚հանդչէին, ո՛ ընտիր Վիլյէմ տը Մարշալ, բայէք ձեր մարմարեայ խղիկներն և թոյլ տուէք որ վաստակաբէկ եղբայր մը ձեր հանդստեան մատնակցի, քանի որ լաւ ևս ունի հարիւր հազար հեթանոսաց դէմ մաքառիլ քան թէ մեր նուիրական Ուխտին անկման ակամտաս վկայ լինիլ։»

— Շատ իրաւ է պատասխանեց Գոնրատ Մոնտ-Ֆիշէդ — արդարև շատ իրաւ է ըսածդ, և մեր Անկլիոյ եղբարց անկանոն ընթացքն աւելի ծանր են մեր Ֆրանսայի եղբարց ընթացքէն։

— Ամն զի շատ հարուստ են — պատասխանեց Մեծ Վարպետը։ — Ներէ ինձ, եղբայր, եթէ փոքր ինչ գոռեմ ինքզինքս։ Դու արդէն գիտես թէ ինչ կեանք վարած եմ, իմ Ուխտիս ամէն կանոնները պահելով, տեսանելի և անտեսանելի սաղմոսներու դէմ կռուելով, մռնչող առիւծը սասպալելով, որ չորս դին կ՚շրջէր որպէս զի մէկը գտնէ պատուելու, և այս պաշտօնս իբրև բարի սասպետ և բարեպաշտ քահանայ կատարեցի ուր որ առիւծը գտայ, ինչպէս որ մեր կանոնադրին Խնչ յոդուածին մէջ մեր երջանկայիշատակ Պէրնար տրամադրած է, ut leo semper feriatur։ Բայց տուրք Տաճարին վրայ, իմ մարմինս ու կեանքս մաշող և իմ ոսկրներս չիլելէ ու ծուծը լափող եռանդիս վրայ կ՚երդնում՝ որ քեզնէ և մեր Ուխտին հին խստակրօնութիւնը պահող սակաւաթիւ ասպետներէ զատ՝ չեմ տեսներ ուրիշ մ՚որ տաճարականի անուան արժանի լինի։ Ինչ կ՚ըսեն մեր կանոնները, և մեր եղբարը ինչպէս զանոնք կ՚պահեն։ Պէտք չէ որ սնոտի կամ աշխարհիկ զարդ մը կրեն, ոչ կատար իրենց սաղաւարտին վրայ, ոչ ոսկի մորակ, ոչ ոսկեզօծ սանձ, և սակայն այս Տաճարի խեղճ զինուորներէն աւելի շքեղութեամբ և սնափառութեամբ ոմն կ՚հագուի։

Մեր կանոնները կ՚պատուիրեն որ տաճարականները թուշուն մը չգործածեն ուրիշ թուշուն մ՚որսալու համար, աղեղ կամ նետակալ՚ի ձեռին կենդանիներ չորսան, շեփոր չփչեն կամ երէլին ետևէն ձիարշաւ չլաղեն։ Բայց այսօր թէ երէորսի, թէ հաւորսի, թէ ձկնորսութեան և ուրիշ այսպիսի մնոտի խաղերու մէջ ոյք աւելի ճարտար են քան տաճարականները։ Կարդալու հրաման ունին միայն ինչ որ իրենց գլխաւորը կ՚ցուցնէ, և լսելու՝ միայն ինչ որ ճաշի ժամանակ բարձրաձայն կ՚ընթեռնուն Սուրբ Գիրքէն, բայց ահա որ իրենց ականջները կ՚բանան ամէն թափառաշրջիկ վիպասաններուն, և իրենց աչերն անոնց ունայն վէպերը կ՚սերտեն։ Պատուէր ունին մոգութիւնն ու հերետութիւնը ջնջել, և ահա կ՚ամբաստանուին անոնք՝ որպէս թէ Հրէից հմայական զաղանիքը կ՚տրվին և կռապաշտ Սարակինոսաց մոգութիւնը։ Վերակուրի ժուժկալութիւն պատուիրեցին իրենց, ինչպէս արմատներ, թան, փոխինդ, և շաբաթն երեք անգամ միայն մսեղէն, վասն զի մսեղէնի սովորութիւնը մարմնոյ եպերելի ապականութիւն կ՚պատճառէ, և ահա տես միանգամ որ իրենց սեղանները փափկատուն մնունդներու ներքև կ՚ծնշուին։ Իրենց միակ ըմպելին ջուր պիտի լինէր, և այժմ տաճարականի մը պէս ըմպելն՝ ամէն զուարթասէր մարդու պարծանքն է։ Այս պարտէզն իսկ՝ որ Արևելեան աշխարհներէ եկած ընտիր բոյսերով և ծառերով լի է, անհաւատ էմիրի մը կանանոցին աւելի կ՚յարմարի քան թէ արտի զոր Քրիստոնեայ ճգնաւորներ պարտաւոր էին միայն տնային բանջարներ մշակելու յատկացընել։ Բայց, երանի՛ թէ, սիրելիդ իմ Գօնրաս, կանոնաղանցութիւնը միայն այսչափ լինէր։ Քաջ գիտես որ արգիլեալ էր մեզ ընդունիլ այն բարեպաշտ կիներն, որ՝ի սկզբան մեր Ռուխտին կապուած էին իբրև քոյրեր, վասն զի Խջ գլուխը կ՚ըսէ. «Հին թշնամին, կնոջ ընկերակցութեամբ, շատ մը հոգիներ արքայութեան ուղիղ շաւղէն դարձուց։» Մանաւանդ՝ վերջին գլուխն՝ որ կերպով մը մեր օրհնեալ Հիմնադրին հաստատած մաքուր և անարատ վարդապետութեան կամարակապն է, կ՚արգիլէ մեզ սիրոյ համբոյրն տալ նոյն իսկ մեր քոյրերուն և մայրերուն — ut omnium mulierum fugiantur oscula — կ՚պատկառիմ ըսելու, կ՚պատկառիմ մտածելու որ ապականութիւնն իբրև ջրհեղեղ մեզ ողողեց։ Մեր մաքրակրօն հիմնադիրներուն հոգիները, Հիւկ որ Բեյէնի և Կոսֆրէյ որ Սէնդ Օմէրի, նոյնպէս եօթն սուրբերուն հոգիներն, որ ամենէն առաջ իրենց կեանքը տաճարին սպասաւորութեան նուիրեցին, վրդոված են անշուշտ արքայութեան երկնային խնդութեան մէջ անգամ։ Տեսայ

ղանոնք, Գ-ծնրատ, իմ գլիշերային տեսիլներս մէջ. իրենց նուիրական աչերն արտասուք կ'թափէին իրենց եղբարց մեղայ և յիմարութեանց վրայ, նոյնպէս այն ցնորական և ամօթալի ցոփութեան վրայ որու մէջ կ'թաւալին։

«— Պօմանուար — ըսին ինձ — դու կ'նիրհես, արթընցի՛ր. տաճարին խորանին մէջ արատ մը կայ, խորունկ և վատթար արատ մը՝ նման անոր զոր բորոտութեան հեպքը կ'թողուն Եգիպտոսի որդւոց ժահահոտ տանց պատերուն վրայ։* Խաչին զինուորներն՝ որ պարտաւոր էին կենան մ'անկարկէն խորշիլ՝ ինչպէս կ'խորշին բասիլիկոսի մ'անկարկէն, բայէ 'ի բաց մեղքի մէջ կ'ապրին, ոչ միայն իրենց յատուկ տոհմակից աղջիկներու հետ, այլ անիծեալ հեթանոսաց աղջիկներու հետ, և աւելի անիծեալ Հրէին հետ։ Պօմանուար, դու կ'ննջես, զարթի՛ր, և մեր դատին վրէժխնդիր եղիր։ Սպաննէ՛ մեղաւորները, թէ այր և թէ կին։ Փենեէսի շանթը հետդ առ։» Տեսիլն աներևոյթ եղաւ, Գ-ծնրատ, բայց արթիննալու ատենս՝ կ'լսէի դեռ ևս զրահներու շաչիւնը, և իրենց սպիտակ վերարկուներուն ծփալը։ Անշուշտ անոնց հրամանին համեմատ պիտի վարուիմ, պիտի մաքրեմ տաճարին խորանը, և ախտաժէտ աղտեղի քարերը պիտի քակեմ և շէնքէն դուրս պիտի նետեմ։

— Սակայն լաւ խորհէ, վերապատուելի հայր — ըսաւ Մօնֆիշէ — ժամանակին և սովորութեան ուժովն ախտն արմատ բռներ է, և պէտք է որ բարեկարգութիւնդ խոհական լինի, ինչպէս որ արդար և իմաստուն է։

— Ո՛չ, Մօնֆիշէ — պատասխանեց խստակրօն ծերունին — պէտք է որ արագ և արմատական լինի։ Մեր ուխտը դժնդակ ճգնաժամի մը կը մօտի։ Մեր նախորդներուն ժուժկալութիւնն, անձնուիրութիւնն և բարեպաշտութիւնը մեզ հզօր բարեկամներ շահեցուցին, մեր անձնապատանութիւնը, մեր հարստութիւնը, մեր ճոխութիւնը մեզի դէմ հաղին թշնամիներ գրգռեցին։ Պէտք է որ այս հարստութիւններէն մերկանանք, որ իշխաններուն փորձութիւն կ'պատճառեն, պէտք է որ այս գոռոզութիւնը վար դնենք որ անոնց թշնամանք մ'է, պէտք է որ ջնջենք մեր բարուց շուայտութիւնը՝ որ համայն քրիստոնէական աշխարհի դայթակղութիւն մ'է, ապա թէ ոչ, նշանակէ սա խօսքս, տաճարին Ուխտը հիմնովին պիտի կործանի, և անոր բռնած վայրն իսկ ազգերուն անպայտ պիտի մնայ։

*Տե՛ս Ղևտականին ԺԳ գլուխ։

— Ատուած այսպիսի մեծ աղէտ մը մեր գլխէն հեռու պահէ — ըսաւ հրամանատարը։

— Ամէն — պատասխանեց Մեծ Վարպետը հանդիսաւոր կերպով մը — բայց պէտք է դուն գործել Անոր օգնութեան արժանի լինելու։ Ա-հա կ'ըսեմ քեզ, Գոնրաս, ոչ երկնից զօրութիւնները, ոչ երկրի զօրութիւնները չպիտի կարենան հանդուրժել այս սերնդին անօրէնութեանց։ Իմ տեղեկութիւններս ստոյգ են, արդէն այն հողն որտ վրայ շինուած է մեր շէնքը խախտած է, և մեր մեծութեան յիշակերտին աւելցուցած մեր ամէն մէկ քարն աւելի շուտով անդունդը գահավիժելու պիտի ծառայէ։ Պարտ է մեզ մեր նախորդ շաղին դառնալ, և ինքզինքնիս խաչին հաւատարիմ ախոյեանները ցուցնել, մեր կողմանէ զոհելով ոչ միայն մեր արիւնն ու մեր կեանքը, ոչ միայն մեր պաղշռուութիւններն ու մոլութիւնները, այլ մեր բարօրութիւնը, մեր հանգիստն և մեր բնական համակրութիւնները. 'ի վերջէ պէտք է վարուիլ իբրև մարդիկ որ համոզուած են թէ շատ բերկրութիւններ, որ այլոց օրինաւոր, տաճարին ուխտեալ զինուորին համար դատապարտելի են։

Նոյն պահուն՝ զինակիր մ'որ սև կիսամաշ վերարկու մը հագեր էր (վասն զի այս սուրբ Ուխտին հետամուտներն իրենց նորընծայութեան ժամանակ ասպետներուն հինումին հագուստները կ'հագնէին) պարտէզը մտաւ, և՝ Մեծ Վարպետին առջև խորին խոնարհութիւն մ'ընելով՝ լուռ կեցաւ, և սպասեց որ իր պատգամաւորութիւնը յայտնելէն առաջ, հրաման առնու։

— Միթէ աւելի վայելուչ չէ — ըսաւ Մեծ Վարպետը — տեսնել այս Տամիէնը քրիստոնէավայել խոնարհութեան զգեստով հագուած՝ որ այսպէս իր մեծաւորին առջևն ակնածու լռութեամբ երևի, քան թէ տեսնել զանի քանի մ'օր առաջ հագած զգեստովը, երբ մնափառը գունաւոր լաթեր հագեր էր և խմաստակի պէս լրբութեամբ և գոռոզութեամբ կ'շաղակրատէր։ Խօսէ, Տամիէն, հրաման կ'տամ քեզի, ինչ է պատգամաւորութիւնդ։

— Հրէայ մը դռնէն դուրս կ'սպասէ, ազնիւ և վերապատուելի հայր — ըսաւ զինակիրը — և կ'խնդրէ Պրայն-տը-Պուա Գիլպէրի եղբօր հետ խօսիլ։

— Լաւ ըրիր այդ բանն ինձ իմացընելով — ըսաւ Մեծ Վարպետը։ — Մեր առջև՝ հրամանատար մը մեր ուխտին լոկ մէկ սարդ անդամն է, որ պարտաւոր է գործելու չէ թէ իր այլ իր վարպետին կամաց համեմատ, ինչպէս որ կանոնագիրը կ'պատուիրէ. «Անկանչաք լսելուն

ինձ հնազանդեցաւ։» Մեղ կ՚վերաբերի յատկապէս այս Գուա–Պիլպէրի վարմունքը քննել — ըսաւ նա՝ իր ընկերին կողմը դառնալով։

— Համբաւն իբրև քաջասիրտ և արի կ՚հռչակէ զանի — ըսաւ Գօնրատ։

— Ալդարև համբաւն այս մասին ստոյգ է — ըսաւ Մեծ Վարպետը — արիութեան կողմէ միայն մեր նախորդներէ, Խաչին դիւցազուններէն վար չենք մնար։ Բայց Պրայն եղբայրն իբրև դժգոհ և յուսահատուր մարդ մը մտաւ մեր միաբանութեան մէջ, և տարակոյս չունիմ որ մեր ուխտն ընդունելու և աշխարհէ հրաժեշտ տալու մղուեցաւ՝ չէ թէ անկեղծ կոչումով, այլ իբրև անձ մ՚որ թեթև դժգոհութեան մ՚առթիւ ապաշխարելու յորդորուած է։ Այնուհետև գործունեայ և անձանձիր խուսափարար, բանտարկու դաւադիր և պարապլուխ դարձաւ այն դասուն որ մեր իշխանութեան դէմ կ՚ստահակին, մոռնալով որ Մեծ Վարպետին բռնելիք շաւիղը գծուած է դաւաղանին և ցուպին նշանակովը, դաւաղանը տկարին օգնելու, և ցուպը պարտաղանցը պատժելու համար։ Տամիէն — շարունակեց Մեծ Վարպետը — Հրէայն մեր առջևը հանէ։

Զինակիրը գնաց խորին խոնարհութիւն մ՚ընելով, և քանի մը վայրկենէ դարձաւ՝ Եօրքցի Իսահակն առաջնորդելով։ Երբէք մերկ գերի հղօր իշխանի մ՚առջև ներկայանալուն այնքան խորին պատկառանք և սարսափահար մօտիկցած չէ անոր աթոռին՝ որչափ որ ահ և երկիւղ զգաց Հրէայն Մեծ Վարպետին առջևն ելնելուն։ Երբ երեք կանգուն հեռաւորութեամբ մօտեցաւ, Պօմանուար իր դաւազանով նշան մ՚ըրաւ որ աւելի մօտ չգայ։ Հրէայն ծունր դրաւ գետինը, զոր պապաւ 'ի նշան ակնածութեան, ապա ոտք ելնելով առաջարկանաց առջև կեցաւ, ձեռքը կուրծքին վրայ ծալլած, գլուխը ծոյլն վրայ ծռած՝ արևելեան սովորի մ՚ամէն հլութեամբ։

— Տամիէն — ըսաւ Մեծ Վարպետը — գնա՛, թող քանի մը պահպաններ դուրսը սպասեն որ երբ կոչեմ պատրաստ պանուին, և թոյլ մի տար որ մէկը պարտէզը մտնէ մեր մեկնելէն առաջ։ Զինակիրը ծռեցաւ և ձգեց գնաց։

— Հրէայ — շարունակեց վէս ծերունին — մեր արժանապատուութեան չվայելեր քեզի հետ երկար խօսակցութիւն մ՚ունենալ, և մեր խօսքը կամ ժամանակն ուրիշին չենք վատներ. ուստի իմ ընելիք հարցումներուս հակիրճ պատասխաններ տուր և նայէ որ ճշմարիտը խօսիս, վասն զի թէ որ լեզուդ զիս խաբէ, զայն պիտի կորզեմ այդ ատոյգ ծնօտներէն։

Հրէայն պատասխան տալու կ՚պատրաստուէր, բայց Մեծ Վարպետը շարունակեց.

— Լռէ, անհաւատ, և ոչ բառ մ՚արտասանէ մեր առջև, և միայն հարցումներուս պատասխանէ։ Ի՞նչ գործ ունիս մեր Պրայն տը Պուա Կիլպէր եղբօր հետ։

Խահակ հառաչեց սարսափահար և անստուգութեամբ. եթէ իր պատմութիւնը պատմէր միթէ ուխտին գայթակղութեան առիթ մը չըպիտի լինէր, սակայն եթէ չպատմէր իր դատեր ազատութեան համար ի՞նչ յոյս կրնար ունենալ։ Պօմանուար անոր մահաբեր երկիւղը դիտեց և հաճեցաւ զանի խաղաղել։

— Հրէայ, մի՛ վախնար — ըսաւ անոր — քու ողորմելի անձիդ համար, միայն թէ ուղղութեամբ վարուէ մեզի հետ։ Ուստի վերսին կը հարցնեմ թէ ի՞նչ գործի առթիւ Պրայն տը Պուա Կիլպէրի հետ յարաբերութիւն ունեցեր ես։

— Գրաբեր մ՚եմ — թոթովեց Հրէայն — Ձեր Վերապատուելի արիութեան հրամանաւ, և գլուս Ժօրվօի մենաստանին վանահայր Էյմէրի կողմէ այն բարի ասպետին պիտի յանձնեմ։

— Քիչ մ՚առաջ չէի՞ ըսեր, Գօնրատ — ըսաւ Վարպետը — որ յոռի ժամանակներու մէջ կ՚ապրինք։ Կիսդէրնեան միաբանութեան մէկ վանահայրը տաճարի մէկ զինուորին գիր մը կ՚առաքէ և յարմարագոյն պատգամաւոր մը չկրնար գտնել քան անհաւատ Հրէայ մը։ Տուր ինձ այդ նամակը, Հրէայ։

Խահակ գողահար ձեռօք իր հայական խոյրին ծալքը բացաւ, որոյ մէջ մեծագոյն ապահովութեան համար Էյմէրի թուղթը պահեր էր. այն ինչ պիտի մօտենար, ձեռքը կարկառած և մարմինը ծռած՝ որպէս զի նամակը շարագուշակ հարցանողին հասցընէ, երբ Մեծ Վարպետը գոչեց,

— Հեռո՛ւ, շո՛ւն, միայն սրուս կ՚դպիմ անհաւատներուն։ Գօնրատ, առ սա նամակը Հրէին ձեռքէն և ինձի տուր։

Պօմանուար գիրն առնլով ուշի ուշով արտաքին կողմը քննեց և ապա սկսաւ անոր բոլորտիքը կապուած գերձանը քակել։

— Վերապատուելի հայր — ըսաւ Գօնրատ՝ զանի կեցընելով, թէև մեծ ակնածութեամբ — միթէ կնիքը պիտի բանամ։

— Եւ ինչո՞ւ չէ — ըսաւ Պօմանուար գժգոհելով։ — Միթէ գրուած չէ՞ Խրատ գլխին մէջ, De lectione literarum, թէ տաճարական մը չպիտի ընդունի նամակ մ՚իր հօրը կողմէն իսկ, մինչև որ զայն Մեծ Վարպետին չհաղորդէ և իր ներկայութեան չկարդայ։

Այն առեն արտորնօք զիրն աչքէ անցուց՝ զարմանք և սարսափ յայտնելով. յետոյ վերատին կարդաց աւելի ծանր, ապա զայն մէկ ձեռնով Գօնրատին տալով, և թեթև մը միւսովը զարնելով՝ գոչեց.

— Ահա զարմանալի բաներ զոր քրիստոնեայ մ՝ուրիշ քրիստոնէի մը կ՝գրէ. և երկուքն ալ անգամ են, և նշանաւոր անգամ կրօնական միաբանութեանց. երբ պիտի գաս, ո՛ Քրիստոս — ըսաւ նա հանդիսապէս և իր աչերը դէպ՝ի երկին ածելով — երբ պիտի գաս քու խարբալիշ ներովդ որպէս զի որոմը ցորենէն զատես։

Գօնրատ Մօնֆիշէ իր մեծաւորին ձեռքէն նամակն առնելով պիտի կարդար երբ Մեծ վարպետն ըսաւ. — Բարձր ձայնով կարդա, Գօնրատ, և դու, Հրէայ, մտադիր եղիր, վասն զի այս նամակին վրայ քեզի հարցումներ ունիմ ուղղելու։

Գօնրատ նամակը կարդայ, որ սա ոճով գրուած էր.

«Երկնային շնորհիւ՝ Էյմէր՝ ժօրվօի Ս. Կուսի Կիսգէրեան միաբանութեան առաջնորդ, առ տէր Պրայն տը Պուա Կիլալէր, ասպետ Տաճարի սուրբ ուխտին՝ առողջութիւն և խնդութիւն կ՝մաղթէ, նոյնպէս Պաքոս թագաւորին և Ասողիկ սիկինոջ բոլոր շնորհքն ու պարգևները։ Իսկ մեր արդի վիճակին գալով, սիրելի եղբայր, դերի ընկած ենք դաս մ՝անօրէն և ամբարիշտ մարդոյ ձեռքը, որ ժպրհեցան մեր անձը ձերբակալել և մեզ փրկանքի դատապարտել. ասոնց միջոցաւ իմացանք նաև Ֆրօն-տը-Պէօի դժնդակ վախճանը և քու փախուստդ այն գեղանի վհուկ հրէուհին հետ, որու սև աչերը քեզ թովեցին։ Սրտագին ուրախ ենք որ անվտանգ ազատեր ես, սակայն կ՝աղաչենք քեզ զգոյշ մնալ այն Էնդօրի նոր վհուկի մասին. վասն զի մենք գաղտնի իմացանք որ Մեծ Վարպետը՝ որ ստակ մը չտար աշխարհիս բոլոր վարդապետներու և սև աչերու համար, Նօրմանտիայէն կ՝գառնայ ձեր խնդագին կենակցութեան սահման դնելու և ձեր պարտաղանցութիւնը պատժելու։ Ուստի կ՝աղաչենք քեզ մտերմօրէն զգուշանալ և հսկել, ինչպէս որ կ՝ըսէ Սուրբ Գիրքը. Invenientur vigilantes։ Եւ Ռեբեկայի Ճոխ հայրը՝ Եօրքցի Իսահակ՝ իզնէ յանձնարարական գիր մը խնդրելուն՝ սոյն նամակս տուի անոր, ուժգին յորդորելով և պաղատելով քեզ որ իր աղջկան համար քեզ առաջարկելիք փրկանքն ընդունիս, վասն զի իր քսակէն պիտի զինջանի վճարել քեզ անշուշտ դումար մ՝որով պիտի կարենաս աւելի նպաստաւոր պայմաններով յիսուն հատ օրիորդ գտնել. և ես ալ անկից իմ բաժինս ստանալ կ՝ուսամ երբ միասին ճօնախմբենք, իբրև ճշմարիտ եղբայրներ, առանց բաժակը մոռ-

նալու. վասն զի միթէ դիրքը չըսեր. vinum lætificat cor hominis, (գինի կաղդուրէ մարդու մարմինը) և գարձեալ Rex delectabitur pulchritutine tua.

Մինչև այս խնդագին միութեան, քեզի շատ ողջոյններ։ Տուեալ աւազակներու այս քարայրէն, առաւօտեան ժամերգութեան միջոցները։

«ԷՅՄԷՐ, ԱՌԱՋ. Ս. Կ. ԺՕՐՎԼՕԻ

«Յ. Գ. Իրաւի, քու ոսկի շղթայդ երկար ատեն չմնայ իմ քովս, այժմ եղջերուի գող վտարակի մը վզէն սուլիչը կապելու պիտի ծառայէ, որով իր շունները կ'կոչէ։»

— Ի՞նչ կ'ըսես ասոր, Գօնրատ — հարցուց Մեծ Վարպետը։ — Գողերու քարայր մը շատ յարմար բնակարան մ'է այսպիսի քահանայի մը համար։ Զարմանք չեն ուրեմն եթէ Աստուծոյ ձեռքը մեր վրայ կը ծանրանայ, և եթէ Սուրբ Տեղեայ մէջ քաղաք քաղքի վրայ, քայլ առ քայլ կ'կորսընցրնենք անհաւատներուն առջև, երբ Էյմէր առաջնորդին պէս եկեղեցականներ ունինք։ Բայց ի՞նչ ըսել կ'ուզէ այն Էնդօրի նոր վէհուկը — հարցուց նա իր խորհրդակցին՝ փոքր ինչ ձայնը մեղմելով։

Գօնրատ (Թերևս 'ի փորձ) լաւ ևս հմուտ էր կնասիրական գռեհիկ լեզուին քան թէ իր մեծաւորը. ուստի բացատրեց այն տունն որ Մեծ Վարպետին միտքը կ'շփոթէր, ըսաւ անոր որ աշխարհային մարդոց գործածած մէկ ոճն էր այն որով իրենց սիրած կնոջ կ'ակնարկէին, բայց այս մեկնութիւնը գոհ չըրաւ խստակրօն Պօմանուարը։

— Այն բառը քու կարծածէդ աւելի իմաստ կ'պարունակէ, Գօնրատ — վրայ բերաւ Մեծ Վարպետը — պարզմտութիւնդ չէ կարող թափանցել այս անզգամութեանց վիհը։ Այս Եօրքցի Ռեբեկան Միրիամի սանուհին է որուն անունն արդէն լսած ես։ Հիմակ պիտի ըսես որ հրէայն իսկ պիտի խոստովանի այս բանս։ — Յետոյ Իսահակին կողմը դառնալով՝ բարձրաձայն ըսաւ անոր.

— Ուրեմն քու աղջիկդ Պրայն տը Պուա Կիլբէրի կալանուհին է։

— Այո՛, վերապատուելի հայր — թոթոփեց անբաղդ Իսահակ — և աղքատ մարդ մ'ինչ փրկանք որ կարենայ տալ . . .։

— Լռէ — ընդմիջեց Մեծ Վարպետը։ — Միթէ դուստրդ բժշկութիւն ըրած չէ՞։

— Այո՛, շնորհապարդ տէր — պատասխանեց հրէայն աւելի վստահութեամբ, և ապետ ու դեղացի, ազնուական ասատատէր ան-

շուշտ կ՚օրհնեն այն ընտիր ձիրքն զոր Երկին իրեն շնորհած է։ Շատ մարդիկ կրնան վկայել որ զիրենք իր արհեստին շնորհիւ բուժեց, երբ ուրիշ որ և է մարդկային դարման անարդիւն մնացեր էր, բայց Յակոբայ Աստուծոյ օրհնեանքն անոր վրայ էր։

Պոմանուար Վոնֆիշէի կողմը դարձաւ դառն ժպիտով մը։ — Նայէ՛, եղբայր — ըսաւ նա — մեզ լափող թշնամւոյն նենգը. տես միանգամ այն խայծերն որով հոգիներ կ՚որսայ, յաւիտենական երանութեան փոխարէն երկրիս վրայ քանի մը թշուառ օրեր տալով։ Մեր սուրբ կանոնը քաջ կ՚ըսէ. Semper percutiatur leo vorans. զարնենք առիւծը, խորտակենք կործանիչը — գոչեց նա իր խորհրդաւոր աքիոաջ տատանելով, որպէս թէ խաւարի զօրութեանց դիմադրաւ կենալ կ՚ուզէր։ Տարակոյս չունիմ որ աղջիկդ շատեր կ՚բժշկէ — յարեց նա խօսքը հրէին ուղղելով, մոգական խօսքով, հմայեկներով և ուրիշ կախարդական հնարքով։

— Ո՛չ, վերապատուելի և արի ասպետ — պատասխանեց Իսահակ — կ՚բուժէ նա յատկապէս սպեղանիի մը հրաշալի ներգործութեամբը։

— Այս դաղտնիքն ուսկից ստացած է — հարցուց Պոմանուար։

— Միրիամ, մեր ցեղին մէկ յարգելի տիկինն աւանդեց զայն անոր — պատասխան տուաւ հրէայն գժկամակութեամբ։

— Ա՛հ, խաբեբայ հրէայ — գոչեց Մեծ Վարպետը խաչ հանելով — միթէ Միրիամ վհուկը չէ՞ այն որուն գարշելի հմայքը բոլոր քրիստոնէից ծանօթ են։ Իր մարմինը փայտակուտին վրայ այրեցին և իր մոխիրն հովին տուին։ Նոյն կրակը թափի իմ և միաբանութեանս գլխուն եթէ նոյն և աւելի խստութեամբ չպատժեմ անոր աշակերտուհին։ Պիտի տրվեցրնեմ անոր թէ ինչպէս կ՚հմայեն Տաճարին զինուորները։ Քեզի կ՚ըսեմ, Տամիէն, այս հրէայն տունէն դուրս նետէ, սպաննէ զանի եթէ գիմադրէ կամ վերատին դառնայ։ Իսկ իր դստեր նկատմամբ պիտի վարուինք ինչպէս որ քրիստոնէական օրէնքն ու մեր յատուկ պաշտօնը կ՚պահանջեն։

Ուստի հէք Իսահակը տաճարատունէն դուրս վանեցին, իր բոլոր պաղատանքը, նոյն իսկ դրամական առաջարկութիւնները մտիկ ընող չեղաւ։ Տեսաւ որ ուրիշ ճար չկար բայց եթէ ռաբբիին տունը դառնալ, և անոր խորհրդով աղջիկն ազատելու հնար մը գտնելու ջանալ։ Մինչև ցարդ անոր պատուոյն համար հոգի մէջ էր, այժմ անոր կենաց վտանգը տեսնելով կ՚դողար։ Նոյն պահուն Մեծ Վարպետը հրամայեց որ Դէմբլեդովի Հրամանատարն իր առջև կոչեն։

ԳԼՈՒԽ ԼԶ

Աբուլեասս նենդ է մի՛ ըսեր — ամէնք կ՚ապրին երևոյթով։
Ցնանկն անով կ՚մուրայ, և զուարթերես միջնորդն
Կ՚շահի հող, տիտղոս, կարգ և իշխանութիւն երևոյթով.
Կղերը չանդոաներ զայն, և արիասիրտ զինուորն
Պաշտօնն անով կ՚մեծցնէ։ Ամէնքը զայն կ՚ընդունին,
Ամէնքը կ՚գործադրեն զայն. և այն որ կ՚շատանայ
Ցոյց տալով ինչ որ է, վարկ քիչ պիտի ստանայ
Եկեղեցին կամ բանակը կամ յարքունիս։ — Այսպէս կ՚շարժի աշխարհ։

Հէյ Խ—ղ

Ալպէր Մալվուազէն, Նախագահ, կամ միաբանութեան գործածած ոճով, Դէնբլոդովի հիմնարկութեան Հրամանատար, մեր պատմութեան մէջ երբեմնակի յիշատակած Փիլիպ Մալվուազէնի եղբայրն էր, և՝ այս սեպուհին պէս՝ սերտ յարաբերութիւն ունէր Պրայն տը Պուա Պիլպէրի հետ։

Առանց սկզբունքի և վաւաշոտ մարդոյ մէջ, որոյ տեսակէն Տաճարի միաբանութիւնն շատեր ունէր, Դէնբլոդովի Ալպէրն ամենէն նշանաւորն էր. բայց յանդուգն Պուա—Պիլպէրէն կ՚տարբերէր այնպէս որ նա իր փառասիրութիւնն ու մոլութիւնները կեղծաւորութեամբ կ՚վարագուրէր, և մոլեռանդութիւն մը կ՚կեղծէր զոր ՝ի ներքուստ կ՚ատէր։ Եթէ Մեծ Վարպետն այնպէս յանկարծակի Դէնբլոդով չհաստատէր, անշուշտ անոր մէջ չպիտի տեսնէր բան մ՚որ կրօնական խստամբերութեան թոյլութիւն մը ցուցնէր։ Եւ թէպէտև Ալպէր Մալվուազէն յանկարծ բռնութեր և կերպով մ՚իր խաբէութիւնն երևան ելեր էր, սակայն իր մեծաւորին յանդիմանութիւններն այնքան ակնածութեամբ և երևութական հլութեամբ մոխիկ կ՚ընէր, և այնքան կ՚արտորար անոր դատապարտած բաներն ուղղել, որ ՝ի վերջէ յաջողեցաւ այնպիսի անձնուէր բարեպաշտութեան կերպարան մը տալ միաբանութեան մ՚որ ինքզինքը վերջին ատենները զեղխութեան և ապերասանութեան տուեր էր, որ Ղուկաս Պօմանուար սկսաւ աւելի մեծ դաղափար մը տածել Հրամանատարին բարոյականին վրայ, քան ինչ որ միաբանութեան առաջին տեսքէն յորդորուեր էր ունենալու։

Բայց Մեծ Վարպետին նպաստաւոր կարծիքը սաստիկ տկարացաւ երբ լսեց թէ Ալպէր կրօնատան մէջ ընդուներ էր Հրէայ դէրի աղջիկը, և որ աւելի երկնչելի էր, ուխտին մէկ ասպետին սիրուհին էր. երբ Ալպէր ներկայացաւ, Պօմանուար դաժան խստութեամբ անոր երեսը նայեցաւ։

— Այս ապարանը՝ որ Տաճարի սուրբ ուխտին նուիրուած է — ըսաւ Մեծ Վարպետը խիստ ձայնով մը — Հրէայ կին մը կայ զոր կրօնակից եղբայր մը բերեր է ասոնօր, և դու, պարոն Հրամանատար, ակնառութեամբ զանի ներս ընդուներ ես։

Ալպէր Մալվուազէն յայլայլմէ եղաւ, վասն զի տարաբաղդ Ռեբեկան բնակարանին մէկ թաղուն և հեռաւոր կողմը փակուած էր և ամէն տեսակ զգուշութիւն ըրեր էին որ անոր ներկայութիւնը ծածուկ պահեն։ Պօմանուարի աչաց մէջ կարդաց իր և եղբօրը Պուա-Կիլպէրի կորստեան վճիռը, եթէ հնար մը չգտնէր սպառնալից փոթորկին դէմ առնլու։

— Ինչո՞ւ համար լուռ ու մունջ կ'մնաս — շարունակեց Մեծ Վարպետը։

— Միթէ ներելի՞ է ինձ պատասխանել — հարցուց Խնամատարն ամենախորին հեզութեան ձայնով մը, թէև այս հարցումով կ'փափաքէր միայն պահ մը շահիլ որ իր դաղափարները կարգի դնէ։

— Խօսէ, հրաման ունիմ — ըսաւ Մեծ Վարպետը։ — Խօսէ, և ըսէ թէ արդեօք դիտե՞ս մեր կանոնադրին սայլդուածը. De commilitonibus Templi in sancta civitate, qui cum miserrimis mulieribus versantur, propter oblectationem carnis.*

Արդարև, դերապատուելի Հայր — պատասխանեց Խնամատարը — մեր միաբանութեան այս բարձր պաշտօնին չհասայ առանց դիտնալու իր ամենէն կարևոր մէկ պատուէրը։

— Ուրեմն ի՞նչէ պատճառը, վերստին կ'հարցնեմ քեզի, որ դուք յանձն առիր որ եղբայր մ'իր սիրուհին, և այս սիրուհին ևս Հրէայ վհուկ մը լինելով, այս նուիրական վայրս բերէ, որպէս զի զայն արատէ։

— Հրէայ վհո՞ւկ մը — պոչեց Ալպէր Մալվուազէն — բարի հրեշտակները մեզ պահպանեն։

— Այո՛, եղբայր, Հրէայ վհուկ մը — ըսաւ Մեծ Վարպետը

*Այս յիշած վճիռը թեթեւաբարոյ կանանց հետ հաղորդակցութիւն ունենալ կ'արգիլէ։

խստութեամբ — արդէն ըսի քեզ, միթէ կ'ժպրհիս ուրանալու թէ՝ այն Ռեբեկան, Եօրքցի թշուառ վաշխառու Իսահակին դուստրը, և Մի-րիամ՝ աղտեղի կախարդին տանուհին, այժմ աստ . . . ինչ ամօթ է խորհիլ և ըսելն իսկ . . . աստ, այս ապարանիս մէջ չբնակիր։

— Ձեր իմաստութիւնը, վերապատուելի Հայր — պատասխանեց հրամանատարը — իմ մտայս խաւարը փարատեց։ Ես ևս շատ կ'զարմանայի որ Պուա-Կիլպէրի պէս բարեսիրտ ասպետ մը նոյն կնկան հրապոյրներէն այնպէս յիմարաբար նուաճած երևի, կին մը զոր այս տանս մէջ ընդունեցայ որպէս զի անոնց սրտակցութեան արգելք մը դնեմ, թէ ոչ՝ օր ըստ օրէ պիտի բորբոքէր և մեր կրօնակից արիասիրտ եղբօր հոգին 'ի կորուստ պիտի մատնէր։

— Ուրեմն մինչև ցարդ չանցաւ բան մ'անոնց մէջ իր ուխտին ներհակ — հարցուց Մեծ Վարպետը։

— Ի՞նչպէս, միթէ այս ապարանքիս մէջ — ըսաւ հրամանատարը խաչ հանելով։ — Սուրբ Մակդաղինէ և տասն մէկ հազար կոյսերն մեղ պահպանեն։ Ո՛չ, եթէ մեղք գործեցի հրէայ աղջկան այս տեղ մուտ տալով, սա մոլար խորհրդովէր որ պիտի կարենամ եղբօրս աղէտաբեր եռանդն դադարել՝ որ ինձի այնքան վայրագ և անբնական կ'երևէր, որ ուրիշ բանի չէի կարող վերագրել բայց միայն կերպ մը խելագարութեան, որ աւելի կարեկցութեան արժանի էր քան թէ յանդիմանութեան։ Սակայն քանի որ ձեր վերապատուելի իմաստութիւնն ենան հանեց թէ այս հրէայ օրիորդը վհուկ մ'է, այժմ բոլորովին կը մեկնուի իր սիրային յիմարութիւնը։

— Այո՛, այո՛ — ըսաւ Պօմանուար։ — Նայէ միանգամ, Գօնրատ, ի՞նչ վտանգի կ'հասնի մարդ երբ սադանի առաջին հմայից նենգութեան միտ կ'դնէ։ Կնկան կ'նայինք միայն մեր աչքը պարարելու և նկատելու ինչ որ մարդիկ դեղեցկութիւն կ'անուանեն, և հին թշնամին, դիշակերը առիւծն ասով իշխանութիւն մը կ'ստանայ մեր վրայ, որպէս զի բժժանօք և հմայութեամբ աւարտէ գործ մ'որ դանդաղութենէ և յիմարութենէ ծնունդ առաւ։ Կարելի է որ մեր Պուա-Կիլպէր եղբայրը գթութեան արժանի է քան ծանր պատուհասի, դաւազանի օգնութեան կ'կարօտի քան փայտի հարուածներուն, և թէ մեր խրատներն ու աղօթքը թերևս իր յիմարութիւնը փարատեն և զինքն իր եղբարցը ծոցը վերադարձրնեն։

— Արդարև՝ մեղք պիտի լինէր — ըսաւ Գօնրատ — եթէ Տաճարի Ուխտը իր լաւագոյն նիզակներէն մին կորուսէր, մինչդեռ սուրբ Միա-

բանութիւնս իր որդւոյ օդնութենէ սաստիկ պէտք ունի։ Այս Պուա-Պիլպէրն է որ իր ձեռքը երեք Հարիւր սարակինացի սպաննեց։

— Այս անիծեալ շուներուն արիւնն — ըսաւ Մեծ Վարպետը — հաճելի պարդև մը պիտի լինի սրբոյ և հրեշտակաց զոր կ՚անդրանեն Հայհոյելով, և որոց աջակցութեամբը պիտի կարողլինինք ցրուել այն հմայքն ու յուռութքն որով մեր եղբայրը՝ իբրև ուռկան, շրջապատուած է։ Այս՝ Դալիլայի կապերը պիտի խորտակէ, ինչպէս որ Սամսոն խորտակեց այն երկու նոր լարերն որով Փղշտացիք զինքը կաշկանդեր էին, և պիտի ջարդէ, դէզադէզ կուտակէ անհաւատները։ Իսկ այն վատթար վհուկին դալով՝ որ Տաճարական եղբօր մը վրայ իր բժժանքը նետեց, անշուշտ՝ ի մահ պիտի դատապարտուի։

— Բայց Անկլիոյ օրէնքն — ըսաւ հրամանատարն՝ որ թէև շատ ուրախ էր որ Մեծ Վարպետին ոմն՝ այսպէս բարեբաղդօրէն իրմէ և Պուա-Պիլպէրին հեռանալով՝ ուրիշ ուղղութիւն մ՚առեր էր, այժմ սկսաւ երկնչիլ որ չափը կ՚անցնի։

— Անկլիոյ օրէնքն — ընդհատեց Պոմանուար — կ՚ներեն և կ՚պատուիրեն որ ամէն դատաւոր իր իրաւասութեան սահմանին մէջ գտնուած մարդիկը դատէ։ Ամենէն անհնարն սեպուհը կարող է ձերբակալ ընել, դատել և դատապարտել իր հողերուն մէջ գտնուած վհուկ մը։ Եւ միթէ այս իշխանութիւնը պիտի պլանեն Տաճարի Մեծ Վարպետին իր Միաբանութեան ապարանի սահմանին մէջ. ոչ, մենք պիտի դատենք և դատապարտենք։ Վհուկն երկրիս վրայէ պիտի ջնջուի, և իր կախարդանաց զօրութիւնն իրեն հետ պիտի անհետի։ Հրամանատար, դղեկիս մեծ սրահն վհուկին դատաստանին համար պատրաստել տուր։

Ալպէր Մալվուազէն խոնարհելով քաշուեցաւ դնաց, չէ թէ սրահին պատրաստութեան համար հրամաններ տալու, այլ Պուա-Պիլպէրը փնտռելու և գործին հետևանաց վրայ անոր հետ խորհրդակցելու համար։ Շատ չանցաւ զանի դտան՝ բարկութեամբ բորբոքած՝ գեղանի հրէայ օրիորդին կողմէն նորէն դիմադրութիւն տեսնելուն առթիւ, — Անմիտ — կ՚ըսէր նա — ապաշնորհ աղջիկ, ինչպէս կ՚անդրանէ այն մարդն որ արեան և բոցերու մէջէն՝ իր կեանքը վտանգի մէջ դնելով, իրենն աղատեց։ Երկին վկայ, Մալվուազէն, անդ մնայի մինչև որ տախտակներն ու գերաններն իմ բոլորտիքս ընկան։ Հարիւրաւոր նետերու նշաւակն էի, որոնք իմ՝ զէն ու զարդիս վրայ կ՚թնդէին ինչպէս որ ապակեայ պատուհանի մը վրայ կարկուտը կ՚թնդայ, և ես իմ՝ վա-

հանս զինքը պահպանելու համար միայն կ'գործածէի։ Ահա այս նեղութիւնները կրեցի անոր համար և այժմ կամաւէր օրիորդը կ'ասաէ զիս որ զինքը չթողուցի որ մեռնի, և կ'զլանայ ինձ ոչ միայն երախտագիտութեան թեթեւագոյն մէկ նշանն, այլև նոյն իսկ չյուսադրէր ինձ որ ապագային մէջ պիտի հաւանի իմ սիրոյս։ Սատանան որ իր ցեղին յամառութիւն տուած է, իր բոլոր ոյժն անոր անձին մէջ կենդրոնացուցեր է։

— Կարծեմ թէ — ըսաւ հրամանատարը — սատանան ձեր երկուքին փորը մտեր է, քանի՛ քանի անգամ, եթէ ոչ ժուժկալութիւն, զէթ զգուշութիւն քարոզեցի քեզ։ Մի՞թէ չըսի՞ քեզի որ կրնաս բաւական զթասէր քրիստոնեայ օրիորդներ գտնել որ մեզք կ'համարին քեզի նման ալիսաիրտ ասպետի մը անբոյշն պրէպոտը մերժել, և դու դարձեալ կ'երթաս քու սիրտդ կամաւէր և յամառ հրէայ օրիորդի մը վրայ կ'դնես։ Սուրբ պատարագ վկայ, կարծեմ թէ ծերունի Ղուկաս Պօմանուարի դուշակութիւնը ճիշտ է, երբ կ'սնդէ թէ հրէուհին քեզ համայեր է։

— Ղուկաս Պօմանուար — դոչեց Պուա-Կիլբէրը յանդիմանական ձայնով մը — միթէ ասոնք են քու զգուշութիւններդ, Մալվուազէն։ Ի՞նչպէս թողուցիր որ խեղճոյնոր ծերունին իմանայ թէ Ռեբեկա այս ապարանքս մէջն է։

— Ի՞նչպէս պահէի — ըսաւ հրամանատարը — ամէն հնար դործ դրի որ այս դաղտնիքը թաղուն պահեմ, բայց երևան ելաւ, ուրիշ միջոցաւ, սատանայէն թէ ուրիշի ձեռօք, սատանան միայն կարող է ըսել։ Բայց կարելի եղածին չափ դործը կարդի դրի, կ'աղաչեմ, եթէ Ռեբեկայէն հրաժեշտ տաս. կ'գթան վրադ, իրրև հմայութեան զոհ մը. իսկ հրէայ օրիորդը վհուկ մ'է, և իրրև այն պիտի պատժուի։

— Ո՛չ, երկին վկայ, չպիտի մեռնի — ըսաւ Պուա-Կիլբէրը։

— Երկին վկայ, պիտի մեռնի, և պէտք է որ մեռնի — ըսաւ Մալվուազէն։ Ոչ դու, և ոչ որ և է մէկը կարող է զանի ազատելու։ Ղուկաս Պօմանուար որոշեց որ հրէայ աղջկան մը մահը բոլոր տաճարական ասպետներուն սիրոյին սխալանոց համար բաւական պարդև մ'է քաւութեան, և արդէն գիտես թէ խշխանութիւն և միանդամայն կարողութիւն ունի այսպիսի օրինաւոր և բարեպաշտական խորհուրդ մը դործադրելու։

— Մի՞թէ ապաղայ դարերը պիտի հաւատան երբէք որ այսպիսի ա-

պուշ մոլեռանդութիւն մը գտնուած է — ըսաւ Պուա-Կիլպէր՝ սենեկին մէջ վեր վար քալելով մեծաքայլ։

— Գիտեմ թէ ինչ պիտի հաւտան — ըսաւ Մալվուազէն հանդարտօրէն, բայց սա քաջ գիտեմ որ մեր այս ժամանակները, կղերական և աշխարհական՝ հարիւրին իննսուն ինն՝ ամէն պիտի գոչեն Մեծ Վարպետին վճռոյն։

— Գիտեմ և ես ընելիքս — ըսաւ Պուա-Կիլպէր։ — Ալպէր, դու իմ բարեկամս ես. դու անոր փախուստին աչք պիտի գոցես, և զանի աւելի ապահով և դաղտնի վայր մը պիտի փոխադրեմ։

— Եթէ կամիս իսկ, չպիտի կարենամ խնդիրդ կատարել — պատասխանեց հրամանատարը — ապարանս Մեծ Վարպետին սպասաւորներով և իրեն անձնուէր մարդերով լեցուն է։ Եւ բայէ՛ի բաց ըսեմ, եղբայր, այս մասին քեզի գործակից չպիտի գտնուիմ, եթէ ապահով իսկ լինիմ որ անքոյթ նաւահանգիստը պիտի հասնինք։ Արդէն բաւական նեռուեցայ քու սիրոյդ համար, միտք չունիմ պատուոյ աստիճանէս ընկնելու, կամ մինչև հրամանատարութիւնս կորուսելու դատապարտուիլ հրէի կտորի մը համար։ Իսկ դու, եթէ խրատիս անսալ կ'ուզես, թողայս վայրի սպի որսորդութիւնն և բաղէդ ուրիշ որսի մը վրայ ասձակէ։ Մտածէ միանգամ, Պուա-Կիլպէր, որ քու արդի աստիճանդ, ապագայ պատիւդ, ամէն ինչ մեր ուխտին մէջ բռնելիք դիրքէդ կախում ունի։ Եթէ առ Ռեպեկա տուփանքդ կամակորութեամբ շարունակես, Պոմանուարին իշխանութիւն պիտի տաս քեզ արտաքսելու, և այս իշխանութիւնը պիտի գործածէ անշուշտ։ Իր դողահար ձեռքը բռնած հրամանատարութեան գաւազանին նախանձախնդիր է և քաջ գիտէ որ կորովի բաղուկդ կ'կարկառես արդէն զայն բռնելու։ Աներկիւղ եղիր որ քեզ պիտի կործանէ եթէ հրէայ վհուկ մը պաշտպանելու չափ պատեհ առիթ մ'ընծայես անոր։ Այս պարագայիս մէջ արձակ ձգէ ասպարէզն անոր առջև, վասն զի չես կարող անոր դիմադրել։ Երբ անգամ մը գաւազանը քու հաստպլինդ ձեռքդ անցնի, այն ատեն կարող ես, ըստ հաճոյս՝ գգուել կամ այրել Յուդայի աղջկունքը։

— Մալվուազէն — ըսաւ Պուա-Կիլպէր — դու ես մէկ պաղարիւն . . . ։

— Բարեկամ մը — ըսաւ հրամանատարը՝ խօսքն աւարտելու շտապելով, որուն տեղ թերևս Պուա-Կիլպէր աւելի վատ բառ մը պիտի գործածէր — պաղարիւն բարեկամ մ'եմ արդարև, և հետևապէս քեզ խրատ տալու աւելի յարմար։ Ահա վերստին կ'յայտնեմ քեզ, Ռեպե-

կան չես կարող ազատել, վերստին կ'ըսեմ քեզ, անոր հետ ինքզինքդ 'ի կորուստ պիտի մատնես միայն։ Գնա Մեծ Վարպետը գտիր, անոր ոտքն ընկիր և ըսէ . . .։

— Երկին վկայ, չէ թէ անոր ոտքն ընկնելով այլ խելացիոր ծերուկին երեսին պիտի ըսեմ . . .։

— Լաւ, անոր երեսին ըսէ — շարունակեց պաղութեամբ Մալվուազէն, թէ խենդի պէս կ'սիրես այն հրէայ աղջիկը, և որչափ տուփանքդ մեծցընես այնչափ պիտի արտորայ նա զայն մարելու գեղանի վհուկին մահուամբը. մինչդեռ դու, երդմանդ հակառակ յանցանացդ իրական խոստովանութեամբը՝ չես կարող եղբարցդ կողմէ օգնութեան յուսալ, և քու փառասիրութեան և իշխանասիրութեան բոլոր փայլուն տեսիլներդ թերևս պիտի 'ի բաց թողուս և երթաս պիտի վարձկան նիզակ մը շարժել Ֆլանտրայի և Պուրգինոյի մէջ եղած անհաշտ կռիւներու մէջ։

— Դու ճշմարիտը կ'խօսիս, Մալվուազէն — ըսաւ Պրայն տը Պուա-Կիլպէր՝ պահ մը խորհելէն ետև — այն ալևոր մոլեռանդին իմ վրայ տիրանալու առիթ մը չպիտի տամ. իսկ Ռեպեկա, այնքան անարժան գտնուեցաւ իմ մասիս որ իր սիրոյն համար չպիտի զոհեմ՝ոչ իմ կարգս և ոչ պատիւս։ Զայն 'ի բաց պիտի մերժեմ . . . այո, իր բաղդին պիտի թողում, միայն թէ . . .։

— Մի՛ փոխեր այդ խոհական և անհրաժեշտ դիտաւորութիւնդ — ըսաւ Մալվուազէն — կանայք խաղալիկներ են միայն որ մեր խնդութեան ժամերը կ'սիրեն։ Փառասիրութիւնը կենաց ծանր զբաղմունքն է։ Այն հրէայ օրիորդին պէս հազար դիւրաբեկ հոպիներ կրողին թող երթան, քան թէ քու արիական քայլդ կանգ առնու առջևդ բացուած փայլուն ասպարէզին մէջ։ Ա՛ռ այժմ իրարմէ բաժնուինք, վասն զի պէտք է որ մեր խորհրդակցիլը չտեսնեն։ Երթամ պիտի սրահը դատաստանին համար պատրաստել տալ։

— Ի՞նչ, այսչափ շուտով — դոչեց Պուա-Կիլպէր։

— Այո՛ — պատասխանեց հրամանատարը — դատաստան մ'երկար չտևեր երբ դատաւորը կանխաւ վճիռն արձակեց։

— Ռեպեկա — ըսաւ խրոմի Պուա-Կիլպէր՝ երբ առանձին մնաց — անշուշտ դու ինձ սուղի պիտի նստիս. ինչո՞ւ չկարողանամ քեզ քու բաղդիդ թողուլ, ինչպէս որ այս հանդարտ կեղծաւորն կ'յորդորէ։ Ճիգ մը պիտի թափեմ քեզ ազատելու համար, բայց վա՛յ քեզ թէ որ վերստին ապաշնորհ գտնուիս. վասն զի թէ որ նորէն մերժուիմ, վրէժխնդրութիւնս սիրոյս պիտի հաւասարի։ Պէտք չէ որ Պուա-Կիլ-

պէր իր կեանքն ու պատիւը դիպուածին յանձնէ, եթէ իր միակ վարձքն արհամարհանք և յանդիմանութիւններ պիտի լինին։

Հաղիւ թէ հրամանատարը կարևոր պատուէրները տուեր էր՝ երբ Գոնրատ Մօնֆիշէ եկաւ զինքը գտաւ, և Մեծ Վարպետին՝ կախարդութեան ամբաստանութեամբ հրէայ օրիորդին անմիջապէս դատաստանի հանելու դիտաւորութիւնն իմացուց։

— Այս ամէնն ինձ երաշխաւորեցի — ըսաւ հրամանատարը — արդէն շատ մը հրէայ բժիշկներ ունինք որ զարմանալի բոյժեր կ'ընեն, թէև իբրև վհուկ չեն նկատուիր։

— Մեծ Վարպետն այս մասին տարբեր կերպով կ'խորհի — ըսաւ Մօնֆիշէ — և Ալպէր, քեզի արձակ համարձակ պիտի խօսիմ, այն հրէայ աղջիկը, վհուկ լինի թէ ոչ, լաւագոյն է որ մեռնի քան թէ Պրայն տը Պուա-Գիլպէր Ուխտէն արտաքսի, կամ Ուխտն ներքին երկպառակութեամբ բաժնուի։ Դու դիտես անոր բարձր աստիճանը, պատերազմի մէջ հմտաւը, դու դիտես թէ մեր միաբաններէն շատերն ինչ ռուանդոյ անոր յարած են, բայց այս նկատումներն մեր Մեծ Վարպետին վրայ չպիտի ներգործեն, եթէ Պրայնն իբրև դատակից քան զոհ նկատուի հրէայ աղջկան։ Եթէ տաճարիս ցեղերուն հոգին իսկ իր միակ մարմնոյն մէջ պարունակէ, լաւ ևս է որ նա կորնչի, քան թէ Պրայն տը Պուա-Գիլպէր անոր կորստեան վիճակի։

— Քիչ մ'առաջ կ'յորդորէի զինքն որ այն օրիորդէն հրաժարի — ըսաւ Մալվուազէն, բայց չգիտեմ թէ Ռեպեկան իբրև վհուկ դատապարտելու համար զօրաւոր փաստեր կան։ Միթէ Մեծ Վարպետն իր միտքը չպիտի փոխէ երբ տեսնէ որ սկսար են փաստերը։

— Պէտք է զօրացընել զանոնք, Ալպէր — պատասխանեց Մօնֆիշէ — պէտք է զօրացընել, միթէ կ'իմանամ միտքս։

— Կ'իմանամ — ըսաւ հրամանատարը — և խիղճ չեմ ըներ մեր միաբանական ուխտին 'ի նպաստ պէտք եղածն 'ի գործ դնել, բայց յարմար գործիներ գտնելու համար ժամանակ չունինք։

— Մալվուազէն, պէտք է գտնել զանոնք — ըսաւ Գոնրատ — և այս բանս մեծ առաւելութիւն մը պիտի տայ թէ Ուխտին և թէ քեզ։ Այս Դէնբլոյովը անշուք ապարան մ'է, Մէզոն Տիէօին կրկնապատիկ արժէք ունի, դու դիտես թէ մեր ծեր գլխաւորին վրայ ինչ աղդեցութիւն ունիմ. եթէ այս գործին յաջող հլք մը տալու մարդիկ գտնես Մէզոն Տիէօի հրամանատար պիտի լինիս։ Ինչ կ'ըսես ատոր։

— Պուա-Կիլպէրին հետ աստ եկող ապաստարանները մէջերկու հոգի կան զոր քաջ կ՚ճանչեմ. իմ Գիլիպ Մալվուազէն եղբօր ծառաներն էին, և անոր ծառայութենէ Գրօն-տը-Պէոյի անցան։ Կարելի է որ այն աղջկան կախարդութեանց վրայ տեղեկութիւն մ՚ունին։

— Գնա անմիջապէս զանոնք գտնելու . . . մտիկ ըրէ, եթէ քանի մը ոսկի անոնց յիշողութիւնը կրնայ սրել, մի խնայեր, տուր։

— Մէկ քանի դահեկանի համար զիրենք կերակրող մայրն իբրև վհուկ ամբաստանող և երդումը ընող մարդիկ են — ըսաւ հրամանատարը։

— Ուրեմն ճամբայ ելիր — վրայ բերաւ Մօնֆիշէ — կէսօրին դատաստանը պիտի սկսի։ Երբէք մեր մեծաւորն այսչափ եռանդով պատրաստութեանց հոգը տարած չունէր Կամէլ Ալֆակին կախաղանի դատապարտելէն 'ի վեր, դարձած մահմէտական մ՚որ վերատին Մէհմէտի կրօնն ընդուներ էր։

Դղեկին ահագին զանգակն այն ինչ կէսօր զարկեր էր, երբ Ռեբեկա՝ իրեն բանտի տեղ ծառայող սենեկին տանող թագուն սանդղին վրայ ոտքի դփրտուք մը լսեց։ Այս աղմուկը բազմաթիւ անձերու դալուստը կ՚յայտնէր, և այս պարագան իրեն ուրախութիւն պատճառեց. վասն զի աւելի կ՚զարհուրէր հրէայ օրիորդը վայրագ և մոլեգին Պուա-Կիլպէրի առանձնակի ազդեցութիւններէն քան թէ իրեն դալիք որ և է փորձանքէ։ Սենեկին դուռը գոցուեցաւ, և Գօնրատ ու Մալվուազէն հրամանատարը ներս մտան սև եր հագուած և նիզակներով զինուած չորս պահակներ իրենց ետևն ունենալով։

— Անիծեալ ազգի մ՚աղջիկ — ըսաւ հրամանատարը — ելիր և մեր ետևէն եկուր։

— Ո՞ւր — ըսաւ Ռեբեկա — և ի՞նչ նպատակաւ։

— Օրիորդ — պատասխանեց Գօնրատ — դու միայն հնազանդելու պարտաւոր ես և չէ թէ հարցուփորձ ընելու։ Սակայն, գիտցիր որ այժմ մեր սուրբ միաբանութեան Մեծ Վարպետին առջև պիտի ելնես և անդ գործած յանցանքդ պիտի խոստովանիս։

— Օրհնեալ լինի Աբրահամու Աստուածը — գոչեց Ռեբեկա իր ձեռները ջերմեռանդութեամբ ծալլելով — դատաւորի մ՚անունը, թէև իմ ժողովրդեանս թշնամին լինի նա, ինձի համար պաշտպանի մը անուն կ՚երևի։ Յօժարամիտ ձեզ պիտի հետևիմ, ներեցէք միայն որ քօղս ծածկուիմ։

Սանդղէն վար իջաւ ծանր և հանդիսաւոր քայլով մը, երկայն գաւի-

թէ մ՚անցաւ, և ծայրը շինուած երկու դռներու շնորհիւ, մեծ սրահը մտան, ուր Մեծ Վարպետն այս առթիւ իր դատաստանական ատեանը կազմեր էր։

Այս ընդարձակ սրահին վարի մասը զինակիրներով և գեղայիներով լեցուն էր, որոնք դժուարաւ տեղ բացին Ռեբեկայի համար, որուն հետն էին Հրամանատարն ու Մօնֆիշէ, և ետևէն կ՚գային նիզակաւոր պահակներ, և Ռեբեկա շիտակ քալեց իրեն յատկացած տեղը գնաց։ Ամբոխին մէջէն՝ իր թևերը ծալլած և գլխիկոր անցնելու ատեն՝ թղթի կտոր մը անոր ձեռքը սահեցուցին, և օրիորդն առանց անոր պարունակութիւնը քննելու առաւ։ Այս հոյակապ ժողովին մէջ քանի մը բարեկամներ ունենալու ստուգութենէ կ՚արիանար իր բոլորտիքը նայելու, և ինչ տեսակ մարդոց ներկայանալը քննելու։ Հետևապէս իր աչքը շրջեց այս տեսարանիս վրայ, զոր յաջորդ գլխին մէջ նկարագրելու պիտի ջանանք։

ԳԼՈՒԽ ԼԷ

Դժնեայ էր այն օրէնքն՝ որ կ՚արգելուր միաբանից
Սրտով լոկ մարդկային վշտակցիլ մարդու աղէտից.
Դժնեայ էր այն օրէնքն՝ որ ճարտարութեան նորածիլ
Զուտ և անմեղ խաղերուն իսկ կ՚արգելուր ծիծաղիլ.
Բայց աւելի դժնեայն երբ բարձր երկաթի դաւազան
Բռնակալութեան շարժէր իբրև իշխան գերբնական։
Մ՚ԷՆ ԴՈՐԻ։

Անպարտ և հէք Ռեբեկայի դատաստանին համար շինուած դատարանը մեծ սրահին վերնագոյն ծայրը գտնուած բարձր կողման վրայ շինուած էր, տեսակ մը դարակ կամ յարկ մը զոր արդէն նկարագրեցինք իբրև պատուոյ վայր և որ գրեթէն ամենէն նշանաւոր բնիկները կամ հիւրերն ընդունելու սահմանուած էր։

Ուղղակի ամբաստանելոյն դիմացը՝ բարձր աթոռի մը վրայ Տաճարին Մեծ Վարպետը նստեր էր, և ջինջ սպիտակ ու մեծ վերարկուով ծածկուած՝ իր ձեռքը բռներ էր խորհրդաւոր դաւազանն՝ որուն վրայ գրուած էր Ուխտին նշանակը։ Իր ոտից մօտ սեղան մը կար, և ասոր շուրջն երկու քարտուղար, Ուխտին մատրանապետները, որոց պաշտօնն

էր օրուան արարքն ատենագրել։ Այս կրօնաւորներուն սև զգեստները, գլխի մերկ գագաթներն և դաժան նայուածքը նշանաւոր համապատկեր մը կ՚ընծայէին հանդիսական ասպետներու մարտական կերպարանքին հետ, որ կամ ապարանը կ՚բնակէին և կամ Մեծ Վարպետին սպասաւորելու համար եկեր էին։ Հրամանատարներն՝ որոց չորսը ներկայ էին, իրենց մեծաւորին աթոռէն աւելի ցած և փոքր ինչ յետոյս դրուած աթոռներու վրայ նստած էին. իսկ ասպետներն՝ որ միաբանութեան մէջ այնքան բարձր աստիճան մը չէին վայելեր՝ աւելի ստորին նստարաններու վրայ կ՚երևէին, և հրամանատարներն այնչափ հեռու էին որչափ որ էին ասոնք Մեծ Վարպետէն։ Ասոնց ետին՝ բայց միշտ սրահին դարակին վրայ՝ Ուխտին զինակիրները կ՚տեսնուէին, որոնք նոյնպէս սպիտակ՝ այլ աւելի հաստ կտաւէ հանդերձներ հագեր էին։

Բոլոր ատեանը խորին ծանրութեան երևոյթ մը կ՚ընծայէր, և ասպետներու երեսին վրայ նշմարելի էին զինուորական արիութեան նշանները, նոյնպէս հանդիսաւոր վարմունք մ՚որ կրօնական դասուն կ՚վայելէր, և որ՝ հարկաւ իրենց Մեծ Վարպետին առջև՝ ամենուն ճակտին վրայ պիտի գրոշմուէր։

Սրահին ստորին մասը զեղարդաւոր պահակներ բռներ էին, նոյնպէս հետաքրքրութենէ շարժեալ ուրիշ հանդիսատեսներ, որպէս զի Մեծ Վարպետն ու միանգամայն հրէայ վհուկ կին մը տեսնեն։

Այս ստորին դասու մեծ մասն որ և է աստիճանով Ուխտին կապուած էին և հետևապէս իրենց սև հագուստէն կ՚որոշուէին իրարմէ։ Սակայն մօտաւոր նահանգներէ եկող գեղացիներու հրաման տրուեր էր ներս մտնելու, վասն զի Պոմանուարի փառասիրութիւնն էր կարելի եղածին չափ հրապարակային ընել իր հաստատած արդարութեան տեսարանը։ Իր մեծ կապոյտ աչերը կարծես թէ կ՚ծաւալէին քանի ժողովին բոլորտիքը կ՚նկատէին, և իր կատարելիք պաշտօնին մտածին արժանութենէ և խղճահար գործադրութենէ կարծես թէ անձը կ՚փքանար։ Սաղմոս մ՚որուն իր ծանր և անուշ ձայնով մանակից եղաւ, ձայն մ՚որ երկողին տարիքին պատճառաւ իր զօրութիւնը չէր կորուսած, օրուան դատաստանն սկսաւ. սա հանդիսական խօսքը venite exultemus Domino (արի՛ զօրացո՛ մեզ, Տէր) որ ստէպ կ՚երգէին տաճարականներն իրենց երկրային թշնամիներու դէմ կռուելու միջոցին՝ պատշաճ դատուեցաւ Ղուկասի կողմէ խաւարի զօրութեանց վրայ տանելիք մօտալուտ յաղթանակը հռչակելու համար։ Ծանր և երկարատև խաղերն՝ որոց վարժ հարիւրաւոր առնացի ձայներ միաբան կ՚միանային՝ սրա հին մինչև

գմբեթը կ'բարձրանային և գահավէժ սրընթաց ջրերու ախորժելի այլ հանդիսական որոտմամբ կ'թաւալէին անոր կամարներուն մէջ։

Երբ երգերը դադրեցան՝ Մեծ Վարպետն իր բոլորտիքը շրջեց ծանրաբար իր նայուածքը և դիտեց որ Հրամանատարաց միոյն աթոռը թափուր է։ Պրայն տը Պուա-Կիլպէր, որուն յատկացած էր նոյն աթոռը, տեղէն ելեր ու Տաճարին ասպետներուն սահմանուած նստարանաց միոյն ծայրը կանգուն կեցեր էր. մէկ ձեռքով իր երկար վերարկուն կ'տարածէր կերպով մ'իր դէմքը ծածկելու համար, մինչդեռ միւս ձեռքով խաչաձև Ճարմանդ ունեցող թուրը բռնած՝ անոր ծայրովը, թէև պատենին մէջն էր, կաղնաշէն յատակին վրայ ծանր ծանր զիրեր կ'գծէր։

— Ապերջանիկ մարդ — ըսաւ Մեծ Վարպետը՝ արպահատութեամբ Պրայն տը Պուա-Կիլպէրը նկատելէն ետև։ — Կ'նայիս, Գոնրատ, այս ահաւոր տեսարանն ինչ սպաւորութիւն ունի անոր վրայ։ Միթէ կարելի՞ էր որ դժոխային զօրութիւններն իրեն աջակից ունեցող թեթև կնկան մ'ակնարկն այս վիճակին հասցընեն արիասիրտ և անվեհեր ասպետ մը։ Ահա կ'տեսնես, չիշխեր մեզ նայելու, չէ կարող Ռեբեկայի նայելու, և ո՞ վիտէ որ սատանային դրդմամբն իր ձեռքն այն կախարդական տառերը կ'գծէ։ Թերևս մեր կեանքն ու ապահովութիւնն ունի իրեն նպատակ, բայց այն վատթար թշնամին կ'արհամարհենք և առ ոչինչ կ'գրենք, semper leo percutiatur (Առ-ի-ծը միշտ պէտք յաղթահարի)։

Մեծ Վարպետն այս դիտողութիւնները մեկուսի հաղորդեց իր մտերիմ Գոնրատ Մոնֆիշէին, բայց իր ձայնը բարձրացընելով ժողովին խօսեցաւ այսպէս.

— Վերապատուելի և արիասիրտ մարդիկ, ասպետներ, Հրամանատարներ և սուրբ Ուխտիս միաբաններ, իմ եղբարքս ու որդիքս, նոյնպէս դուք ազնիւ և բարեպաշտօն զինակիրներ, դուք որ այս սուրբ խաչը կրելու կ'բաղձաք, և դուք ամէն դասու քրիստոնեայ եղբարք, գիտելի լինի ձեզ որ մեր իշխանութեան անզօրութիւնը չէ այս ժողովը գումարելու յորդորողը, վասն զի որչափ որ անձնովին անարժան ենք, այս գաւազանով. լիազօր իշխանութիւն առինք մեր սուրբ Ուխտին վերաբերող ամէն բաները դատել և վճռել։ Երջանկայիշատակ սուրբ Պէրնարը, մեր ասպետական և կրօնական կանոնադրին իննսուն իններորդ գլխին մէջ ըսած է թէ՝ միայն Մեծ Վարպետին կամքը և Հրամանաւ կրնան միաբան եղբարք 'ի ժողով գումարուիլ, այսպէս ազատ թողլով մեզ, ինչպէս նաև մեր նախորդ պաշտօնակից սուրբ Հարքը՝

դատել և որոշել թէ ի՞նչ պարապայն և ո՞ր ատենի մէջ Ուխտին ժողովը կամ անոր մէկ մասը պարտ է գումարել։ Նոյնպէս՝ այսպիսի ժողովներու մէջ՝ մեր պարտաւորութիւնն է մեր եղբարց խորհուրդը մտիկ ընել և մեր հաճոյից համեմատ վճիռ արձակել։ Բայց երբ սովալլուկ գայլը հօտին վրայ կ'յարձակի և անոր մէկ անդամը կ'դրաւէ կ'տանի, բարի հովուին պարտքն է իր ընկերները հաւաքել որպէս զի իրենց աղեղներով և պարսերով յափշտակիչը զարնեն, մեր արդէն ծանօթ եղող կանոնին համաձայն թէ՝ հարկ է միշտ առիւծը յաղթահարել։ Ուստի հրաման տուինք որ Եօրքցի Իսահակի դուստր, Ռեբեկա անուն հրէայ կինը մեզ յայտ յանդիման հանեն, կախարդական և հմայական գործերով վատահամբաւ կին մը, որոց միջոցաւ չէ թէ պարզմիտ գեղջուկի մը, այլ ասպետի մը խելքը միտքը մոլորեց և խանգարեց, չէ թէ պարզ ասպետի մը, այլ սուրբ Տաճարին պաշտպանութեան ուխտեալ ասպետի մը, չէ թէ ընկերակից ասպետի մը, այլ մեր Ուխտին մէկ հրամանատարին, առաջինն թէ պատուոյ և թէ արժանաւորութեան մէջ։ Մեր եղբայրը, Պրայն տը Պուա–Կիլպէր՝ մեզի և ամէն անոնց որ զիս մտիկ կ'ընեն, քաջ ծանօթ է, իբրև Ճշմարիտ և եռանդոտ ախոյեան Խաչին, որուն բաղուկը շատ արիութեան գործեր գործեց սուրբ Երկիրն և սուրբ Տեղիքը մաքրեց այն անհաւատներուն արեամբ որ զայն կ'պղծէին։ Նոյնպէս մեր եղբօր խորագիտութիւնն ու խոհեմութիւնն նուազ հռչակ չունին մեր մէջ քան իր քաջասրտութիւնն ու Ճարտարութիւնը, այնպէս որ թէ արևելեան և թէ արևմտեան աշխարհի ասպետներ Պուա–Կիլպէրի անունը կ'անուանեն իբրև այն որ արժանի է այս դաւազանիս իշխանութեան, երբ Աստուած հաճի անոր բեռէն մեզ ազատել։ Եթէ իմանայինք որ այսպիսի պատուեալ և պատուաւոր մարդ, յանկարծ իր պաշտօնին պատկառանքն, իր ուխտն, իր եղբարքն և իր յոյսերն 'ի բաց թողլով՝ հրէայ օրիորդի մը միայեր է, անոր յայրատ ընկերակցութեամբ ամայի վայրեր թափառեր է, անոր անձը պաշտպաներ է իրը վտանգի մէջ ձգելով, և 'ի վերջէ՝ այնքան իր մոլութեամբ կուրացեր և յիմարեր է որ մինչև անդամ զանի մեր մէկ տաճարատունն է բերեր, ի՞նչ պիտի ըսէինք եթէ ոչ այս ազնիւ ասպետն գիւահարեր կամ չար ոգւով մը հմայուեր է։ Եթէ հնարին լինէր մտածել թէ այսպէս չէ գործը, մի կարծէք թէ ատելան, արիութիւն, համբաւ, կամ որ և է երկրային նկատում պիտի արգիլէին մեզ պատուհասակոծ ընել զանի որպէս զի անօրէնութիւնը փարատի, ըստ գրոց, auferte malum exvobis (ՀԱՆԵՔ ՉԱՐԸ ՅԵՐ ԿԷՋԷՆ) վասն զի բաղմաթիւ և

գտանելի են մեր օրհնեալ Ուխտին դէմ գործուած պարտապանցութիւններն որով այս աղբալի պատմութիւնն հիւսուած է. ա) իր յատուկ կամապաշտութեամբ շարժեցաւ մեր կանոնագրին 33դ յօդուածին դէմ. Quod nullus juxta propriam voluntatem incedat. — բ) Նա բանադրեալ անձի մը հետ հաղորդակցութիւն ունեցաւ, գլուխ 57դ. Ut fratres non partecipent cum excomunicatis և հետևապէս Anathema Maranathaի մէկ մասն իր վրայ հրաւիրեց. — գ) Նա օտար կնկան հետ խօսեցաւ, հակառակ կանոնին. Ut fratres non conversantur cum extraneis mulieribus. — դ) Նա չմերժեց, Նա մանաւանդ կ'վախնամ որ խնդրեց կնկան համբոյրը, որովհետև մեր հռչակաւոր Ուխտին յետին կանոնին համեմատ՝ ut fugientur oscula խաչին գինուորներն որոգայթին մէջ ընկած են։ Այս ասելի և բաղմապատիկ յանցանացը համար՝ Գրայն որ Գուա-Կիլպէր մեր միաբանութենէ դուրս պիտի արտաքսուէր մերժուէր եթէ անոր աջ ակն ու աջ ձեռքն իսկ լինէր։

Մեծ Վարպետը լռեց. մեղմ տրտունջ մը բոլոր ժողովին մէջ լսելի եղաւ։ Նորատի եղբայրներէն մէկ քանին որ De osculis fugientis կանոնին վրայ ծիծաղելու հակամէտ էին՝ նոյն պահուն վայելուչ ծանրութիւն մ'առին և մոայոյզ սպասեցին որ Մեծ Վարպետին առաջարկելիքը մտիկ ընեն։

— Ահա այսպէս, և այսպէս պիտի լինէր արդարև — շարայարեց նա — Տաճարական ասպետի մը պատուհասն որ կամովին մեղանչած է իր Ուխտին կանոնաց դէմ՝ այսպիսի ծանրակշիռ կէտերու նկատմամբ։ Բայց եթէ հմայիւք և բժժանքով՝ Սադանն ասպետին վրայ տիրապետեր է՝ թերևս անոր համար է որ իր ակնարին անխոհեմութեամբ օրիորդի մը դեղեցկութեան վրայ ձգած է, ուստի և մենք անոր վրայ պիտի ցաւինք քան թէ յանցանքը պատժենք, և եթէ մէկ կողմէն անոր անօրէնութիւնը սրբելու համար ապաշխարութիւն մը դնենք անոր վրայ, միւս կողմէն մեր արտմտութեան բոլոր կրակը պիտի թափենք այն անիծեալ գործիքին դէմ որ քիչ մնաց անոր անյարիր անկման պատճառ պիտի լինէր։ Ուրեմն առաջ անցնք և վկայեցէք դուք որ այսպիսի ողբալի գործերու տեղեակ էք, որպէս զի կարող լինինք դատելու յանցանքին ծանրութիւնն և տեսնել թէ արդեօք մեր արդարութիւնը ոյն անհաւատ կնկան պատուհասով պիտի ամոքի, թէ ոչ՝ արիւնալի արտամ պիտի ատիպուինք մեր եղբօր դէմ աւելի ծանր կերպով վարուիլ։

Շատ վիճաներ կոչուեցան հաստատելու համար թէ Պուա–Կիլպէրի ինչ վտանգներ աչքն առեր էր բոցավառ դղեկէն Ռեբեկան ազատելու աշխատելով, և թէ ինչ միջոցներ 'ի գործ դրեր էր զանի 'ի ինաս անձին այնուհետև պահպանելու համար։ Վիճաները՝ որ և է նշանաւոր դէպքէ դրդուած դռեհիկ մտայ յատուկ չափազանցութեամբ մանր պարապաներ պատմեցին, և հրաշալի բաներու մասին իրենց ունեցած բնածին տրամադրութիւնն մեծապէս ոյժ առաւ երբ տեսան որ մեծ գոհունակութիւն կ'զգայ այն բարձրատիճան մարդն որ ժողովին կը նախագահէր և իրենց վկայութիւնը մտիկ կ'ընէր։ Այսպէս Պուա–Կիլպէրի դիմադրաւած վտանգները՝ թէև ինքնին մեծ էին, անոնց պատմութեան մէջ հրաշալի դարձան։ Ռեբեկային պաշտպանութեան համար ասպետին ցոյց տուած անձնուիրութիւնն ոչ միայն խոհեմութեան այլև ասպետական մոլեգին եռանդեան սահմանէն դեր 'ի վեր նկարագրեցին. իսկ անոր ըսածին համար ունեցած հլութիւնն, թէև իր լեզուն ստէպ խիստ յանդիմանական էր, յետին ծայր հասած պատմեցին, չափազանցութիւն մ'որ ասպետին պէս վէս մարդու մը համար գրեթէ պերբնային կ'երևէր։

Այնուհետև Դէնբլսդովի հրամանատարը կանչուեցաւ որ պատմէ թէ ինչ կերպով Պուա–Կիլպէր և հրէուհին տաճարատունը մտան։ Մալվուազէն իր վկայութիւնը շատ ճարտարութեամբ յայտնեց։ Բայց մինչդեռ կ'ջանար նա Պուա–Կիլպէրի զգացմունքը չվիրաւորել, ատեն ատեն այնպիսի ակնարկութիւններ կ'ընէր որպէս թէ կ'ուզէր հետևցընել, որ ասպետը մտային անցաւոր պակասութեան մը ներքև կ'տառապէր, այնքան սիրահարած կ'երևէր իրեն ընկերակից պտնուող օրիորդին։ Ապաշաւի հառաչներով՝ հրամանատարը խոստովանեցաւ որ մեղապարտ է Ռեբեկան տաճարատունն ընդունելուն։ — Բայց իմ խոստովանութիւնս — յարեց նա — մեր վերապատուելի Մեծ Վարպետին ըրի. դիտէ նա որ իմ նպատակս վատթար չէր, թէև ընթացքս թերևս ապօրէն կ'երևի։ Ուստի յօժարամիտ պիտի ընդունիմ ինչ ապաշխարութիւն որ ինձի սահմանէ։

— Դու լաւ խօսեցար, Ալպէրտ եղբայր — ըսաւ Պօմանուար — քու նպատակդ բարի էր, քանի որ այդ մտօք կարծեցիր թէ մոլորած եղբայրդ պիտի ազատես իր յիմարութեամբ ընկած կորստեան անդունդէն։ Բայց վարմունքդ մեղադրելի էր, նման այն անձին որ զայրաղին երիվար մը բռնելու համար՝ փոխանակ սանձէն բռնելու ասպատանէն կը բռնէ և ինքն իրեն կ'վնասէ առանց իր նպատակին հասնելու։ Տան է-

ընք Հայք Ոչ առաւօտեան և մինչև երեկոյեան ժամուն ըսելու պարտաւորուած ես՝ մեր բարեպաշտ հիմնադրին հրամանին համեմատ, բայց դու կրկնապատիկը պիտի ըսես։ Տաճարականներն շաբթուան երեք օրը միս ուտելու արտօնութիւն ունին, դու բոլոր շաբաթ պահք բռնելու պատապարտուած ես։ Այս ապաշխարութիւնը վեց շաբաթ շարունակելէն ետև պիտի դադրեցընես։

Կատարեալ հլութեան կեղծ ու պատիր ձևերով Դէնբլեդովի հրամանատարը մինչև գետին խոնարհութիւն ըրաւ իր մեծաւորին առջև, և ապա իր տեղը դնաց նստաւ։

— Միթէ բանաւոր չէ, եղբարք — ըսաւ Մեծ Վարպետն — որ մենք փոքր ինչ այս կնկան նախորդ կեանքն ու արարքը քննենք, որ յատկապէս երևան հանենք եթէ իրօք կախարդական բաներ գործածեր է, քանի որ մեր լսած ճշմարտութիւնները կրնան յորդորել մեզ հաւատալու որ մեր եղբայրն այս ձախող գործին մէջ գժոխային ազդեցութեանէ և ցնորքէ մղուած է։

Հերման Կուտալբիդ ժողովին ներկայ գտնուող հրամանատարաց չորրորդն էր. միւս երեքն էին Գօնրատ, Մալվուազէն և նոյն ինքն Պուա-Կիլպէր։ Հերման վաղեմի պատերազմիկ մ'էր, որու դէմքը մահմէտականաց սրով ստացած շատ մը սպի և վէտեր ունէր և միանգամայն իր եղբարց մէջ մեծ ազդեցութիւն և յարգ։ Ոտք ելաւ նա և խոնարհեցաւ Մեծ Վարպետին առջև՝ որ իսկոյն խօսելու արտօնութիւն շնորհեց անոր։ — Վերապատուելի հայր — ըսաւ նա — կ'փափաքէի իմանալ նոյն ինքն մեր արիական Պրայն տը Պուա-Կիլպէրէն թէ այս զարհուրելի ամբաստանութեան դէմ ինչ ունի ըսելու և հրէայ օրիորդին հետ ողբալի յարաբերութիւնն այժմ ինչ աչքով կ'նայի։

— Պրայն տը Պուա-Կիլպէր — ըսաւ Մեծ Վարպետը — կ'լսես անշուշտ մեր եղբօր Հերմանի ըրած հարցումն որով կ'փափաքի իմանալ միտքդ։ Կ'հրամայեմ քեզի անոր պատասխան տալու։

Պուա-Կիլպէր իր գլուխը դէպ 'ի Մեծ Վարպետը դարձուց անոր ըրած հարցման վրայ և լռութիւն պահեց։

— Համր գևէ մը բռնուած է — ըսաւ Մեծ Վարպետը — կորի՛ր դու, սադան . . . : Խօսէ, Պրայն տը Պուա-Կիլպէր, մեր սուրբ Ուխտին այս նշանակին վրայ կ'երդմնցընեմ քեզ։

Պուա-Կիլպէր ինքն իր վրայ ճիգ մ'ըրաւ որպէս զի իր նորածին արհամարհանքն ու սրտմտութիւնը զսպէ, քանզի գիտնալով որ զայն յայտնելով իրեն օգուտ մը չպիտի լինէր։ — Պրայն տը Պուա-Կիլպէր —

ջուաւ նա — պատասխան չունի, վերապատուելի Հայր, այնպիսի տարտամ և մտածին ամբաստանութեանց։ Եթէ իր պատիւը յարձակում կրէ պիտի պաշտպանէ զայն իր մարմնով և այս սրով որ շատ անգամ քրիստոնէութեան համար պատերազմած է։

— Ա՛ներենք քեզ, Պրայն եղբայր — ըսաւ Մեծ Վարպետը — թէև քու մարտական քաջութիւններու զովասան կանգնիլդ մեր առջև՝ պարծենկոտութիւն մ՚է և մեր թշնամոյն գործը։ Բայց դու մեր նեղութիւնն ունիս, մտածելով որ ոչ այնչափ քու յատուկ թելադրութեամբդ կ՚խօսիս այլ այն ոգին դրդմամբն զոր երկնից օգնութեամբը պիտի արտաքսենք մեր ժողովէն։» Արհամարհական ակնարկ մը Պուա-Կիլպէրին սև և վէս աչաց մէջ փայլեցաւ, բայց պատասխան մը չտուաւ նա։ — Եւ այժմ — շարայարեց Մեծ Վարպետը — քանի որ մեր եղբօր Հերմանի հարցումն այսպէս կիսկատար պատասխան մ՚ընդունեց, այս գաղտնի անօրէնութեան խորը պիտի թափանցենք։ Ուստի անոնք որ սոյն հրէայ աղջկան կենաց և գործերու վրայ բան մը գիտեն՝ թող մեր առջև ելնեն։» Սրահին վարի կողմն աղմուկ մ՚ելաւ, ու երբ Մեծ Վարպետը պատճառը հարցուց, պատասխան տուին թէ ամբոխին մէջ անդամալոյծ մը կար որ հրաշալի սպեղանիով մը բոյժ դտեր էր կալանաւոր հրէայ օրիորդին ձեռօք։

Խեղճ գիւղացին՝ որ 'ի ծնէ սաքսօն էր, մինչև դատարանն քաշքշելով հասաւ, և կ՚վախնար որ թերևս մեծ պատիժ կրէ՝ հրէայ օրիորդի մը տուած դեղով բժշկուիլն իբրև յանցանք նկատուելով։ Արդարև լիովին բժշկուած չէր, վասն զի վկայութիւն տալու համար դեռ ևս ցոպերով կ՚քալէր։ Մեծ դժկամակութեամբ և շատ արտուք թափելով գեղացին իր վկայութիւնը տուաւ, բայց խոստովանեցաւ որ երկու տարի առաջ՝ երբ Եօրք քաղաքը կ՚գտնուէր և իբրև հիւսն Իսահակ կոչուած հրէին համար կ՚աշխատէր՝ յանկարծ անդամալոյծ եղեր և անկողին ընկեր էր առանց շարժիլ կարենալու, մինչև որ Ռեբեկայի խորհրդով և Ղի մանաւորի համեմահոտ և Ջերմաու սպեղանիի մը միջոցաւ կարող եղեր է կերպով մը անդամները շարժել։ Ասկից զատ, ըսաւ նա, այն թանկագին սպեղանիէն քիչ մը տուեր էր իրեն ամանով մը, և միանգամայն փոքրիկ գումար մը շնորհեր էր որպէս զի Դէնբլադովի մօտ իր հօրը տունը վերադառնայ։

— Եւ եթէ չէք նեղանար, շնորհալի Հայր — ըսաւ մարդը — պարտիմ յայտնել որ օրիորդն ինձ ինչաս բերելու միտք չունէր բնաւ, թէև իր սև բաղդէն հրէայ ծներ էր. վասն զի՝ երբ անոր դեղը գործ-

ածեցի Հայր Ոգին ու Հաստատումն ըսի և դարմանը դարձեալ իր զօրութիւնը ցցուց։

— Ստրուկ, լուռ կեցիր — գոչեց Մեծ Վարպետը — և կորիր դնա։ Քեզի պէս անբաններուն կ'վայլէ արդարև գժոխային դեղեր գովաբանել և ձեր աշխատութիւնն գամահելի ազգի մը նուիրել։ Ահա կ'ըսեմ քեզի թէ նոյն ինք սադանը կարող է հիւանդութիւններ տալ զանոնք բուժելու և սադայէլական դարմանի մը արժէք տալու մտօք։ Միթէ այն սպեղանին՝ որու վրայ կ'խօսիս, քովդ է։

Դեղացին՝ գողահար ձեռօք իր ծոցէն փոքրիկ տուփ մը հանեց, որուն խուփին վրայ քանի մը եբրայական տառեր փորագրուած էին. այս ստոյգ ապացոյց մ'երևցաւ ներկայ բազմաթիւ հանդիսականաց որ սատանային դեղարանին մէջ շինուած էր այն։ Պոմանուար խաչ հանելէն ետև՝ այն տուփին իր ձեռքն առաւ, և ըստ որում հմուտ էր արևելեան շատ լեզուներու, խուփին վրայ գրուած արձանագիրը հեշտիւ կարդաց. — Յ-ԷՕ-ԳՕՅԷ ՅԵՂԷՆ ԱՕ-Է-ԾԸՅՂՆԵՑ։ — Զարմանալի զօրութիւն Սադանի — գոչեց Մեծ Վարպետն — որ կարող է Սուրբ Գիրքը հայհոյութեանց վերածել, մեր անհրաժեշտ անունդին թոյն խառնելով։ Միթէ այս տեղ բժիշկ մը չգտնուիր որպէս զի մեզի յայտնէ թէ այս խորհրդաւոր սպեղանին բաղադրող նիւթերն ի՞նչ են։

Երկու բժիշկներ, ինչպէս որ ինքզինքնին կ'անուանէին, մէկը վանական մը և միւսը սափրիչ, առաջ անցան և խոստովանեցան որ այն սպեղանիին բաղադրութիւնները չեն գիտեր, այլ միայն զմուռս և քաֆիւր կ'հոտէին, զորս արևելեան խոտեր համարեցին։ Բայց իրենց մէկ արհեստակցին դէմ ունեցած ճշմարիտ ատելութեամբ վառուած՝ թելադրեցին թէ, քանի որ այն դեղն իրենց գիտութենէ դուրս էր, անտարակոյս ապօրէն և հմայադործ դեղարարի մը ձեռօք բաղադրուած պիտի լինէր, նա մանաւանդ, թէև իրենք թովիչ չէին, սակայն լիապէս իրենց արհեստին բոլոր ճիւղերուն վարժ էին որչափ որ կարելի էր վարժիլ քրիստոնէի մը խղճահարութեամբ։ Երբ այս բժշկական խուզարկութիւնն աւարտեցաւ, սաքսօն դեղացին խոնարհաբար խնդրեց որ իրեն այնքան օգտաւէտ եղող դեղն ետ տան. բայց Մեծ Վարպետը՝ այս խնդրոյն վրայ անոր նայեցաւ խոժոռ դիմօք և անդամալոյծին հարցուց. — Ի՞նչ է քու անունդ։

— Հիկ, Անէլի որդին — պատասխանեց դեղացին։

— Ուրեմն, Հիկ, Անէլի որդին — ըսաւ Մեծ Վարպետը — ահա կ'ըսեմ քեզի, լաւ ևս է անդամալոյծ մնալ քան թէ անհաւատից դեղն

ընդունիլ որ կարենաս ուրք ելնել և քալել. լաւ ևս է անհաւատներու դանձերը կողոպտել հզօր ձեռաք քան թէ անոնց ձեռքէն պարգևներ ընդունիլ, կամ վարձքի համար անոնց ծառայել։ Գնա՛, և իմ ըսածս ը-ըէ։

— Աւա՜ղ — պատասխանեց դիւղացին — մի՛ նեղանաք, վերապատուելի հայր, բայց այդ դան ինձի համար շատ ուշ կ'հասնի. վասն զի ես ապիկար մարդ մ'եմ. բայց Նաթան Պէն Սամուէլ ռաբբիին ծառայող երկու եղբարցս պիտի ըսեմ թէ Ձեր Մեծութիւնը կ'ըսէ որ աւելի օրինաւոր է զանի կողոպտել քան թէ անոր հաւատարմօրէն սպասաւորել։

— Դո՛ւրս հանեցէք սա թշուառական շաղակրատը — գոչեց Պօմանուար, որ իր ընդհանուր առաձին այս գործնական պատասխանը հերքելու պատրաստ չէր։

Հիկ, Սնէլի որդին, ամբոխին մէջ մնաց, բայց իր բարերար աղջկան վիճակին հոգն ունենալով՝ սրահին մէջ մնաց մինչև որ անոր դատապարտութիւնը լսէ՝ դաժան դատաւորին ակնարկին հանդիպելու վտանգն աչքն առնլով, թէև անոր տեսքն իրեն սարսափ կ'ազդէր և սիրտը դող կ'հանէր։

Դատաստանին այս միջոցին՝ Մեծ Վարպետը հրամայեց Ռեբեկային որ իր քօղն երեսէն հանէ։ Օրիորդն առաջին անգամ իր շրթունքը բանալով՝ մեղմիկ այլ արժանապէս պատասխանեց. — Իմ ժողովրդեան աղջկունք սովոր չեն իրենց երեսը բանալ երբ օտարներու ժողովի մը մէջ մինակ են։ — Իր ձայնին քաղցր հնչիւնը, և իր պատասխանին անուշութիւնն համակրութեան և գթութեան զգացում մը գրգռեցին բոլոր ունկնդիրներուն մէջ։ Բայց Պօմանուար, որ կարծէր թէ երևակայական պարտաւորութեանը դիմադրող որ և է մարդասիրութեան զգացում ջնջելն ինքնին առաքինութիւն մ'է, կրկնեց իր հրամանը թէ ամբաստանեալը պարտէր իր քօղը հանել։ Հետևապէս պահակներն անոր քօղը հանելու կ'պատրաստուէին, երբ օրիորդն ուրք ելաւ Մեծ Վարպետին յանդիման և ըսաւ. — Ի սէր ձեր աղջկանց . . . աւա՜ղ, կ'մոռնամ որ աղջիկ չունիք։ Բայց 'ի յիշատակ ձեր մարդ, 'ի սէր ձեր քոյրերուն, յանուն համեստութեան, մի՛ պահանջէք որ ձեր ներկայութեան այսպէս նախատուիմ և այս կոշտ մարդիկ աղջկան մը քօղը հանեն։ Պիտի հնազանդիմ ձեզի — յարեց նա՝ իր ձայնին մէջ համբերատար տրտմութիւն մը յայտնելով, որ Պօմանուարի սիրտն իսկ շարժեց — դուք ձեր ժողովրդեան մէջ կրօնական աւադանի էք, և ձեր հրա-

մանին համեմատ՝ տարաբաղդ աղջկան մը դէմքը պիտի ցոյց տամ ձեզի։

Ռեբեկա իր քողը քաշեց հանեց և հանդիսականաց նայեցաւ այնպիսի կերպարանով որ համեստութիւնն արժանապատուութեան հետ կը մրցէր։ Իր անմեղ դեղեցկութիւնը զարմանաց մրմունջ մը դրդռեց, և նորատի տղաներն աչք իրարու կ՚ընէին՝ ըսելով թանակցութեամբ, թէ Պուա-Գիլբերի լաւագոյն ջատագովութիւնն օրիորդին ճշմարիտ հրապուրանաց մէջն էր քան թէ անոր երևակայական կախարդութեան մէջ։ Բայց Հիկ, Անէլի որդին, իր բարերարուհւոյն կերպարանին ըրած տպաւորութիւնը սաստիկ զգաց և ըսաւ սրահին դուռը կեցող պահակներուն. — Թողէք որ դուրս ելնեմ, թողէք որ ելնեմ։ Եթէ վերսին նայիմ անոր դէմքը պիտի մեռնիմ, վասն զի ես ալ անոր մահուան մասնակից եղայ։

— Մի՛ վրդովիր, հէք մարդ — ըսաւ Ռեբեկա՝ երբ անոր տրտունջը լսեց — դու ինձ վնաս մը չտուիր ճշմարտութիւնն ըսելով, բողոք և ողբ ընելով չես կարող ինձ օգնել։ Հանդարտէ, կ՚աղաչեմ, տունդ դնա և ինքզինքդ ազատէ։

Պահակներն կարեկցութենէ Հիկը դուրս պիտի արտաքսէին առ ահի որ իր աղմկալի դանգատներն իրենց յանդիմանութիւն և անոր վրայ պատիժ չբերեն, բայց երբ սաքսօնը խօսք տուաւ լռելու, թոյլ տուին որ սրահին մէջ մնայ։ Երկու զօրականաց՝ որոց հետ Ալպերտ Մալվուազէն համաձայներ էր իրենց վկայութիւնը տալու, երևան գալու համար հրաման տրուեցաւ։ Թէև այս երկու մարդիկ յանդուգն ոճրագործներ էին, գերի օրիորդին տեսքն և անոր հիահրաշ դեղեցկութիւնը կարծես թէ պահ մը իրենց շփոթութիւն տուին. բայց երբ Դէնբլսդովի հրամանատարը նշանակական ակնարկ մը նետեց անոնց վրայ, իրենց նախորդ անզգայութեան դարձան, և աւելի անկողմնապահ դատաւորներու կասկածելի երևելու գոյներ ունեցող այնպիսի լրտղութիւններ պատմեցին, որ բոլորովին սուտ էին, կամ՝ գէթ անհնարին և խիստ բնական, բայց՝ որովհետև չափազանցութեամբ չարաղուշակ մեկնութիւններ տալով իրենց ըսածները յառաջ բերին, շատերուն կասկածները յարուցանելու յաջողեցան։ Մեր ժամանակներն՝ այս վկայութեան պարագաներն երկու դաս կրնային բաժնուիլ. անոնք որ անհնարին էին, և անոնք որ նիւթապէս հնարաւոր չէին։ Բայց այն տղէտ և աւելորդապաշտ դարուն մէջ՝ երկու դասն ալ իբրև յանցաւորութեան փաստեր դիւրաւ ընդունուեցան։ Առաջին կարգի իրողութիւնները կը յայտնէին թէ՝ Ռեբեկա անծանօթ լեզուով ինքն իրեն խօսեր է, թէ

երբեմն երդած երդերն զարմանալի անուշութիւն մ՚ունէին որ ականջները կ՚գլուխէին և սիրտ կ՚բախէին, թէ՝ մերթ ընդ մերթ իւրովի խօսելով պատասխանի կ՚ապասէր, թէ իր ղեւտանեն տարօրէն և խորհրդաւոր ձեւ մ՚ունէին, և չէին նմանէր բաբելացիկ կանանց հաղուստին, թէ կախարդական նշանագրով փորագրուած մատնիներ ունէր և թէ անյայտ գիրեր հիւսուած էր քօղին վրայ։ Բոլոր այս պարագաներն՝ որ այնքան բնական և չնչին էին՝ իրրև փաստեր մսիկ ըրին ծանրօրէն, կամ այնպէս կարծուեցան թէ Ռեբեկա խորհրդաւոր էակներու հետ ապօրէն հաղորդակցութիւն ունենալուն զօրաւոր կասկածներ կ՚յարուցանեն։

Այնուհետև ուրիշ աւելի անորոշ վկայութիւն մը մէջ բերին, որուն հանդիսականաց մեծ մասին դիւրահաւանութիւնն հետաքրքրութեամբ հաւատաց, թէև անհաւատալի։ Զինուորներէն մին տեսեր էր որ Ռեբեկա վիրաւոր մարդ մը բուժած էր իր հրաշալի դեղով, և այս մարդն իրենց հետ Դօրքիլսդրնի դղեակը տարած էին. խորհրդաւոր բառեր արտասանելով վէրքին վրայ քանի մը նշաններ ըրեր էր, ըսաւ, թէև, օրհնեալ է Աստուած, չէր հասկըցած, երբ դեղարդի մը սլաքն ինքնին վէրքէն դուրս ելեր, արիւնը դադրեր, վէրքը գոյուեր էր, և քառորդէ մը՝ տեսեր էին վիրաւորն որ պարիսպներուն վրայ կ՚քալէր, վկային օգնելով որ պարսաքար նետելու գործիքը գործածէ։ Հաւանական է թէ այս պատմութեան հիմը սա է թէ՝ Ռեբեկա վիրաւոր Իսվանհոէն գարմաներ էր երբ Դօրքիլսդրնի դղեակը կ՚գանուէր։ Սակայն վկային ստուգութիւնն այնքան աւելի դժուարին էր կասկածի ներքև դնել, որչափ որ՝ իր բերանացի վկայութեան անժխտելի փաստ մը բերելու համար՝ իր գրպանէն նոյն խսկ դեղարդին սլաքը հանեց, որ՝ իր պատմածին նայելով՝ Իսվանհոէի վէրքէն հրաշքով քաշեր հաներ էին. և որովհետև երկաթը զէթ ունկի մը կ՚կշռէր՝ ասով վկային խօսքը հաստատուեցաւ թէև հրաշալի էր։

Իսկ իր ընկերը՝ մնասաւոր պարապի մը վրայէն ականատես եղեր էր Ռեբեկայի և Գուա–Կիլպէրի մէջ անցած տեսարանին, երբ օրիորդն աշտարակին դպպաթէն ինքզինքը վար դահավիժելու վրայ էր։ Իր ընկերէն վար չմնալու համար՝ այս ապիրատը պնդեց թէ ձիւնի պէս ապիտակ կարապի կերպարանով Ռեբեկայի թաւիլը տեսեր էր աշտարակին քիւին վրայ, և թէ այս կերպարանով Դօրքիլսդրնի դղեկին բոլորտիքն երեք անգամ թռեր էր, նորէն աշտարակին վրայ դադարեր և ինկան մը կերպարան տուեր էր։ Այս ծանր վկայութեան կէտն անգամ

քառանան էր կախարդութեան դատապարտելու աղքատ և տգեղ պառաւ կինը մը, եթէ հրէայ իսկ չլինէր։ Այս աղէտաբեր պարագային հետ միանալով վկայութեան լրութիւնն շատ ծանրակշիռ էր Ռեբեկայի համար և իր ծաղիկ հասակն ու գեղեցկութիւնը չէին կրնար նպաստաւոր տպաւորութիւն մը բերել։

Մեծ Վարպետն ամենուն կարծիքն խնդրեր էր և Ռեբեկայի կը հարցընէր հանդիսաւոր ձայնով թէ առարկութիւն մ'ունի՞ մէջ բերելու արձակելիք դատապարտութեան վճռոյն դէմ։

— Եթէ Ձեր գթութիւնը հայցեմ — պատասխանեց գեղանի հրէայ օրիորդն այլայլութենէ դող եղած ձայնով մը — որչափ անօգուտ նոյնչափ ինձի համար ստորին բան մը պիտի ընեմ կ'զգամ, եթէ պնդեմ թէ իմ կրօնէս տարբեր կրօն մը դաւանող վիրաւորներն ու հիւանդները դարմանելը մեր երկու կրօնից Հիմնադրին չկրնար անհաճոյ երևիլ, դարձեալ ապարդիւն պիտի լինի ինձի համար, եթէ հաստատեմ թէ այս մարդոց (թող Աստուած անոնց մեղք չհամարի) ինձի դէմ մէջբերած շատ բաներ անկարելի են, բնաւ ինձ օգուտ չպիտի լինի, քանի որ անոնց հնարաւորութեան կ'հաւատաք, նոյնպէս բան մը չպիտի շահիմ եթէ բացատրեմ ձեզ որ իմ զգեստս, իմ լեզուս և սովորոյթս իմ ժողովրդեան են, քիչ մնաց իմ հայրենեաց պիտի ըսէի, աւա՜ղ, հայրենիք չունինք։ Նոյնպէս ինքզինքս արդարացընելու չպիտի ելնեմ 'ի միաս իմ հարստահարչիս, որ անդ է և կ'լսէ այն զրպարտիչ առասպելներն որ կերպով մը բռնաւորին նահատակի կերպարան կ'տան։ Թող Աստուած անոր և իմ մէջ դատաւոր լինի, և տասնպատիկ նախադաս կը համարիմ ենթարկիլ այն մահուան զոր ըստ հաճոյս կ'պատրաստէք ինձի դէմ, քան թէ լսելու ստիպուիլ այս Բելիարայ մարդուն առաջարկութիւններն, ես որ առանց բարեկամի, անօգնական եմ և իրեն դերին։ Բայց նա ձեր կրօնակիցն է, և իր թեթևադոյն վկայութիւնը տարաբաղդ հրէայ աղջկան մը բողոքներէն դեր 'ի վեր է։ Ուստի ինձի դէմ եղած ամբաստանութիւնն անոր վրայ չպիտի ձգեմ, բայց անոր, այո՛, Պրայն սը Պուա-Կիլպէր նոյն իսկ քեզի կոչում կ'ընեմ և կ'հարցընեմ թէ արդեօք այս ամբաստանութիւնները սուտ չէ՞ն, արդեօք որչափ հրէշային և սուտ ու պատիր նոյնչափ դժնդակ չէ՞ն։

Ռեբեկա պահ մը լռեց. ամենուն աչքը Պուա-Կիլպէրի կողմը դարձան։ Լռութիւն կ'պահէր նա։

— Խօսէ — կրկնեց նա — եթէ դու մարդ ես, եթէ դու քրիստոնեայ ես, խօսէ, կ'աղաչեմ, կ'երդմնեցընեմ քեզ քու հագած զգեստիդ

վրայ, քու հարցդ անուան վրայ, քու պանծեցած ասպետութեանդ վրայ, քու մօրդ պատուոյն վրայ, քու հօրդ պերեզմանին և ոսկորներուն վրայ՝ կ'երդմնցնեմ քեզ ըսելու թէ այս բաները ճշմարիտ են։

— Պատասխան տուր անոր — ըսաւ Մեծ Վարպետը — եթէ այն թշնամին որու դէմ կ'մաքառիս քեզի դժ տալու կամենայ։

Արդարև՝ Պուա-Կիլպէր ներհակ կրից թափէն վրդոված կ'երևէր, որոնք իր կերպարանը կ'այլակերպէին. և 'ի վերջէ խիստ մեղմ ձայնով պատասխանեց Ռեբեկային նայելով.

— Թուղթը, թուղթը։

— Վերջապէս — վրայ բերաւ Պօմանուար — ահաւասիկ վաւերական վկայութիւն մը։ Այս հմայութեանց զոհը միայն այն թուղթը կարող է նուաճել որու վրայ գրուած է անշուշտ զինքը լուութեան դատապարտող հմայքը։

Բայց Ռեբեկա տարբեր կերպով մեկնեց Պուա-Կիլպէրին բերնէն գրեթէ բռնի ելած խօսքը, և իր ձեռքը բռնած փոքրիկ մաղաղաթին վրայ ակնարկ մը ձգելով, կարդաց արաբական լեզուով գրուած սա բառերը. Ախոյեան մը ինդրէ։ Պուա-Կիլպէրին այլանդակ պատասխանին վրայ բոլոր ժողովին մէջ պտրտած զանազան մեկնութիւններն ժամանակ տուին Ռեբեկային քննել և պատռել թուղթին առանց տեսնուելու։ Երբ շշուկը դադրեցաւ, Մեծ Վարպետն ըսաւ.

— Ռեբեկա, այս դժբաղդ ասպետին վկայութենէ օգուտ մը չես կարող քաղել. վասն զի թշնամին դեռ ևս անոր վրայ կ'տիրապետէ զօրապէս։ Մի թէ ուրիշ ըսելիք մ'ունիս։

— Տակաւին ազատութիւնս մ'ունիմ — ըսաւ Ռեբեկա — նոյն իսկ ձեր անաղարտոյն օրինաց ոգւոյն համեմատ. իմ կեանքս՝ քանի մը ժամանակէ հետէ, թշուառ եղած է, բայց Աստուծոյ այս պարգևը չպիտի զոհեմ որչափ որ զայն պաշտպանելու համար ինձ միջոցներ շնորհէ։ Ձեր ամբաստանութիւնը կ'ժխտեմ, իմ անմեղութեանս վրայ կ'պնդեմ, և իմ դատաստանս մենամարտութեամբ տեսնուելու արտօնութիւնը կը պահանջեմ՝ իմ կողմէս ախոյեան մը ցոյց տալով։

— Եւ ո՞վ, Ռեբեկա — պատասխանեց Մեծ Վարպետը — իր նիզակը պիտի դործածէ վհուկի մը համար, ո՞վ պիտի լինի հրէայ օրիորդի մ'ախոյեանը։

— Աստուած պիտի տա՛ք ինձ ախոյեան մը — պատասխանեց Ռեբեկա — կարելի չէ որ այս աշնիւ Անկլիոյ մէջ, այս հիւրասէր, վեհանձն, ազատ երկրին մէջ, ուր այնքան ասպետներ իրենց կեանքը

վանքի կ'գնեն պատուոյ համար, չգանուի մէկն որ արդարութեան համար մեռնամարտելու յանձն չառնու։ Բայց բաւական է որ ես զինուոր փորձը պահանջեմ և ահա իմ գրաւս։

Իր ձեռքէն հանեց Ռեբեկա գեղահիւս մէկ ձեռնոցն և Մեծ Վարպետին առջևը նետեց այնպիսի պարզութեան և վեհանձնութեան կերպարանով մ'որ ընդհանուր զարմանք և հիացում պատճառեց։

ԻԼՈՒԽ ԼԸ

— Ահա կ'նետեմ իմ գրաւս,
Ծայրագոյն կլիսին քու վրադ փորձելու
Մարտական յանդգնութիւնս։

Ռիչարդ Բ

Նոյն ինք Ղուկաս Պոմանուար յուզուեցաւ Ռեբեկայի գերազնիւ և վեհանձն ընթացքին վրայ։ Այս մարդն 'ի բնէ անզուգ և ոչ իսկ խիստ չէր. բայց ինքնին աշխարհային կենաց անհաղորդ և բարձր, այլ պարտուց թիւր դիտակցութեամբ շարժեալ՝ իր սիրան ասոնանաբար կարծրացեր էր իր վարած ճգնաւորական կենաց, իր վայելած բարձրաղոյն իշխանութեամբ և անհաւասարները նուաճելու և հերետութիւնը բնաջինջ ընելու կարծեցեալ հարկէն սոսկալեալ։ Իր կերպարանին սովորական խստութիւնը մեղմեց իր առջևը գտնուող չքնաղ էակին նայելով ակնապիշ, միայնակ, անօգնական էակ մ'որ ինքզինքն այնքան արիութեամբ և հաստատամտութեամբ կ'պաշտպանէր։ Պոմանուար երկու անգամ խաչ հանեց իբրև մարդ մ'որ իր սրտին թոյլութենէն կը կասկածի, մինչդեռ այսպիսի պարագայից մէջ խստութեան կողմէ իր սրին պողպատին կ'նմանէր այն։ Վերջապէս խօսեցաւ և ըսաւ.

— Օրիորդ, եթէ քեզի համար ղրկեցած արդահատութիւնս քու վեհասաբեր արուեստիդ հնարիւ արդիւնքն է, մեծ է քու յանցանքդ։ Բայց լաւ ես ունիմ իմ սրտիս բնութեան մէկ ղրկումը համարիլ զայն, որ կ'հեծեծէ քեզի պէս շնորհալի էակի մը կորստեան անօթի մը դառնալուն։

Ապաշաւէ, աղջիկս, հմայքդ խոստովանէ, թող քու սուտ կրօնդ, ընդունէ այս սուրբ նշանակը, և այն ատեն թերևս այս և միւս աշխարհին մէջ երջանիկ լինիս։ Ամենախիստ կուսաստան մը մտնելով ժառանգակ պիտի ունենաս աղօթելու և արժանի ապաշխարութիւն մ'ընելու, և այս ապաշաւդ երբէք քեզի վիշտ չպիտի պատճառէ։ Այս բաներս ըրէ և ապրէ։ Մովսիսի օրէնքն ինչ ըրաւ քեզի համար որ անոր համար մեռնելու կամենաս։

— Իմ հարցս օրէնքն է այն — պատասխանեց Ռեբեկա — այն օրէնքն Սինա լերան վրայ, փայլակնացայտ ամպերու և շանթերու մէջ տրուեցաւ անոնց։ Դուք եթէ քրիստոնեայ էք՝ կ'հաւատաք այս բաներս, միայն կարծէք թէ անդործադրելի է, և սակայն այս օրէնքն տրուեցողները երբէք այդպէս չըսին ինձ։

— Թող մեր մատրանապետը յառաջանցնի — ըսաւ Պօմանուար — և այս յամառ անհաւատին ըսէ . . .։

— Ներէ ինձ — ըսաւ Ռեբեկա անուշութեամբ — եթէ խօսքդ կ'ընդհատեմ։ Ես օրիորդ մ'եմ, կրօնիս վրայ վիճաբանելու անկարող եմ, բայց անոր համար կրնամ մեռնիլ, եթէ Աստուած այսպէս կամենայ։ Շնորհ ըրէ խնդրէ պատասխան մը խնդրելու ախոյենի առաջարկութեանս մասին։

— Տուէք ինձ իր ձեռնոցն — ըսաւ Պօմանուար։ — Ահաւասիկ՝ արդարև — շարունակեց նա ձեռնոցի նօսր հիւսուածքը դիտելով — ահա խիստ գիւրաբեկ դրաւ մը մահաւոր մենամարտութեան մը դէմ։ Կ'նայիս, Ռեբեկա, որչափ որ այս նօսր ու փափուկ ձեռնոցը մեր երկաթէ ծանր թաթպաններէ կ'տարբերի, նոյնչափ քու դատդ Տաճարին դատէն վար է. վասն զի մեր Ուխտին դէմ դիմադրաւ կ'կենաս։

— Նեռէ իմ անմեղութիւնս կշռին մէջ — վրայ բերաւ Ռեբեկա — և մատաքսէ ձեռնոցը պիտի յաղթէ երկաթէ թաթպանին։

— Ուրեմն կ'պնդես միշտ մեղքդ խոստովանելու մերժելդու, և այդ նեռած յանդուգն մենամարտդ կ'պահպանես։

— Կ'պնդեմ, տէր իմ — պատասխանեց Հրէայ օրիորդը։

— Թող այդպէս լինի, յանուն երկնից — վրայ բերաւ Մեծ Վարպետն — և թող Աստուած իրաւունքը պաշտպանէ։

— Ամէն — պատասխանեցին Մեծ Վարպետին բոլորտիքը կեցող հրամանատարներն և այս բառը բոլոր հանդիսականները կրկնեցին հանդիսապէս։

— Եղբարք իմ — ըսաւ Պօմանուար — դիտէք որ կարող էի այս

ինկան մենամարտութեան փորձն ընելու համար խնդրած շնորհը մերժել, բայց՝ թէև հրէայ և անհաւատ մ'է, սակայն օտարական է և առանց պաշտպանի, և քաւ լիցի որ մեր արդար օրինաց պաշտպանութիւնը հայցելէն ետև՝ զայն մերժէինք։ Ակէ զատ՝ մենք ասպետ և զինուոր ենք նոյնպէս և կրօնաւոր մարդիկ, և մեզի մեծ ամօթ պիտի լինէր, եթէ որև է բարուրանօք՝ մերժէինք մեզ առաջարկուած պայքար մը։ Այս վիճակին մէջ կ'մնայ ուրեմն դատը։ Ռեբեկա, Եօրքցի Իսահակի դուստր, բաղմաթիւ և կասկածելի պարագաներու մէջ՝ ամբաստանեալ է կախարդութիւններ ընելուն մեր նուիրական Ուխտին մէկ ազնիւ ասպետին դէմ, և պայքար կ'պահանջէ իր անմեղութիւնը հաստատելու համար։ Իմ վերապատուելի եղբարքս, ինչ է ձեր խորհուրդը, որո՞ւ կ'ուզէք որ յանձնենք պայքարին դրաւը, մեր սահմանելիք անձն պատերազմի դաշտին վրայ պիտի լինի նաև մեր ախոյեանը։

— Պրայն տը Պուա-Կիլբէրի, որու կ'պատկանի յատկապէս այս դատն — ըսաւ Կուտալբիդ Հրամանատարն — որ միանգամայն ամենէն քաջ զինուէ թէ որ կողմն է Ճշմարտութիւնն այս գործին մէջ։

— Բայց — գոչեց Մեծ Վարպետը — եթէ մեր Պրայն եղբայրն հմայից կամ կախարդութեան ներգործութեան ներքո՞ է։ Մեր դիտողութիւնը պարզապէս զգուշութեան համար կ'ընենք. վասն զի այս դատն, և կարևորագոյնն իսկ անկից աւելի ապահով բաղկի մը չենք կրնար յանձնել։

— Վերապատուելի Հայր — պատասխանեց Կուտալբիդ Հրամանատարը — չկայ հմայ մ'որ կարենայ ներգործել Աստուծոյ դատաստանին համար մաքառելու ներկայացող ախոյենին վրայ։

— Իրաւացի է խօսքդ, եղբայր — ըսաւ Մեծ Վարպետը։ — Ալպէրդ Մալվուազէն, Պրայն-տը-Պուա Կիլբէրի տուր մենամարտութեան դրաւը։ Եղբայր — շարունակեց նա Պուա-Կիլբէրի դառնալով — կ'պատուիրեմ քեզ արիաբար պատերազմելու, և աներկմիտ ենք որ մեր արդար դատը պիտի յաղթանակէ։ Եւ դու, Ռեբեկա, մնա դիր, քեզի երեք օր կ'շնորհեմ՝ այսօրէն համրելով, որպէս զի ախոյեան մը գտնես։

— Շատ կարճ է այդ պայմանաժամը — պատասխանեց Ռեբեկա — և չեմ կարող ես, որ տարակրօն օրիորդ մ'եմ, գտնել ախոյեան մ'որ իմ դատիս համար մաքառի և իր պատիւն ու կեանքը վտանգի մէջ դնէ, այնպիսի ասպետի մը դէմ որ փորձ զինուորի մը համբաւն ունի։

— Այդ պայմանաժամը չենք կրնար երկարաձգել — վրայ բերաւ

Մեծ Վարպետը — պէտք է որ պատերազմը մեր առջև կատարուի, և ուրիշ կարևոր գործեր կ'ստիպեն մեզ չորրորդ օրն ասկից մեկնիլ։

— Թող Աստուծոյ կամքը լինի — պատասխանեց Ռեբեկա։ — Ես իմ վստահութիւնս անոր վրայ կ'գնեմ, որու վայրկեան մը բաւական է զիս ազատելու համար որչափ դար մը։

— Դու լաւ խօսեցար, օրիորդ — ըսաւ Մեծ Վարպետը — բայց գիտենք թէ ինչ կալուլ է լուսոյ հրեշտակի մը կերպարանն առնուլ։ Արդ՝ կ'մնայ որոշել մենամարտութեան տեղն և եթէ հարկ լինի, գործադրութեան։ Ո՞ւր է տաճարատանս հրամանատարը։

Ալպէրդ Մալվուազէն՝ միշտ Ռեբեկայի ձեռնոցը բռնած, տաք տաք Պուա-Կիլբէրի կ'խօսէր բայց ցած ձայնով մը։

— Ի՞նչպէս — գոչեց Մեծ Վարպետը — միթէ ձեռնոցը չուզե՞ր ընդունիլ։

— Պիտի ընդունի, ընդունեցաւ, վերապատուելի հայր — վրայ բերաւ Մալվուազէն՝ անոր վերարկուին ներքև սահեցընելով ձեռնոցը։ — Իսկ մենամարտի վայր՝ յարմարագոյն կ'սեպեմ Սուրբ Գէորգի մրցարանն՝ որ տաճարատանս սեպհականութիւնն է, և մեր զինուորական մարզանաց համար կ'գործածուի։

— Շատ լաւ — ըսաւ Մեծ Վարպետը։ — Ռեբեկա, ահա այն մրցարանը պիտի կոչես ախոյեանդ, և եթէ չկարենաս բերել, կամ եթէ Աստուծոյ դատաստանով քու ախոյեանդ պարտուի, այն ատեն իբրև վհուկ պիտի մեռնիս, այս է ահա մեր վճիռը։ Թող մեր այս դատակնիքն արձանագրուի և բարձր ձայնով կարդացուի որպէս զի ոչ ոք չաւարկէ թէ այս մասին իբրև անտեղեակ էր։

Մատրանապետներէն մին՝ որ ժողովին իբրև դրագիրներէն մին կը գործէր, այս հրամանն իսկոյն արձանագրեց խոշոր տումարի մը մէջ որ Տաճարի ասպետներուն արարքը կ'պարունակէր՝ երբ հանդիսապէս այսպիսի պարագայից մէջ դումարուէին. երբ գրուածը լմընցուց, միւսք բարձրաձայն կարդաց Մեծ Վարպետին վճիռը, որ նորմանական գաղղիարէնէ թարգմանուելով այսպէս գրուած էր.

«Ռեբեկա, հրէուհի մը, Եօրքցի Իսահակին դուստրը, կախարդութեամբ, նոյնպէս հմայութեամբ և ուրիշ եպերելի յանցանօք ամբաստանեալ լինելով՝ որպէս թէ գործած լինի Սիօնի տաճարին ամենասուրբ Ուխտին մէկ ասպետին դէմ, այս ամբաստանութիւնն ուրացաւ, և պնդեց թէ այս մասին տրուած վկայութիւնը սուտ, անօրէն և շինծու է, և թէ իր անձն ըստ օրինի պաշտպանելու ունեցած արտօնու-

թեամբը, ըստ որում ինքն անկար է մենամարտելու, կ՚առաջարկէ իր կողմէ ախոյեան մը սահմանել, որ ասպետապէս իր պարտքը պիտի կատարէ, ինչպէսզի որ ուզուի, պատասխանատուութիւնն իր վրայ առնելով։ Արդ՝ իր զրաւն Պրայն–որ–Պուա–Կիլպէր ազնիւ ասպետին ձեռքն է, որ Ուխտին և իր կողմէ պիտի մենամարտի, վհուկին շարահնար վարմունքէն ինքն ալ նախատինք և վնաս կրելուն համար։ Հետևապէս՝ Պոմանուար Լուկաս մարքիզ, վերապատուելի Հայր և Հզօր Իշխանն՝ թոյլ տուաւ որ այս մենամարտութիւնը տեղի ունենայ, և սոյն պայքարին համար երրորդ օրը սահմանեց. մրցարանն Սուրբ Գէորգ կոչուած տեղը լինելով, որ Դէնբլդովի ապարանքին մօտ կ՚գտնուի։ Եւ Մեծ Վարպետը կ՚հրամայէ որ ամբաստանեալն իր ախոյենին միջոցաւ անդ ներկայանայ՝ եթէ չկամիր մահու դատապարտուիլ, իբրև կախարդութեամբ ամբաստանեալ անձ մը. նոյնպէս ամբաստանը պարտաւոր է ներկայիլ, թէ ոչ իբրև վատ պիտի նկատուի և չներկայութենէ պիտի դատապարտուի. իսկ մեր ազնիւ տէրն ու զերապատուելի Հայրն որոշեց որ այս մենամարտն իր առջև կատարուի, այսպիսի պարագայի մէջ հաստատեալ պատկառելի սովորութեան հետևելով. Ասուած անշուշտ արդար դատաստան պիտի ընէ։»

— Ամէն — ըսաւ Մեծ Վարպետը։

Եւ այս բառը բոլոր հանդիսականներն երեք անգամ կրկնեցին։

Ռեբեկա խօսք մը չըսաւ, այլ միայն աչերն երկինք բարձրացուց և ձեռքը ծալելով՝ մէկ վայրկենի չափ այս դիրքով անշարժ մնաց։ Ապա Մեծ Վարպետին յայտնեց համեստութեամբ թէ՝ իր բարեկամաց հետ աղաւորէն հաղորդակցելու արտօնութիւն տուի իրեն, որպէս զի իր վիճակին անոնց ծանուցանէ, և եթէ հնար է, իր կողմէն կռուելու համար ախոյեան մը դտնէ։

— Խնդիրդ արդար և օրինաւոր է — ըսաւ Մեծ Վարպետը։ — Հաւատարիմ՝ կարծած մէկ պատգամաւոր ընտրէ, քեզի որ սա բանտիդ մէջ կրնայ աղաւութեամբ հետդ բանակցիլ։

— Միթէ այս տեղ չկայ անձ մը — ըսաւ Ռեբեկա — որ արդար դատի մը սիրով կամ՝ մեծ վարձք մ՚ընդունելու յուսով զժբաղդ էակի մը պատգամաւորը լինելու յանձն առնու։

Ամէնքը լուռ կեցան, վասն զի՝ Մեծ Վարպետին ներկայութեան՝ ոչ ոք անվտանգ համարեց, զրպարտեալ կալանուհոյն համակրութիւն ցոյց տալու, առ ահի որ հրէութեան հակամէտ չհամարուի։ Ոչ միայն արդահատութեան զգացում մ՚այլ վարձատրութեան յոյսն անգամ այս երկիւղը չփարատեց։

Ռեբեկա պահ մ՚անհնարին ահձկութեան մէջ մնաց և ապա գոչեց.

— Միթէ իրա՞ւ է այս, միթէ Անկլիոյ հողին վրայ իրօք պիտի զրկուիմ ինձ մնացած ազատութեան մէկ գոյն բաղդէն, գթութեան գործ մը չտեսնելով զոր մարդ ոճրագործի մ՚անպատմ չզլանար։

Վերջապէս՝ Հիկ, Սնէլի որդին պատասխանեց.

— Ես հաշմուած մարդ մ՚եմ, բայց եթէ փոքր ինչ կ՚շարժիմ, այս շարժումն անոր գթասէր օգնութեան պարտաւոր եմ։ Ես պիտի լինիմ քու պատգամաւորդ — յարեց նա Ռեբեկայի դառնալով — որչափ որ կարկամ մարդ մը կարող է լինիլ։ Երանի թէ իմ լեզուս ըրած ճնշան ոսկեայ արդարաշարժութեամբ դարմանելու կարող լինէի։ Ափսո՛ս, երբ ես քու ազատիրութիւնդ գտնեցի, բնաւ չէի կասկածեր որ քեզ վտանգի կ՚ենթարկեմ։

— Ատուած — ըսաւ Ռեբեկա — ամէն բանի տեսչին է. կարող է Յուդայի գերութեան վերջաց, նոյն իսկ տկարագոյն գործիքը գործածելով։ Իր պատգամն հաղորդելու համար՝ խլունջն իսկ բազէին չափ արընթաց է։ Եօրքցի Իսահակը գտնուէ. ահա քեզի գրամ ալէաք եղած ձին և բանբերը ստանալու համար։ Այս գիրն Իսահակին տուր։ Զգիտեմ թէ արդեօք ճրկնային ոգին կ՚ներշնչէ՞ ինձ, բայց վստահ եմ որ այս մահուամբ չպիտի մեռնիմ, և ախոյեան մ՚իմ պաշտպանութեանս պիտի հասնի։ Երթաս բարեաւ. իմ կեանքս նամ մահո՞ւ քու ազատութենէդ կախումն ունի։

Գեղացին թուղթն առաւ, որ մինակ եբրայերէն քանի մը տող կը պարունակէր։ Ամբոխէն շատերը կ՚ուզէին յորդորելզինքն որ այնպիսի կասկածելի թուղթ մը ձեռք չառնու, բայց Հիկ միտքն հաստատ դրեր էր իր բարերարուհւոյն ծառայութիւն մ՚ընելու։ — Նա իմ մարմինս ազատեց — ըսաւ նա, և վստահ էր որ հրեուհին իր հոգին վտանգելու միտում չունէր։ — Պիտի երթամ — յարեց նա — իմ դրայի՝ Պիւթանի լաւ ձին փոխ ուղելու և Եօրք պիտի հասնիմ այնքան սուղ ժամանակի մէջ որչափ որ կարելի է մարդու և հեծանելիի մը։

Բայց յաջող դիպուածով մը՝ Հիկ այնչափ հեռու գնալու պէտք չունեցաւ, վասն զի տաճարատունէն քառորդ մղոնի չափ հեռու՝ երկու ձիաւորներու հանդիպեցաւ, որոց հագուստն ու խոշոր գլխանոցները տեսնելով՝ հասկըցաւ որ հրէայք են. իսկ երբ աւելի մօտեցաւ, գիտեց որ անոնց մին իր հին տէրն էր, Եօրքցի Իսահակը։ Միւսն էր Պէն Սամուէլ ռաբբին. և երկուքնին ալ՝ իմանալով որ Մեծ Վարպետը ժողով գումարեր է վհուկուհի մը դատելու մօտք, իրենց համարձակութեանը ներածին չափ տաճարատանը մօտեցեր էին։

— Եղբայր Պէն Սամուէլ — ի՛նչ է Իսահակ — հոգիս վրդոված է և չգիտեմ ինչ պատճառաւ։ Այս գիւթութեան ամբաստանութիւնն սատէպ՝ ի գործ կ՚գրուի որպէս զի մեր ժողովուրդը սանջեն։

— Սիրա՛ ա՛ռ, եղբայրդ իմ՝ — ըսաւ բժիշկը։ — Կարող ես նաղովրեցւոց հետ սակարկել և ամէն կերպով ապահարկ մնալ։ այս ամբարիշտ մարդկան ոգին վարողը շահն է, ինչպէս որ, ի՛նչեն, հզօր Սողոմոնի կնիքը չար ոգիները կ՚վարէր։ Բայց ո՞վ է սա ողորմելի մարդն որ նեցուկի վրայ յենած մեզի կ՚մօտենայ և կարծեմ թէ փափաք ունի ինձի խօսելու։ Բարեկա՛մ — շարունակեց բժիշկը Հիկի ուղղելով խօսքը — իմ արուեստիս օգնութիւնը քեզի չեմ մերժեր, բայց արահետին վրայ իրենէ ողորմութիւն խնդրողին թանկ մ՚անգամ չեմ տար։ Կորի՛ր ուրեմն։ Միթէ սրունքդ են անդամալոյծ, ուրեմն ապրուստդ ճարելու համար ձեռօքդ աշխատէ։ վասն զի, թէև անկարող ես արագաշարժ սուրհանդակ մը, կամ հոգատար հովիւ մը, կամ զինուոր մը լինելու, կամ նոյն իսկ սրտնեղ տիրոջ մը ծառայութեան մտնելու, սակայն գործելու համար ուրիշ շատ արհեստներ կրնաս գտնել։ Բայց դու ինչ ունիս, եղբայր — ըսաւ նա՝ իր յորդորն ընդհատելով՝ որպէս զի Իսահակը դիտէ, որ Հիկին տուած տոմսակին վրայ ակնարկ մը նետելով խորին մունչիւն մը հանեց, իր ջորիէն վար սահեցաւ կիսամեռ մարդու մը պէս, և պահ մ՚անկենդան մնաց։

Ռաբբին այլայլելով ձիէն վար իջաւ, և իր ընկերակցին շունչ տալու համար արուեստին թելադրած դարմաններն իսկոյն գործածեց։ Մինչև անգամ՝ նշտրակ մը հաներ էր իր գրպանէն և անորմէ արիւն առնելու կ՚պատրաստուէր երբ իր անձկութեան առարկան՝ հրէայն ուշաբերեցաւ յանկարծ, բայց միայն իր գլխանոցը հեռու նետելու և իր ալեւոր գլխին վրայ հող թափելու համար էր։ Բժիշկը նախ այս յեղակարծ և քուռն այլայլութիւնն խելայնորութեան վերագրելու կ՚միտէր, և իր առաջին դիտաւորութեան դառնալով, վերսին իր գործիները կ՚պատրաստէր։ բայց Իսահակ շատ չանցաւ համոզեց զանի որ կ՚սխալի։

— Վշտա՛յս զաւակը — գոչեց նա — լաւ ես էր անուանել քեզ Բէնոնի և ոչ Բեբեկա։ Ինչու համար մահդ իմ՝ ալեւոյթս գերեզման իջեցընէ, մինչև որ՝ իմ սրտիս դառնութենէ, անիծեմ զԱստուած և մեռնիմ։

— Եղբայր — ըսաւ ռաբբին սաստիկ զարմացած — միթէ դո՞ւ ես, Իսրայէլի որդի մը, այդպիսի խօսքեր արտասանողը։ Ես յուսամ որ տանդ զաւակը տակաւին կ՚ապրի։

— Կենդանի է — պատասխանեց Իսահակ — բայց Դանիէլին պէս։

որ Պէղոխիշաղար (Պաղտասար) կոչուեցաւ՝ երբ առիւծներու գուրը նետուեցաւ։ Բելիարայ արքանեկաց ձեռքը դերի ընկած է և իրենց անդթութիւնն անոր վրայ պիտի թափեն՝ առանց ծաղիկ հասակին և գեղեցկութեան խնայելու։ Ո՛հ, իմ սպիտակ գլխիս վրայ կանաչագեղարմաւենիէ պսակ մ'էր, և Յովնանի պաղին պէս մէկ գիշերուան մէջ պիտի թառամի։ Իմ ծերութեանս զաւակը, իմ հոգւոյս հատորը, ո՛ Ռեբեկա, իմ Ռաքէլիս աղջիկը, մահուան ստուերները քեզ կ'շրջապատեն։

— Բայց կարդա՛ սա սոմնակն — ըսաւ Պէն Սամուէլ — կարելի է դեռ ես կարող լինինք աղատումի հնար մը գտնելու։

— Դո՛ւ կարդա — պատասխանեց Իսահակ — վասն զի իմ աչերս արտասուաց աղբիւր դարձեր են։

«Ա՛ռ Իսահակ, Անդոնիխանի որդի, զոր հեթանոսները Եօրքցի Իսահակ կ'անուանեն, խնդալ և օրհնութիւն Ամենակալին քու վրայ բաղմապատկի։ Հայր իմ, դատապարտեալ եմ մեռնելու յանցանքի մը համար զոր իմ հոգիս չճանչեր, այս է կախարդութեան համար։ Հայր իմ, եթէ հնարին է ուժեղ մարդ մը գտնել՝ որ Նազովրեցւոց սովորութեան համեմատ՝ իմ դատիս համար սրով և նիզակով մենամարտի, Դէնբլսդովի մրցարանը, ասկից երեք օր ետքը, թերևս մեր հարց Աստուածն անոր զօրութիւն տայ անմեղ մը պաշտպանելու, որ միայն այս օգնութեան կ'յուսայ։ Բայց եթէ այնպիսի քաջ մը չգտնուի, թող Իսրայէլի աղջկունք լան իմ վրայ իբրև իրենց մէկ ընկերուհւոյն վրայ որ կենդանի չէ, իբրև նետահար եղնկի մը վրայ, իբրև հնձողին մանգաղով կտրուած ծաղկի մը վրայ։ Ուրեմն, նայէ թէ ի՞նչ կարող ես ընել, և թէ արդեօք աղատումի հնար մը կա՞յ։ Նազովրեցի պատերազմիկ մը կայ արդարև որ անշուշտ զիս պաշտպանելու համար պիտի գինէր, այս է Վիլֆրիտ, Սէտրիկի որդին, զոր հեթանոսները Իվանօէ կ'անուանեն։ Բայց կարելի է անղօր է դեռ իր զէն ու զարդի ծանրութիւնը կրելու. սակայն անոր ականջին հասցուր այս լուրը, հայր իմ, վասն զի իր ժողովրդեան հղօր մարդոց մէջ մեծ հռչակ ունի, և որովհետև դերութեան բանտին մէջ մեզ ընկերակից եղած է, թերևս մեզ 'ի նպաստ մենամարտելու անձ մը գտնէ։ Եւ ըսէ անոր, ըսէ Վիլֆրիտի, Սէտրիկի որդւոյն, որ Ռեբեկա թէ ապրի և թէ մեռնի, բոլորովին անպարտ է իրեն դէմ եղած ամբաստանութենէ։ Եւ եթէ Աստուծոյ կամքն է որ դու աղջկէդ զրկուիս, այնուհետև այս արիւնարբու և անողորմ հողին վրայ մի՛ բնակիր, այլ Գորտովա գնա, ուր եղբայրդ ապահովութեան մէջ կ'ապրի՝ զահին շքին ներքև, և նոյն իսկ Գոսլոր

ռէլ Սարակինացւոյն Հովանիին ներքև. վասն զի Մաւրիտանացւոց անպիտանութիւնքն Իսրայէլի որդւոյ դէմ նուազ անազորոյն են քան թէ Անկլիոյ նաղովրեցւոյն։»

Իսահակ բաւական հանդարտութեամբ մտիկ կ'ընէր երբ Պէն Սամուէլ նամակը կ'կարդար. յետոյ վերատին սկսաւ իր ողբն ու կոծը, իր զգեստները պատռելով, գլուխը փոշի թափելով, և բայագանչութիւններ արձակելով՝ ըստ արևելեան սովորութեան. «Դուստր իմ, դուստր իմ, արեւանս արիւնը, ոսկեբոյս ոսկիը։»

— Բայց — ըսաւ ռաբբին — քաջայի՛ր, վասն զի այդ վիշտ օգուտ մը չունի։ Ոգևորէ, և գնա այն Վիլֆբիտը գտիր, Սէտրիկի որդին։ Թերևս նա օգնէ քեզ խորհրդով կամ իր զօրութեամբը, վասն զի այն պատանին սիրելի է Բիչարտի, զոր նաղովրեցիք Առիւծասիրտ կ'անուանեն, և ձայն կ'պտրտի անդադար թէ նա իր Հայրենի հողը դարձեր է։ Կարելի է անորմէ գիր մը կ'ստանայ և ինչքն որով այն արիունկղակ մարդոյ՝ որ Տաճարի անունը կ'կրեն 'ի նախատինս այս տուրբ ասուղոյն, արդիլէ իրենց անօրէն դատակնիքն 'ի գործ դնելու։

— Պիտի փնտռեմ՝ այն մարդը — վրայ բերաւ Իսահակ — վասն զի բարի պատանի մ'է և Յակոբայ տարագիրներու համար համակրութիւն ունի. բայց չէ կարող նա զէնք կրել և ուրիշ որ քրիստոնեայն Սիոնի տուռապելոյ համար 'ի մարտ պիտի վազէ։

— Կ'երևի ինձ — ըսաւ ռաբբին — որ հեթանոսներու բնութեան անհմուտ մարդու մը պէս կ'խօսիս։ Ոսկիով կարող ես դնել անոնց արիութիւնը, ինչպէս որ ոսկիով քու անձիդ ապահովութիւնը պիտի դնես։ Սիրտ առ, և Ճամբայ ելիր այն Վիլֆբիտ Իսմանօէն փնտռելու. ես ալ իմ կողմէս պիտի աշխատիմ, վասն զի մեծ մեղք մը պիտի գործեմ եթէ քեզ այդ թշուառ վիճակիդ մէջ անօգնական թողում։ Եօրք քաղաքը պիտի դնամ. անդ շատ մարտիկներ և ուժեղ անձեր դումարուած են և տարակոյս չունիմ որ քու աղջկանդ համար մենամարտելու պատրաստ մէկը պիտի գտնեմ. վասն զի ոսկին է անոնց Աստուածն, և ոսկիի համար ոչ միայն իրենց կեանքն այլև իրենց հողերը տալու հակամէտ են։ Եղբայր, քու կողմէդ ընելիք խոստումներս 'ի հարկէ կատարելու չպիտի դժկամակիս։

— Ի հարկէ, եղբայր իմ — պատասխանեց Իսահակ — և օրհնեալ լինի Երկին որ իմ թշուառութեան մէջ ինձ միխիթարիչ մը ղրկեց։ Սակայն իսկոյն անոնց խնդիրը կատարելու մի գնացէք, վասն զի այն անիծեալ ազգին քնութիւնն է, ինչպէս որ պիտի գիտես, ոսկիներ պահան-

ջել և ապա արծաթով զոհ լինիլ։ Դարձեալ քու գիտցածիդ պէս շարժէ, վասն զի այս գործն իմ խելքս կ'խանգարէ, և ի՞նչ օգուտ պիտի ունենայ ոսկիս եթէ իմ սիրասուն աղջիկս 'ի կորուստ մատնուի։

— Երթաս բարեաւ — ասաւ բժիշկը — և երանի՛ թէ արտիդ փափաքներն 'ի կատար հասնին։

Ջերմաղին իրարու փարեցան, և մէն մին իր բռնելիք ուղին ընկաւ։ Անդամալոյծ ղեղացին քիչ մ'ասեն կայ առաւ որ աչքով անոնց հետևի։

— Շո՛ւն հրէաներ — զոչեց նա վերջապէս — ինձ ուշադրութիւն չբրին որպէս թէ ստրուկ մը կամ թուրք մը լինէի։ Կարողէին մէկ երկու արծաթ նետել ինձ։ Ստիպուած չէի այն տոմսակն անոնց բերելու՝ հմայուելու վտանգին մէջ ընկնելով, ինչպէս որ շատեր ինձ ըսին այս բանս։ Եւ ի՞նչ փոյթս է նորատի աղջկան ինձ տուած ոսկին եթէ Զատկին քահանայէն յանդիմանուիմ և եթէ անոր կրկնապատիկ դրամ տալու ստիպուիմ որպէս զի հետը հաշտուիմ, և ասկէ զատ՝ եթէ բոլոր կենացս մէջ «Հրէից սուրհանդակը» կոչուիմ, ինչպէս որ շատ հաւանական է։ Կարծեմ թէ իրօք թոլեց զիս այն աղջիկն երբ անոր մօտեցայ. բայց նոյն փորձանքին հանդիպած են անոր ամէն մօտեցողները։ Ոչ ոք կարող է անոր բան մը մերժելու և հիմակ ես պատրաստ եմ իմ դրպակս ու գործիներս զոհել անոր կեանքն ազատելու համար։

ԳԼՈՒԽ ԼԸ

Ո՛ օրիորդ, որչափ որ պաղ ես և անազորոյն։
Իմն ալ սիրտս գոռոզ է քեզ հանդոյն։

ՍԸՎԱՐՏ

Ռեբեկայի դատաստանին տրուած օրուան հետևեալ վերջալուսին էր, եթէ այս անօրէնութիւնը դատաստան կրնայ կոչուիլ, որ իրեն բանտին դուռը մեղմ հարուած մը լսելի եղաւ։ Պալանուհին չվերդովեց այն հարուածը, վասն զի նոյն պահուն՝ իր կրօնին պահանջման համեմատ՝ երեկոյեան աղօթքն ընելու զբաղած էր, և կ'աւարտէր այն շարականով զոր անկլիարէնի թարգմանելու փորձ փորձեցինք։ 54

Երբ Իսրայէլ, Տիրոջ սիրելին,
Ելաւ գնաց գերութեան երկրէն,
Իր Հարցն Աստուած շարժէր առաջին,
Սիւն ուղեցոյց, ամպոտ բոցեղէն։
Օրն 'ի բուն ընդ երկար շաւիղն
Կոթող ամպոտ ծանրօրէն սահէր.
Իսկ գիշերային ծիրանի աւաղն
Արաբիոյ՝ հրափայլ բեկբեկէր։

Անդ զովաբան ձայն հանէր սաղմոս,
Փող և թմբուկ պատասխանէր զոռ,
Անդ դստերքն Սիօնի համայն,
Երգէին ընդ երեցն ու զինուոր։
Զիք այժմ հրաշք՝ մեր թշնամւոյն ահ,
Հէք Իսրայէլ գնայ մենաւոր.
Մեր հարք մոռցան շաւիղդ անահ,
Ո՛ Տէր, և դու թողեր մեզ անզօր։

Բայց դեռ ներկայ՝ մեզ միշտ անտես այլ,
Երբ ջինջ փայլի օր աւետալի,
Քո յիշատակ թող ձգէ մռայլ
Որ պատիրն նշոյլ դոյզն ինչ մեղմի։
Իսկ Յուդայի, ո՛հ, վրայ Ճամբուն
Ստուեր, մրրիկ երբ ի՛ջնէ անդուլ,
Մի՛ զարմանար, այլ համբերէ դուն,
Մեզ լուսաւորէ, մի առներ մեզ կուլ։

Բաբելոնի ափունքը՝ մեր քնար
Թողինք 'ի խաղ բռնաւորների,
Համր են մեր վին, թմբուկ և փողար,
Անվառ է խունկ՝ վրայ մեր խորանի։
Բայց դու ըսիր. «Արիւն նոխազի,
Մսան խոյի մեծ բան չեն արժեր,
Այլ հեզ մի սիրտ՝ մի հլու հոգի,
Հաճոյ են ինձ և ընտիր զոհեր։»

Երբ Ռեբեկայի շարականին յետին հնչիւնը նուաղեցաւ, դրան վերատին զարկին թեթեւակի։ — Ներս մտիր — ըսաւ նա — եթէ բարեկամ մ'ես. իսկ եթէ թշնամի, քու մուտքդ արգիլելու միջոցը չունիմ։

— Ես — ըսաւ Պրայն-տը-Պուա Կիլդէր՝ սենեակը մտնելով — բարեկամ եմ կամ թշնամի, Ռեբեկա, և այս բանս մեր տեսութեան արդիւնքէն կախում ունի։

Այս մարդուն տեսքէն շուարելով՝ որու վաստակէր սէրն իր աղէտից բուն շարժառիթը կ'սեպէր, Ռեբեկա շփոթ և զգուշաւոր, այլ անվեհեր կերպով մը՝ սենեկին ներքնագոյն անկիւնը քաշուեցաւ, որպէս թէ կարելի եղածին չափ հեռու նահանջել կամէր, բայց միտքը հաստատ դնելով դիմադրել երբ նահանջն անարդիւն մնար։ Ուստի գլուխը վերցուց և չէ թէ երկչոտութիւն այլ անյողդողդ դիրք մը բռնեց. կ'երևէր թէ չէր ուզեր կռիւ գրգռել. բայց երբ սկսէր իր բոլոր ուժովը յարձակման դէմ դնելու պատրաստ էր։

— Ռեբեկա, իզնէ ենկինչելու բնաւ պատճառ մը չունիս — ըսաւ տաճարականը. կամ եթէ կ'ուզես որ աւելի բացայայտ ըսեմ, այժմ իզնէ վախնալու տեղի չունիս։

— Տէր ասպետ, ես քեզնէ չեմ վախնար — պատասխանեց Ռեբեկա, թէև իր ընդհատ ձայնը կարծես թէ ստոր կ'հանէր իր լեզուին դիւցազնական շեշտը — իմ բոլոր յոյսս Աստուծոյ վրայ է, և քեզնէ վախ չունիմ։

— Հարկ չկայ — պատասխանեց Պուա-Կիլդէր ծանրաբար — իմ նախորդ յիմարական փորձերէս այժմ երկինչելու պէտք չունիս։ Պահակներ կան քեզի մօտ՝ որոց վրայ ես իշխանութիւն մը չունիմ։ Պաշտօն ունին անոնք քեզ մահուան տանելու, Ռեբեկա, սակայն չպիտի թողուն որ նախատուիս նոյն իսկ իմ կողմէս, եթէ երբէք զայրոյթս՝ և իրօք զայրոյթ է, այն աստիճանին հասնի։

— Օրհնեալ լինի Աստուած — ըսաւ Ռեբեկա — մահն իմ երկիւղներէս ամենէն թեթևն է այս ոճիրներու քարայրին մէջ։

— Անշուշտ — պատասխանեց տաճարականը — մահուան տեսիլն անվեհեր հոգի մը շուտով կ'ընդունի, երբ անոր շաւիղը յանկարծական և բաց է. նիզակի հարուած մը, սրի վերք մ'ինձի համար փոքր բաներ են, իսկ քեզի համար բարձր աշտարակէ մ'անկումը, կամ սրածայր գաշոյնի մը ծայրն՝ բնաւ ահ ու դող չեն պատճառեր քեզ՝ երբ բաղդատենք այն տանջանքին հետ զոր անպատուութիւն կ'սեպենք։ Քաջ նշա-

նակէ ըսածս, Ռեբեկա, կարելի է որ պատուոյ վրայ ունեցած դաղափարներս քու ունեցածներէդ նուազ ցնորական չեն, բայց երկուքնիս ալ պիտենք անոնց համար մեռնիլ։

— Ողորմելի մարդ — ըսաւ Հրէայ օրիորդը — միթէ կեանքդ այնպիսի սկզբունքի համար վտանգելու ստիպուած ես որոց ճշմարտութիւնն ուղիղ դատողութիւնդ չճանչեր։ Արդարև՝ զանձդ տալ է այն բանին համար որ հացի չվերածուիր. բայց այդպէս մի դատեր դիս։ Քու միտքդ կրնայ այլայլիլ մարդկային կարծեաց յեղյեղուկ ալեաց համեմատ, իսկ իմս դարերու ժայռին վրայ անսասան կեցած է։

— Լռութի՛ւն, նորատի օրիորդ — պատասխանեց տաճարականը — այդպիսի խօսքեր այժմ անպատեհ են։ Դու դատապարտեալ ես՝ չէ թէ յանկարծական և դիւրին մահուամբ մեռնելու, ինչպէս որ թշուառութիւնը կ'ընարէ և յուսահատութիւնը զայն կ'փնտռէ, այլ ծանր, ահռելի, երկարատև մահուամբ՝ այն բանին համար զոր այս մարդկան դիւական մոլեռանդութիւնը յանցանքդ կ'անուանէ։

— Եւ որո՞ւ, եթէ այս է ճակատագիրս, որո՞ւ պարտաւոր եմ զայն — ըսաւ Ռեբեկա — ոչ ապաքէն այն մարդուն որու գաղանաբարոյ և խնքնասէր զգացումն դիս այս տեղ քաշքշեց, և որ այժմ՝ ինձ անյայտ պատճառաւ մը, իրրև ահարկու նկարագրելու կ'ձգնի այն վիճակին որու մէջ դիս գլորեց։

— Մի՛ կարծեր — ըսաւ տաճարականն — որ ես կամովին յանձնեցի քեզ. գարձեալ պատրաստ եմ իմ լանջովս որ և է վտանգէ պահպանել քեզ եռանդագին, ինչպէս որ Գօրգիլատօնի դղեկին մէջ քեզի դէմ արձակուած նետերէն վահանս պաշտպանեց քեզ։

— Եթէ անմեղ մը պաշտպանել էր դիտաւորութիւնդ — ըսաւ Ռեբեկա — քեզ շնորհապարտ պիտի մնայի. բայց ընդ հակառակին՝ այնքան ստէպ այդ արժանիքդ մէջ բերիր, որ ահա կ'ըսեմ քեզ կեանքն աչքիս չէ, եթէ այդ քու խնդրած գնոմէդ պիտի վայելեմ։

— Վերջտուր այդ յանդիմանութեանցդ, Ռեբեկա — պատասխանեց Գուա-Գիլպէր — ես ալ իմ վիշաս ունիմ և չեմ հանդուրժեր որ կշտամբանքդ աւելի ևս սատակցընեն զանոնք։

— Ուրեմն, ի՞նչէ միտքդ, ասպետ — հարցուց Հրէայ օրիորդը — համառօտ յայտնէ. միթէ նպատակդ քու պատճառած թշուառութեանդ ակնատես վկայ լինիլ չէ՞։ Շուտ բացատրէ ինձ, և եթէ այսպէս է, թոյլտուր դիս իմ սև բաղդիս. մահուան և յաւիտենականութեան մէջ եղած քայլը կարճ բայց սոսկալի է. քիչ մը ժամանակ ունիմ միայն մահուան պատրաստուելու համար։

— Կ'նայիմ, Ռեբեկա — ըսաւ Պուա Կիլպէր — որ դիս կ'ամբաստանես իբրև պատճառ աղէտիցդ՝ որոյ առաջն առնուլ շատ կ'փափաքէի։

— Ասպետ — ըսաւ Ռեբեկա — չէի հաճեր քեզ յանդիմանել, բայց միթէ ճշմարիտ չէ՞ որ քու անզուսպ տուփանացդ հետևանքն է իմ մահս։

— Կ'սխալիս, կ'սխալիս — ըսաւ տաճարականը շտապաւ — եթէ դիս պատճառ սեպես այնպիսի բանի մը զոր ոչ գուշակել և ոչ արգիլելու կարողէի։ Միթէ կարի՞ղէի գուշակել այն խելացնորին գալուստը, որուն մոլեգին արիութեան մէկ քանի գործերը, և իրեն պէս ինքնաչարչար ճգնաւորի մը յիմարներու ստած գովեստները բարձրայուցին դինքն իր բնիկ արժանիքէն վեր, ուղիղ բանէն վեր, իշնէ վեր, և մեր Ուխտին հարիւրաւոր ասպետներէն վեր, որոնք աղտա մարդոց պէս կը խորհին և կ'զգան և զերծ են այն մոլեռանդ նախապաշարումներէ որ Մեծ Վարպետին բոլոր գործոց և կարծեաց շարժառիթներն են։

— Եւ սակայն — ըսաւ Ռեբեկա — դու իբրև դատաւոր կանգնեցար իմ վրայ, դու որ գիտես թէ անմեղ, բոլորովին անմեղեմ, դու աջակից եղար դատապարտութեանս, և եթէ լաւ իմացայ, դու ինքնին գիտնաք պիտի մեռնամարտիս իմ յանցանքս հաստատելու և պատիժս ապահովելու։

— Համբերութիւն, օրիորդ — պատասխանեց տաճարականը — չկայ աղգ մ'որ ձերինին պէս ժամանակին համակերպելու արուեստը գիտնայ, և իր նաւն այնպէս վարէ՝ որ ներհակ հովերէն իսկ օգուտ քաղէ։

— Ողբալի է այն ժամն — ըսաւ Ռեբեկա — որ Իսրայէլի տան այս արուեստը սորվեցուց։ Բայց դժբաղդութիւնը սիրտը կ'ծռէ ինչպէս կրակը կ'կակղէ պողպատը, և անոնք որ ինքնիշխան տէր չեն, և աղատ ու անկախ երկրի մը բնակիչները լինելէն զադրեր են, պէտք է որ օտարաց առջև խոնարհին։ Ասպետ, այս անէծքը մեր վրայ է, և արդարև մեր յատուկ անխոհեմութեան և մեր հարց անվերաբանութեան արդիւնքն է այս։ Բայց դուք, դուք որ ազատութեան վրայ կ'պարծիք՝ իբրև ծննդեան իրաւունք մը, որչափ աւելի մեծ յանցանք կ'գործէք երբ ուրիշներուն նախապաշարմանց առջև կ'խոնարհիք ձեր յատուկ համոզման հակառակ։

— Քու խօսքդ դառն են, Ռեբեկա — ըսաւ Պուա Կիլպէր անհամբեր շրջելով սենեկին մէջ — բայց ես չեկայ աստ փոխադարձ յանդիման-

ութիւններ ընելու։ Գիտցիր որ Պուա Կիլպէր որ և է մարդու մ՚առջև չծռիր, թէև երբեմն պարագաները կ՚յորդորեն զինքն իր խորհուրդն այլայլելու. իր կամքը լեռէն հոսող սահանքին կ՚նմանի, որու թերևս պահ մ՚ընթացքը շեղի, բայց հուսկ ուրեմն ովկիանոս կ՚թափի։ Այն թուղթն որով ախոյեան մը խնդրել կ՚առաջարկէին քեզ որմէ՞ կարծես թէ եկաւ ձեռքդ եթէ ոչ Պուա Կիլպէրի կողմէ. ոչ կրնար անորմէ աւելի հոգ տանիլ քու վրայ։

— Կարճատև դադար մ՚է այդ որ քանի մը վայրկեան անխուսելի մահը կ՚յապաղէ — գոչեց Ռեբեկա — միթէ այսչափ միայն կարիղէիր ընել այնպիսի անձի մը համար՝ որու զլուխն այնչափ փորձանք բայիր և զերեզմանին դուռը հասուցիր։

— Ո՛չ, օրիորդ — ըսաւ Պուա Կիլպէր — միայն այսչափ ընել չէր իմ նպատակս։ Եթէ այն մոլեռանդ խելայնորն ու յիմար Կուտալբիդ չմիջամտէին, որ տաճարական մը լինելով՝ կարծէ թէ մարդասիրութեան սովորական կանոնաց համեմատ կ՚շարժի, այն ատեն Ուխտին Պաշտպան ախոյենի պաշտօնը չէ թէ հրամանատարի մ՚այլ Ուխտին մէկ ասպետին պիտի լինար։ Ուստի և ես, ինչպէս որ էր իմ խորհուրդս, փոքր առաջին անգամ հնչելուն՝ կրկէսը պիտի երևէի իբրև քու ախոյեանդ, իբրև թափառական ասպետ մը ծպտեալ, որ արկած կ՚փնտռէ իր վահանով և նիզակով հռչակ ստանայ։ Իսկ այն ատեն Պօմանուար կրնար չէ թէ մէկ՝ այլ իմ ընկերակիցներէս երկու երեք հատ ընտրել և ինձի դէմ ղրկել, դարձեալ վստահ եմ որ զանոնք մէկ հարուածով գետին պիտի տապալէի։ Այսպէս, Ռեբեկա, անմեղութիւնդ պիտի հաստատուէր և քու երախտապիտութեանդ պիտի ապաւինէի որ յաղթութեանս վարձքն ընդունիմ։

— Ասպետ — ըսաւ Ռեբեկա — այդ ամէն ըսածներդ լոկ մեծաբանութիւն են և ունայն յայտարարութիւն մը թէ՝ ինչ պիտի ընէիր եթէ ուրիշ կերպով շարժելու յարմար չդատէիր։ Իմ ձեռնոցս առիր, և պէտք է որ իմ ախոյեանս՝ եթէ ինձի պէս ընկեցիկ էակ մը կրնայ մէկը գտնել, քեզի դէմ մաքառի մրցարանին մէջ, և սակայն դու բարեկամի և պաշտպանի կերպարան մը կ՚առնուս իմ առջևս։

— Այո՛, դարձեալ քու բարեկամդ և պաշտպանդ պիտի լինիմ — ըսաւ տաճարականը ծանրօրէն — բայց նկատէ մի անգամ թէ ինչ վտանգի, կամ ինչ իրական անպատուութեան կ՚ենթարկիմ, և ապա պարտէ՛ զիս եթէ պայմաններ առաջարկեմ, ինձ ամենէն սիրելի եղած բաները զոհելէն առաջ, որպէս զի հրէուհի մ՚ազատեմ։

— Խօսէ — ըսաւ Ռեբեկա — միտքդ չեմ իմանար։

— Լաւ ուրեմն — ըսաւ Պուա-Կիլպէր — այնքան աղատօրէն պիտի խօսիմ որչափ խօսած է երբէք դիւրահաւան ապաշխարող մ'իր խոստովանահօր։ Ռեբեկա, եթէ այն մրցարանը չերևիմ՝ իմ համբաւս և ասոտիճանս կ'կորուսեմ, պիտի կորուսեմ իմ կենցաղս շունչն, այս է իմ եղբարցս համարումն որով զիս կ'պատուեն, և այն յոյսերս որով օր մը խելայնոր Լուկաս Պօմանուարի վարած բարձր իշխանութիւնը պիտի ստանամ, թէև նոյնը բոլորովին ուրիշ կերպով պիտի գործածեմ։ Այս է իմանելիք վերջն՝ եթէ քու դատիդ դէմ գինեալ չերևիմ։ Անիծեալ լինի այն Կուտալբիոն որ զիս այս ծուղակին մէջ նետեց, և երկիցս անիծեալ լինի Ալպէրդ Մալվուազէն որ իմ խորհուրդս կատարելու արգիլեց, այս էր ձեռնոցը նետել այն աւելորդապաշտ յիմարին երեսին, որ քեզի պէս մտքով բարձր և ձևով չքնաղ էակի մը դէմ արձակուած անհեթեթ զրպարտութեան կ'անսար։

— Բայց այս մեծաբանութիւնը կամ շողոքորթութիւնն ի՞նչ օգուտ ունին այժմ — պատասխանեց Ռեբեկա։ — Քու ընտրութիւնդ ըրիր, և լաւ ևս համարեցիր անմեղ կնկան մ'արիւնը մտնել քան թէ երկրային վիճակդ ու յոյսերդ վտանգել։ Ի՞նչ հարկ կայ այժմ հաշիւներ ընել, քանի որ արդէն ընելիքդ որոշած ես։

— Ո՛չ, Ռեբեկա — ըսաւ ասպետը մեղմագոյն ձայնով մը ու անոր աւելի մօտ գնալով — իմ որոշումս ըրած չէմ, նա մանաւանդ միտ դիր, դու պիտի ընես այս որոշումը։ Եթէ մրցարանն երևիմ, պարտաւոր եմ համբաւս պահել զինուք, և եթէ պահեմ, թէ ախոյեան ունենաս թէ ոչ՝ խարոյկի վրայ պիտի մեռնիս. վասն զի չկայ ասպետ մ'որ կարող լինի զինուք ինձի հետ զլուխ ելնել, Առիւծասիրտ Ռիչարտէն և իր սիրելի Իվանհոէէն զատ։ Գիտես արդէն Իվանհոէ անկարող է զրահը բառնալ, և Ռիչարտ օտար աշխարհ կ'գտնուի 'ի բանտ։ Եթէ երևիմ, դու պիտի մեռնիս, եթէ քու գեղեցկութիւնդ հրապուրէ իսկ կրակոտ երիտասարդ մ'ասպարէզ իջնել քու պաշտպանութեանդ համար։

— Եւ ի՞նչ օգուտ ունի այժմ ատէպ կրկնել այդ բանը — հարցուց հրէայ օրիորդը։

— Շատ օգուտ ունի — պատասխանեց տաճարականը — վասն զի քու վիճակդ ամէն կողմէ քննելու պիտի օգնէ քեզ։

— Լաւ ուրեմն — պատասխանեց Ռեբեկա — օթոյը դարձուր և միւս երեսը ցցուր ինձ։

— Եթէ այն մրցարանն երևիմ — ըսաւ Պուա-Կիլպէր — դու

ծանր և անապրոյն մահուամբ պիտի մեռնիս, այնպիսի տանջանօք որոյ համար կ'ըսեն թէ 'ի հանդերձեալն ոճրագործներու սահմանուած է։ Բայց եթէ չերևիմ, այն ատեն վատթար և անպատիւ ասպետ մը պիտի դառնամ, և պիտի ամբաստանուիմ կախարդութեամբ և իբրև անհաւատից հետ հաղորդակից պիտի ամբաստանուիմ. իմ կրած նշանաւոր անունս՝ որուն այնքան փայլ տուի, յանդիմանութեան և նախատանաց առիթ պիտի տայ. իմ հզօր փառասիրութիւնս պիտի զոհեմ, պիտի տապալեմ այն խորհուրդներն որ կ'բարձրանային այն լեռներու պէս, որոնք՝ ինչպէս կուապաշտները կ'ըսեն, երկին ելնելու համար երբեմն ծառայեցին. և սակայն, Ռեբեկա — յարեց նա՝ անոր ուրն ընկնելով — պատրաստ եմ այս մեծութիւնը զոհելու, պատրաստ եմ համբաւէս հրաժեշտ տալու, պատրաստ՝ այն իշխանութիւնը թողլու. մինչև անդամ հիմակ որ կիսովին իմ ափիս մէջն է, եթէ միայն ըսես սա խօսքը. «Գուա-Գիլբէր, քեզ իբրև իմ սիրահարս կ'ընդունիմ։»

— Այդպիսի յիմար բաներու վրայ մի մտածեր, ասպետ — պատասխանեց Ռեբեկա — այլ դնա փոքրիկ խնամակալին, մայր թագուհւոյն և ճօճն իշխանին դիմէ, 'ի պատիւ Անգլիոյ թագին՝ չպիտի թողուն որ ձեր Մեծ Վարպետին վնասուն 'ի գործ դրուի։ Այսպէս առանց զոհողութիւն մ'ընելու քու կողմէդ, և իշնէ փոխարէն մը խնդրելու, զիս պաշտպանած պիտի լինիս։

— Անոնց հետ ես գործ չունիմ — շարունակեց տաճարականն իր պատմուճանին տուտը բռնելով — քեզի միայն կ'գիմեմ, և ի՞նչ բան կրնայ հակակշռել քու ընտրութիւնդ։ Քաջ խորհէ, եթէ սադան մ'իսկ լինէի, դարձեալ մահը վատթարագոյն է, և մահն է իմ նախանձորդս։

— Չեմ կրնար քննել այդ ծանր խնդիրներն — ըսաւ Ռեբեկա՝ վայրագ ասպետը դրդռելու վախնալով, թէև միտքը դրած էր ոչ անոր տուփանաց հաւանիլ և ոչ իսկ հաւանութեան տուտ նշան մը յայտնել։ — Մարդ եղիր, քրիստոնեայ եղիր. եթէ իրօք քու հաւատդ կ'հրամայէ քեզ դթութիւն, զոր ձեր լեզուները քան գործերը կ'յայտնեն, աղատէ զիս այս ահռելի մահէն, առանց տրիտուր մը խնդրելու, վասն զի այն ատեն քու մեծանձնութիւնդ անարդ սակարկութեան մը պիտի փոխէ։

— Ո՛չ, օրիորդ — դոչեց գոռոզ տաճարականն ընդվզելով — այդ կերպով չպիտի համոզես զիս։ Եթէ իմ արդի համբաւիս և ապագայ փառասիրութեանս հրաժեշտ տամ, պիտի տամ միայն քու սիրոյդ համար, և միասին պիտի փախչինք։

Մտիկ ըրէ, Ռեբեկա — կրկնեց նա իր ձայնն ամբելով — Անկլիա, Եւրոպա, չեն աշխարհը։ Կան դեռ ուրիշ երկիրներ ուր կարող ենք գործել, և բաւական ընդարձակ են իմ փառասիրութեանս համար։ Պալեստին կ'երթանք, ուր Գոնրատ, Մոնդֆէրատի մարքիզն, իմ բարեկամն կ'գտնուի, բարեկամ մ'որ ինձի պէս ազատ է այն յիմարական խղճահարութենէ որով մեր ազատածնունդ բանականութիւնը կ'կաշկանդեն. լաւ ես պիտի համարինք Սալահդինի նիզակակից լինիլ՝ քան թէ մեր արհամարհած կրօնամոլներուն անարդանաց հանդուրժելու։ Մեծութեան հնանելու համար նոր նոր խորհուրդներ պիտի կազմեմ — շարունակեց նա մեծաքայլ քայլելով սենեկին մէջ — Եւրոպա պիտի լսէ այն անձին մեծագոչ քայլերն զոր իր ծոցէն արտաքսեց։ Պալեստինի ազատութեան համար զրկած միլիոնաւոր խաչակիրներն այնչափ մեծ գործեր չպիտի կարենան կատարել որչափ մենք. Սարակինացւոց բիւրաւոր սուրերն չպիտի կարենան այնքան մեծ ճամբայ մը հորդել այն երկրին մէջ ուր ժողովուրդներն իրարու դէմ կ'պատերազմին որչափ պիտի ընեն Պուա-Կիլպէրի և իր եղբարց արիութիւնն ու քաղաքականութիւնը, որոնք՝ այն մոլեռանդ ծերունիին հակառակ՝ թէ 'ի բարին և թէ 'ի չար՝ ինձի հաւատարիմ պիտի մնան։ Դու թագուհի պիտի լինիս, Ռեբեկա. Կարմելեան լեռին վրայ պիտի բարձրացընենք այն աթոռն զոր բաղուկս քեզի համար շահած պիտի լինի, և երկար ատենէ փափաքած ցուպս արքայական դաւազանի հետ պիտի փոխանակեմ։

— Երազ մ'է այս — ըսաւ Ռեբեկա — դիշերային սնոտի երազ մը որ եթէ իրական իսկ լինէր դիս չպիտի հրապուրէր։ Բաւական է ըսել քեզ որ քու ստանալիք իշխանութեանդ մասնակից չպիտի դտնուիմ երբէք։ Իմ աղդիս և կրօնիս այնքան սերտիւ կապուած եմ որ չեմ կրնար յարդել այն մարդն որ հաւատն ուրանալու և իր ուխտած պարտաւորութիւնները դրժելու պիտի հաւանի՝ որպէս զի օտար ժողովրդեան մ'աղջկան համար ունեցած անկանոն տուփանքը գոհ ընէ։ Իմ ազատութեանս համար դին մը մի՛ պահանջեր, աղնիւ ասպետ, վեհանձնութեան գործ մը մի՛ ծախեր, յանուն դթութեան հարստահարեալը պաշտպանէ և չէ թէ ինքնասիրական օգտի համար։ Գնա Անկլիոյ թագաւորին, Ռիչարտ՝ այս անապորոյն մարդկան դէմ ըրած բողոքս պիտի լսէ։

— Երթանք, Ռեբեկա — ըսաւ Տաճարականը դառնալաբար։ — Եթէ հրաժարիմ Ուխտէս, քեզի համար պիտի հրաժարիմ։ Փառասիրութիւնը պիտի մնայ ինձ եթէ իմ սէրս մերժես. ամէն բանէ չպիտի

զրկուիմ։ Ես ծռեմ զլուխս Ռիշարտի առջև, այն հպարտ արտէն շնորհ մը խնդրե՛մ, երբէք, Ռեբեկա, երբէք Տաճարականաց Ուխտն իմ անձուկ անոր ոտից ներքև չպիտի դնեմ, կարող եմ Ուխտս թողուլ, սակայն երբէք չպիտի եղծեմ կամ մատնեմ զայն։

— Թո՛ղ Աստուած դայ ինձ օգնութեան — ըսաւ Ռեբեկա.— վասն զի մարդկան օգնութիւնն անյուսալի է։

— Այդ ճշմարիտ է — վրայ բերաւ Տաճարականը — վասն զի, որչափ որ հպարտ ես, զիս ինքզինքիդ հաւասար դատար։ Եթէ մրցարան մտնեմ նիզակս կանգուն, մի՛ յուսար բնաւ որ մարդկային որ և է նկատում արդիլէ զիս զօրութիւնս՝ի գործ դնելու, և այն ատեն քու ճակատագրիդ վրայ խորհէ. այս էյետին ոճրագործի ահռելի մահուամբ մեռնիլը, բոցակէզ խարոյկի մը վրայ սպառիլը, տարերայ դառնալ որով մեր մարմինը խորհրդաւոր կերպով բաղադրուած է։ Այդ շնորհալի մարմնոյդ մասունքն իսկ չպիտի մնան, որպէս զի կարենանք ըսել թէ՝ այս մարմինը կ՚շարժէր և կենդանի էր։ Ռեբեկա, կնկան մը գործ չէ այսպիսի ծանր տանջանք մը կրելը. իմ աղաչանաց պիտի զիջանիս անշուշտ։

— Ցուա-Կիլպէր — պատասխանեց հրէուհին — դու կանանց սիրտը չես ճանչեր. կամ հաղորդակցեր ես միայն անոնց հետ որ քու լատագոյն զգացումներուդ կորստեան պատճառ եղեր են։ Գոռոզ Տաճարական, ահա կ՚ըսեմ քեզ, որ ամենէն կատաղի պատերազմներու մէջ չես ցոյց տուած այնքան անվկանդ արիութիւն, որչափ ցոյց տուած են կանայք երբ սիրոյ կամ պարտաւորութեան դրդմամբ տառապեր են։ Ես ևս կին մ՚եմ, փափկութեամբ մեծցած, ՝ի բնէ տկար վստանդի առջև, և նեղութեան անվարժ, և սակայն երբ կ՚մտնենք այն աղէտաբեր մրցարանները, դու պատերազմելու և ես տառապելու համար, կատարելապէս վստահ եմ որ իմ արիութիւնս քուկդ պիտի գերազանցէ։ Երթաս բարեաւ, այսուհետև քեզի հետ պէտք չունիմ խօսակցելու. Յակոբայ աղջկան երկրիս վրայ մնացած ժամն պէտք է որ ուրիշ կերպով գործածուի. պէտք է որ փնտռէ նա Մխիթարիչն՝ որ թերևս իր ժողովրդէն կ՚պահէ երեսը, բայց կ՚բանայ միշտ ականջն այն անձանց ձայնին որ անկեղծութեամբ և վստահութեամբ անոր կ՚ապաւինին։

— Ուրեմն այսպէս պիտի բաժնուինք — ըսաւ Տաճարականը պահ մը լռելէն ետև։ — Տար երկին որ երբէք իրարու հանդիպած չլինէինք, և կամ դու ծննդով ազնուական և կրօնիս քրիստոնեայ լինէիր։ Նաև մանաւանդ, տէր Աստուած, երբ քեզի կ՚նայիմ, և կ՚մտածեմ թէ նա-

ընդ ուր պիտի իրարու հանդիպինք, կ'փափաքիմ իսկ որ քու վատթար ազգիդ մէկ անդամը լինէի, և փոխանակ նիզակ և վահան շարժելու, ձեռքս միայն ոսկի և արծաթ ճանչէր, իմ գլուխս յետին իշխանին առջև ծռէի և իմ նայուածս ահարկու գառնար միայն գոհաղար և սնանկ պարտապանին։ Այս կ'փափաքէի, Ռեբեկա, որպէս զի քեզ կենակից լինէի, որպէս զի քու մահուանդ սոսկալի մատակցութենէս ազատ մնայի։

— Այդպէս հրէին նկարագիրն ըրիր — ըսաւ Ռեբեկա — ինչպէս որ քեզ նմանողներուն հալածանքը զանի ըրած են։ Երկին՝ իր արտմտութեան մէջ՝ իր ընիկ երկրէն զանի վանեց, բայց ճարտարութիւնն անոր առջև բացաւ իշխանութեան և ազդեցութեան միակ ճամբան, զոր բռնութիւնն անարգել ձգած է։ Կարդա Աստուծոյ ժողովրդեան հին պատմութիւնը, և ըսէ ինձ եթէ անոնք որոց ձեռօք Եհովա այնքան սքանչելիք գործեց օտար ազգերու մէջ, ագահ և վաշխառու ժողովուրդ մ'էին։ Գիտցիր նաև, վէս ասպետ, մեր մէջ այնպիսի փառաւոր անուններ ունինք որ հիւսիսի ազնուականութիւնն անոնց մօտ դդմենի մ'է եղևնի առջև. անուններ որ կ'հանին այն փառայեղ ժամանակաց երբ գերագոյն էին ներկայութիւնն կ'ասրսէր գթութեան գահը քերուբէից մէջ, և որոնք իրենց շքեղ ծաղումն երկրային իշխանէ մը չեն առնուր՝ այլ այն ահարկու Զայնէն որ հրամայեց անոնց նախահարց երինային Տեսլեան մօտենալու. այսպէս էին Յակոբայ տան պայազատները։

Ռեբեկայի գէմքն երինային փայլ մը կ'առնուր քանի իր ազգին հին փառքը կ'փառաբանէր, բայց գոյնը նետեց երբ նա հառաչելով՝ յաւելուց. — Այսպէս էին Յուդայի իշխանները, բայց այժմ այսպէս չեն։ Ոտնահար կ'լինին արմատախիլ խոտերու պէս և արահետներու փոշին հետ կ'խառնուին։ Եւ սակայն կան այնպիսիներ անոնց մէջ որ իրենց անուանի հարց հարազատ զաւակներն են, և այսպէս պիտի լինի նաև Անտանիխանի որդի՝ Իսահակայ դուստրը։ Երթաս բարեաւ, չեմ փափաքիր ձեր արեան գնով շահած փառքը, չեմ փափաքիր ձեր բարբարոս նախահարքը, հիւսիսային հեթանոսները. չեմ փափաքիր ձեր հաւատքն, որ յարաժամ ձեր բերնին մէջէ, այլ երբէք ձեր սրտին և գործոյ մէջ։

— Երկին վկայ, հմայք կան իմ վրայ — ըսաւ Պուա-Կիլբէրը։ — Գրեթէ կ'յորդորիմ հաւատալու որ այն յիմար Պօմանուար ճշմարիտ ըսաւ, և թէ գերբնային բան մը կայ որ ակամայ կ'հեռացընէ զիս քեզ-

նէ, սիրատուն էակ — յարեց նա՝ անոր մօտենալով, բայց մեծ յարգա-
սօք։ — Այդչափ ծաղկահամակ, այդչափ գեղանի, այդչափ աներկիւղ
կ՚երևիս մահուան առջև, և սակայն դատապարտեալ ես մեռնելու, ան-
արդ և քաղաքելի մահուամբ։ Ո՞վ կարող է շողբալ սև բաղդդ։ Քան
տարի կայ որ այս իմ աչերս արտասուք չեն թրջած, և այժմ կ՚լեցուին
երբ քեզ կ՚նայիմ։ Բայց, աւաղ, ամէն ինչ կատարեալ է, այժմ ոչ ինչ
չէ կարող կեանքդ ազատել։ Դու և ես՝ անգիմադրելի ճակատագրի մը
կոյր գործիներն ենք որ մեզ կ՚մղէ իրարու դէմ իբրև երկու նաւեր՝
մրրկայոյզ, որ իրարու դէմ կ՚զարնուին և կ՚փշրուին։ Գէթ ներէ ինձ և
իբրև բարեկամ իրարմէ բաժնուինք։ Ընդ ունայն ջանայի որոշումդ
սարսելու և իմն ալ բաղդին վճռոյն պէս անդրդուելի է։

— Ահա այսպէս — ըսաւ Ռեբեկա — մարդիկ իրենց վայրագ կրից
հեռանքը ճակատագրին վրայ կ՚ձգեն։ Բայց քեզ կ՚ներեմ, Պուա-
Կիլպէր, թէև դու իմ կենդանաց մահուանս հեղինակն ես։ Կան վեհ
բաներ որ քու հոգոյ միտքդ կ՚պաշարեն, բայց ծոյլին պարտէզն է այն,
տատասկք զոյն բռներ են և անոր գեղեցիկ և կենսատու ծաղիկը խեղ-
ղելու դատակոյեր են։

— Այո — ըսաւ տաճարականը — ինչպէս որ զիս նկարագրեցիր այն-
պէս եմ, Ռեբեկա, անուս, անզուսպ և հպարտ, և ասով խումբ մը յի-
մար, նենգաւոր և մոլեռանդ մարդոյ մէջ ստացայ այն վէս բնաւորու-
թիւնն որ զիս զեր 'ի վեր հանեց։ Ի մանկութենէ դու մարտի տղայ մի
էի, փառասէր խորհուրդներ կ՚տածէի, և անոնց հասնելու համար
անողոքելի և անվրդով հաստատամտութիւն մ՚ունէի։ Այսպէս պիտի
մնամ միշտ, գոռոզ, անդրդուելի և անսասան, և աշխարհ ասոր փոր-
ձերը պիտի տեսնէ։ Բայց միթէ կ՚ներես ինձ, Ռեբեկա։

— Յօժարակամ՝, ինչպէս զոհ մ՚իր դահճին կ՚ներէ։

— Ուրեմն մնաս բարեաւ — ըսաւ Տաճարականը, և սենեկէն դուրս
ելաւ։

Ալպէրտ հրամանատարը մօտակայ սենեակ մը կ՚սպասէր անհամբեր
Պուա-Կիլպէրի վերադարձին։

— Շատ ուշացար — գոչեց նա — կարծես թէ հրաշէկ երկաթներու
վրայ պառկած էի։ Եթէ Մեծ Վարպետը, կամ իր Գօնրատ լրտեսը
դար աստ, ի՞նչ պիտի լինէր մեր վերջը. այս իմ կամահաճութիւնս ինձ
շատ սուղի պիտի նստէր։ Բայց, եղբայր, ի՞նչ ունիս։ Դու կ՚ներեցաս,
դիշերուան պէս մթին է ճակատդ, միթէ անհանգի՞ստ ես, Պուա-Կիլ-
պէր։

— Այո՛ — պատասխանեց Տաճարականը — այնքան քաջատոլջ որչափ ժամէ մը մեռնելու պատրաստուած թշուառ մը։ Բայց ոչ, անոր կէսին չափ անպամ հանգիստ չեմ, վասն զի կան մարդիկ որ այս վիճակիս մէջ՝ իրրև հին հպատուատ՝ կեանքը ինկդի կ՚նեսեն։ Երկին վկայ, Մալվուազէն, այն նորատի օրիորդը զիս պրեթէ զինամիտի ըրաւ. կիսովին որոշած եմ երթալ Մեծ Վարպետը գտնել, ուխտս անոր առջև ուրանալ և իր բռնութեամբ ինձ տուած վայրենի հրամանը կատարելու մերժել։

— Դու յիմար ես — պատասխանեց Մալվուազէն — ճշմարիտն այդ ընթացքով բոլորովին 'ի կորուստ պիտի դիմես, և ոչիսկ հնար մը պիտի գտնես հրէայ աղջկան կեանքն ազատելու, որ՝ ըստ երևոյթին՝ շատ անգին է քու աչաց առջև։ Պօմանուար քու տեղդ ուրիշ տաճարական մը պիտի կարդէ, և ամբաստանեալ օրիորդն պիտի մեռնի անշուշտ, որպէս թէ քեզ յանձնուած պարտաւորութիւնը կատարած լինէիր։

— Այդ ատոյգ չէ։ Զէնք պիտի առնում անոր պաշտպանութեան համար — պատասխանեց Տաճարականը գուռղութեամբ և եթէ այսպէս վարուիմ, կարծեմ թէ, Մալվուազէն, քաջ գիտես որ մեր միաբանութեան մէջ ասպետ մը չկայ որ կարող լինի ինձի հետ չափուելու։

— ճի՛շտ է, բայց դու կ՚մոռնաս — ըսաւ կամասէր խորհրդատուն — որ ոչ ժամանակ և ոչ աւելի պիտի ունենաս այդ յիմարական խորհուրդդ 'ի գործ դնելու։ Գնա Ղուկաս Պօմանուարը գտիր, գնա անոր ըսէ թէ հնազանդութեան ուխտէդ հրաժեշտ տուիր, և պիտի տեսնես այն ատեն թէ բռնասէր ծերունին քանի՛ ժամ քեզ ազատ պիտի թողու։ Այն ինչ բերնէդ այդ խօսքերը պիտի հանես և քան ոտք խորունկ գնդան մը պիտի նետուիս և իրրև ուրացող ասպետ այն տեղ դատաստանի պիտի սպասես. իսկ եթէ քեզ դիւահարի տեղ դնելու յամառի, քու բաժինդ պիտի լինին յարդ, շղթայ և հեռաւոր վանքի մը մէջ խաւար, և կախարդութիւնդ փարատելու և քեզ դրաւող սատանը հալածելու համար անդադար օրհնեալ ջրով պիտի թրջեն քեզ։ Պարտաւոր ես ասպարէզ իջնել, Պրայն, թէ ոչ կորստուած և անպատիւ մարդ մը սեպէ ինքզինքդ։

— Պիտի խոյս տամ — ըսաւ Պուա-Կիլբէր — պիտի խոյս տամ հեռաւոր երկիր մ՚ուր յիմարութիւնն ու կրօնամոլութիւնը գեռ իրենց իշխանութիւնն հաստատած չլինին։ Այս ընտիր և աղնիւ էակին արեան մէկ կաթիլն անգամ չպիտի թափի իմ ձեռօքս։

— Դու չես կարող խոյս տալ — ըսաւ հրամանատարը — այդ քու

զայրոյթդ կասկածներ յարոյց և քեզ այս ապարանքէն ելնելու չպիտի թողուն։ Գնա փորձէ, եթէ կամիս։ Գնա դրան մօտ, և հրամայէ որ կամուրջն իջեցընեն, այն ատեն պիտի տեսնես թէ ինչ պատասխան պիտի առնուս։ Դու զարմանք կ'յայտնես և կարծես թէ կ'թշնամանուիս, բայց մի՛թէ ասկից լաւագոյն բան մը կարելի՞ էր ընել քեզի համար։ Եթէ երբէք խոյս տաս, ինչ պիտի լինի հետեւանքը, եթէ ոչ ասպետական կարգին նուաստութիւնը, նախահարցդ անպատուութիւնն և ատելի կորուստը։ Բարեկամ, լաւ խորհէ ատոր վրայ, քու հին զինակից-ներդ ո՞ր պիտի պահեն իրենց երեսն երբ Գրայն տը Գուա-Վիլպէրը, Տաճարականաց լաւագոյն նիզակն, իբրև վատ հրատարակուի համագումար ժողովրդեան մը նախատալից ածականներով։ Այս ինչ սուղ պիտի պատճառէ Ֆրանսայի արքունեաց։ Վէս Ռիչարտ ինչ խնդութեամբ արդեօք պիտի իմանայ այս լուրը, թէ այն ասպետն որ Պաղեստինի մէջ իրեն դէմ մաքառեցաւ և իր համբաւը գրեթէ նսեմացուց, իր անունն ու պատիւը զոհեր է հրէայ օրիորդի մը համար, զոր այս թանկագին զոհողութեամբ անպամ չէ կրցած ազատել։

— Մալվուազէն — ըսաւ ասպետը — շնորհակալ եմ քեզի, այժմ գոյար այն թելին որով սիրտս իսկոյն կ'թրթռայ։ Ինչ կ'ուզէ թող պատահի, երբէք վատ մակդիրը չպիտի միանայ Գուա-Վիլպէրի անուան։ Տար երկին որ Ռիչարտ, կամ իր բաղմապոլ մտերիմներէն մին այս մրցարանին մէջ երևէին։ Բայց թափուր և ամայի պիտի մնայ ասպարէզն, ոչ ոք պիտի յանդգնի անմեղ և ընկեցիկ օրիորդի համար նիզակ շարժել։

— Լաւ ևս քեզի համար, եթէ այս պատահի — ըսաւ հրամանատարը — եթէ ախոյեան մը չներկայանայ, քու ձեռքդ չպիտի մեռնի այն անբաղդ օրիորդը, այլ Մեծ Վարպետին դատաւորով, թէ նա միայն պատասխանատու պիտի մնայ, և այս դէպքին վրայ պիտի պարծի իբրև գովանի և սքանչացման արժանի գործի մը վրայ։

— Ճշմարիտ է — ըսաւ Գուա-Վիլպէրը — եթէ ախոյեան մը չերևի, ես միայն հանդիսատես պիտի սեպուիմ, արդարև ձիաւոր հանդիսատես մը մրցարանին մէջ, բայց գործին հետևանաց անման պիտի գտնուիմ։

— Բոլորովին անման — շարունակեց Մալվուազէն — ինչպէս է Մ. Գէորգայ զինեալ պատկերն երբ թափորի մը մէջ կ'երևի։

— Լաւ ուրեմն, իմ նախկին խորհրդիս կ'դառնամ — պատասխանեց գուռղ տաճարականը։ — Այն օրիորդը պիտի արհամարհեց, մերժեց,

հուստայուց, և ինչու համար այլոց առջև վայելած համարումն անոր պիտի զոհեմ։ Մալվուազէն, ասպարէզ պիտի ինձնեմ։

Այս խօսքն արտասանելով ընդ փոյթ սենեկէն ելաւ, և հրամանատարն անոր ետևէն գնաց, որպէս թէ անոր վրայ հսկէ և գլխաւորութիւնն ամրապնդէ. վասն զի ինքն ևս Պուա-Կիլպէրի համբաւին հոգ կ'տանէր, վասն զի կ'յուսար որ եթէ օրին մէկն Ուխտին գլուխն անցնի իրեն շահաւոր պիտի դառնայ, առանց 'ի համար առնելու Մօնֆիշէի յուսադրած առաւելութիւնն, սա պայմանաւ որ գժբաղդ Ռեբեկայի դատապարտութեան նպաստէ։ Սակայն, մինչդեռ իր բարեկամին գթալիր զգայմանց դէմ կ'մաքառէր, բուռն և ներհակ կրից թափէն յուզուած մարդու մը վրայ նենդաժէտ, ծանր և եսասէր բնաւորութեան մ'առաւելութիւնն ունէր, և Մալվուազէնի բոլոր հնարպիտութիւնը պէտք էր որպէս զի Պուա-Կիլպէրին բռնած ընթացքին մէջ զանի յարատև պահէ։ Ուստի ստիպուեցաւ մօտէն անոր վրայ հսկել որպէս զի իր փախուստի դիտաւորութիւնը չնորոգէ, Մեծ-Վարպետին և անոր մէջ որ և է յարաբերութիւն արգիլէ, որպէս զի իր գլխաւորին հետ բացէ 'ի բայ չկռուի, նոյնպէս պարտաւոր էր ատեն ատեն կրկնել այն փաստերն զոր գործածեր էր հաստատելու համար թէ այս պարագայիս մէջ Պուա-Կիլպէր իբրև ախոյեան ներկայանալով որ և է կերպով Ռեբեկայի բաղդին վրայ չներգործելէն զատ՝ իր անունն վատահամբաւութենէ զերծ պահելու միակ ճամբան բռնած պիտի լինէր։

ԳԼՈՒԽ Խ

Սուսերներ, յետս գացէք — նոյն ինք Բիշարա է նորէն։

Բէլարդ Գ.

Երբ Սև ասպետը — վասն զի կարևոր է անոր արկածից թելը նորէն առնուլ — վեհանձն վտարակին ժամադրութեան ծաւը թողուց՝ շիտակ մօտաւոր կրծնատուն մը դիմեց, որ անշուք և աղքատիկ էր՝ Ս. Պօթիոլֆի վանատուն անուամբ։ Վիրաւոր Իվանհօէն սոյն վայրը փոխադրուեր էր երբ դղեակն առնուեցաւ՝ հաւատարիմ Կիւրթի և մեծանձն Վամպայի առաջնորդութեամբ։ Ան այժմ կարևոր չէ պատմել թէ ինչանցաւ նոյն միջոցին Վիլֆրիտի և իր ազատարարին մէջ, բաւական է լ-

անել թէ՝ երկար և ծանրակշիռ բանակցութենէ մ՚ետք, վիճահօր կողմէ զանազան տեղեր սուրհանդակներ ղրկուեցան, և թէ հետևեալ օրը՝ Սև ասպետը Ճամբայ ելնելու պատրաստուեցաւ, Վամպայի ընկերակցութեամբ, որ իրեն իբրև ուղեցոյց պիտի ծառայէր։

— Զիրար պիտի գտնենք — ըսաւ նա Իվանհօէին — 'ի Գոնինկսպերկ, այս է հանդուցեալ Ամէլստէյնի դղեակը, քանի որ իր աղնիւ ազգականին համար հայրդ Սէարիկ այն տեղ պիտի կատարէ յուղարկաւորութեան հանդէսը։ Աղնիւ Վիլֆրիտ, Ի՛փափաքիմ սաքսօն բարեկամներդ մէկտեղ գումարուած տեսնել և անոնց հետ քան զառաջինն աւելի լաւ ծանօթանալ։ Դու ևս պիտի գաս զիս անդ գտնելու, և քեզ հօրդ հետ հաշտեցընելու պաշտօնն ես իմ վրայ պիտի առնում։

Այս ըսելով սիրալիր հրաժարական բարև տուաւ Իվանհօէին, որ ևս ուրանգպին փափաք մը յայտնեց իր ազատարարին հետևելու։ Բայց Սև ասպետը բնաւ այս առաջարկութեան հաւանիլ չուզեց։

— Այսօր հանգստացիր. հապա թէ վաղը Ճամբայ ընկնելու բաւական ոյժ պիտի ունենաս։ Ես հաւատարիմ Վամպայէն զատ առաջնորդ մը չեմ ուզեր, որ իմ գտնուած վիճակիս համեմատ կարող պիտի լինի քահանայի կամ յիմարի դերը խաղալ։

— Եւ ես — ըսաւ Վամպա — բոլորով սրտով քեզի հետ պիտի գամ։ Հեսաքրքիր եմ Ամէլստէյնի դամբանական խնջոյքը տեսնելու, վասն զի եթէ այս կոչունքն առատ և լեցուն չլինի՝ դագաղէն պիտի ելնէ՝ խոհակերը, սեղանապետն և մատուռակը սասանելու, և ուշադրութեան արժանի տեսարան մը պիտի լինի։ Սակայն միշտ, տէր ասպետ, ձեր արիութեան վրայ պիտի դնեմ իմ վստահութիւնս՝ իմ Սէարիկ տիրոջս մօտ արդարանալու, եթէ երբէք իմ միտքս ինձ օգնութեան չհասնի։

— Եւ ի՞նչպէս կ՚ուզես որ իմ արիութիւնս յաջողի, պարոն Միմոս, երբ քու ուշիմ միտքդ Ճամբայ մնայ. սա խնդիրը լուծէ նայիմ։

— Խելքը, աղնիւ ասպետ — պատասխանեց միմոսը — շատ բան կրնայ ընել։ Վաւերուն, ուշիմ թշուառական մ՚է որ իր գրացւոյն տկար կողմը կ՚տեսնէ, և գիտէ թէ ինչպէս հոգին պատապարիլ պէտք է երբ կիրքը բուռն կ՚փչեն։ Բայց արիութիւնն անվեհեր ընկեր մ՚է որ ամէն ինչ կ՚տապալէ։ Թէ հոգին և թէ մարմինն դէմ կ՚թիավարէ և շիտակ նպատակին կ՚դիմէ, և հետևապէս, բարի ասպետ, երբ իմ աղնիւ տիրոջս բնաւորութեան աղտոտ օդէն օգուտ քաղեմ, ձեզի պիտի դիմեմ որ փոթորկի ատեն ինձ օգնութեան հասնիք։

— Ադուցիկ Փականքի տէր ասպետ, քանի որ այս անունով կոչուիլ կ՚յօժարիք — ըսաւ Իվանհօէ — վախնամ որ շաղակրատ և տալտկալի մարդ մ՚ընտրեցիք ձեզի առաջնորդ, բայց նա այս կողմերն յաճախող որսորդէն քաջ և ս գիտէ անտառին բոլոր շաւիղները. և խեղճ՚ յիմարն, ինչպէս որ կարող եղաք տեսնելու, պողոմատի պէս հաւատարիմ է։

— Էյ, բնաւ — դոչեց ասպետը — եթէ իմ շաւիղս ցոյց տալու հնարքը գիտէ, չպիտի դանդաղիմ եթէ զայն զուարճալի ընելու ջանայ։ Առողջութիւն կ՚մաղթեմ քեզ, բարեսիրտ Վիլֆրիտ, և կ՚յորդորեմ քեզ որ բնաւ փորձ չրնես ուղևորելու վաղն առաւօտէն առաջ։

Այս ըսելով իր ձեռքն Իվանհօէի կարկառեց, որ զայն իր շրթանցը տարաւ. յետոյ հրաժեշտ տուաւ վանահօր, ձին հեծաւ և Վամպան իրրև ընկեր հետն առնելով մենաստանէն դուրս ելաւ։ Իվանհօէ աչքն անոնց հետևեցաւ, մինչև որ շրջակայ անտառներու ստուերին մէջ անհետ եղան և ապա վանատուն դարձաւ։

— Բայց այն ինչ առաւօտեան ժամերգութիւնն աւարտեր էր որ Իվանհօէ վանահայրը տեսնելու փափաք ցցուց։ Ծերունին արտորնօք վաղեց եկաւ և անոր առողջութեան վրայ հարցումներ ըրաւ։

— Այժմ լաւագոյն եմ — ըսաւ նորաբոյժը — թէև իմ ամենէն անուշ յոյսս չէր կարող այս բանս գուշակել. անշուշտ կամ իմ վէրքս թեթև էր՝ թէև վաղած արիւնէն ուրիշ կերպ կարծէի, և կամ սոյն բալասանը հրաշալի դարման մը բերաւ։ Արդէն կ՚զգամ որ կարող եմ զրահս հագնիլ և չափազանց ուրախ եմ. վասն զի մտքիս մէջ այնպիսի խորխուրդներ կ՚ծնին որ չեն ներեր ինձ աւելի ևս անգործութեան մէջ մնալ։

— Սուրբերը վկայ — ըսաւ վանահայրն — որ սաքսօն Սէտրիկի որդին մեր մենաստանէն չպիտի հեռանայ մինչև որ իր վէրքը չբժշկուի. եթէ ներեմ մեծ ամօթ պիտի լինի մեր պաշտօնին։

— Եւ ես իմ կողմէս բնաւ փափաք չպիտի ունենայի, պատկառելի հայր, ձգել ձեր հիւրասիրութեան յարկը — ըսաւ Իվանհօէ — եթէ Ճամբայ ելնելու ստիպուած և անոր յոգնութիւնները կրելու չափ ուժով չլինէի։

— Եւ ով կ՚դրդէ ձեզ այսպէս արտորնօք Ճամբայ ելնել — հարցուց վանահայրը։

— Հայր սուրբ, միթէ երբէք մօտալուտ վտանգի մ՚երկիւղն զգացած չէք, թէև 'ի զուր անոր բուն պատճառը փնտռելու կ՚աշխատիք։ Արևափայլ դաշտանկարի մը պէս՝ միթէ միտքդ երբէք սև ամպերով դո-

ցուած չէ, իբրև կարապետ մօտաւոր փոթորկի մը։ Եւ միթէ չէք կարծեր որ այս գունակ նախազգացումներ ուշադրութեան արժանի են, որպէս թէ մեր պահապան հրեշտակներէն դրուած ազդարարութիւններ լինէին մօտաւոր վտանգին դէմ։

— Ձեմ կրնար ուրանալ — ըսաւ վանահայրը — թէ այդպիսի բաներ պատահած և երկնուստ եկած չեն. այլ սակայն այսպիսի յայտարարութիւններ օգտակար և ակներև նպատակ մ'ունէին։ Բայց դուք քանի որ վիրաւոր ես, ի՞նչ կրնաս ընել եթէ հետևիս այն անձին որու չպիտի կարենաս օգնել, եթէ երբէք յարձակում կրէ։

— Վանահայր — ըսաւ Իվանոէ — դու կ'սխալիս. ես բաւական ուժեղ եմ և կարող նիզակով ինձի հետ չափուիլ ուզողին հետ կռուիլ։ Բայց եթէ այս ալ չկարենայի ընել, միթէ զինուց զօրութենէ տարբեր հնարքով անոր օգնութեան հասնիլ կարող չպիտի լինէի։ Այս շատ յայտնի է որ սաքսօնները չեն սիրեր նօրման ցեղը, և ո՛ զիտէ, ինչ վախճան կ'ունենայ գործն եթէ անոնց մէջ ներկայի երբ Ամէլստէյնի մահուան վրայ սաստիկ յուզուած են, և երբ լինելիք հանդիսին մէջ իրենց գլուխները տաքնան։ Այնպիսի վայրկենի մէջ անոր դալուստն անոնց մէջ շատ վտանգաւոր կ'համարիմ և միտքս դրած եմ նոյն վտանգին առաջն առնուլ կամ անոր մասնակից դտնուիլ։ Եւ ահա այս պատճառաւ պիտի աղաչեմ քեզ որ ինձ ձի մը դտնես որ իմ պատերազմի երիվարէս աւելի հանդարտիկ քալուած մ'ունենայ։

— Իրաւի — ըսաւ բարեշնորհ կրօնականը — քեզի պիտի տամ իմ յատուկ սիրածեմ երիվարս, և կ'փափաքիմ որ սուրբ Ալպանի աբբայինին պէս քեզ հանդարտ քալուածքով տանէր։ Սակայն կրնամ ըսել. Մաւէնին համար, վասն զի այսպէս կ'անուանեմ իմ երիվարս, որ՝ միայն թէ ձեռնածուի մը պէս չընտրես, որ հաւկիթներու մէջ կ'կտրաւէ, չպիտի կարենաս անոր պէս անուշ և հանդարտ կենդանի մը դտնել ուղևորելու համար։ Անոր կունակը հեծած՝ ես շատ մը քարոզներ յօրինած եմ մեր վանական եղբարց և ուրիշ քրիստոնեայ թշուառ հոգիներու մխիթարութեան համար։

— Կ'աղաչեմ քեզ, վերապատուելի հայր — յարեց Իվանոէ — ոչ հրաման տայիր Մաւէնն խսկոյն պատրաստելու, և ապապրէիր Գիւրթին որ ղէն ու զարդս բերէ։

— Սակայն, ազնիւ ասպետ — ըսաւ վանահայրը — կ'աղաչեմ քեզ յիշելու որ Մաւէն իր տիրոջը պէս անձարակ է զինուց մէջ, և ապահով եմ որ չպիտի կարենայ ապաւաղինութեան տեսքը կամ ծանրութիւ-

նը տանիլ։ Ո՛չ, Մալքին, հաւաստի եղիր որ խոհական կենդանի մ'է և տաժանելի բեռ մը կրելու պիտի մերժէ։ Անպամ մը Ս. Պիղի վանահայրէն ֆրէ-+պրէ-- ղէմբօրէ-մը փոխ առի, և այն դունէն դուրս չեկաւ մինչև որ այս ահագին գրքին տեղ իմ փոքրիկ ժամագիրքս չառի։

— Վստահ եղիր, հայր իմ — վրայ բերաւ Իվանօէ — որ շատ ծանր բեռ մը չպիտի դնեմ վրան, և եթէ լինձի դէմ ստահակի, շատ բան չպիտի շահի։

Իվանօէ այս պատասխանը տալու ատենը՝ Կիւրթ՝ ասպետին կրուկներուն վրայ զոյգ մ'ոսկեզօծ լայն խթաններ կ'անցընէր, որոնք կարող էին ամենէն ըմբոստ ձին համոզել թէ լաւագոյն միջոցն էր ձիաւորին կամաց հնազանդիլ։

Երբ վանահայրը տեսաւ այն խորունկ և սուր անուաձև մտրակներն որով Իվանօէի կրուկները զինուեցան, իր կամակատարութեան վրայ զղջաց և գոչեց.

— Ազնիւ ասպետ, կ'մտածեմ այժմ որ Մալքին չէ կարող մտրակի հանդուրժել. ուստի լաւ ևս կ'լինէր եթէ մեր մատակարարին մատակ ձիուն սպասէիր որ վարը յարդանոցին մօտ է, և շատ շատ ժամէ մը կրնաս ստանալ. աւելի ընտել է այն, վասն զի մեր ձմերուան փայտը կ'կրէ և բնաւ ցորեն չուտեր։

— Շնորհակալ եմ քեզի, հայր սուրբ, առաջին խօսքդ լաւ ևս կը բռնեմ, նա մանաւանդ որ Մալքին արդէն դուռն ելած կ'տեսնեմ։ Թող Կիւրթ զէնքս կրէ, իսկ միւս կիտին գալով, հաւաստի եղիր որ Մալքինին կռնակը շատ չպիտի բեռնաւորեմ. իմ համբերութիւնս չպիտի հատցընէ։ Ուրեմն, մնաս բարեաւ։

Իվանօէ՝ թէև վիրաւոր՝ կարծուածէն աւելի շուտ և դիւրաւ ինքզինքն վար, երիվարը հեծաւ, վանահօր տաղտկալի խօսքերէն խոյս տալու անհամբերութեամբ, մինչդեռ կրօնաւորն իր տարիքին ու դիտութեանը ներածին չափ ասպետին քովէն կ'քալէր, մերթ Մալքինին գովեստներ վատնելով և մերթ ապսպրելով ձիաւորին որ անոր խնամք տանի։

— Այս կենդանին իր ամենէն վտանգաւոր ժամանակին մէջ կը գտնուի, ոչ միայն աղջկանց համար այլև մատակ ձիերու համար այսպէս է — ըսաւ ծերունին՝ իր ըսած կատակին վրայ ինք ծիծաղելով — վասն զի հազիւ թէ իր տասնհինգերորդ տարիքը կ'մտնէ։

Իվանօէ՝ որ աւելի կարևոր բան մը ունէր հիւսելու քան թէ իր ձիուն տիրոջ հետ հեռակից գնալ, խուլ ականջ եղաւ վանահօր ծանր խոր-

հրդոց և մեռոն կատակներուն. իր ձին քշեց և զինակիրին հրամայեց (վասն զի Կիւրմի արդէն այսպէս կ'կոչուէր)։ Սև ասպետին հետքը բռնեց նա անտառին մէջ, մինչդեռ վանահայրը վանուց դուռը կեցած կ'գոչէր։

— Սուրբ Մարիամ, այս պատերազմի մարդիկ քանիսն արագաշարժ և վայրագ են։ Կ'ցաւիմ որ անոր յանձնեցի Մաքինը, վասն զի՝ յոգացաւով անդամալոյծ լինելուս՝ չգիտեմ ինչ պիտի ընեմ՝ թէ որ երիվարիս փորձանք մը հանդիպի։ Եւ սակայն — լսաւ նա ինքզինքին գալով — որովհետև հին Անկլիոյ արդար դատին համար իմ դողահար և ապիկար մարմինս չպիտի խնայէի, պէտք է որ Մաքին վտանգի դիմագրաւէ, և թերևս օրին մէկը մեր անշուք վանատունը փառաւոր վարձատրութեան մ'արժանի սեպեն։ Թերևս ծեր վանահօրս հեզ երիվարիկ մը ղրկեն։ Իսկ եթէ այսպիսի բան մը չընեն, վասն զի մեծ իշխաններ փոքրիկ մարդոց ծառայութիւնը շուտով կ'մոռնան, դարձեալ վարձքս դատած պիտի համարիմ ինքզինքս օրինաւոր գործ մը կատարելուս համար։ Բայց ահա ժամէ վանական եղբարքը սեղանատունը կոչել ճաշի։ Ա՛հ, քաջ գիտեմ որ այս կոչման աւելի անհամբեր կ'սպասեն քան թէ առաւօտեան ժամերգութեան . . .։

Ուստի Ս. Պօթուլֆի վանահայրը սեղանատունը դարձաւ կաղ 'ի կաղ որպէս զի վանականաց նախաճաշիկին նախադահէ, և այս նախաճաշիկն՝ որ ձողաձկէ և դարեջրէ կ'բաղկանար, արդէն մեծարեր էին։ Վանահայրն որ շնչարգել էր և կարևոր կերպարան մը կ'առնուր, սեղան նստաւ և շատ մը մութ խօսքեր արտասանեց անուանի մարդոց ըրած ծառայութեանցը փոխարէն վանատան գալիք օգտից վրայ։ Այս դիտողութիւններն՝ ուրիշ պարագայի մէջ անշուշտ ամենուն ուշադրութիւնը պիտի գրաւէին, բայց որովհետև ձողաձուկը շատ աղած էր, դարեջուրը բաւական ընտիր, ուստի վանականաց կզակները սատակիկ զբաղած էին և ատեն չունէին իրենց ականջները գործածել. հետևապէս միաբանութեան անդամներէն և ոչ մէկն իր մեծաւորին խորհրդաւոր ակնածութեանց մոտիկը չեղաւ, հայր Տիկօրիէն զատ՝ որ ակռայի ուժգին ցաւէ մը բռնուելով, մինակ բերնին մէկ կողմով կ'ուտէր։

Նոյն պահուն, Սև ասպետն ու իր ուղեցոյցն ըստ հաճոյս կ'յառաջանային անտառին խորերը. բարի ասպետն երբեմն սիրահար վիպասանի մ'երգը կ'մրմնջէր, երբեմն իր հարցումներով առաջնորդին լեզուադաղութիւնը կ'գրգռէր, այնպէս որ իրենց տրամախօսութիւնն երգէ և

կատակէ այլանդակ խառնուրդ մ՚էր, որոն վրայ գաղափար մը տալ կ՚փափաքէինք։ Ուրեմն թող ընթերցողն երևակայէ այս ասպետն այնպէս ինչպէս որ արդէն նկարագրած ենք, անձնովին ուժեղ, բարձրահասակ, թիկնեղ, լայն ոսկորներով, իր պատերազմի տոկուն երիվարին վրայ նստած, որ կարծես թէ յատկապէս իր ծանրութիւնը կրելու համար եղած էր, այնպէս հեշտ կ՚ֆալէր իրեն ներքև, իր սաղաւարտին պահնակը բացեր էր որպէս զի աղատ շունչ առնու, բայց կղակապանը զոց էր, այնպէս որ իր դէմքը կիսովին կ՚նշմարուէր։ Ամբ սակայն զիւրին էր տեսնել իր լեցուն և կարմրուն այտերը, թէև արևակէզ, և իր մեծ կապոյտ, փայլուն աչերն որ իր բարձած պահնակին մութ ստուերին ներքև կ՚շողային. այս ախոյենին արտաքին երևոյթն անհոգ զուարթութիւն և անվեհեր վստահութիւն կ՚յայտնէր, նոյնպէս զի մը որ վտանգէ չէր երկնչէր և եթէ մօտալուտ՝ զայն վանելու կազմ, սակայն իրեն համար վտանգն ընտանի մտածմունք մ՚էր, քանի որ պայքար և արկածներ էին իր զբաղմունքը։

Միմոն՝ ինչպէս որ սովոր էր, այլանդակ զգեստ մը հագեր էր. սակայն վերջին դէպքերը ստիպեր էին զինքը հատու սուր մը կախել քան թէ փայտէ սուր մը, և փոքրիկ վահան մը կրել՝ի պահպանութիւն, և Գօրգիլսդրնի յարձակման ժամանակ՝ այս երկու զէնքն ալ ճարտարութեամբ գործածեր էր՝ թէև ինք արհեստով միմոս էր։ Արդարև Վամպայի ըղեղին տկարութիւնն ուրիշ բան չէր այլ միայն տեսակ մը դիւրաբեկութիւն որ չէր ներեր զինքը մի և նոյն վիճակին մէջ ընդ երկար հանդարտ մնալ, կամ որոշ գաղափարի մը յարիլ, թէև կարճատև գործ մը կատարելու կամ իր ուշադրութիւնը գրաւող բան մ՚ըմբռնելու համար բաւական ունակութիւն ունէր։ Ուստի՝ ձիուն վրայ՝ միմոն ասդիս անդին կ՚օրորէր անդադար, երբեմն կենդանին վզին, երբեմն գաւակին վրայ, և երբեմն իր երկու ոտքն երիվարին մէկ կողմը կ՚կախէր, երբեմն երեսը պոչին վրայ կ՚դնէր, մամնալով, երեսը ծրմռկելով և տեսակ տեսակ շարժումներ և կապկութիւններ ընելով, մինչև որ երիվարն այս քմահաճ ձևերէն այնչափ տաղտկայաւ, որ զանի դալարին վրայ նետեց բոլոր երկայնութեամբը։ Այս դիպուածը մեծ զուարճութիւն պատճառեց ասպետին իրաւ, բայց միմոսը սաիպուեցաւ այնուհետև աւելի հանդարտ կենալ ձիուն վրայ։ Այն միջոցին որ մեր ուղևորներուն կ՚դառնանք՝ այս զուարթ ամոլքը սկսեր էին շէր մ՚երթալ. միմոսը հագներգը կ՚կրկնէր, մինչդեռ ասպետը նուագները կ՚եռոէր։

Ահաւասիկ սոյն նուագները.

Աննա Մարիամ, սէր, երա՛ւ արև,
Աննա Մարիամ, սէր, այդուն բարև,
Կ՚ցրուին մշուշք, սէր, թռչունք կ՚երգեն
Ծագի առաւօտ, սէր, լոյսն է վառ,
Որսորդն փողէն հանէ ձայն կայտառ,
Լեռեր ու պուրակ արձագանք կրկնեն,
Ժամ է որ երթնես, սէր, Աննա Մարիամ։

ՎԱՄՊԱ

Ո՛ Թիպալտ, սէր իմ, թո՛ղ, թողլ որ ննջեմ,
Անուշ երազներ բարձիկս կ՚զգուեն,
Ինչ են խնդութիւնք, երբ ես եմ արթուն,
Այս երազիս մօտ, ո՛չ ինչ, ո՛ սէր իմ։
Թողլ որ թռչուններ այդուն ճուռղեն,
Անուշ ձայն, հաճոյք կ՚զգամ ես 'ի քուն,
Եւ երազիս մէջ, կ՚երևիս ինձ դուն։

— Այս ինչ ընտիր երգ է — ըսաւ Վամպա, երբ իրենց նուագն աւարտեցին — և կ՚երդնում իմ խաղալիքիս վրայ որ սիրուն բարոյական մ՚ունի։ Սովոր էի Պիւրթի հետ երգել զայն, որ իմ խաղընկերս էր՝ աղատ մարդ լինելէն առաջ, Աստուծոյ և մեր տիրոջ շնորհիւ, բայց օր մը ծեծը կերանք, վասն զի այս երգին անուշութենէ այնքան յափշտակուեր էինք որ արևը ծագելէն երկու ժամ ետք անկողնէն ելեր էինք։ Քանի կ՚մտածեմ սոյն երգին վրայ ոսկորներս տակաւին կ՚ցաւին. բայց Աննա Մարիամի մասն ես երգեցի, ազնիւ ասպետ, ձեզ հաճելի լինելու համար։

Այնուհետև միմոն ուրիշ շէր մ՚սկսաւ երգել, տեսակ մը կատակերգական երգ, որուն ձայնակից կ՚լինէր ասպետը միմոնին սկսածը շարունակելով։

ԱՍՊԵՏ ԵՒ ՎԱՄՊԱ

Հարաւէն, հիւսիսէն և արևմուտքէն եկան երեք ճամբորդ. Մենք բոլորակի երգենք. Վիքտորիայի այրի կինն որսալու ելան. և ո՞ր է այն այրին որ անոնց ո՛չ պիտի ըսէր։

Առաջինն էր ասպետ մը, թայնտէլ երկրին բնիկ. մենք մեր երգ բոլորակի երգենք. և իր նախահարքն, Աստուած պահէ, էին մեծահամբաւ. ո՞ր այրի կինն պիտի ըսէր անոր ո՛չ։

Իր տանտէր հօր, իր ասպետ հօրեղբօր վրայ կ՚պարծենար նա անդուլ մեծաձայն երգելով. բայց այրին Ճամբեց զանի իր հողակոյտ տեսակն, վասն զի այն է այրի կինն որ պիտի լսէր ոչ։

ՎԱՄՊԱ

Եւեւէն եկող երկրորդ Ճամբորդն երկնի և երկրի վրայ կ՚երդնու . . . մենք ուրախ զուարթ երգենք մեր երգը . . . թէ ինք աղատորդի է, Աստուած գիտէ, և իր սերունդն է Կալէսէն. և որ այրի կին կրնար լսել ոչ։

Տէր Դաւիթենց, Մօրիանենց, Կրիֆիթենց, Հիւկենց, Թիւտոյենց, Ռասենց, այս բոլոր անուններն իր երգին մէջ կան. Այրի կինն լսաւ այսքան բազմաթիւ անուններու համար ինք քիչ է, և Կալէսացին իր լեռներն երթալու Ճամբեց։

Այնուհետև եկաւ գեղացին, Քէնտի գեղացի մը, իր երգն անուշ երգելով. այրի կնկան արջառի և հասոյթի վրայ խօսք ըրաւ. և որ էր այն այրի կինն որ անոր ոչ պիտի լսէր։

ՄԻԱՍԻՆ

Այսպէս ասպետ և ազատորդի գրան առջև մնացին իրենց երգն երգելով։ Քէնտի գեղացւոյ մը և տարեկան հասոյթի մը համար, այրի կին մ՚երբէք ոչ պիտի չկրնայ լսել։

— Վամպա — գոչեց ասպետը — կ՚փափաքէի որ կաղնիի ծառին վտարակը, կամ իր զուարթուն կրօնաւոր ընկերն լսէր Քէնտի աղատախօս գեղացւոյն 'ի գովեստ այս երգը։

— Եւ ես չէի փափաքեր — լսաւ Վամպա — առանց կամարէդ կախուած շեփորին։

— Այո — լսաւ ասպետը — Լոքսլէյի բարեկամութեան մէկ դրաւականն է այս, թէև տարակուսելի է որ ասկից պէտք ունենամ։ Եթէ այս շեփորն երեք անգամ փչեմ, ինչպէս որ նա հաւատեց, այն բարեմիտ գեղացիներէ խումբ մեզի օգնութեան պիտի հասնին։

— Տրամադիր եմ լսելու որ Աստուած մեզ այս օգնութենէ պահէ — լսաւ միմոնը — եթէ չգիտնայի որ այն աղուոր պարդև մ՚է որ կը հաստատէ թէ պիտի թողուն մեզ անվնաս անցնելու։

— Ինչպէս, ինչ կ՚ուզես ըսել — հարցուց ասպետը — միթէ կար-

Ցնծս թէ առանց այս բարեկամական նշանին պիտի կարող լինէին մեր վրայ յարձակելու։

— Ես իմ մասիս բան մը չեմ ըսեր — պատասխանեց Վամպա — վասն զի քարկիր պատերուն պէս կանաչ ծառերն ալ ականջներ ունին։ Բայց, նայինք, տէր ասպետ, միթէ կարող էք սա Հարցմանց պատասխան տալ. որ ժամանակ դինիի կոյժն ու քսակն աւելի պարապ ունենալ պէտք է մարդ քան լեցուն։

— Իրաւի, երբէք, կարծեմ — պատասխանեց ասպետը։

— Եւ ոչ մին լեցուն ունենալու արժանի էք այդպիսի պարզ պատասխանի մը համար։ Լաւագոյն է որ ձեր կոյժը սաքսօնի մ՝անցնելէն առաջ՝ պարպէք, և ձեր դրամը տունը թողուլ անտառն ուղևորելու ելնելէն առաջ։

— Ուրեմն մեր բարեկամներն աւազակներու տեղ դրեր ես — հարցուց ասպետը։

— Այդպիսի բան մը բերնէս չելաւ, ազնիւ ասպետ — ըսաւ Վամպա — երբ մարդ մ՝երկար ճամբորդութիւն մ՝ունի ընելու՝ իր գրահը բառնալով խեղճ ձիուն բեռը կրնայ թեթևնալ. և արդարև՝ կարելի է մարդու մը հոգւոյն բարիք ընել իր աղէտից շարժաւիթը թեթևցընելով. հետևապէս ծանր անուններ չեմ կրնար տալ այսպիսի ծառայութիւններ ընող մարդոց։ Մինակ կ՝փափաքիմ որ իմ գրահս տունը գտնուի և քսակս սենեկիս մէջ, երբ այն բարի մարդոց հանդիպիմ, վասն զի ասով թերևս մեծ տպնապէ ազատին։

— Ձեր պարտքն է անոնց համար աղօթել, բարեկամ, թէև այդպէս սև գոյներով կ՝նկարագրես զանոնք։

— Բոլոր սրտով անոնց համար պիտի աղօթեմ — պատասխանեց Վամպա — բայց տան մէջ և չէ թէ անտառը, Ս. Պիղի վանահօր պէս, զոր խոռոչաւոր կաղնիի մը մէջ պատարագ ընելու ստիպեցին իբրև իր խորանը։

— Ինչ որ կ՝ուզես ըսէ, Վամպա — պատասխանեց ասպետը — այն գեղացիներն մեծ ծառայութիւն մը մատուցին Սէտրիկ տիրոջդ Դորոթիլդրնի դղեկին մէջ։

— Շատ ճշմարիտ է — պատասխանեց Վամպա — բայց երկնից հետ իրենց ունեցած առևտուրին ձևն է այս։

— Իրենց առևտուրը, Վամպա, ինչ կ՝իմանաս այդ բառով — հարցուց ասպետը։

— Ահա սա կ'իմանամ — ըսաւ Միմոսը — երկինքից հետ հաշիւնե-
րու կշիռ մը կ'ընեն, ինչպէս որ մեր ծեր մառանապետը կ'կարդար
իր տումարը, որ Իսահակ հրէին իր պարտապաններու հետ ըրած հա-
շուեկշռին չափ ուղիղ է. ասոր պէս մանր մունր գումարներ փոխ կը
տան և փոխարէն մեծ գումարներ կ'պահանջեն, 'ի հարկէ օրինաւոր
փոխատուութեանց համար Սուրբ Գրոց խոստացած եօթնապատիկ
վաշխը շահու կողմը հաշուելով։

— Այդ ըսածդ օրինակով մը բացատրէ, Վամպա. ես թուանշան-
ներէ և շահու խնդիրներէ բան մը չեմ հասկընար։

— Լա՛ ուրեմն — ըսաւ Վամպա — քանի որ, արիասիրտ ասպետ,
ձեր իմացականութիւնն այդչափ դանդաղ է, գիտցիք որ այս բարեկիր
մարդիկ բարի գործ մը կ'կշռեն ուրիշ գործի մը հետ որ բոլորովին
զովելի չէ. օրինակի համար, մուրացկան կրօնաւորի մը քանի մը ար-
ծաթ կ'տան և փոխարէն հարուստ վանահօր մը հարիւր ոսկին կ'կո-
ղոպտեն, կամ խեղճ այրի կնկան մը տունը կ'թալլեն վարձատրելու
համար օրիորդ մ'որուն հետ անտառին մէջ զուարճայեր են։

— Այս գործերէն ո՞րն է լաւը, և ո՞րն է վատը — հարցուց ասպե-
տը։

— Աղո՛ր կատակ, աղո՛ր կատակ — ըսաւ Վամպա — խելացի մար-
դոց ընկերութիւնն խելքը կ'սրէ։ Կ'երդնում որ լաւագոյն բան մը չը-
ըլլիք, տէր ասպետ, երբ այն գիրուկ ճգնաւորին հետ գինեխառն երե-
կոյեան աղօթք կ'երգէիք։ Բայց կ'շարունակեմ։ Անտառին զուարթերես
տղաք տնակ մը կ'շինեն և դղեակ մը կ'այրեն. փոքրիկ մատուռ մը խոզա-
նով կ'ծածկեն և եկեղեցի մը կ'թալլեն. գժբաղդ բանտաւոր մը կ'ազա-
տեն և գուռոց դատաւոր մը կ'սպաննեն, կամ աւելի մեզի վերաբերող
բաներու վրայ խօսելով, սաքսօն գրէնէլն մը կ'աղատեն և նորման սե-
պուհ մ'ողջ ողջ կ'այրեն։ Սէկ խօսքով, բարեսիրտ գողեր և մարդա-
վար աւազակներ են. բայց բարեբաղդ է այն որ անոնց հանդիպած ա-
տեն իրենց հաշիւն հաւասարակշիռ չէ։

— Ի՞նչպէս հաւասար չէ, Վամպա — հարցուց ասպետը։

— Վասն զի այն ատեն ստրջանք ունին և Աստուծոյ հետ հաշ-
տուելու փափաք։ Սակայն երբ իրենց հաշիւը կանոնաւոր է, վայ ա-
նոնց որոց հետ նախ հաշիւ կ'բանան։ Գօրգիլպրնի մէջ իրենց ըրած
լաւ գործէն ետև՝ ով որ իրենց ձեռքն ընկած է անտարակոյս կեղե-
քուած է։ Եւ սակայն — յարեց Վամպա՝ ասպետին մօտենալով բոլորո-
վին — կան այնպիսի մարդիկ որ ուղևորներու համար շատ աւելի
վտանգաւոր են քան թէ այն վտարակները։

— Որո՞ւ վրայ է խօսքդ, վասն զի շրջակայքն ոչ արջ կայ և ոչ գայլ — ըսաւ ասպետը։

— Իրաւի, Մալվուազէնի զինուորները կան — դոչեց Վամպա — և ներեցէք ինձ ըսել որ քաղաքային պատերազմի մ՝ատեն տասնի չափ այս անօրէն մարդիկներէն միշտ գայլերու վհմակ մը կ՝արժեն։ Իրենց բերքի եղանակն այս է, և Դօրդիլագրնի գղեկէն խոյս տուող զինուորներով ստուարացած են, այնպէս որ եթէ այս ապիրատներու խումբը մեր առջևն ելնէ, կարծեմ թէ պիտի ստիպուինք պատերազմելու։ Արդ՝ կ՝հարցնեմ ձեզ, ասնիւ ասպետ, ի՞նչ պիտի ընէք եթէ անոնցմէ երկու հոգի մեզի հանդիպէին։

— Այն ապիրատները գետինը պիտի գամէի նիզակովս, Վամպա, եթէ մեզ քարոզ լինելու յանդգնէին։

— Բայց եթէ չորս հոգի լինէին, այն ատեն։

— Նոյն բաղդը պիտի ունենային — պատասխանեց ասպետը։

— Հապա եթէ վեց հոգի լինէին — շարունակեց Վամպա — և եթէ այսպէս մինակ երկու հոգի մնայինք, միթէ Լօքսլէյի փողը չպիտի յիշէիք։

— Ինչ, ես — դոչեց ասպետը — ես օգնութեան կոչեմ տասնի չափ ապիրատներու դէմ, մինչդեռ մէկ քաջ ասպետ մը կարող է վանել զանոնք ինչպէս որ հովը կ՝վանէ չորաբեկ տերևները։

— Ուրեմն — պատասխանեց Վամպա — ներեցէք ինձ որ այդ հղօր շունչն ունեցող փողն 'ի մօտուստ քնեմ։

Ասպետն իր կամարին կոճակը քակեց և փողն իր ընկերին տուաւ, այս ալ իսկոյն վզէն կախեց զայն։

— Դբա, ԷԷ, ը — ըսաւ նա փողը փչելով — կ՝նայիք որ իմ կամս ուրիշին չափ լաւ գիտեմ։

— Ի՞նչ ըսել կ՝ուզես, անպիտան — ըսաւ ասպետը — տուր ինձ այդ փողը։

— Անհոգ եղիք, տէր ասպետ, ապահով ձեռքի մէջ կ՝գտնուի։ Երբ Արիոթիւնն ու Ցիմարոթիւնը միասին կ՝ուղղուին, Ցիմարոթիւնը պարտաւոր է փողը կրել, վասն զի նա լաւ ևս կարող է հնչել։

— Բայց, անզգամ — ըսաւ Սև ասպետը — դու չավէդ անզգին կ՝անցնիս. նայէ որ Համբերութիւնս չհատցնես։

— Դու ալ փրփրալով բռնութեամբ մի գիտեր գիս, տէր ասպետ — ըսաւ միմոսը զայրացած ասպետէն քանի մը քայլ հեռանալով — թէ ոչ Ցիմարութիւնն ընդ կրուկ պիտի գառնայ և պիտի թողու որ Արիութիւնդ կրցածին պէս տոյն անտառէն իր շաւիղը գտնէ։

— Օ՛ն, դու տկար կողմս կ՚զարնես — ըսաւ ասպետը։ — և Ճշմարիտն ըսելով, քեզի հետ վիճաբանելու տաեն չունիմ։ Եթէ կամիս փողը քովդ պահէ, բայց մեր Ճամբան շարունակենք։

— Ուրեմն ինձ չպիտի վնասէք, այնպէս չէ՞ — հարցուց Վամպա։

— Չէ, ըսի քեզ, ասպիրատ։

— Բայց ասպետական խօսք տուէք ինձ — շարունակեց Վամպա, երբ մեծ զգուշութեամբ կ՚մօտենար։

— Իմ ասպետական խօսքս կ՚տամ. միայն ընդ առաջ քալեցէք։

— Շատ լաւ, ուրեմն Արիոնթիոնն և Ցիմարոնթիոնը վերստին հաշտ ընկերներ դարձան — ըսաւ Սիմոն ասպետին կողմն համարձակ մօտենալով — բայց Ճշմարիտը, չեմ սիրեր այն տեսակ կոփուցներ զոր մեծափոր կրօնաւորին ինձ ցուցիք և որով Նորին Սրբութիւնն գեղինը խոսին վրայ թաւալգլոր եկաւ։ Այժմ սոյն Ցիմարոնթիւնը փողը կը կրէ, Արիոնթեան կ՚յորդորեմ արթուն կայ և բաշը թոթուել, վասն զի՝ եթէ չեմ սխալիր, սա մացառներուն մէջ խումբ մը մարդիկ կան որ մեզի կ՚սպասեն։

— Այդ բանն ո՞ սկից իմացար — հարցուց ասպետը։

— Վասն զի երկու երեք անգամ գայարի տերևներու մէջ սաղաւարտի մը փայլը նշմարեցի։ Եթէ պարկեշտ մարդիկ լինէին՝ իրենց Ճամբան պիտի շարունակէին։ Բայց սա վարի պուրակը Ս. Նիկողոսի* վանականներուն համար շատ յարմար մատուռ մ՚է։

— Հատատ վիյ — ըսաւ ասպետն իր դիմապահը վար առնելով — կարծեմ թէ դու իրաւունք ունիս։

Եւ իրաւի այս զգուշութիւնն ընելու ժամ էր, վասն զի նոյն պահուն երեք նետ արձակուելով կասկածելի վայրէն՝ եկան ասպետին գլխին և լանջին զարկին. նետին մէկն անշուշտ ղեղէն պիտի թափ անցնէր, եթէ պողպատի դիմապահը զայն՝ ի բաց չվանէր։ Սիւս երկու նետերը պարանոցի պահպանակին և վզէն կախուած ասպարին զարնելով վար ընկան։

— Շնորհ ունիմ քեզ, իմ հաւատարիմ սպառազինութիւնս — ըսաւ ասպետը — Վամպա, քալենք անոնց վրայ։

Եւ շիտակ անտառակին կողմն արշաւեց։ Վեց եօթ հոգի իր դիմացն ելան՝ և ուժգին մղեցին իրենց նիզակներով։ Նիզակներէն երեքն իրեն դպան և՝ որպէս թէ պղնձէ աշտարակի մը զարկին՝ կտոր կտոր լինելով չորս կողմը թռան։ Կարծես թէ սև ասպետին աչքերն՝ նոյն իսկ

*Ս. Նիկողոս աւազակներու պաշտպանն է, կ՚ըսեն,

գիմապահին բացուածքէն հոր կ'ժայթքէին։ Անկարգութիւն մի հանձնաթեամբ իր ասպատաններու վրայ կանգնեցաւ և գոչեց. — Ինչ կը նշանակէ այս, իմ տեարքս։» Այս հարցման 'ի պատասխան՝ զօրականներն իրենց տուրերը քաշեցին և չորս կողմէն անոր վրայ յարձակեցան պոռալով. «Մեռի՛ր, բռնաւոր։»

— Այ, տուրբ Էտուարտ, այ, տուրբ Գէորգ — ըսաւ Սև ասպետն՝ ամէն մէկ բացապանչութեան մարդ մը ասպատ նետելով — միթէ դաւաճաններ են ասոնք։

Սև ասպետին հակառակորդները՝ թէև մոլեգնած էին, ետ քաշուեցան բաղուկի մ'ուժէն որ ամէն մէկ հարուածին մահ կ'պատճառէր, և կ'երևէր թէ իր անուան ներշնչած սարսափը բաւական պիտի լինէր իր ոսոխները յաղթահարել, երբ ասպետ մը, կապոյտ զրահով, որ մինչև այն առեն միւս յարձակողներուն ետևը կեցած էր, նիզակ 'ի ձեռին ընդ առաջ սրացաւ, և նշան առնելով չէ թէ ձիաւորին, այլ ձիուն՝ կարեվէր վիրաւորեց ասնիւ կենդանին։

— Ահաւասիկ դաւաճանի հարուած մ'է այս — գոչեց սև ասպետը, երբ երիվարը գետին ընկաւ, ձիաւորն ետ միասին տապալելով։

Եւ նոյն պահուն Վամպա շեփորը փչեց, վասն զի այս ամէնն այնքան արագութեամբ պատահեր էր որ ժամանակ չէր գտեր աւելի շուտ շարժելու։ Այս յանկարծական շրջադը վերասին մարդասպանները ստիպեց ետ քաշուելու, և Վամպա, թէև կիսկատար գինուած էր, Սև ասպետին վազելու և զանի գետնէն վերցրնելու չվարանեցաւ։

— Ամօթ ձեզ, վատ դաւաճաններ — գոչեց կապոյտ զրահով ասպետը որ կ'երևէր թէ յարձակողներուն գլուխն էր — ինչպէս կ'վախնաք միմոսի մը փչած պարապ շեփորին ձայնէն։

Այս խօսքէն քաջալերուելով նորէն Սև ասպետին վրայ յարձակեցան, որ ուրիշ ճար չգտաւ, բայց միայն կոնակը կաղնիի մը տալ և սրովն ինքզինքը պաշտպանել։ Ապիրատ ասպետն, որ ուրիշ գեղարտ մ'առեր էր, վայրկեան մը փնտռեց մինչ իր ահարկու ախոյեանն չորս կողմէն սաստիկ կ'նեղուէր, դէպ անոր վրայ ձին վազցուց որպէս զի իր նիզակով զանի ծառին դամէ՝ երբ իր խորհուրդը վերասին 'ի դերև ելաւ Վամպայի ճարպիկութեամբը։ Միմոն իր չունեցած ոյժն արագաշարժութեամբը լեցնելով և զօրականներն իրեն ուշադրութիւն չընելով, որոնք աւելի կարևոր գործով զբաղած էին, պարքարին սահմանը շուրջ կ'դառնար, և Կապոյտ ասպետին թափն արկի եց իրապէս, իր սրովն անոր ձիուն ծնկան ջիլերը կտրելով։ Ձի ու մարդ գետին գլորեցան.

սակայն Սև ասպետին վիճակը դեռ ևս վտանգաւոր էր, քանի որ լիազէն մարդեր զինքը սասսիկ կ՚նեղէին և սկսաւ յողնիլ՝ ամենուստեք կրած յարձակումներուն դէմ ինքզինքը պաշտպանելու համար թափած անհնարին ճգանց պատճառաւ, երբ յանկարծ սլաք մ՚եկաւ և դեռին տապալեց իր մէկ զօրաւորագոյն ոսոխը, և շինական զօրաց գունդ մը՝ Լօքսլէյի և զուարթ վանականին առաջնորդութեամբը՝ անսասանակէն դուրս ելաւ։ Այս նորեկ զինուորներն իսկոյն պայքարին մէջ մտան և բոլոր չարագործները զարկին, այնպէս որ ամէնքն ալ դեռին ընկեր էին մեռած կամ կարեվէր վիրաւորուած։ Սև ասպետն իր ազատարարներուն այնպէս արժանապատուութեամբ շնորհակալ եղաւ, որ առաջին տեսակցութեան ատեն չէին դիտած նոյն բանն անոր վրայ, այլ կարծեր էին որ յանդուգն ու կոշտ զինուոր մ՚էր նա քան թէ բարձր ասոյնական մարդ մը։

— Շատ կ՚փափաքիմ — ըսաւ Սև ասպետը — եթէ հնար է իմանալ, նոյն իսկ իմ՚բարի բարեկամներուս երախտագիտութիւնս յայտնելէն առաջ, թէ ո՞յք են առանց գրդռութեան իմ վրայ յարձակողներս։ Վամպա, սա Կասոյտ ասպետին դիմապահը բաց. նա այս անզգամներուն պարագլուխը պիտի լինի։

Միմոսը վազեց իսկոյն եղեռնագործ գնդին գլխաւորին, որ անկումէն ջախջախեր՝ վիրաւոր ձիուն ներքև մնալով դեռին պառկեր էր մաքառելու կամ դիմադրելու անկարող։

— Օ՛ն, քաջդ ասպետ — ըսաւ Վամպա — սէտք է որ զինակիրդ լինիմ ինչպէս նաև ախոռեպանդ. քեզ ձիէն վար իջեցուցի, հիմակ ալ սաղաւարտդ պիտի հանեմ։

Այսպէս ըսելով միմոսը շուտ ընդ փոյթ քակեց Կասոյտ ասպետին սաղաւարտն՝ որ խոտին վրայ գլորեցաւ, և Սև ասպետին աչաց պարզեց ալեխառն մազեր և կերպարան մը զոր նա չէր յուսար բնաւ տեսնել այսպիսի պարագայի մը մէջ։

— Վօլտմար Ֆիցուրս — գոչեց նա զարմանաք — հիշդ ըրդռեց քիզի պէս բարձրաստիճան և պատուարժան ասպետ մը այսպիսի վատ ձեռնարկի մը գլուխ կանգնելու։

— Ռիչարտ — ըսաւ գերի ասպետն՝ անոր նայելով — դու մարդկային ազգը լաւ չես ճանչեր՝ եթէ չգիտես թէ փառասիրութիւնն ու վրէժխնդրութիւնը մինչև ո՞ր կ՚տանին Ադամի մէկ որդին։

— Վրէժխնդրութիւն — պատասխանեց Սև ասպետը — ես բնաւ չթշնամանեցի քեզ, իզնէ ի՞նչ վրէժ ունիս հանելու։

— Հապա իմ դուստրս, Ռիչարտ, իմ դուստրս որու հետ ամուսնանալու մերժեցիր. միթէ այս Նորմանի մը թշնամանք չէր, որուն արիւնը քու արեանդ չափ ալնիւ է։

— Դուստրդ — պատասխանեց Սև ասպետը — դուստրդ այս թշնամութեան պրպիւ չինի, որ այսպիսի արիւնալի եղք մ'ունեցաւ։ Հեռացէք, բարեկամներս, այս մարդուն հետ առանձին խօսիլ կ'ուզեմ։ Ուրեմն, Ղօլամար Ֆիցուրս, ըսէ ինձ Ճշմարտութիւնը, խոստացանէ թէ ամէն դրդեց քեզ այս դատաձանութեան։

— Քու հօրդ որդին — պատասխանեց Ղօլամար — և այս ընելով հօրդ վրէժը կ'լուծէր առ այն անհնազանդութեանդ համար։

Ռիչարտի աչերը արտասուելեամբ շողային, բայց իր բարեմտին բնաւորութիւնը զսպեց այս զայրոյթը։ Ձեռքը ձակին տարաւ և պահ մը վիրաւորասպեսին դէմքը դիտելով անցուց, որու կերպարանէն կ'երեւէր որ հպարտութիւնն ամօթապարտութեան հետ կ'մրցուէր։

— Ղօլամար, ինչու համար չես աղաչեր որ կեանքդ բաշխեմ քեզի — հարցուց Սև ասպետը։

— Առիւծին ձիրանին ներքև դանուողը — պատասխանեց Ֆիցուրս — դիտէ որ անօգուտ է այդ շնորհը հայցել։

— Ուրեմն առանց հայցելու՝ ընդունէ կեանքդ իմ ձեռքէս — ըսաւ Ռիչարտ — առիւծն իր հանդիպած դիակներով չմնանիր։ Կեանքդ քեզի կ'բաշխեմ, բայց սա պայմանաւ որ երեք օրուան մէջ Անկլիոյ հողէն հեռանաս և երթաս քու վատութիւնդ Նորման դղեկիդ մէջ ծածկես ու երբէք չպիտի յիշես որ Անժուի ճօճն այս դատաձանութեան մէջ մաս ունեցած է։ Եթէ պայմանեալ ժամանակէն ետք՝ Անկլիոյ հողին վրայ տեսնուիս՝ պիտի մեռնիս, կամ եթէ իմ դերդաստանիս անուան արատ բերելու մտօք բառ մ'անգամ արտասանես, ստրք Գէորգայ վրայ կ'երդնում, որ նոյն իսկ եկեղեցի ոչ խորանը քեզ ապաւէն չպիտի կարենայ լինիլ. քեզ դղեկիդ աշտարակէն պիտի կախել տամ անպղներու կուր լինելու համար։ Ղօքսլէյ, սա ասպետին երիվար մը տուր, վասն զի կ'տեսնեմ որ աղեղնաւորներդ արձակ մնացած ձիերն առին, և թող որ անվնաս ասկից մեկնի։

— Եթէ չգիտէի որ ձայն մը կ'լսեմ որու հրամաններն անվրէպ պէտք է կատարել — պատասխանեց շինական զինուորը — անտարակոյս սա չարագործին սլաք մը պիտի ղրկէի որպէս զի երկար ուղևորութեան մը ծանրութենէ զինք ազատեմ։

— Դու անկլիացի սիրտ ունիս, Ղօքսլէյ — ըսաւ Սև ասպետը — և

քաջ կ'գտնես որ պարտ է հնազանդիլ իմ հրամանիս. վասն զի ես, Անկլիոյ թագաւոր Ռիչարտն եմ։

Այս խօսքին՝ զոր իր բարձր ատոիճանին և ազնիւ բնաւորութեան վայել վեհափառութեամբ արտասանեց Առիւծասիրտ Ռիչարտ, շինական զօրականներն իսկոյն անոր առջև ծունր դրին, և միանգամայն հաւատարմութեան երդում ընելով իրենց յանցանքին համար ներողութիւն խնդրեցին։

— Ոտք ելէք, բարեկամներս — ըսաւ Ռիչարտ շնորհալի ձայնով, և դիտելով զանոնք այնպիսի դէմքով մ'որ կ'ցոյցընէր թէ իր սովորական զուարթութիւնն, իր բարկութեան բուռ ութիւնն արդէն զսպեր էր, և կերպարանն ալ մղած յուսահատ պայքարին նշոյլը չէր յայտներ բնաւ, բայց միայն յոգնութենէ պատճառած կարմրութիւնը։ — Ոտք ելէք, բարեկամներ — ըսաւ նա — ձեր անկարգ գործերը՝ թէ անտառի և թէ դաշտի մէջ, քաւեցէք Դօրսիլսդրնի դղեկին առջև հարստահարեալ հպատակաց ձեր ըրած անկեղծ ծառայութեամբ, և այսօր ալ ձեր վեհապետին ազատութեամբ՝ զոր ձեզի կ'պարտաւորի։ Ոտք ելէք, իմ հպատակներս, և այսուհետև ուղիղ վարմունք մ'ունեցէք։ Իսկ դու, քաջդ Լօքսլէյ . . . ։

— Վեհափառ տէր, այլևս մի անուններ գիս Լօքսլէյ. պարտաւոր եմ քուն անունս յայտնել ձեզ, անուն մ'որուն համբաւը, կարծեմ շատ տարածուելուն՝ մինչև ձեր արքայական լսելեաց հասած պիտի լինի։ Ես Ռոբին Հուդ Շէրլուսի անտառէն եմ։

— Դեռ վտարակներու թագաւոր, և կտրիճներու իշխանն ես — գոչեց Ռիչարտ։ Ո՞վ լսած չէ անուն մ'որ մինչև Պաղեստին հասաւ։ Բայց հաւատի՞ եղիր, քաջդ վտարակ, որ մեր բռնակալութեան ժամանակ և խռովալի ատենները որ մեր տարակայութենէ եկած են, ինչ գործ որ ըրիր չպիտի յիշուի քեզի դէմ։

— Այդպէս իսկ կ'ըսէ առածը — գոչեց Վամպա — որ ամէն տեղ քար մը նետել կ'ուզէր, և որուն ձայնն այս անգամ նուազ վաւերուն էր քան առաջին անգամ։

Երբ կատուն կը փախի
Մուկն խաղալ կ'ըսկսի։

— Լա՛ւ, Վամպա, միթէ ո՞ստ ես — ըսաւ Ռիչարտ։ — Շատ ատենէ վեր ձայդ լսած չէի և կարծէի թէ փախուստ տուեր ես։

— Ե՞ս փախիմ — ըսաւ Վամպա — տեսած ես բնաւ որ յիմարութիւնը քաջութենէ բաժնուի։ Իմ սուրիս յաղթանակն ահա սա տեղ

կեցած է, այս է գորշ ձին. կ՚փափաքիմ սրտովին որ վերասին ոտքի վրայ ելնէ, սա պայմանաւ որ իր սիրոջ ծնկան ջիլերն անոր տեղ կտրոտ ին։ Իրաւ է որ՝ ի սկզբան քիչ մը նահանջեցի, վասն զի խատուտիկ վտաւակ մը չէ կարող նիզակի մը դիմադրել այնչափ լաւ որչափ պողոտատիկ գրահ մը, բայց եթէ ուրի ծայրով չկռուեցայ, կ՚խոստովանիք անշուշտ որ գէթ արիաբար պատերազմի փողը զարկի։

— Եւ արդարև լաւ դիտմամբ ըրիր, բարեսիրտ Վամպա — պատասխանեց Թագաւորը։ — Քու այդ աղուոր ծառայութիւնդ չպիտի մոռնամ։

— Confiteor! confiteor (*խոստովանիմ*) — գոչեց հլու ձայնով մը, Թագաւորին քովէն ձայն մը — իմ լատիներէնս զիս չպիտի ազատէ. բայց կ՚խոստովանիմ իմ մեծ մասնութիւնս, և նեղութիւն կ՚հայցեմ կախաղանը ղրկուելէն առաջ։

Ռիշարտ աչերը դարձուց՝ և ծունկի վրայ տեսաւ զուարթ վանականն որ աղօթք կ՚ընէր, մինչդեռ իր երկծայր վիրկը՝ որ կռուի ժամանակն անպամ անգործ չէր կեցած, իր քովն էր խոտին վրայ։ Իր կերպարանն այնպէս երևոյթ մ՚առեր էր որպէս թէ խորին զեղջմը կ՚զբաղ. աչերը վեր վերցուցած և բերանին անկիւնները վար լծած, Վամպայի խօսքին համեմատ, իբրև ծոպք քսակի մը բերան։ Սակայն այս հեզութիւնն ու անհնարին զղջման բացատրութիւնն այլանդակ կերպով սուտ կ՚հանէին ծիծաղաշարժ նշաններ որ իր կոշտ դիմաց գծերուն մէջ կ՚նշմարուէին, և որմէ կ՚հետևէր թէ իր զղջումն ու երկիւղը միանգամայն կեղծ ու պատիր էին։

— Ինչո՞ւ համար այդպէս վհատած կ՚երևիս, յիմար քահանայ — հարցուց Ռիշարտ — մինթէ կ՚վախնաս որ քու թեմականդ չիմանայ թէ ի՞նչ հատատարմութեամբ կ՚ծառայես Ղօդր-Տամի և սուրբ Տրնսպանի։ Օ՛ն, քաջդ, մի վախնար. Անկլիոյ Ռիշարտը պիտի կոյժին վրայ ըստուած պաղտնիք մ՚երևան չհաներ բնաւ։

— Ո՛չ, իմ՚ամենաշնորհալի վեհապետս — պատասխանեց Ճոնատը (որ քաջ ծանօթ է Ռոպէն Հուտի պատմութեան հմուտ եղողներուն՝ եղբայր Դրք անուամբ)։ իմ երկիւղս հոգևոր պատաղանէն չէ այլ արքայականէն։ Բաբէ, իմ սրբապիղծ բուռնս ի՞նչպէս Տիրոջ օրհնելոյն ականջին լծեցուցի։

— Հա՛, հա՛ — վրայ բերաւ Ռիշարտ — դեռ ևս այդ բանը հոգ կ՚ընես։ Իրաւի բռնցի հարուածդ մոռցերէի, թէև իմ՚ականջս նոյնն ընդունելէն ետև ամբողջ օր մը հնչեց։ Սակայն եթէ կռուիդ լաւ էր,

թող իմ բոլորտիքս կեցող բարի մարդիկ վկայեն, եթէ փոխարէն տուածս անկից վար կ՚մնար, իսկ եթէ կ՚կարծես թէ տակաւին բան մը կ՚պարտաւորիմ քեզի, և երկրորդ հարուած մը կ՚փափաքիս . . . :

— Ամենեին, ամենեին — պատասխանեց Դրք Ճգնաւորը — իմ ալշխով հաստատեր ինձ : Երանի թէ Ձեր վերհատուցումն այսպէս տատապէս վճարէր միշտ իր պարտքը :

— Եթէ այսպէս կուզենք հաստատել կարենալ — ըսաւ թագաւորը — իմ պարտապահանջներս դատարկ դանձիս վրայ դանդատելու պատճառ մը չպիտի ունենային :

— Եւ սակայն — շարունակեց Ճգնաւորը շինծու ծանրութիւն մը վերտին դասելով — չպիտի՞ թէ ինչ ապաշխարանք պարտիմ՝ կրել այն պիղծ հարուածիս համար :

— Եղբայր, այլ ևս մի խօսիր այդ բանին վրայ — ըսաւ թագաւորը — հեթանոսայ և անհաւատից կողմէն այնքան հարուածներու ասկալէն ետև՝ յիմարութիւն պիտի լինէր իմս եթէ դժկամակէի Գօրմէնհըրտի Ճգնաւորին պէս սուրբ կրօնաւորի մը կողմէն ընդունած կուռփիս վրայ : Դարձեալ, իմ բարեսիրտ կրօնաւորս, կարծեմ թէ եկեղեցւոյն և քահանայի համար լաւ կ՚լինէր եթէ քեզ քահանայական կարգէդ հանելու համար արտօնագիր մը ստանայի՝ մեր պահպան զօրաց մէջ քեզ տեղ մը տալով, և սուրբ Տրնդանի սեղանին ապաստարութեան տեղ մը անձին պահպանութիւնը քեզ յանձնէի :

— Աստուածս — ըսաւ Ճգնաւորը — խոնարհաբար քեզնէ ներողութիւն կ՚խնդրեմ, և անտարակոյս ինձ պիտի ներես եթէ իմանաս միայն թէ ծուլութեան մեղքն որչափ պաշարած է զիս : Սուրբ Տրնդան (միշտ պահէ պահպանէ քեզ) իր խորշին մէջ հանգարտ կ՚մնայ միշտ, եթէ իմ ժամերգութիւնս մոռնամ գերուկ այծեամ մը սպաննելու ատենս : Երբեմն իմ Ճգնարանէս դուրս կ՚անցնիմ գիշերը, չգիտեմ ինչ ընելու համար սուրբ Տրնդան չդանդատիր բնաւ, հանգարտ տէր մ՚է այն և խաղաղասէր որչափ որ կրնայ լինիլ փայտեայ սուրբ մը : Անտարակոյս մեծ պատիւ մ՚է ինձ իմ վերհատեսիս ապաստարեալը, սակայն եթէ երթայի որբևարի մը միտիթարել գեղին մէկ անկիւնը, կամ ուրիշ տեղ այծեամ մը սպաննել, ինչպիտի պատահէր : Ո՞ւր է այն շուն քահանայն» պիտի ըսէր մին : «Ո՞վ տեսաւ այն անիծեալ Տրքը» պիտի ըսէր ուրիշ մը : «Սա կրօնաղուրկ ապիրատն աւելի երէ կ՚սպաննէ քան թէ դաւառին կէսը» պիտի պոռար որսապահը : Հոսկ ուրեմն, իմ մեծասիրտ վերհատեսս, կ՚աղաչեմ քեզ թողուլ զիս ուր որ եմ, կամ ե-

թէ կ՚փափաքիս բարերարութիւն մ՚ընել ինձ, Գօրմէնհըրսպի մատրան իրրև խեղճ երէցը նկատէ գիս, և ինչ որ շնորհես սոյն մատրան՝ մեծ շնորհակալութեամբ պիտի ընդունուի։

— Ա՛իմանամ միտքդ — ըսաւ թագաւորը — և սուրբ հայրդ Վարնքլիֆի սնտուին մէջ որսալու իրաւունք պիտի ունենար։ Սակայն ուշ դիր որ մինակ երեք այծեամ սպաննելու հրաման կ՚տամ քեզ ամէն մէկ եղանակի մէջ, բայց եթէ այս հրամանն երեսունի չափ սպաննելու իբրև պատճառ չծառայեր քեզ ոչ բարի թագաւոր եմ և ոչ քրիստոնեայ ասպետ։

— Ես հափաւ տէր, կրնաս վստահ լինիլ — պատասխանեց կրօնաւորն — որ սուրբ Տընդանի օրհնութեամբը, առատաձեռնութիւններդ բազմապատկելու հնարը պիտի գտնեմ։

— Տարակոյս չունիմ, իմ բարի եղբայրս — վրայ բերաւ թագաւորը — և որովհետև լոկ երէն չոր անունդ մ՚է, մեր մառանապետին հրաման պիտի տամ որ ամէն տարի տակառ մը Քսերէսի գինի, տակառիկ մը Մալվուազիի գինի, և երեք տակառ ալ առաջին կարգի գարեջուր դրկէ քեզ։ Եթէ ծարաւդ մարելու համար այսչափը չբաւեր՝ արքունիքս պիտի դաս և շտեմարանապետիս հետ պիտի ծանօթանաս։

— Հապա սուրբ Տընդանի համար — ըսաւ Ճգնաւորը։

— Շուրջառ մը, ուրար մը, խորանի ծածկոյ մը պիտի ունենաս նաև — յարեց թագաւորը խաչ հանելով։ — Բայց մեր կատակը վերջացընենք, առ ահի որ Աստուած մեզ չպատժէ տեսնելով որ աւելի իր պաշտամունքն և փառքը կ՚մտածենք քան թէ մեր յիմարութիւնները։

— Ես իմ պաշտպան սուրբիս կողմէն պատասխանատու կ՚մնամ — ըսաւ կրօնաւորը զուարթապէն։

— Դու քու անձիդ պատասխանատու մնայիր, կրօնաւոր — ըսաւ Ռիչարտ թագաւորը՝ փոքր ինչ խստութեամբ։ Բայց անմիջապէս ետքն իր ձեռքը տարածելուն Ճգնաւորին կողմը, այս վերջինը փոքր ինչ գլխիկոր, ծունր դրաւ և նոյն ձեռքը համբուրեց։ — Դու իմ՝ այս տարածած ձեռքիս այնչափ պատիւ չես ըներ — ըսաւ թագաւորը — որչափ ըրիր իմ կուռփիս. դու միայն ծունր կ՚դնես միոյն առջև, մինչդեռ միւսին առջև երկիրը պագիր։

Բայց Ճգնաւորը՝ վախնալով որ թագաւորը կ՚վիրաւորէ նոյն ծաղրածու կերպով խօսքը շարունակելով, սխալմունք մ՚որմէ զգոյշ կենալ պէտք են թագաւորներու հետ խօսակից գանուողները, խորին խոնարհութեամբ բարևեց և ետ քաշուեցաւ։

Նոյն պահուն ուրիշ երկու անձեր երևան ելան այս տեսարանիս մէջ։

ԳԼՈՒԽ ԽԱ

Ցանք առ ամէն բարձր աւագանին, ողջոյն,
Որք մեզնէ երջանիկ չեն թէև ճոխագոյն,
Ամէն գալար ծառի տակ
Գան տեսնելու մեր խաղեր,
Ընդ ամէն չէն պուրակ, բարի՛ եկաք ողջոյն։
ՄԱՔՓԵՐՍՈՆ

Նորեկ ուղևորներն էին Վիլֆրիտ Իվանոէ, Պոտոլֆի վանահօր ձիուն վրայ հեծած, և Գիւրթ՝ որ անոր կ'ընկերանար՝ նոյն իսկ ասպետին պատերազմի երիվարը նստած։ Մեծ եղաւ Իվանոէի զարմանքն երբ թագաւորն արիւնթաթաւ և պատերազմի դաշտին վրայ վեց եօթ դիակներ փռուած տեսաւ։ Նոյնչափ տարապայման զարմանք ալ ցոյց Իվանոէ անոր չորս կողմն անտառորդներ տեսնելով, որոնք՝ ըստ երևոյթին՝ մօտակայ անտառին վտակներն էին և հետևապէս թագաւորի մը համար վտանգաւոր ընկերներ էին։ Պահ մը վարանեցաւ և չգիտէր թէ ինչկերպով վարուի անոր հետ և, իբրև թափառական Սև ասպետի թէ ոչ նոյն իսկ իր վեհապետին հետ։ Ինչարտ անոր շփոթութիւնը տեսաւ։

— Մի՛ վախնար, Վիլֆրիտ — ըսաւ անոր — Ինչարտ Բլանդաժնէդի ուղղելու խօսքդ, քանի որ այսչափ ճշմարիտ և քաջասիրտ անկլիացւոյ մէջ կ'տեսնես զանի, թէև ուղիղ ճամբէն հեռացած լինին՝ իրենց անկլիական եռանդէն մղուելով։

— Պարոն Վիլֆրիտ Իվանոէ — ըսաւ վտարակներու պարագլուխն դէպ անոր կողմը քալելով — իմ ապահովութիւններս չեն կրնար աւելի արժէք մը տալ իմ վեհապետիս յայտարարութեան. սակայն, ներէ ինձ, փոքր ինչ հպարտութեամբ յայտնել քեզ, թէ իր ամենէն շատ տառապող հպատակներէն չեն գտնուիր աւելի անկեղծ հպատակներ քան թէ այս պահուս իր բոլորտիքը կեցողներ։

— Քաջաղեղնաւոր, այդ մասին չեմ տարակուսիր բնաւ — վրայ բերաւ Վիլֆրիտ — քանի որ դու ալ այս կարգէն ես։ Բայց այս մահուան և վտանգի նշաններն, այս սպաննուած մարդիկն ու իմ՝ վեհապետիս արիւնալի գրահն ինչ կ'նշանակեն։

— Մատնութիւնը մեր վրայ հասաւ, Իվանոէ — ըսաւ թագաւորը — բայց այս քաջ մարդոյ շնորհիւ մատնութիւնն իր պատիժը գտաւ։ Սակայն հիմակ կ'մտածեմ որ դու ալ մատնիչ մ'ես — յարեց Ռիչարտ ժպտելով — և մէկ խիստ անհնազանդ մատնիչ մը. վասն զի ես բացարձակ հրամաններ տուի որ Պոտոլֆի վանահօր տունը նախ մինչև վերջին բոյժը։

— Վերքս բոյժ գտաւ — պատասխանեց Իվանոէ — այժմ պարքի մը ձգած վերքին չատի ծանր չէ. բայց ինչու համար, ազնուատոհմ իշխան, այսպէս կ'վշտացընես քու հաւատարիմ հպատակացդ սիրտը, և կեանքդ վտանգի մէջ կ'գնես առանձին ուղևորելով և վտանգալի պատահարներ փնտռելով, որպէս թէ իր միակ հոգն իր նիզակն ու սուրն եղող թափառական ասպետի կենաց արժէքն ունենար նաև քու կեանքդ երկրիս վրայ։

— Եւ Բլանդաժնէդի Ռիչարտն — ըսաւ թագաւորն — ուրիշ հուշակ չփափաքիր քան զոր ինչ իր նիզակն ու սուրը կրնան շահիլ, և Բլանդաժնէդի Ռիչարտն աւելի գոհութիւն կ'զգայ պայքար մ'ընելով իր ընտիր սրովն ու բազկին զօրութեամբը քան թէ հարիւր հազար հոգւոյ բանակ մը պատերազմի առաջնորդել։

— Բայց քու թագաւորութեանդ, վեհափառ տէր — ըսաւ Իվանոէ — քու տէրութեանդ կ'սպառնան մեծ ձախորդութիւններ և քաղաքային պատերազմ. հպատակներու ամէն տեսակ աղէտք կ'սպասեն եթէ իրենց վեհապետը կորուսեն վտանգի մը մէջ զոր ամէն օր ախորժ կ'ըզգաս փնտռելու և որմէ այժմ իսկ մաղապուր աղաչեցար։

— Հօ, հօ, իմ թագաւորութիւնս — և իմ հպատակներս — պատասխանեց Ռիչարտ անհամբերութեամբ։ — Ահա կ'ըսեմ քեզ, Վիլֆրիտ, անոնցմէ բաւականներն իսկ պատրաստ են իմ յիմարութեանցս փոխարէն յիմարութիւններ ընել։ Օրինակի համար, իմ ամենէն հաւատարիմ սպասաւորս, Վիլֆրիտ Իվանոէն իմ հատատ հրամանիս անսալ չուզեր, և սակայն այժմ իր թագաւորին քարոզ կ'կարդայ, վասն զի իր խորհրդին բոլորովին չհետևիր։ Մեզնէ ոմն միւսը յանդիմանելու իրաւունք ունի։ Բայց ներէ ինձ ըսել, իմ հաւատարիմ Վիլֆրիտս, որ այսպէս անյայտ անցուցած և դեռ ևս անցնելիք ժամանակս կարևոր էր որպէս զի բարեկամներս և հաւատարիմ ազնուականներս իրենց զօրքը ժողովելու միջոց ունենան, այնպէս որ երբ Ռիչարտի վերադարձը ծանուցուի կարող լինի նա այնպիսի բանակի մը գլուխն անցնիլ որ թշնամիներն իրեն դէմ ելնելու դողան, և հետևապէս առանց սուրը պատե-

նէն հանելու իսկ կանխորոշ մատնութիւնը զսպէ։ Քանի չորս ժամ պէտք է որ Էպօտվիլ և Պօհուն կարող լինին իրենց զօրքը պատրաստել և դէպ 'ի Լօրք քալել։ Ի հարաւ գտնուող լորտ Մէլզպրիի կողմէն լուրեր առնու կ'սպասեմ, իսկ Վօրվիզշայրի մէջ՝ Պօշանէն իսկ հիւսիսի կողմը, Մուլտօնէն և Բէրսիէն։ Օրինապէտը Լոնտօնը պիտի խաղաղ պահէ։ Եթէ յանկարծակի երևան գայի թերևս վտանգի ենթարկէի, և սոյն վտանգէն չպիտի ազատէի նիզակիս և սուրիս շնորհիւ, թէև աջակից ունենամ յանդուգն Բօպէն Հուտի աղեղը, մեր խնդումներս եղբայր Դրքի երկծայր վիրդը, և իմաստուն Վամպոյի շեփորը։

Վիլֆրիտ գլուխը ծռեց խոնարհաբար, քաջդիտնալով որ գոր բան էր իր տիրոջն ասպետական անզուսպ ոգւոյն դէմ մաքառելու, որով ատէպ Բիչարտ արկածներու մէջ կ'նետուէր, թէև անկից խոյս տալ իրեն դիւրին էր, կամ լաւ ևս ըսենք, աններելի էր իրեն զանոնք փնտռելու։ Նորատի ասպետը հաւաչեց և լուռ կեցաւ, մինչդեռ Բիչարտ, իր խորհրդատուն լռութեան դատապարտելուն վրայ ուրախանալով, թէև սրտովին կ'զլար թէ անոր բրած յանդիմանութիւնը հիմնաւոր էր, Բօպէն Հուտի հետ խօսակցութիւնը շարունակեց. — Ատարակոյ թագաւոր — ըսաւ նա — միթէ քու վեհապետ եղբօրդ քիչ մը մնունդ տալու կարողութիւն չունիս. վասն զի սա մեռած ապիրատներն ինձ ախորժակ և յոգնութիւն տուին։

— Ճշմարիտը — պատասխանեց հրամանատարը — վասն զի Ձեր վեհափառութեան սուտ խօսելու կ'անդոսնեմ, մեր մատանին մէջ մասնաւորապէս . . . — և խօսքը կտրեց շփոթելով։

— Երէի միս կայ, կարծեմ — վրայ բերաւ Բիչարտ խնդալին։ — Նեղ ժամանակ՝ ասկէ լաւագոյն մնունդ մը չկրնար լինիլ, և արդարև, քանի որ թագաւոր մ'իր տունը չնտիր և իր յատուկ երէն չապաններ, կարծեմ թէ պարտաւոր չէ արանջել երբ իր սեղն ուրիշները կ'օրան իր անտառներուն մէջ։

— Ուրեմն, եթէ հաճիս, տէր արքայ, ներկայութեամբդ պատուել Բօպէն Հուտի ժամադրութեան մէկ վայրը, երէն պակաս չպիտի գտնէ. ասկէ զատ թակոյկ մը գարեջուր, և թերևս բաւական ընտիր գինի մը ճաշակել տալու յանձնիմ։

Հետևապէս վտարակը ճամբանցուցուց. ետևէն կ'երթար զուարթագին թագաւորն, որ թերևս աւելի երջանիկ էր Բօպէն Հուտն իր անտառորդներուն հետ, յանկարծ գտնելուն, քան թէ իր արքայական աթոռը նստէր և նախարարաց ու ազնուականաց շքեղ ժողովի մը նա-

խապահէր։ Ինչ որ նոր, ինչ որ արկածական էր Ռուսծասիրա Բիշարտի կենաց հրապոյրը կ'դառնար, և երբ վտանգներու պատահէր և յաղթանակէր աւելի մեծ արժէք կ'ստանար աշխարհ իր աչաց։ Այս տուծասիրա թագաւորին վիպասանական ասպետի մը փայլուն այլանդակուտ բնաւորութիւնը կերպով մը կենդանութիւն և իրականութիւն առեր էր, և իր զինուց զօրութեամբ ստացած անձնական փառքն իր վառվռուն երևակայութեան աւելի սիրելի էր քան թէ իմաստուն և բաղաքական կառավարութեան մը փայլը։ Ուստի իր իշխանութիւնն փայլուն և արագաշարժ ասպղի մը շրջանին նմանեցաւ, որ թէև երկնից երեսը կ'փայլատակի հիասքանչ լուսով, բայց շուտով կ'անցնի և անոր տեղ ընդհանուր խաւար մը կ'սիրէ։ Իր ասպետական շահատակութիւնները վիպասաններու նիւթ տուին, սակայն իր հայրենեաց շթողին այն երկարատև բարիքն՝ որու վրայ պատմութիւնն հաճութեամբ կ'խօսի և ապագայ սերնդին իբրև օրինակ կ'ընծայէ։ Բայց Բիշարտ իր արդի ընկերներուն մէջ իր բոլոր բարեմասնութիւններովը կ'երևէր։ Զուարթ, բարեմոյն էր, և ժողովրդեան որ կարդին մէջ որ արիասրտութիւն գանէր կ'սիրէր։

Շուտով պատրաստեցին գեղջական ճաշը ստուար կաղնիի մը տակ, Անկլիոյ թագաւորին համար, որուն շուրջն առեր էին իր կառավարութեան կողմէ տարապրած վտարանքներ, և ասոնք այժմ իր պալատականներն ու թիկնապահ զօրքը կ'կազմէին։ Երբ գինիի թակոյկը բոլորտիքը շրջան ըրաւ, կոշտ անտառորդներն իսկոյն մուցան նորին վեհափառութեան ներկայութեան ողդած յարգանքը։ Երգ ու կատակ բերնէ բերան անցան, ամէնքն սկսան հին շահատակութիւններ պատմել, և 'ի վերջէ՝ մինչդեռ կ'պարծէին թէ ինչպէս ասէպ օրինաց դէմ գործեր էին, ոչ ոք ուշ ածեց որ ասոնց բնական պահապանին առջև կ'խօսի։ Զուարթուն թագաւորը՝ իր սեղանակիցներուն պէս իր աստիճանին անփոյթ, կ'ծիծաղէր, կ'խմէր և ուրախալի խմբին մէջ կատակներ կ'ընէր։ Բօպէն Հուտ իր բնական և հաստ խելքով կ'փափաքէր որ այս ինչոյքը վերջանայ՝ անոր ներդաշնակութիւնը վրդովող բան մը չպատահած, մանաւանդ քանի կ'գիտէր որ Իվանհօէի ճակատն անձկութեան մուայլով կ'ծածկուէր։ — Մեր արիասիրտ վեհապետն իր ներկայութեամբը մեզ կ'պատուէ — ըսաւ Իվանհօէին մեկուսի, սակայն կ'փափաքիմ՝ որ տէրութեան գործոց համար անդին ժամանակն 'ի զուր չանցընէ աստանօր։

— Շատ լաւ և խնամութեամբ խօսեցար, քաջդ Բօպէն Հուտ — ըսաւ Վիլֆրիտ մեկուսի — և գիտցիր միանգամայն որ նոյն իսկ զուարթ-

թուն ժամերուն մէջ՝ թագաւորի մը հետ կառակ ընելը, առիւծի մը կորիւնին հետ խաղալ է, որ եթէ թեթև գրգիռ մ՚անդամ պատահի, ձիրաններն ու ակռաները կ՚գործածէ։

— Իմ երկիւղիս ձիշտ պատճառը գտար — ըսաւ վտարակը։ — Իմ մարդիկս 'ի բնէ և սովորութեամբ կոշտ են, թագաւորն որչափ ցասկոտ նոյնչափ զուարթ է. ո գիտէ, կարելի է բարկութեան առիթ մը տրուի և մեծ կռիւ մը բացուի. ժամ է արդ այս խնջոյքն ընդհատել։

— Ուրեմն, արիասիրտ մարդ, հնար մը գտիր — ըսաւ Իսմանոէ. վասն զի ամէն անգամուն որ յորդոր տուի այս մասին՝ թագաւորն անտատ մնաց և ձաշն աւելի երկարաձգելու փափաք ցոյց։

— Ուրեմն պէտք է իմ վեհապետիս ներողամտութիւնն ու շնորհը չարաչար գործածել — ըսաւ Բօպէն Հուտ՝ պահ մը մտածելով։ Բայց տուրբ Քրիսթոֆ վկայ, պէտք է։ Անոր շնորհայ անարժան պիտի սեպուիմ եթէ օգտին համար զայն կորուսելու երկնչիմ։ Հէյ, Սքաթլօք, գնա սա պուրակին եռանը պահուէ և որտորդի շեփորովդ նօրմանեան երգ մը հնչէ, առանց ժամանակ անցընելու, եթէ չես կամիր կեանքդ վտանգի մէջ դնել։

Սքաթլօք իր հրամանատարին անսաց և հինգ վայրկեան այն ինչ անցեր էր որ փողի շինդէն կոչնականներն ահ ու դող ելան։

— Մալվուազէնի փողն է — գոչեց Միլլը՝ ոտքի վրայ կանգնելով և աղեղն առնելով։ Նոյն պահուն Դրք Ճկնաւորն ալ ձեռքը բռնած շիշը վար ձգեց և իր երկծայր վիրգն առաւ։ Վամպայի բերանը կիսկատար մնաց կառակը, և ինք իսկոյն իր սուրն ու ասպարն առաւ։ Բոլոր միւս հանդիսականներն իրենց զինուց վազեցին։

Վաղանցուկ կեանք վարող մարդիկ սեղանէն հեշտիւ կ՚անցնին 'ի դուպար, և Ռիչարտի համար այս փոփոխութիւնը հրճուանաց յաջորդութիւն մը կ՚երևէր։ Իր սաղաւարտն և արդէն հանած զինուց ամենէն ծանր մասերը խնդրեց, և մինչդեռ Գիւրթ զանոնք կ՚կապէր, Վիլֆրիտին խստիւ ապսպրեց մօտալուտ կարծած պայքարին մէջ չմտնել, եթէ չէր կամեր իր տհաճութեան հանդիպիլ։

— Դու հարիւր անգամ կռուած ես ինձի համար, Վիլֆրիտ, և ես ակամտես վկայ եղած եմ ըսածիս։ Այսօր ալ դու հանդիսատես պիտի լինիս և պիտի տեսնես թէ ինչպէս Ռիչարտ կ՚պատերազմի իր բարեկամին և հաւատարիմ հպատակին համար։

Նոյն պահուն՝ Բօպէն Հուտ զանազան տեղեր ղրկեր էր իր մարդիկը՝ որպէս թէ թշնամւոյն դիրքը լրտեսեն. և երբ տեսաւ որ ընկերնե-

ը ցիր ու ցան եղած են՝ Ռիչարտին մօտ գնաց, որ նոյն միջոցին լիսլին ղինուորը էր, և մէկ ծունկը կրկնելով, իր վեհապետէն ներողութիւն խնդրեց։

— Ի՞նչ բանի համար, քաջդ — հարցուց Ռիչարտ՝ փոքր ինչ անհամբեր։ — Միթէ արդէն բոլոր օրինազանցութեանդ համար լիսլի ներողութիւն չտուի։ Միթէ կարծես թէ մեր խօսքը փեսաները մ՚է՝ զոր հովը մերթ այս մերթ այն կողմը կ՚քշէ։ Այս ներողութենէ ետք՝ գունոր յանցանք մը գործելու ժամանակ չունեցար։

— Այո, գործեցի — պատասխանեց Ռօպէն — եթէ յանցանք է վեհապետս խաբել իր օգտին համար։ Լսած փոդդ Պալմուսպէնինը չէ, այլ իմ պատուէրիս համեմատ հնչեցին այս խնջոյքին առարտ տալու համար, վախնալով որ քու անպին ժամերդ կարևորագոյն գործերու նուիրելու տեղ այսպէս ընդ ունայն չանցնին։

Յետոյ ոտք ելաւ, թևերը կուրծքին վրայ ծալլեց և ակնածու քանի մը կերպով թագաւորին պատասխանին տպասեց, իբր մարդ մ՚որ թէև յանցանք մը գործելը կ՚զղայ, սակայն վստահ է իր բարի դիտաւորութեան վրայ։ Բարկութենէն Ռիչարտին արիւնն երեսին դարձաւ, բայց անցաւոր այլայլութիւն մ՚էր, և արդարութեան զգացումը զայն զսպեց։

— Ճէրվուսի թագաւորը — ըսաւ Ռիչարտ — կ՚ինայէ արդեօք իր երէն և գինին Անգլիոյ թագաւորին։ Շատ լաւ, արիդ Ռօպէն, բայց երբ գաս դիս տեսնելու իմ Լոնտոնի զուարթուն քաղաքս՝ դիս աւելի վեհանձն հիւրընկալ մը պիտի գտնես։ Սակայն՝ իրաւունք ունիս, բարեմիտ ընկեր. ուստի աշտանակենք և Ճամբայ ելնենք։ Ժամ մը կայ որ Վիլֆրիտ անհամբեր կ՚սպասէ։ Ըսէ ինձ, արիդ Ռօպէն, միթէ խմբիդ մէջ բարեկամ չունի՞ս որ խորհուրդ տալը բաւական չսեպելով, շարժումներդ անպամ ուղղելու կ՚փափաքի և դժբաղդ կ՚լինի երբ դու ինքն քու գլխիդ գործ մը կատարես։

— Այո, վեհափառ, այդպէս իմ տեղակալս Փոքրիկ Ճօհն — պատասխանեց Ռօպէն — և այս պահուս վինչև Սկոտիոյ սահմանները արշաւելու պաշտօն ունի. և պիտի խոստովանիմ քեզ որ երբեմն իր ազատաբան խորհուրդներն ինձ անախորժ կ՚թուին. բայց երբ վերատին կ՚խորհիմ, չեմ կարող ներեցնել այն մարդուն դէմ որ իր անձկութեան ուրիշ գրդիռ մը չունի այլ միայն իր տիրոջը ծառայելու անողոսպ եռանդ մը։

— Իրաւունք ունիս, քաջդ — պատասխանեց Ռիչարտ — և եթէ մէկ կողմս Իվանհոէն ունենայի՝ իրբև խորհրդատու, և իր խորհրդոց իբրև փաստ իր Ճակտին տրտմութիւնը, և միւս կողմէն քեզ, իմ յատուկ օգուտս կարծած բանիդ համար զիս խաբելու, այն ատեն քրիստոնեայ թագաւորաց մէջ ամենէն անաղնտը պիտի լինէի։ Բայց, բարեկամներ, ծն, երթանք, Գոնինկսպըրկ դնալու ուր եղնենք, և այս խօսքին վերջ տանք։

Ռօպէն Հուտ ապահովցուց զամէնքն որ իրենց բռնելիք Ճամբուն վրայ իր մարդիկներէն խումբ մը ղրկած է, որոնք անտարակոյս Երևան պիտի հանեն և յայտնեն եթէ պաղտնի դարան մը կայ. և թէ անկասկած էր որ Ճամբան անվտանգ պիտի ընեն, կամ, եթէ վտանգ կայ, ժամանակին աղդարարութիւն ստանալով կարող պիտի լինին նահանջել և գունդ մ՝աղեղնաւորներու վրայ կռթնիլ, որոց հետ ինքն հեռուէն թագաւորին հետևելու կ՝մտադրէր։

Թագաւորն իր ապահովութեան համար Ռօպէնի առած այս խոհական զգուշութիւնները լսելով՝ սիրտը շարժեցաւ և վտարակաց պարապ չլսին անմեղ խաբէութեան վրայ զգացած թեթև տրտմութիւնն իսկ փարատեց. վերստին իր ձեռքը կարկառեց Ռօպէն Հուտի, ապահովցոյց որ կատարեալ ներողութիւն կ՝շնորհէ անոր և ապագայ արտօնութիւններ, որ նպատակ պիտի ունենան անտառային բուռն օրէնքը մեղմել, որով շատ մը անկլիացի գեղականներ ապստամբելու սպիսպուեր էին։ Բայց Ռիչարտի պատուական խորհուրդներն իր տարաժամ մահուամբն՝ ի դերև ելան, և Անտառաց Գաշինքն ճօհն թագաւորին ձեռքէն խլեցին միայն, երբ իր դիւցազնական եղբօրը յաջորդեց . . . ։ Վտարակին կարծիքը ճշմարիտ ելաւ. և թագաւորն՝ Իվանհոէի, Կիւրթի և Վամպայի ուղեկցութեամբ՝ անարգել հասաւ Գոնինկսպըրկի դղեկին առջև՝ երբ արևը տակաւին հորիզոնին վրայ էր։

Անկլիոյ մէջ այս սաքսոնեան հին բերդին մօտ գտնուած բնական տեսարաններուն պէս դեղեցիկ կամ հրապուրելի տեսարան քիչ կայ։ Մեղմ և հեզասահ Տօն գետն ամփիթատրոնի մը մէջէն կ՝հոսի, ուր մշակեալ հողեր անտառուտ վայրերու հետ կ՝խառնուին, և բլրի մը վրայ, որ դեռին եզերքէն վեր կ՝ելնէ, և պատերով ու փոսերով պաշտպանուած է, հին դղեակը կ՝բարձրանայ։ Այս դղեակն՝ ինչպէս որ անունէն կ՝իմացուի, աշխարհակալութենէ առաջ՝ Անկլիոյ թագաւորներու մէկ բնակարանն էր։ Հաւանօրէն արտաքին պատերը նօրմանները շինել տուած լինին, սակայն ներքին աշտարակը հնութեան նշանները

կ'կրէ։ Այս աշտարակը բարձրութեան մը վրայ՝ ներքին դաւթին մէկ անկիւնը շինուած է, և շուրջ քսան հինգ ոտք տրամագիծ ունեցող շրջանակ մը կ'յօրինէ։ Պատերն ահագին թանձրութիւն մ'ունին և բռնուած են վեց խոշոր աղեղնաձև յենարաններով որ շրջանակէն դուրս կ'ժայթքին և աշտարակին կողերուն վրայ կ'կոթնին անոր ամրութիւն կամ նեցուկ տալու համար։ Այս ամրակուռ յենարաններն հաստատուն են երբ հիմունքն 'ի վեր կ'ելնեն և բաւական կ'բարձրանան, սակայն կատարին կողմը զոդաւոր կ'դառնան և տեսակ մը փոքր աշտարակներու կ'հասնին որ նոյն իսկ ներքին բերդին հետ հաղորդակցութիւն ունին։ Այս ստուար շէնքն՝ իր այլանդակ մասերով՝ 'ի հեռուստ այնպիսի տեսք մ'ունի որ ոչ միայն նկարագեղ տեսարաններու սիրահար մարդոց, այլև հետազննին հնագիտին աչաց համար դղեկին ներքին կողմը հետաքրքրաշարժ է, ըստ որում իր երևակայութեամբը կրնայ Եօթնապետութեան ժամանակները թռիլ։ Դղեկին մօտ հողաբլուր մը կայ՝ որու համար կ'ըսեն թէ հռչակաւոր Հէնկիստի գերեզմանն է և շատ հետաքրքրական և հին յիշակերտներ կ'տեսնուին նաև մօտակայ գերեզմանատան մէջ։

Երբ Առիւծասիրտ Ռիչարտ և իր հետևակներն՝ այս կոշտ այլ ահարկու շէնքին մօտեցան, ինչպէս այժմ՝ արտաքին ամրոցներով շրջապատուած չէր։ Սաքսոն Ճարտարապետն իր արհեստին բոլոր հնարքը գործածեր էր ներքին բերդն անառիկ գործելու և շուրջն ուրիշ պատնէշ չունէր բայց եթէ կոշտաբար շինուած քանի մը պատուարներ։

Աշտարակին ծայրը տատանող ահագին սև դրօշակէ մը կ'իմացուէր որ սոյն դղեկին վերջին տիրոջ յուղարկաւորութեան հանդէսը պիտի կատարէին։ Այս դրօշակը հանդուցելոյն ծննդեան և աստիճանին նշանը չէր կրեր, վասն զի՝ նոյն իսկ նորման ասպետներու մէջ անդամ զինադրոշմները նորութիւն մ'էին տակաւին, իսկ սաքսոնները բոլորովին անծանօթ։ Բայց մեծ դրան վրայ ուրիշ դրօշակ մը կար՝ որու վրայ կոշտաբար նկարուած ապիտակ ձիու մը դէմքը կ'տեսնուէր, և այս էր Հէնկիստի և իր սաքսոն մարտիկներու քաջածանօթ նշանակը։

Դղեկին չորս կողմը խառն ու շփոթ շարժում և աղմուկ կար. վասն զի այսպիսի դամբանական խնջոյքներ ընդհանուր և շռայլ հիւրընկալութեան առիթներ էին, որու հրաւիրուած էին ոչ միայն հանդուցելոյն հեռաւոր ազգականները, այլ որ և է անցորդներ։ Վախճանեալ Աթէլստէյնի հարստութիւնն ու աստիճանը սոյն տօնութիւնները կէս առ կէս պահելու ստիպեր էին։

Ուստի բազմաթիւ մարդիկ կ'եկնէին և կ'ինջնէին այն բլրէն որու վրայ շինուած էր դղեակը. և երբ թագաւորն ու իր մարդիկն արտաքին պատուարին բաց և անպաշտպան դռներէն ներս մտան, իրենց աչաց այնպիսի տեսարան մը ներկայացաւ որ դժուարին էր սոյն խնջոյից պատճառին հետ համաձայնել։ Ասդին՝ խոհակերներ արիւն քիրտ կը թափէին որ ահագին կովեր և դէր ոչխարներ խորովեն, անդին՝ գարեջրի տակառներ կ'բանային որպէս զի ըստ հաճոյս ով որ ներս գայ խմէ։ Ամէն տեսակ մարդկան խմբակներ կերակուրը կ'լափէին և ապատորէն իրենց ուզածին չափ ըմպելի կ'կլլէին։ Այն տեղ մերկ սաքսօն ստրուկն իր կիսամեայ անօթութիւնն ու ծարաւը կ'անցընէր մէկ օրուան որկրամոլութեամբ և գինովութեամբ։ Յոյր ոստանիկն ու մեծայոյտ վաճառականն ամենէն փափուկ պատառն ախորժանօք կ'ուտէր, կամ հետաքրքրութեամբ կ'քննադատէր գարեջրին տեսակն ու գարեջրի վաճառականին վարպետութիւնը։ Սակաւաթիւ նորման ազնուականներ ևս կային անդ, որոնք դիւրաւ կ'ճանչցուէին իրենց գերծուած կզակէն և կարճ վերարկուէն, որոնք իրարու մօտ մեկուսի կեցեր էին և արհամարհ աչօք կ'գիտէին այս հանդէսը, թէև առատօրէն գրուած պատուական կերակուրներ ուտելու կ'հաճէին։

Աւելորդ է ըսել թէ նոյն վայրը հարիւրաւոր մուրացկաններ ալ կային, նոյնպէս Պալեստինէն դարձած թափառական զինուորներ, գէթ իրենք այսպէս կ'ըսէին։ Շրջուն փերեզակներ իրենց ապրանքը կ'ցուցընէին, ուղեւոր գործաւորներ գործ կ'փնտռէին, դատարկապորտ ուխտաւորներ, լեռնական քահանաներ, սաքսօն վիպասաններ և վէլշցի քերթողներ աղօթներ կ'մրմռային և իրենց սանդուռէն, կիթառէն և ջութակէն անախորժ ձայներ կ'հանէին։ Մին՝ Ամէլսաէյնի գովեստը կ'երգէր տխրագին ներբող մ'ըսելով, ուրիշ մը՝ սաքսօն լեզուաւ՝ ազգաբանական քերթուած մը կ'նուագէր և անոր ազնիւ նախնեաց խորթ և անտաշ անունները կ'կրկնէր։ Այս ամբոխին մէջ միմոսներ և ձեռնածուներն ալ պակաս չէին, և այս սղալի ժամուն՝ բոլոր հանդիսականներն անոնց կ'նայէին առանց անոնց այս արհեստն անվայել կամ դժպատեհ սեպելու։ Իրաւի՝ սաքսօններու գաղափարներն՝ այսպիսի պարագաներու մէջ՝ որչափ բնական նոյնչափ կոշտ էին։ Եթէ վիշտը ծարաւի էր՝ խմելիք կար, եթէ սիրտը վշտաբեկ կ'ճնշուէր՝ նոյն տեղ խնդութեան, գէթ զուարճութեան միջոցներ կային։ Հանդիսականները սոյն միսիթարական նշաններէն սփոփելու չէին մերժեր, թէև մերթ ընդ մերթ մարդիկ՝ որպէս թէ սոյն գումարման բուն շարժառիթը յիշելով՝ միա-

ձայն ողբալու կ'սկսէին, մինչդեռ կիները՝ որ բաղմաթիւ էին, իրենց ձայնը բարձրացընելով՝ ողբ ու կոծ կ'արձակէին։

Գօնինկսալբրիկի դղեկին դաւթին մէջ այս այլանդակ տեսարանը կ'անցնէր՝ երբ Ռիչարտ և իր հետևորդները ներս մտան։ Մատակարարը չէր զիջաներ ստորին կարգի խումբերու անընդհատ ելքն ու մուտքը դիտելու, այլ միայն եթէ հարկ լինէր կարգ կանոն պահել տալ։ Սակայն թագաւորին և Իվանհօէի ազնիւ կերպարանն իր ուշադրութիւնը գրաւեց, նա մանաւանդ երբ նկատեց որ վերջնոյն դէմքն իրեն ընտանի կ'երևէր։ Ասկից զատ՝ երկու ասպետներու գալուստն, որոնք իրենց հագուստէն կ'մատնուէին, հաղուագիւտ բան մ'էր տաքսօնեան հանդիսի մը մէջ, և հետևապէս մեծ պատիւ մը կ'սեպուէր այս այցելութիւնը հանգուցելոյն և գերդաստանին համար։ Այս կարևոր անձը՝ սևեր հագուած և իր պաշտօնին սպիտակ ցուպը ձեռքը բռնած այցելուներու բաղմութեան մէջէն Ճամբայ մը բացաւ և Ռիչարտն ու Իվանհօէն մինչև աշտարակին մուտքն առաջնորդեց։ Կիւրթ և Վամբա բակին մէջ իսկոյն ծանօթներ գտան, չհամարձակեցան աւելի ևս առաջ գնալ և սպասեցին որ ներս կանչուին։

ԳԼՈՒԽ ԽԲ

Ցեռայ զանոնք որ Մարսէլօի մարմինը կ'պատանքէին։
Եւ կար անդանօր մի այնպիսի մեղեդի հանդիսաւոր,
Երգերու, արտասուքի և ողբ ու լալիւնի —
Որպէս պառաւ կիներ աշխարհէն երբ մեռելի մօտ,
Եւ բոլոր գիշեր անդուլ հսկելով կ'անցնեն ժամեր։

Հին խաղ։

Գօնինկսալբրիկի մեծ աշտարակը մտնելու Ճամբան շատ նշանաւոր է և իր շինութեան նախկին ժամանակներու անոպայ պարզութեան գրոշմը կ'կրէ։ Աստիճաններու շարք մը, այնքան խոր և նեղ որ գրեթէ սեպաձև կ'երևի, աշտարակին հարաւային կողմը գտնուող ցած դրան մը կը տանի, ուսկից յանդուգն հնասէրը դեռ ևս կարող է, կամ պէթ քանի մը տարի առաջ կարող էր, փոքրիկ սանդղի մը հասնիլ աշտարակին մեծ պատին վրայ բացուած, որ շէնքին երրորդ դատիկոնը կ'առաջնորդէ։ Երկու ստորին դատիկոնները նկուղներ կամ կամարներ են, որ ոչ օդ ոչ

լոյս կ՚ընդունին, բայց՝ ի քառակուսի ծակէ մ՚որ երրորդ գատիկոնին վրայ կ՚տեսնուի, որու հետ կ՚երևի թէ հաղորդակցութիւն ունի ելնարանի մը միջոցաւ։ Աշտարակին վերնագոյն սենեակներն ելնելու համար, որ ընդ ամէնը չորս գատիկոն ունէր, արտաքին կամարակալներու մէջ շինուած սանդուղներ կային։

Ահա այս դժուարին և կնճռոտ ճամբէն էր որ Ռիչարտ բարի թագաւորը՝ իր հաւատարիմ Իվանհոէի ընկերութեամբ երրորդ գատիկոնը բոլորովին բռնող բոլորակ սենեկէն ներս մտցուցին։ Ալիքիտ այս ելքին դժուարութենէն ժամանակ գտաւ իր դէմքը վերարկուովը ծածկելու, և այս միջոցը գործածեց որ հօրը չյայտնուի մինչև որ թագաւորն իրեն նշան չընէ երևան ելնելու։ Այն սենեկին մէջ, կաղնիէ մեծ սեղանի մը բոլորը նստած էին մօտակայ գաւառներէն եկող սաքսոն գերդաստաններու ամենէն երևելի ներկայացուցիչները։ Ամէնքը ծերունի, դէթ արբուն մարդիկ էին, վասն զի նոր սերունդը, ՝ի մեծ դժգոհութիւն հիներուն, Իվանհոէին պէս՝ տապալեր էին շատ մը պատնէշներ՝ որ կէս դարէ վեր՝ յաղթողնորմաններու յաղթեալ սաքսոններէն կ՚զատէին։ Այս պատկառելի մարդոց ակնկոր և վշտահար նայուածքը, իրենց լռութիւնն և սպալի դիրքը նշանաւոր հակապատկեր մը կ՚ընծայէին դղեկէն դուրս գտնուող մարդոց խնդութեան հետ։ Իրենց ալեխառն մազերը, իրենց երկար մօրուքը, նոյնպէս իրենց հին պատմուճանն և թոյլ սև վերարկուն շատ կ՚յարմարէին իրենց նստած սենեկին եղական և անտաշ ձևին հետ, և անոնց Վոտէնի հին երկրպագուներուն խումբի երևոյթը կ՚տային, որպէս թէ իրենց ազգային փառքն ողբալու համար վերածներ էին։ Թէև Սէարիկ իր քաղաքացիներուն հաւասար կարգը նստեր էր, սակայն՝ ամենուն հաւանութեամբ՝ ժողովին իբրև նախագահը կ՚գործէր։ Երբ Ռիչարտ ներս մտաւ (որ իրեն ծանօթ էր միայն իբրև երկաթէ Կղպակի ասպետ) Սէարիկ ծանրօրէն ոտք ելաւ, և անոր բարև տուաւ սովորական waes hael ըսելով, միանգամայն կոյժ մը մինչև գլուխը տանելով։ Թագաւորն՝ որ անվարժ չէր անկլիացի հպատակացը սովորութեանց, փոխադարձ բարև տուաւ drink hael սովորական խօսքն արտասանելով, և մատուակին կողմէն իրեն տրուած բաժակն առաւ։ Մի և նոյն մարդավարական մաղթանքն եղաւ նաև Իվանհոէին, որ փոխադարձը մատոյց իր հօրը լռութեամբ, և որպէս զի իր ձայնէն չմատնուի՝ փոխանակ խօսելու՝ գլուխը ծռեց։ Երբ այս նախաբան արարողութիւնը լմընցաւ, Սէարիկ ոտք ելաւ, և ձեռքը Ռիչարտի տալով՝ փոքրիկ և կոշտ մատուռ մը տարաւ որ կեր-

պով մը արտաքին կամարակալին մէկուն մէջ փորուած էր։ Որովհետև ուրիշ բացուածք չկար բայց միայն նեղ լուսամուտ մը, այս վայրը բոլորովին 'ի մթան պիտի մնար եթէ երկու կանթեղ կամ ջահ չվառէին, որոց կարմրուն և ծխոտ լոյսէն կ'երևէին կամարաձև ձեղունն, մերկ պատերը, քարաշէն խորանն և նոյն նիւթէն անտաշ խաչը։

Այս խորանին առջև դադաղը դրուած էր, և սոյն դադաղին ամէն մէկ կողմն երեք քահանայ ծունր կրկներ էին, և վարդարան քաշելով արտաքին ջերմեռանդութեան ամէն նշաններով իրենց աղօթքը կը մրմնջէին։ Այս պաշտաման համար սուրբ Էտմոնդի վանուց փառաւոր պարկև մը արուեր էր հանգուցեալին մօրը կողմէ, և որպէս զի պաշտօնը շքեղօրէն կատարուի, բոլոր վանականք, կաղ լուսարարէն զատ, Գոնինկսբրկ եկեր էին։ Վեց կրօնաւոր Ամէլստէյնի դադաղին մօտ շարունակ վերջին արարողութիւնները կատարելու ատեն, միւսները դղեկին մէջ տեղի ունեցած զուարճութեանց և խնջոյից մասնակից լինելու չէին դանդաղեր։ Մինչդեռ այս բարեպաշտական կոչումն և պահպանութիւնը կ'կատարէին՝ բարի վանականները յատկապէս ուշադիր էին պահ մ'իրենց ժամերգութիւնը չընդհատել, առ ահի որ Զէրնպօք, սաքսօնեան հին սադանը, Ամէլստէյնի դիակին վրայ իր ճիրանները չդնէ։ Նոյնպէս հոգ կ'տանէին որ անտուրբ աշխարհական մը դադաղին ծածկոյթին չդպչի, դադաղ մ'որ սուրբ Էտմոնդի յուղարկաւորութեան գործածուած լինելով նուիրական կ'սեպուէր . . . ։ Ռիչարտ և Վիլֆրիտ մեռելի սենեակին երթալու համար սաքսօն Սէտրիկին ետեւէն գացին, որ հանդիսաւոր կերպով Ամէլսթէյնի դիակը ցոյց տալուն՝ երկու հիւրերը խաչ հանեցին և հանգուցեալին հոգւոյն համար կարճ աղօթք մ'ըրին։

Այս բարեպաշտական գործը կատարելէն ետև՝ Սէտրիկ վերատին նշան ըրաւ անոնց որ իրեն հետևին, և անշշուկ քայլով քանի մ'աստիճանէ վեր ելնելէ ետև՝ մեծ ղդուշութեամբ մատրան պատկից փոքրիկ աղօթարանի մը դուռը բացաւ։ Շուրջ ութ քառակուսի ոտք տարածութիւն ունէր, և մատրան պէս հատ պատին մէջ շինուած էր։ Տեսակ մը խիստ նեղ լուսամուտ մ'որ այս աղօթարանը կ'լուսաւորէր և ներքուստ կ'լայնար, մարը մնող արևուն նշոյլները կ'ընդունէր նոյն պահուն, և երևան կ'հանէր աղնուագէմ կին մը, որու կերպարանը վաղեմի փառաւորութեան մը նշանները կ'կրէր։ Իր սուգի երկայն շրջազգեստն և ծփուն սև քողն իր կաշին սպիտակութեան և դեղձան գիսակներուն աւելի փայլ կ'ընծայէին, որոնք ժամանակէն ոչ անօրէր

և ոչ Ճերմկեր էին։ Իր կերպարանքը կ'յայտնէր խորին տրտմութիւն և համբերատար ջերմեռանդութիւն։ Իր առջևը՝ քարէ սեղանի մը վրայ փղոսկրեայ խաչ մը կար, ատոր մօտ դրուած էր խորհրդատետր մը՝ որու երեսները պերճօրէն զունաւորուած, ծայրերն ոսկի Ճարմանդով և նոյն թանկագին մետաղէ դրուագներով զարդարուն էին։

— Ազնիւ էտիթ — ըսաւ Սէտրիկ՝ պահ մը լուռ կենալէն ետև, որպէս թէ Ռիչարտի և Ալիքֆրիտի ժամանակ տալ կ'ուզէին որ դղեկին տիրուհին տեսնեն — ատոնք ընտիր օտարականներ են որ ձեր վշտաց մասնակից լինելու եկած են։ Եւ այս անձը՝ մասնաւորապէս՝ այն արիասիրտ ասպետն է որ այնքան քաջութեամբ կռուեցաւ մեր այսօրուան ողբացած անձին ազատութեան համար։

— Իր քաջութիւնն իմ շնորհակալութեան արժանի է — պատասխանեց տիկինը — թէև Աստուծոյ կամքն էր որ անարդիւն մնայ։ Նոյնպէս շնորհակալ եմ և իր ընկերին մարդասիրութեան համար որ գիրենք այս տեղ Ատլին այրի կնոջ, Ամէլստէյնի մօրը քով առաջնորդեց այս տրտմութեան և ողբոց ժամանակ։ Բարեսիրտ ազգականս, ձեր խնամոց կ'յանձնեմ զանոնք, վստահ լինելով որ այս տխուր դղեկին մէջ պէտք եղած ասպնջականութիւնը պիտի գտնեն։

Հիւրերը խորին խոնարհութիւն մ'ըրին լալագին մօր առջև և իրենց հիւրասէր առաջնորդին հետ հեռացան։

Ուրիշ բոլորակ սանդուղէ մ'իրենց առաջուց մտած սենեկին մեծութեամբ սրահ մը մտան որ վերին գոտիկոնն էր։ Դուռը բացուելէն առաջ՝ նոյն սենեկէն ծանր և մելամաղձիկ երգի մը մրմունջը լսեցին։ Երբ ներս մտան՝ սաքսօնեան տոհմէ քսանի չափ ազնիւ տիկիններ և օրիորդներ տեսան։ Չորս օրիորդներ՝ որոց գլուխն էր Ռովէնա, հանդուցելոյն հոգւոյն համար շարական մ'երգեցին, որու միայն երկու երեք տուները կարող եղանք գտնելու։

Հող ենք և 'ի հող
Տի դառնանք անշուշտ.
Քու ձև կորնչական
Առիր մարդ հողածին.
Որդոց տի լինիս կուր
Ապականն յապական։
Ուղիներէն անյայտ
Քու հոգիդ սրայաւ,
Խնդրելու վայր վշտաց,
Ուր տանջանք անհնարին
Տի սրբեն քո արատ
Ատի յանցանացդ։
Ի վայր այն տիրապին,
Թող շնորհիւ Տիրամօր,
Կարձանայ քո դաղար,
Մինչ զի գութ ու աղօթք
Եւ սաղմոսք սրբանուէր
Ազատեն զերիդ սպառ։

Մինչդեռ Նորատի օրիորդաց դատն այս սպալի երդը կ՚երդէր ծանր ու մելամաղձիկ ձայնով, միւս կիներն երկու մաս բաժնուած՝ մին՝ իր բոլոր ճաշակն ու ճարտարութիւնը թափելով Ամէլատէնի դատաղը ծածկելու սահմանուած սև ատի մը արհնաղարդ գործելու կ՚զբաղէր, և միւս մասը՝ իր առջև դրուած զամբիւղներէ ծաղիկներ քաղելով՝ նոյն սգալի նպատակին համար պսակներ կ՚յօրինէր։ Նորատի աղջիկներու ընթացքն եթէ ոչ խորին արտմութեան, գէթ վայելչութեան նշաններն ունէր. բայց երբ ատեն ատեն իրենց կողմէ մրմունջմը լսուէր կամ ժպիտ մ՚երևէր, ամենէն խիստ սիկիններէ սատա կ՚ընդունէին. իսկ ատիս անդին կ՚սեանուէր օրիորդ մ՚որ աւելի զբաղած էր քննելու թէ արդեօք իր սև լաթերն իրեն կ՚վայլէ՞ն, քան թէ այն սխտոր արարողութիւնն որու համար կ՚պատրաստուէին։ Եթէ հարկ է ճշմարտութիւնը խոստովանիլ, պարտինք ըսել թէ աղջկանց այս խնդալու հակումը չպակսեցաւ ամենեին երկու օտար ասպետներու դալուն, զարմանք մ՚որ ամենուն աչքը վեր վերցընել, գաղան ու գողի նայիլ և փսփսալ տուաւ։ Բոլէնա միայն՝ որ հպարտութենէն մնապարծ չէր, շնորհալի մարդավարութեամբ բարևեց իր ազատարարը։ Իր կերպարանն ծանր էր առանց չափազանց արտմութեան, և կասկածելի էր թէ արդեօք Իվանհոէի վրայ մնմնուքն և իր բաղդին անատուութիւնն աւելի իրեն ծանր վարմունք մը կ՚տային քան թէ իր ազգականին մահը։

Իսկ Սէտրիկ, որ՝ ինչպէս արդէն ըսինք՝ շատ հեռատես չէր այսպիսի պարագայից մէջ, իր սանին տրտմութիւնն այնքան աւելի ծանր դատաւ միւս օրիորդաց տրտմութենէն, որ յարմար դատեց ըսելու թէ՝ «Բոլէնա աղնիւ Ամէլատէնի նշանածն էր։» Ընթերցողը կրնայ երևակայել թէ՝ այս տեղեկութիւնն կրնար Գոնինկսբրիի տաւորներու վշտակից դանուելու համար Իվանհոէի տրամադրութիւնն աւելցընել։

Այսպէս Սէտրիկ հիւրերն այլև այլ սենեակներ տանելէն ետև, ուր Ամէլատէնի յուղարկաւորութեան հանդէսը կատարելու համար կերպ կերպ պատրաստութիւններ կ՚տեսնուէին, առաջնորդեց զանոնք փոքրիկ խուց մ՚որ, ինչպէս ինք յայտնեց, պատուաւոր հիւրերու սահմանուած էր միայն, որոնք հանդուցելոյն հետ սերտ յարաբերութիւն չունենալով թերևս չէին ուզեր միանալ այս տխուր դէպքէն ուղղակի զդացուած անձերու հետ։ Հաւատաց անոնց որ բան մը չպիտի պակսի իրենց հանգստութեան համար, և քաշուելու վրայ էր երբ Սև ասպետն անոր ձեռքէն բռնեց։

— Աղնիւ տանտէր, ներեցէք ինձ ձեր ուշն ածելու — ըսաւ նա —

որ երբ մենք վերջին անգամ մեկնեցանք, խօսք տուիք ինձ՝ ձեզ ըրած ծառայութեանս փոխարէն շնորհ մ՚ընել ինձ։

— Ազնիւ ասպետ — պատասխանեց Սէտրիկ — դեռ չյայտնած ձեր խնդիրը կատարած համարեցէք, սակայն այս տխուր ժամուս . . .։

— Ես ալ մոռացեր այդ բանը — ընդմիջեց թագաւորը — բայց ժամանակս սուղ է, և սակայն բարեպատեհ ժամ մը կ՚թուի ինձ որ, երբ ազնիւ Ամէլսաէյնի պերեզմանը պիտի դոցուի, անոր մէջ թաղենք նաև քանի մը նախապաշարումներ և կանխակալ կարծիքներ։

— Սև ասպետ — ըսաւ Սէտրիկ կարմրելով և ըստ կարգի թագաւորին խօսքն ընդհատելով — յուսամ որ խնդիրը չէ թէ ուրիշի այլ ձեզի կ՚պատկանի, վասն զի իմ տանս պատուոյն վերաբերող գործի մ՚անվայել է որ օտարական մը միջամտի։

— Ես ալ չեմ կամիր միջամտիլ — պատասխանեց թագաւորն անուշութեամբ — միայն թէ պէտք է ընդունիք թէ որքան համակրութիւն ունիմ ձեզի։ Մինչ յարդ՝ զիս իբրև Սև ասպետ ճանչցած էք, այժմ իբրև Ռիչարտ Բլանդաժնէդ ճանչցիր զիս։

— Անժուի՛ Ռիչարտը — գոչեց Սէտրիկ զարմանօք ընկրկելով։

— Ո՛չ, ազնիւ Սէտրիկ, Անկլիոյ թագաւոր Ռիչարտ, որու ջերմ փափաքը, որու ջերմաջերմ խնդիրն է իր որդիքն իրարու հետ կապուած տեսնել։ Լաւ ուրեմն, ազնիւ ազգապետ, միթէ քու թագաւորիդ առջև ծունր չպիտի կրկնես։

— Երբէք ծունր չեմ կրկնած նորմանի մ՚առջև — ըսաւ Սէտրիկ։

— Ուրեմն յարգանքդ՝ վերապահէ — ըսաւ թագաւորը — մինչև որ՝ի փորձ հաստատեմ թէ անոր արժանի եմ՝ հաւասարապէս պաշտպանելով նորման և անկլիացի հպատակներս։

— Իշխան — պատասխանեց Սէտրիկ — ես միշտ քու արիութիւնդ և արժէքդ յարգած եմ. գիտեմ նաև իրաւունքդ թագին՝ իբրև սերունդ Մարթիլտի, որ Էտկարտ Էթլինի եղբօրաղջիկն և Սկոտիոյ Մալքոմի դուստրն էր . . .։ Բայց Մաթիլտ՝ թէև արքայական տոհմէ, սաքսոնեան իշխանութեան ժառանգուհի չէր։

— Ես քեզի հետ իմ իրաւանցս վրայ վիճել չեմ կամիր աստանօր, ազնիւ ազգապետ — ըսաւ Ռիչարտ հանդարտութեամբ — բայց պիտի խնդրեմ որ բոլորտիքդ նայիս և տեսնես թէ ուրիշ իրաւունք մը պիտի գտնես իմինիս դէմ դնելու։

— Եւ միթէ այս խօսքերն ըսելու համար, իշխան, աստ եկար — ըսաւ Սէտրիկ։ — Եկար որ ազդ առնես ինձ իմ ցեղիս կործանումն,

սաքսօնեան թագաւորութեան յետին շառաւիղին վրայ դեռ ևս գերեզմանին քարը չդրուած — իր դէմքը կ՚մթանար այսպէս խօսելու ատեն։ — Այս մեծ յանդգնութիւն, մեծ ժպրհութիւն է քու կողմէդ։

— Այդպէս չէ, սուրբ խաչվկայ — պատասխանեց թագաւորը։ — Ես անկեղծ և ազատ վստահութեամբ խօսեցայ, ինչպէս որ ուղիղ մարդ մը պարտ է խօսիլ ուրիշի մը՝ առանց ամենաթեթև վտանգի։

— Դու իրաւունք ունիս, վեհափառ թագաւոր. վասն զի կ՚խոստովանիս որ դու թագաւոր ես և իմ տկար դիմադրութեանս չնայելով միշտ պիտի լինիս։ Զեմ իշխեր զայն արդիլելու համար միակ միջոցին դիմել, թէև այդ զօրաւոր կրդիւն իմ ձեռացս ներքև դրիր։

— Հիմակ իմ խնդրոյս դառնանք — ըսաւ թագաւորը — զայն կը պահանջեմ միշտ վստահութեամբ որպէս թէ իմ օրինաւոր վեհապետութիւնս ճանչելու մերժած չլինէիր։ Քեզնէ կ՚պահանջեմ իրրև իրաւքի տէր և պատուոյ մարդ սեպելով քեզ, և եթէ չես կամիր որ անհաստատիմ, ուխտադրուժ և վատանուն երևիս իմ առջև, կ՚պահանջեմ որ ներես։ Պիտի խոստովանիս որ այս հաշտութեան մէջ շահ մը ունիմ, այս է իմ բարեկամիս երջանկութիւնն և իմ հաւատարիմ ժողովրդեան մէջ երկպառակութեան դադարումը։

— Ուրեմն այս ընկերակիցդ է Ալիքիա Իվանոէն — հարցուց Սէտրիկ իր որդին ցոյց տալով։

— Հայր իմ, հայր իմ — ըսաւ Իվանոէ Սէտրիկին ոտքն ընկնելով. — շնորհէ ինձ ներողութիւնդ։

— Իմ ներողութիւնս ունիս, որդեակ իմ — վրայ բերաւ Սէտրիկ զանի վերցնելով։ — Հիրվարտի որդին իր խօսքը կ՚յարգէ, թէև այս խօսքը նօրմանի մը տուած լինի։ Բայց պէտք է որ քու անկլիացի նախնէացդ հազուստը վերստին հագնիս. չեմ ուզեր տեսնել վրադ կարճ վերարկու, զարդարուն գդակ, և ոչ այլանդակ փետուրներ իմ համեստ տան մէջ։ Այն որ կ՚ուզենաքի Սէտրիկի որդին լինիլ պէտք է որ անկլիացի նախնեացդը հաւատարիմ երևի։ Դու խօսիլ կամիս — յարեց նա խստութեամբ — և ես կ՚զուշակեմ ըսելիքդ։ Պէտք է որ օրիորդ Ռովէնան երկու տարի սուգ պահէ՝ի յիշատակ իր նշանածին։ Բոլոր մեր սաքսօն նախնիքը մեզ պիտի ուրանան եթէ ելնենք այժմէն կարգելու այն օրիորդն, մինչդեռ այն անձին գերեզմանն որու հետ պիտի ամուսնանար, այն որ այնչափ արժանի է իրեն թէ ծննդեան և թէ աղնուականութեան կողմէ, հազիւ թէ դոցուած է։ Ամէլստէյնի ուրուականն իր պատանքը պիտի մերկանար և մեր առջև պիտի երևէր իր յիշատակին լինելիք այսպիսի նախատինք մ՚արդիլելու համար

Այնպէս իմն կ՚երևէր որ Սէտրիկի խօսքն ուրուական մը կոչեցին-ված զի այն ինչ այս խօսքն արտասանեց որ դուռն ինքնին բացուեցաւ, և Ամէլսատէյն՝ գերեզմանական հագուստովը զարդարուած, անոնց առջև կանգուն կեցաւ՝ դունատ, դաժան և դժոխքէն ելնող մեռելի մը պէս։*

Այս երևոյթին տպաւորութիւնը ներկայ գտնուող անձերու վրայ ահարկու եղաւ։ Սէտրիկ սենեկին պատին ներածին չափ ետ ետ քաշուեցաւ լեղապատառ և անոր կռթնեցաւ իբրև մարդ մ՚որ չէ կարող ոտքի վրայ կենալ, և իր բարեկամին նայելով այնպիսի աչերով որ անթարթ կ՚երևէին և բերանով մը զոր գոցելու անկարող էր։ Իվանհէ խաչ հանեց, սաքսօն, լատին և նորման-գաղղիական լեզուաւ աղօթք ընելով՝ ինչպէս որ յուշը կ՚գար խառն՝ի խուռն, մինչդեռ Ռիչարտ հետզհետէ կ՚ըսէր լատին և գաղղիացի լեզուաւ. Benedicité! և կ՚երդնուր. Mort de ma vie!

Նոյն պահուն սանդղին ոտքը սոսկալի աղմուկ մը լսուեցաւ. ոմանք կ՚ըսէին. — Բռնեցէք մատնտու կրօնաւորները — այլք — Ետ ետ նկուղն իջեցուցէք — վերջապէս ուրիշներ — Բարձրաղոյն պարիսպներէն վար նետեցէք։

— Ցանուն Աստուծոյ — գոչեց Սէտրիկ խօսքն ուղղելով այն ստուերին որ իր մեռեալ բարեկամին ուրուականը կ՚երևէր։ — Եթէ մահկանացու ես՝ խօսէ, եթէ ոգի ես՝ ըսէ մեզ թէ ի՞նչ պատճառաւ մեզի նորէն այցի կ՚գաս. կենդանի կամ մեռած, ազնիւ Ամէլսատէյն, խօսէ Սէտրիկին, ի՞նչ կրնամ ընել հոգւոյդ հանգստութեան համար։

— Պիտի խօսիմ — ըսաւ ուրուականը — երբոր քիչ մը շունչ առնում և դու ալ ժամանակ տաս։ Եթէ կենդանի եմ, հարցընես դու. կենդանի եմ, այո, որչափ որ կարողէ լինիլ մարդ որ երեք օր, որ երեք գար կ՚երևին, չոր հացով ու ջրով ապրած է, այո, հացով ու ջրով միայն, Սէտրիկ, երկին և արքայութեան բոլոր սուրբերը վկայ. երեք ամեներկար օր կոկորդէս լաւագոյն կերակուր մ՚անցած չէ, և Աստուծոյ նախախնամութեան մէկ հրաշքն է որ ողջ մնալով ահա այժմ քեզի կ՚խօսիմ։

*Ամէլսատէյնի յարութիւնն՝ նոյն իսկ վիպական գործի մը մէջ, հաւանակաւ նութեան կանոնաց իրրև հակառակ դեպք ստէպ քննադատութեան առարկայ եղաւ։ Արդարև բուռն դեպք մ՚է օրու դիմելու ստիպուեցաւ հեղինակը՝ իր հրատարակչին և բարեկամին ազգու թախանձանաց զիջանելով, վասն զի չէր կրնար մխիթարուիլ նա Ամէլսատէյնի մահուան վրայ։ Վ. Ա

— Ինչպէս, ազնիւ Ամէլատէյն — գոչեց Սև ասպետը — Դօրգիլատրնի կուռին վերջերը տեսայ վայրագ տաճարականն որ քեզ տապալեց, և Զամպա, ինչպէս որ կարծեր էի, յայտնեց մեզ որ գանկէդ մինչև ակռաներդ ճեղքած է։

— Պարոն ասպետ, ծուռ տեսեր ես — վրայ բերաւ Ամէլատէյն — և Զամպա սուտ խօսեր է։ Իմ ակռաներս լաւ վիճակի մէջեն և պիտի տեսնես այժմ կերակուր ուտելու ատենս։ Սակայն ապաշնորհ էր և տաճարականն, որուն սուրը ձեռքին մէջ դարձաւ այնպէս որ սուրին տափակ կողմէն հարուած մը կերայ, և նոյն հարուածն ալ ընդհարի իմ մանկլաւուկս։ Եթէ պողպատէ սաղաւարտս ունենայի, փոյթ չպիտի ընէի, և անոր հարուած մը պիտի տայի որով նահանջելու ատեն չպիտի գտնէր, բայց իմ վիճակիս մէջ՝ գետինն ընկայ՝ արդարև շնչասպառ այլ ոչ վիրաւոր։ Ուրիշ մարտիկներ երկու կողմէն տապաստ ընկան և իմ վրայ Ջարդուեցան, այնպէս որ ինքզինքս դաղաղի մը մէջ գտայ (բարեբաղդաբար բաց էր) երբ աչքս բացի, և դաղաղն ալ սուրբ Էտմոնտի խորանին առջև գրուած էր։ Քանի մ՝անգամ բռնկաացի, հեծեցի, բոլորովին խելքս գլուխս եկաւ, և կ՝ուզէի ոտք ելնել, երբ լուսարարն և աբբան սարսափահար՝ աղմուկը լսելով վազեցին, անշուշտ գժդոհելով որ կենդանի գտան այն մարդն որուն ժառանգորդները լինիլ կ՝ուսային. զինի խնդրեցի, տուին ինձ, բայց անտարակոյս սաստիկ գեղած պիտի լինէր զինին, վասն զի առաջուանէ աւելի խորունկ քնացայ, և բաւական ժամեր անցնելէն ետև արթնցայ։ Այն ատեն իմ թևերս պատտած, ոտքերս այնչափ ուժով կապուած գտայ որ քանի մտածեմ դեռ ևս յօդուածներուս ցաւը կ՝զգամ։ Իմ գտնուած տեղս բոլորովին մութ էր, կարծեմ թէ իրենց անիծեալ վանքին ընդոանն էր, և անկից ելած հեղձուկ ու տամուկ հոտէն գուշակեցի որ գերեզմանատուն մի էր։ Անցած գարձածին վրայ շփոթ գաղափարներ ունէի, երբ իմ ընդանիս դուռը կրչեց և երկու անգամ վանականներ ներս մտան։ Ամանք կ՝ուզէին համոզել զիս թէ քաւարանն եմ, բայց քաջ ճանչցի վանահօր թասուն և նուաղուն ձայնը։ Սուրբ Երեմիա, այն ձայնը չէր որով երբեմն երէի երկրորդ կարգ մը կ՝խնդրէր. շունն ինձի սեղանակից եղեր էր Ծնունդէն մինչև թագաւորաց տօնը։

— Համբերէ, ազնիւ Ամէլատէյն — ըսաւ թագաւորը — շունչ առ, կամաց կամաց պատմէ պատմութիւնդ. Ճշմարիտն, այսպիսի պատմութիւն մը վիպասանութեան չափ հետաքրքրաշարժ է։

— Այո, բայց կ՝երդնում Պրոմհօմի խաչափայտին վրայ, որ վիպա-

կան բան մը չկայ գործին մէջ — ըսաւ Ամէլսաէն։ Գարիէ նկատակ մը և թակոյկ մը ջուր, ահա ասոնք միայն տուին ինձ անպտամ գաւաճանները, որ հարստացած են իմ հօրս և իմ ձեռօքս, մինչդեռ իրենց միակ ապրուստն էր ճարսի շերտեր և քանի մը գրիւ ցորեն զոր անդադար շողոքորթութիւններ ընելով խեղճ տարուկներէն կ՚ստանային՝ իրենց աղօթից փոխարէն։ Ինչ անշահ և ապաշնորհ իժերու որջ մ՚էր այն, ինձի պէս տիրոջմը գարիէ հաց և հորի ջուր տան։ Իրենց աղտեղի որջին մէջ պիտի ծխտեմ զանոնք, եթէ բանադրուիմ անգամ։

— Բայց, յանուն մեր Տիրամօր, ազնիւ Ամէլսաէյն — ըսաւ Սէտրիկ՝ իր բարեկամին ձեռքը բռնելով — ինչպէս այն մեծ վտանգէն ազատեցար։ Արդեօք իրենց սիրտը կակղեցա՞ւ։

— Իրենց սիրտը կակղի՞— կրկնեց Ամէլսաէյն։ — Մինթէ ժայռերն արևէն կ՚հալի՞ն։ Տակաւին նոյն վայրը պիտի մնայի, եթէ վանքին մէջ շփոթութիւն մը չծագէր, երբ թափօրով գէպ՝ ի այս գղեակը կ՚գիմեին, ինչպէս որ իմացայ, որպէս զի իմ յուղարկաւորութեանս ճաշն ուտեն, թէև քաջգիտէին թէ ուր և ինչպէս ողջողջթաղուած էի։ Եւ ահա այս թափօրին պատճառաւ վանականներն իրենց որջէն դուրս եկան։ Լսեցի անոնց երդած մեռելոյ աղօթքը. չէին մտածեր բնաւ որ այն աղօթքը կ՚երդէին իմ հոգւոյս փրկութեան համար անոնք որ այսպէս մարմնոյս սովամահ կ՚թողուին։ Սակայն մեկնեցան անոնք, և ես, զարմանք չեն որ ընդ երկար սպասեցի որ ինձ կերակուր բերեն. կաղ լուսարարն իր սրկորը պարարելու համար այնքան զբաղած էր որ իմս մոռէն չանցուց։ Վերջապէս՝ վար իջաւ նա երերուն քայլով, և իր վրայէն գինիի զօրաւոր հոտ մը կ՚բուրէր։ Աղտոր կեր ու խումն իր սիրան ամոքեր էր, վասն զի քաքարի աղտոր պատառ մը և պղտիկ շիշ մը գինի թողուց ինձ, իմ սովորական կերակուրիս տեղ։ Ուստի կերայ, և ոյժ առի, և ապա, իմ լաւ բաղդէս, լուսարարն՝ որ շատ արբած լինելուն չէր կրնար դռնապահի պաշտօնը լաւ վարել, դուռը կղպեց նիզը դուրս թողլով, այնպէս որ կիսբաց մնաց։ Լոյսը, անուշդը, գինին ելեակայութիւնս բորբոքեցին։ Այն օրէն որու շղթաներս կապուած էին, իմ և կամ անպտամ վանահօր կարծածէն աւելի ժանգոտեր էր։ Երկաթն անպտամ՝ այն գժոխային ընդանին խոնաւութեան չէր կարող դիմանալ։

— Շունչառ, ազնիւ Ամէլսաէյն — ըսաւ Բիչարա — այդ սոսկալի պատմութիւնդ շարունակելէն առաջ քիչ մ՚ինքզինքդ կաղդուրէ։

— Կաղդուրեմ՞— ըսաւ Ամէլսաէյն — այսօր հինգ անպամ՝ մեռնդ

ռուի. և սակայն սա համեղ ապուխտէն կտոր մը չպիտի մերժեմ. կ'աղաչեմ, քաջ ասպետ, դու ալ բաժակ մը պինի շնորհէիր ինձ։

Հիւրերը՝ թէև տակաւին ապուշ կրթած էին՝ յարուցեալ տանտիրոջ խնդիրը կատարեցին, որ այսպէս շարունակեց իր պատմութիւնը։ Իրաւ է որ այժմ իր ունկնդիրներն աւելի շատուր էին քան թէ երբ սկսաւ, վասն զի Էտիթ՝ իր մայրն՝ դղեկին մէջ այլ և այլ կարգադրութեանց համար պէտք եղած հրամանները տալէն ետև՝ մինչև օտարականաց յատկացեալ սենեակը հետեր էր դերեզմանէն ելնող Ամէլատէյնի, իրեն ուղեկից ունենալով այնչափ այր ու կին հիւրեր որչափ որ կարելի էր պարունակել փոքրիկ սենեկին մէջ, մինչդեռ ուրիշներ՝ սանդուղներուն վրայ խռնելով՝ պատմութիւնն կիսկատար լսեր էին և աւելի անկատար կերպով կ'աւանդէին իրենցմէ վար գտնուող անձերուն, որ դարձեալ դուրսն եղող ռամկին կ'հաղորդէին նախատիպ պատմութենէ հիմնովին տարբեր ոճով մը։ Սակայն Ամէլատէյն հետևեալ կերպով շարունակեց իր ազատութեան պատմութիւնը.

— Երբ շղթայիս օղակէն պրծայ, սանդղէն վեր ելայ այնպէս արագ որչափ որ կարող է շղթայով բեռնաւորուած և երեք օրուան ծոմապահութենէ տկարացած մարդ մը. բաւական ատեն ապրիս անդին խարխսբելէն ետև՝ վերջապէս զուարթ նուագի մը ձայնը լսեցի և սենեակ մը դիմեցի ուր արժանընտիր լուսարարը, ներեցէք ինձ ըսելու, սատանային պատարագ կ'կատարէր գաժան դէմքով, լայն ուսերով և մինչ-բարդոյն զգեստ ու կնոջ կրող մեծ վանականի մը հետ, որ աւելի աւազակի կերպարան ունէր քան թէ եկեղեցականի։ Անոնց վրայ յարձակեցայ, և իմ դերեզմանական հագուստս, նոյնպէս շղթաներուս շաչիւնն ինձ ուրիշ քան այս երկրի բնակչի կերպարանը կ'տային։ Երկուքն ալ ապուշ մնացին. բայց երբ լուսարարը թաւալգլոր բերի բռնցի, մուսը, իր գինիի ընկերը, հաստ գաւազանի հարուած մ'ուղղեց ինձ։

— Կամի մը փրկանքի վրայ դրաւ կ'դնեմ — գոչեց Ռիչարտ՝ Իվանհոէի կողմը դառնալով — որ այն մարդը մեր Գրք եղբայրը պիտի չինի։

— Կրողը չինի կամ ուրիշ մը, փոյթ չէ — բաւ Ամէլատէյն։ — Բարեբաղդօրէն չկրցաւ լաւ նշան առնուլ, և երբ առնը մօտեցայ որ հետը կռուիմ՝ շուտ մը կծիկը դրաւ։ Ես ալ իմ ոտքս ազատութիւն տուտ փոխնցի շղթայիս բանալիով, որ այլոց հետ լուսարարին գօտիէն կախուած էր, և միտք բրի ան չարտպրծին դրտ իր պատուել բանալիներուն խուրձին, երբ կատր մը քաջալի, և փոքրիկ շիշ մը

գինիի յիշատակն, որով իմ գերութիւնս սփոփեր էր, իմ գութս շարժեց, ուստի մինակ քանի մ՝ուժգին կիցեր տալով զանի գեղինը տապալեցի. և երկու պատկառելի վանականաց ինջոյքը կաղմող ճաշէն կատր մը միս և շիշ մը գինի շուտ մը ճաշակելէն ետև՝ ախոռը վազեցի և իմ յատուկ երիվարս գտայ, որ անտարակոյս վանահօր գործածութեան համար մէկդի դրուած էր։ Ցարելի եղածին չափ երիվարը վազցնելով աստ հասայ, և ամէն մարդ՝ քանի կ՝յառաջանայի, արտորնօք խոյս կ՝տայէն, կարծելով թէ ուրուական մ՝եմ, մանաւանդ սա պատճառաւ որ չ՝յայտնուելու համար գէմքս կիսոմին ծածկեր էի պատանքով։ Իմ գրեակս մանելու չպիտի կարենայի անշուշտ եթէ գիս ճեռնածուին մէկ ընկերը չտեսէին, որ մեծ դատիթ կ՝գտնոյ և իրենց ակրոջը յարգարարութեան համար գումարուած մարդիկը գտարձցնելու հնարը գիս է։ Տեսուչը կարծեց թէ իմ հարուստս ճեռնածուին խորին կ՝վերարերի, այսպէս կարող եղայ ներս մնալ. և հարկ ժամանակ ունեցայ ինքզինքս մօտս յայտնելու և ձեզ, ազնիւ բարեկամք իմ, գտանելու եկնելէն առաջ, պատուս մը բան ուսելու։

— Եւ գիս կ՝գտնես — ըսաւ Սէարիկ — կաղմ և պատրաստ պատուոյ և ապատութեան խորհուրդները վերսանին սկսելու։ Ահա կ՝ըսեմ քեզ, երբէք սաքսօնեան ազնիւ ազգին ազատութեան աւելի նպաստաւոր արև մը չպիտի ծագի։

— Ազատութեան վրայ մի՛ խօսիր ինձ — պատասխանեց Ամէրտէն։ Հէրիք է որ ես ինքզինքս ազատեցի. ես աւելի սրամտիր եմ անգամ վանահայրը պատժելու։ Սա Գոնինկսպրրիի գղեկին դատարանը պիտի կախեմ զանի իր շուրջառով և պատուճանով, և եթէ իր մեծ փորը նեղ սանդուղներէն անցնելու դժուարին լինի, ճախարակի մը միջոցաւ զանի գրսէն պիտի քաշել տամ։

— Բայց, որդեակ իմ — ըսաւ Էսիթ — չես մտածեր որ նուիրապետին կարդ ունի։

— Դու ալ մտածէ, մայր իմ, որ երեք օր ծոմ պահեցի — պատասխանեց Ամէլատէն։ — Ո՛ուզեմ որ ամենուն արիւնը խմեմ։ Գրօն-սը — Պէօ աւելի թեթև յանցանքի մը համար այրեցաւ, վասն զի իր գերիներուն աղտոր սեղան կ՝պատրաստէր, մինակ իր վերջին թանին մէջ քիչ մը շատ խստոր կ՝գտնէր։ Բայց այս մեր կեղծաւոր, ապերախտ ստրուկներն, որ ստէպ իմ սեղանիս ինքնակոչ շողոմարար հիւրերն էին, որ ինձի ոչ թան տուին և ոչ խստոր, պիտի մեռնին, Հէնկիստի հոգւոյն վրայ կ՝երդնում։

— Բայց Պապն ինչ պիտի ըսէ, ազնիւ բարեկամս — հարցուց Սէտրիկ։

— Ոչ Պապ ոչ սատանայ մարիկ պիտի ընեմ — պատասխանեց Ամէլստէին — պիտի ապահովեմ զանոնք. խօսքը կտրենք։ Եթէ աշխարհիս ամենէն ընտիր կրօնաւորներն իսկ լինին, աշխարհս կրնայ առանց անոնց քալել։

— Ամօթ է, ազնիւ Ամէլստէին — ըսաւ Սէտրիկ — մոռցիր այնպիսի թշուառներ. քու առջեւդ բացուած փառաց ասպարիզին մէջ։ Ըսէ տա նօրման իշխանին թէ՝ որչափ որ առիւծասիրտ է, Ալֆրէտի ամրոցն առանց պայքարի չպիտի նստի, քանի որ տարբ Խոստոլանողին ազդատոհմէն մին ապրի իրեն դէմ մաքառելու համար։

— Ի՞նչ — գոչեց Ամէլստէին — միթէ այս է Ռիչարտ ազնիւ իշխանը։

— Նոյն ինքն Ռիչարտ Բլանդաժնէդն է — պատասխանեց Սէտրիկ — բայց աւելորդ է յիշեցընել քեզ թէ, այս տեղ իբրեւ կամաւոր հիւր եկած լինելով, չենք կարող ոչ զինքը թշնամանել և ոչ դերել. պարտքս կ՚ճանչես իբրեւ հիւրընկալ։

— Անտարակոյս, հաւատս վկայ — ըսաւ Ամէլստէին — դիտեմ նաև իմ պարտքս իբրեւ հպատակ մը. վասն զի ահա իմ հաւատարմութեան նուէրս կ՚յայտնեմ անոր, ինչպէս նաև սիրտս և տուրս։

— Որդեակ իմ — ըսաւ Էտիթ — մտածէ քու արքայական իրաւանցդ վրայ։

— Անկլիոյ ազատութեան վրայ խորհէ, անհարազատ իշխան — գոչեց Սէտրիկ։

— Հայր և բարեկամ — վրայ բերաւ Ամէլստէին — այդ ձերյանդիմանութեանց վերջ տուէք։ Հացը, ջուրն ու զինդանն հրաշալի դեղեր են փառասիրութեան դէմ, և դերեզմանէն աւելի խմաստուն մարդ մը վեր կ՚ելնեմ քան որ էի իջնելու ատենս։ Այս յիմարական սնափառութեան մասն այն նենգամիտ Ալֆրէտ վանահայրը թելադրեց ինձ, և կարող էք այժմ դատել եթէ վստահութեան արժանի խորհրդատու մ՚է։ Այս դաւադրութիւններն սկսելէն հետէ, ուրիշ բան չշահեցայ, բայց միայն արտորալի ուղևորութիւններ, տհալութիւն, հարուած, ձնշում, բանտ և տուլ. ասկից զատ՝ կ՚նայիմ որ այս ամէնը պիտի դադրի հազարաւոր հանգարտ մարդոց կոտորածով։ Ահա կ՚յայտնեմ ձեզ, ես իմ առանձին կալուածոյս մէջ թագաւոր պիտի լինիմ և ոչ այլուր. և իմ իշխանութեանս առաջին գործը պիտի լինի վանահայրը կախել։

— Հապա իմ Ռոմէնա սանուհիս — հարցուց Սէտրիկ — յուսաս զանի երեսի վրայ չպիտի թողուս։

— Հայր Սէտրիկ — ըսաւ Ամէլստէյն — խելքդ գլուխդ բեր։ Օրիորդ Ռոմէնա բնաւ իմ հոգս չտանիր. իմ Վիլֆրիտ աղգականիս թաթպանին պզտիկ մատն աւելի կ՚սիրէ քան թէ իմ բոլոր անձս։ Ահա ինքն անձամբ կարող է խոստովանիլ։ Այո՛, մի կարմրիր, իմ գեղանի աղգականուհիս. ամօթ չէ քեզ բնաւ արքունական ասպետ մը սիրելդ քան թէ գաւառաբնակ Ֆրանքլին մը, բայց մի ծիծաղիր ըսածիս, Ռոմէնա, վասն զի դամբանական լաթեր և նիհար դէմք մը, Աստուած գիտէ, որ խնդութեան առարկայ մը չեն։ Բայց եթէ կ՚փափաքիս ծիծաղիլ անվրէպ, քեզի լաւագոյն կատակ մը պիտի ընեմ։ Տուր ինձ ձեռքդ, կամ՝ լաւ ևս փոխ տուր ինձ, վասն զի լոկ բարեկամի դէմքով զայն կ՚խնդրեմ։ Լաւ, աստ եկուր, Վիլֆրիտ Իվանօէ աղգականս, ՝ի նպաստ քեզ կ՚հրաժարիմ այս . . . Հէյ, տուրք Տրինգան վկայ, մեր Վիլֆրիտ բարեկամն աներևոյթ եղեր է, սակայն եթէ իմ աչերս ծոմապահութենէ շլացած չեն, կ՚պնդեմ թէ քիչ մ՚առաջ զանի այս տեղ տեսայ։

Նոյն միջոցին ամէնքը շուրջ նայեցան և Իվանօէն փնտռեցին. բայց նա աներևոյթ եղեր էր։ Ի վերջէ իմացան որ հրէայ մ՚եկեր էր զինք փնտռելու, և թէ կարճ բանակցութենէ մ՚ետքը՝ Կիւրթը կոչեր և դղեկէն հեռացեր էր։

— Գեղանի օրիորդ — ըսաւ Ամէլստէյն Ռոմէնային — եթէ մտածէի որ Իվանօէ այսպէս յանկարծ անհետ լինելու խիստ ծանրակշիռ պատճառ մ՚ունէր, անմիջապէս իմ իրաւունքս . . .։

Բայց այն ինչ Ամէլստէյն Ռոմէնայի ձեռքը թողուց Իվանօէի անհետանալն իմանալով, որ օրիորդը՝ իր վիճակը չափազանց շփոթալի գտնելով, այս պատեհ առթէն օգուտ քաղեց և սենեկէն դուրս ելաւ շտապաւ։

— Անշուշտ — ըսաւ Ամէլստէյն — կենդանեաց մէջ ամենէն վստահութեան անարժաններն են կիները, ՝ի բաց առեալ կրօնաւորներն ու վանահայրերը։ Հեթանոս լինիմ եթէ անորմէ շնորհակալութիւն և թերևս համբոյր մը չէի սպասեր։ Այս անիծեալ պատանին անտարակոյս հմայած են, ամէն մարդ խոյս կ՚տայ իմ քովէս։ Ուստի, քեզի կը դառնամ, ազնիւ Ռիչարտ թագաւոր, նուիրել քեզ իմ հաւատարմութեան ուխտս, զոր իբրև ասասպետ . . .։

Բայց Ռիչարտ թագաւորն ևս անհետ եղեր էր, և ոչ ոք գիտէր թէ

հեր գացեր էր։ Վերջապէս իմացուեցաւ որ արտրնօք մեծ դաւիթը գացեր, Իվանօէի հետ խօսող հրէայն իր առջևը կանչել տուեր և քանի մը վայրկեան անոր հետ խօսակցելէն ետև՝ ձի մը բերելու հրամայեր, անոր վրայ աշտանակեր, հրէայն ուրիշ մը հեծնելու ստիպեր էր և այնպէս սանձարձակ Ճամբայ ելեր էր, որ՝ Վամպայի խօսքին նայելով, ծեր հրէին մարմինը մէկ ստակի պիտի ընէր։

— Գլուխս վկայ — ըսաւ Աթէլստէյն — որ Զէրնպօք իմ բացակայութեանս ատեն գղեկիս տիրայեր է։ Պատանքով ծածկուած կ'գաւնամ, գեղեզմանին վրայ տարած յաղթութեանս մէկ նշանակը, և որուր որ խօսիմ անոր ետևէն կ'լինի երբ իմ ձայնս կ'լսէ։ Բայց անօգուտ է այս բանիս վրայ խօսիլ։ Եկէք, բարեկամներս, այս տեղ մնացողներն թող իմ ետևէս գան ինձոյքի սրահը, առ ահի որ ուրիշներն ալ չփախչին։ Յուսամ որ սեղանը տակաւին զարդարուած է, ինչպէս որ կ'վայլէ սաքսոն հին ազնուականի մը յուղարկաւորութեան, բայց շտապինք, սվզիսէ թերևս սատանան Ճաշն կ'յափշտակէ կ'տանի։

ԳԼՈՒԽ ԽԳ

Այնքան իր խղճին վրայ Մօվպրէյի մեղքը ծանրանան,
Որ իր փրփրալից նժոյգին քամակը խորտակեն,
Զիաւորն 'ի կրկէս նետելով գլխիվար,
Իրրև ապիրատ աղաչաւոր։

ՐԻՉԱՐՏ Բ.

Մեր պատմութիւնը կ'ստիպէ մեզ Դէմբլսդովի դղեակը կամ տաճարատունը դառնալու, այն միջոցին որ Ռեբեկայի կենաց կամ մահուան արիւնալի վիճակը պիտի նեռուէր։ Աղմկալի և շարժուն տեսարան մի էր, որպէս թէ բոլոր շրջակայ տեղեաց բնակիչներն դեղջական ժողովի մը կամ դաշտային հանդիսի մը համար գումարուեր էին։ Բայց արեան և մահուան տեսարանի մը հանդիսադիր լինելու եռանդաղին դիպաքը, այն խաւարին դարերու յատուկ բան մը չէր, թէև մենամարտութեան կամ ընդհանուր նիզակամարտի մէջ մարդիկ այն ատեն սովոր էին արիւնահեղ պայքարներ տեսնել։ Երբ քաջարի մարդիկներ մա-

քաւելով զիրար կ՚սպաննէին։ Մինչև անդամ մեր օրերն, ուր բարոյականութեան սկզբունքն աւելի լաւ կ՚ըմբռնեն մարդիկ, դլխատութիւն մը, կրփամարտ մը, խռովութիւն մը, կամ արմատական ազատասէրներու ակումբ մը, միշտ՝ հանդիսատեսներու մեծ ամբոխ մը կ՚դումարէ, որոնք ամէն վտանգ աչք առնելով, կ՚վազեն զուսարին վայրը, թէև շատերն ուղղակի շահ մը չունին տեղի ունեցած դէպքին մէջ, բայց միայն դիտելու համար թէ ինչ դարձուած պիտի առնուն գործերը, և ոյք պիտի լինին կռուին դիւցազունները կամ վատերը։ Հետևապէս անթիւ բազմութիւն մ՚իր աչքը սևեռեր էր Դէնբլդովի դղեկին դրան վրայ, որպէս զի հանդէսը տեսնէ, մինչդեռ մեծագոյն ամբոխ մը նոյն շէնքին կից ցանկը շրջապատեր էր։ Այս ցանկը տաճարատան մօտ շիտակ տարահարթ մ՚էր զոր յատկապէս հարթեր էին զինուորական և ասպետական մարդանաց համար։ Այս ցանկը ցած և դիւրելբլրակի մը վրայ էր, և շուրջ պատնէշներ ունէր, և որովհետև տաճարականները մասնաւորապէս հանդիսականներ հրաւիրեր էին որպէս զի ասպետական մարտերու մէջ իրենց ճարտարութեան ականատես լինին, ցանկն անոնց գործածութեան համար շատ մը պատշգամներով և նստարաններով զարդարուած էր։

Այս պարագայիս մէջ Մեծ Վարպետին համար դահ մը շիներ էին կրկէսին արևելեան կողմը, որ պատուոյ աթոռներով շրջապատուած էր միաբանութեան հրամանատարներուն և ասպետներուն համար։ Այս ամենուն վրայ կ՚սաւառնէր Le beau-Seant անուանեալ նուիրական դրօշակը, որ տաճարականաց նշանագիրն էր, և այս անունն իրենց պատերազմի աղաղակն էր։ Կրկէսին դիմացի կողմը փայտերու կոյտ մը կար և դետինն ուժգին մխուած գերանի մը շուրջը այնպէս շարուած էր որ այրելու սահմանուած զոհին անցնելու ճամբայ մը կ՚երևէր, որպէս զի այն մահաբեր փայտակոյտին վրայ ելնէ և գերանէն կախուած կապանքով կաշկանդուի։ Այս ահռելի գործիքին մօտ չորս հատ սև գերիներ կեցեր էին, որոց գոյնն և ափրիկեան կերպարանն, որ այն ատեն քիչ ծանօթ էին Անկլիոյ, ահ ու սոսկում կ՚ազդէին ժողովրդեան, որ անոնց կ՚նայէր իբրև նագաներ որ պատրաստ կ՚գտնուէին իրենց դիւական պաշտօնը կատարելու։ Այս մարդիկ անշարժ կեցեր էին, միայնակ ատեն ատեն կ՚շարժէին՝ իրենց պարագլխին հրամանին համեմատ, որպէս զի խարոյկն արծարծեն և նորոգեն։ Ասոնք ամբոխին վրայ չէին նայեր, կարծես թէ զիրենք շրջապատող բաներուն անզգայ էին, և միայնակ իրենց սոսկալի գործը կատարելու մտադիր։ Եւ երբ՝ իրարու

հետ խօսելով, իրենց թանձր շրթունքը կ՚բանային և սպիտակ ակռաներն երևան կ՚հանէին՝ որպէս թէ կանխաւ կ՚ժպտէին իրենց սպասած եղերական տեսարանին, ահաբեկ խուժանն ակամայ այնպէս կարծէին թէ ասոնք արդարև այն պերբենային ողիներն են որոց հետ վհուկն հաղորդակցութիւն ունեցած է, և որոնք, իր ժամանակը լրացած լինելով երկրիս վրայ, եկեր էին անոր ահռելի պատուհասին գործակից դտնուելու։ Հանդիսատեսներն իրարու կ՚փսփսային և սաղանին՝ այն դժբաղդ և խռովայոյզ ժամանակին՝ ըրած չարիքն իրարու կ՚հաղորդէին, բնականապէս չմոռնալով սատանային պէտք եղածէն աւելի վերագրել։

— Միթէ չլսեցիր, հայր Տէնէդ — հարցուց գեռասի գեղացի մը ծերունւոյ մը — որ սատանան Գօնինկսպերկի Ամէլստէյնի մեծ սաքսօն ցեղապետին մարմինը յափշտակեց տարաւ։

— Այո՛, բայց վերջը նորէն բերաւ՝ Աստուծոյ և սուրբ Տրնդանի շնորհիւը։

— Ինչպէս — հարցուց վառվռուն երիտասարդ մ՚որ ոսկեհիւս կանաչ պղնձնաւոր մը հագեր էր. իր ետևն ուժեղ տղայ մ՚ունէր, որ կռնակն աւեր էր իր տաւիղն, և ասով իր կռչումը կ՚յայտնէր։ Այս վիպասանը գռեհիկ կարգէ չէր երևեր, վասն զի, 'ի բաց առեալ ոսկեթել պղնձազարդ կրկնոցն, իր վիզն արծաթէ շղթայ մ՚ունէր, որմէ իր տաւիղը լարելու համար բանալին կախեր էր. իր աջ թևին արծաթէ տախտակ մը կապեր էր, որ ըստ սովորութեան՝ փոխանակ սերպուհի մը նշանագիրը կրելու, որու դերդաստանին կրնար պատկանիլ, մի միայն սա բառը փորագրուած ունէր վրան, ՇԷՐՎՈՒՏ։

— Ինչ կ՚իմանաս այդ խօսքով — բաւ զուարթերես վիպասանը՝ գեղացիներուն խօսակցութեան խառնուելով։ — Եկած եմ քնարիս համար երգի նիւթ մը փնտռել, և խաչ վկայ, գոհ պիտի լինիմ եթէ երկու հատ գտնեմ։

— Ամենուն յայտնի է — բաւ գեղացւոյ մեծը — որ Գօնինկսպերկի Ամէլստէյնը մեռնելէ ետև չորս շաբաթի չափ . . . ։

— Այդ անկարելի բան է — գոչեց վիպասանը — ողջ առողջ տեսայ զանի Էշալի-տը-լա-Շուշի պայքարին մէջ։

— Եւ սակայն մեռած, աշխարհէս անհետ եղած էր — բաւ նորատի գեղացին — վասն զի սուրբ Էտմօնտի կրօնաւորներն անոր համար մեռելոց երգն ըսին, ինչպէս որ ես լսեցի, և ասկէ զատ՝ Գօնինկսպերկի դղեակը գամբանական խնջոյք մը տեղի ունեցաւ, ինչպէս որ

պարտ էր, և ես ալ պիտի երթայի այս խնճոյքին թէ որ Մասէլ, Բարքինս, որ . . . :

— Այո, Ամէլստէյն մեռած էր — ըսաւ Ծերունին գլուխն օրեւ-ելով — և այս մեծ կորուստ մ՝էր, վասն զի սաքսօնեան հին արիւնը . . . :

— Բայց ձեր պատմութիւնն ըսէք, բարեկամներ, ձեր պատմութիւնը — պատասխանեց վիսպասանը փոքր ինչ անհամբերութեամբ :

— Այո, այո, պատմէ մեզի սա պատմութիւնն — ըսաւ ըստ կարգի խոշոր վանական մ՝որ անոնց մօտ կ՝կենար դաւազանի մը կռթընած, որ կէս մ՝ուխտաւորի ցուպին և կէս մը վիրգի կ՝նմանէր, և հաւանօրէն երկուքին պաշտօնն ալ ըստ պարագայից կ՝կատարէր — ձեր պատմութիւնն ըսէք — յարեց կորովի կրօնաւորը — պարապ տեղ օրը մի անցընէք, վասն զի պէտք չէ որ ժամավաճառ լինինք :

— Եթէ այդպէս կ՝հաճի ձեր վերապատուութիւնն — յարեց Տէնէդ — գինով քահանայ մ՝եկաւ սուրբ Էտմնտի լուսարարին այցելութեան . . . :

— Իմ վերապատուութեանս անհաճոյ է — պատասխանեց կրօնաւորն — որ գինով քահանայի պէս կենդանի մը գտնուի, և եթէ իրօք այդպիսի քահանայ մը կայ, չեմ ախորժիր որ աշխարհական մ՝այդ կերպով խօսի անոր վրայ : Քիչմը մարդավար եղիր, բարեկամ, և անոր վիճակէն սա հեւեցուր որ այն սուրբ մարդը խորհրդածութեան մէջ թաղուած էր որով գլուխը կ՝դառնար և ոտները կ՝երերային այնպէս որպէս թէ նոր գինի խմած լինէր . ես ինքս այդ բանը փորձով գիտեմ :

— Լաւ ուրեմն — պատասխանեց հայր Տէնէդ — սրբակրօն քահանայ մ՝եկաւ սուրբ Էտմնտ լուսարարը տեսնելու, այս այցելուն սեսակ մը դաշտաբնակ քահանայ էր որ ինք վինակ անտառին մէջ գողցուած եղջերուներուն կէսը կ՝սպաննէ, որ գարեջրի սրուակին խոխոջումն աւելի կ՝սիրէ քան թէ իր մենաստանին նուիրական զանգակը, և կարծէ թէ երշկի մը կտորն իր աղօթագրքին տասն երեսը կ՝արժէ . մէկ խօսքով, պատուական, զուարթերես մարդ մ՝է, որ դաւազան մը շարժել գիտէ, աղեղ լարել, և Եօրքի նահանգի որ և է բնիկէ լաւ ևս կ՝պարէ :

— Այս վերջին խօսքդ, Տրնէդ — ըսաւ անոր վիսպասանը մեղմիկ — մէկ քանի կողերդ ազատեց :

— Վա՜յ, չեմ վախնար իրմէ, մարդ — ըսաւ Տէնէդ — ես փոքր

ինչ ծեր և ծանր եմ՝, բայց երբ խոյին և զանգակին համար 'ի պայքար ելայ Տօնպաստրի մէջ . . . ։

— Բայց պատմութիւնը, պատմութիւնն ուր մնաց, բարեկամ — ըսաւ վերստին վիպասանը ։

— Լաւ, աւասիկ այս է պատմութիւնը. Գօնինկսպերկի Ամէլստէյն 'ի սուրբ Էտմօնտ կ'թաղուէր . . . ։

— Սուտ է այդ, անճոռնի սուտ մը — ըսաւ կրօնաւորը — վասն զի ես տեսայ որ զինքն իր Գօնինկսպերկի յատուկ դղեակը կ'տանէին ։

— Լաւ, եթէ պատմութիւնը դիտես, դու ինքնին պատմէ, տէր իմ — ըսաւ Տէնէդ, իր կամակոր դիմախօսին կողմը դառնալով սրտնեղութեամբ. և գեղացին դժուարաւ յանձն առաւ իր պատմութիւնը շարունակելու՝ վիպասանին խնդրոյն համեմատ ։ — Այս երկու ֆոֆոխոլ ճգնաւորներն — ըսաւ նա վերջապէս — քանի որ այս վերապատուելի մարդը կ'փափաքի որ այսպէս կոչուին, իրենց աղուոր գարեջուրը, գինին և ուրիշ ըմպելիներ խմելու ետևէ էին, գրեթէ բոլոր ամառուան օր մը, երբ խորունկ հեծեծանքի և շղթաներու ձայն մը զարկաւ իրենց ականջին և մեռնող Ամէլստէյնի դէմքը սենեակը մտաւ, ըսելով, Դուք թշուառական հովիւներ . . . ։

— Սխալ է — պոչեց կրօնաւորը շուտով — նա բնաւ բառ մը չըսաւ ։

— Հօ, հօ, Դուք եղբայր — ըսաւ վիպասանը զանի մեկուսի քաշելով — նոր նապաստակ մը երևան ելաւ՝ ըստ երևոյթին ։

— Կ'հաւատամ քեզ, Ալան-է-Տէլ — ըսաւ ճգնաւորը — ես Ամէլստէյնը տեսայ ինչպէս որ մարդ կ'տեսնէ մարմնաւոր աչքով կենդանի մարդ մը. պատանքը վրան էր և չորս դին դերեզմանի հոտ կ'բուրէր. տակաւ մը գինի անգամ չպիտի ջնջէ անոր տեսքն իմ յիշողութենէս ։

— Վա՜հ — պատասխանեց վիպասանը — դու ինձի հետ կատակ կ'ընես ։

— Դարձեալ մի հաւտար ինձ — ըսաւ կրօնաւորը — բայց այս իրաւ է որ գաւազանի հարուած մը տուի անոր որ բաւական էր կով մը տապալելու, և սակայն գաւազանս վրայէն սահեցաւ որպէս թէ ծխոյ սիւն մը լինէր մարմինը ։

— Սուրբ Հիւպերդ վկայ — պատասխանեց վիպասանը — հրաշալի պատմութիւն մ'է և հին եղանակի մը վրայ ոտանաւորի դարձընելու արժանի է ։ Տրպտոնիէնը հոմակէց ծերոնի ճգնաւորը ։

— Ծիծաղէ, որչափ կ'ուզես — ըսաւ Դը.ք կրօնաւորը — բայց եթէ երբէք այսպիսի նիւթի մը վրայ խօսիլս լսես, թող կրողը զիս հեռը տանի։ Ո՛չ, ո՛չ, իսկոյն միտքս դրի լաւ գործի մը աջակից գտնուիլ, ինչպէս վհուկի մը այրման, դատաստանական պայքարի մը, կամ ասոր նման բարեպաշտական ձեռնարկութեան մը, և ահա այս պատճառաւ այս տեղ եկայ։

Երբ այսպէս կ'խօսէր, Դէնբլսդովի տուրը Միշէլ եկեղեցւոյն ահագին զանգակը, շէնք մ'որ պատկառելի և տաճարատունէն քիչ մը հեռի դեղի մը մէջ շինուած էր, անոնց վիճաբանութեան վերջ տուաւ։ Տխուր ձայնը հետզհետէ ականջի կ'զարնէր, բաւական միջոց թողլով որ իւրաքանչիւր հնչիւնն հեռաւոր արձագանքով մը մարի, դեռ ականջն երկաթէ զանգակին հնչումէն չլցուած։ Այս ձայներն՝ որ մօտալուտ արարողութեան նշաններն էին, բոլոր դումարուած ամբոխին սիրտն արհաւրօք կ'լնուին, որոց աչքը նոյն պահուն դէպ 'ի տաճարատունը դարձած էր, ուսկից պիտի ելնէին Մեծ Վարպետը, ախոյեանն ու յանցաւորը։

Ի վերջէ շարժական կամուրջն ընկաւ, դռները բացուեցան, և ասպետ մը՝ Ուխտին մեծ դրօշակը կրելով, դղեկէն դուրս ելաւ. առջևէն ունէր վեց փողար, և ետևէն տաճարականներ որ զոյգ զոյգ կ'քալէին. 'ի վերջէ Մեծ վարպետը հասաւ, փառաւոր նժոյգի մը վրայ հեծած, թէև անոր կազմածը շատ պարզ էր։ Ասոնցմէ ետքը կ'գար Պրայն տը Պուա Գիլլէր. ոտքէն ցոլլուխ փայլուն սպառազինութիւն մը հագեր էր, բայց առանց նիզակի, վահանի և սուրի, զոր իր ետևէն եկող երկու զինակիրներ կ'կրէին։ Իր դէմքը թէև ծածկուած էր սաղաւարտին վրայ ծածանող փետուրովմը, բուռն այլայլութիւն մը կ'յայտնէր, և կարծես զուռզութիւնը կ'մաքառէր անհաստատամտութեան հետ։ Մեռելատիպ գունատութիւն մը կ'երևէր երեսին վրայ, որպէս թէ գիշերներ անքուն անցուցեր էր, սակայն իր երիվարին ձախը կ'չափաւորէր Տաճարական ուխտին ամենէն ընտիր ասպետի մը սովորական հեշտութեամբ և վայելչութեամբ։ Իր ընդհանուր կերպարանքը վէս և հրամայական էր, բայց ուշադրութեամբ նայելով դիւրին էր տեսնել անոր դէմքին վրայ այնպիսի երևոյթ որմէ մարդ իր աչքը դարձընելու կ'ստիպուէր։

Իր երկու կողմը կ'գտնուէին Գօնրատ Մօնֆիշէ և Ալպէրդ Մալվուազէն, որոնք ախոյենին իբրև ինքահայր կ'գործէին։ Խաղաղութեան ղեստը հագեր էին, այս է Ուխտին սպիտակ հագուստը։ Իրենց ետե-

ւէն կ՝գային Տաճարի միւս ասպետները, բազմաթիւ զինակիրներու և սպասաւորներու ընկերակցութեամբ, որ սևեր հագեր էին և օրին մէկին Ուխտին ասպետները դառնալու հետամուտ էին։ Այս նորընծաներէն եռք՝ հետևակ պահակներու խումբ մը կ՝յառաջանար, որոց մէջ տեղն ամբաստանելոյն դունատ դէմքը կ՝երևէր, որ ծանր այլ անվեհեր քայլով կ՝գիմէր դէպ՝ի այն վայրն ուր իր բաղդը պիտի վճռուէր։ Ռեբեկան իր զարդերէն մերկացուցեր էին, վախնալով որ թերևս անոնց մէջ կ՝գտնուի այն հմայեկներէն մին զոր, ինչպէս կ՝կարծէին, Սադանը կ՝ընծայէ իր զոհերուն որպէս զի խոստովանութեան կարողութենէ զանոնք զրկէ՝ նոյն իսկ տանջանաց ժամանակ։ Իր արևելեան հագուստներուն տեղ՝ հագուեցուցեր էին զինքը սպիտակ պարեգօտ մը խիստ պարզաձև, այլ զարձեալ իր նայուածքին մէջ այնպիսի արիութեան և համբերութեան անուշ բացատրութիւն մը կար, որ մինչև անգամ իր անզարդ հագուստովը, և մի միայն իր երկայն սևաթոյր մազերով ամենուն աչքը կ՝գրաւէր, ամենուն լսողը կ՝շարժէր, ամենէն մոլեռանդ խստակրօնը կ՝ողբար այն աղջկան ճակատագիրն որով սիրասուն էակ մը Սադանի մէկ ցնաստակար գործիքն ու գերին դարձեր էր։

Ստորին կարգէ ամբոխ մը զոհին կ՝հետևէր, ամէնքը մեծ Տաճարատան վերաբերող կարգ ու կանոնով կ՝քալէին, թևերը ծալլած և աչքերը գետին սևեռած։

Այս ծանրաքայլ թափօրը դէպ՝ի բլրակը գիմեց որու կատարը շինուած էր ցանկը, և կրկէսը մտնելով անոր շրջանն ըրաւ աջ կողմէն դէպ՝ի ձախ կողմը. և երբ այս շրջանն աւարտեց, դադար առաւ։ Այն ատեն պահ մը վրդովումն տեղի ունեցաւ, մինչդեռ մեծ վարպետն և բոլոր իր հետևորդները, ՝ի բաց առեալ ախոյեանն ու իր կնքահարը, վար իջան ձիերէն զորս զինակիրներն՝ որ ներկայ էին, իսկոյն կրկէսէն դուրս առին տարին։

Անբաղդ Ռեբեկան սևազոյն ամբոխի մը տարին, որ փայտակոյտին մօտ էր։ Ռեբեկա առաջին անգամ իր աչքն ածելով այն վայրն ուր պատրաստութիւններ եղեր էին՝ որչափ մուգ ահարկու նոյնչափ մարմնոյ տաժանելի մահուան մը համար, դող մ՝ըլլայ և աչքը գոցեց, անտարակոյս ներքուստ աղօթելով, վասն զի իր շրթունքը կ՝շարժէին թէև ձայն մը չէր լսուէր։ Պահէ մ՝իր աչքը բացաւ, անթարթ դիտեց խարոյկն որպէս թէ իր միտքն այս առարկային հետ ընտելացընէ, և ապա իր գլուխն անդին դարձուց ծանր և բնական կերպով։

Նոյն միջոցին՝ Մեծ Վարպետն իր ամբոխը հասեր էր, և երբ Ուխտին

անպետներն իր շուրջը կեցան՝ իւրաքանչիւրն իր յատուկ կարգին, փողերու բարձրագոչ և երկայն շունդ մը ծանոյց որ ատեանը բացուած է դատաստանի համար։ Այն ատեն՝ Մալվուազէն ընդ առաջ քալեց և հրէուհին ձեռնոցն՝ որ մենամարտին գրաւն էր, Մեծ վարպետին ոտից ներքև դրաւ։

— Արիասիրտ տէր և վերապատուելի հայր — ըսաւ նա — ահաւասիկ Գրայն որ Գուա Կիլպէր քաջ ասպետն՝ որ՝ ձեր ոտից ներքև դրուած պատերազմի գրաւն ընդունելով, իր պարտքը կատարելու խոստացաւ այսօր, հաստատելու համար որ այս հրէայ օրիորդն՝ Ռեբեկա անուն, Սիօնի Տաճարի ուխտին կողմէ արձակուած վճռոյն իրաւամբ արժանի դատուած է, վճիռ մ՝որով դատապարտուած է այս օրիորդն իբրև վհուկ այրելու. ահաւասիկ ըսի Գրայն այս տեղ կաղմ՝ու պատրաստ է պատուաւոր կերպով և իբրև քաջ ասպետ մարտը մղելու, եթէ այս է ձեր սուրը և աղնիւ կամքը։

— Միթէ երդում ըրա՞ւ — հարցուց Մեծ Վարպետն — որ իր դատն արդար է և պատուաւոր։ Բերէք Խաչափայտն և Te igitur։

— Վերապատուելի հայր — ըսաւ Մալվուազէն արտորնօք — մեր եղբայրն արդէն երդմամբ հաստատեց ամբաստանութեան ճշմարտութիւնն Գօնրատ Մօնֆիշէի առջև, և պարտաւոր չէ ուրիշ երդում մը ալ ընել, քանի որ իր հակառակորդն անհաւատ մ՝է, և չկրնար երդման ենթարկուիլ։

Այս բացատրութիւնը գոհացուցիչ երևցաւ Պօմանուարի, 'ի մեծ ուրախութիւն Ալպէրտի. վասն զի նենգամիտ ասպետը գուշակեր էր մեծ դժուարութիւնը, կամ լաւ ևս՝ Գուա Կիլպէրը՝ նոյն մեծ ժողովին առջև երդմնեցընելու անկարելիութիւնը, և այս հնարը մտածեր էր որպէս զի երդում առնել տալու հարկը վերցընէ։

Մեծ Վարպետն այն ատեն հրամայեց որ քարոզ մ՝առաջանցնի և իր պարտաւորութիւնը կատարէ։ Փողերը վերստին հնչեցին, և քարոզ մը յառաջանալով, բարձրաձայն հրատարակեց. — Ահա ասա կ՝կանգնի պատրաստ Գրայն ասպետը՝ որ և է ազատ ասպետի մը հետ մաքառելու համար, որ պիտի յանձն առնու Ռեբեկա հրէայ օրիորդին կողմէ 'ի պայքար գալ, իբրև ախոյեան, և Մեծ վարպետն՝ որ ասա ներկայ է, բաց ասպարէզ մը պիտի թողու անոր, և հաւասար հով և արև պիտի շնորհէ, և ամէն ինչ որ զինուց հաւասարութիւնը կ՝ապահովէ։ — Փողերու ձայնը նորէն հնչեց, և քանի մը վայրկեան հանդիսաւոր լռութիւն մը տիրեց։

— Աղաչաւոր աղջկան համար ախոյեան մը չերևիր — ըսաւ Մեծ Վարպետը։ — Պատգամաւոր, գնա հարցուր անոր եթէ կ'ուզեսէ անձի մ'որ իրեն համար մենամարտելու պիտի գայ։

Նոյն պահուն՝ պատգամաւորը սա ոճով խօսեցաւ Ռեբեկայի.

— Օրիորդ, պատուարժան և վերապատուելի Մեծ Վարպետը կը հարցընէ քեզ, թէ ունի՞ս պատրաստ ախոյեան մ'որ այսօր քու կողմդ 'ի պայքար ելնէ, թէ ոչ անձնատուր կ'լինիս Ճակատագրիդ, հաւտալով որ արժանապէս մահուան դատապարտուած ես։

— Ըսէ Մեծ Վարպետին — պատասխանեց Ռեբեկա — որ իմ անմեղութեանս վրայ կ'պնդեմ, և զիս դատապարտող վճիռն արդար չեմ ճանչեր, վախնալով որ իբրև ինքնասպան մեղաւոր չլինիմ։ Ըսէ անոր որ օրինաց ներածին չափ պայմանաժամ կ'խնդրեմ, յուսալով որ թերևս Աստուած, որու օգնութիւնն յետին վայրկենին մեզ կ'հասնի, պիտի հաճի ազատարար մ'առաքել ինձ, և երբ այս յետին պայմանաժամը լրանայ, թող իր սուրբ կամքը կատարուի։

Պատգամաբերն այս պատասխանը Մեծ Վարպետին հաղորդեց։

— Աստուած չընէ — ըսաւ Պոմանուար — որ հրէայ կամ հեթանոս առիթ ունենան մեզ անիրաւութեամբ ամբաստանել։ Մինչև որ ենրեկոյեան ստուերներն արևմուտքէն յարևելս դառնան, պիտի սպասենք տեսնելու համար թէ արդեօք այս դժբաղդ աղջկան 'ի պաշտպանութիւն ախոյեան մը պիտի երևան դա՞յ։ Այս պայմանաժամն աւարտելէն ետև թող մահուան պատրաստուի։

Պատգամաբերը Ռեբեկային կրկնեց Մեծ Վարպետին խօսքը, որ իր գլուխը խոնարհեց հլութեամբ, թևերը ծալլեց, և դէպ 'ի երկին նայելով, կարծես թէ վերուստ կ'յուսար օգնութեան մը զոր հպիւռ ուրեմն կ'համարձակէր սպասել մարդկան ձեռօք։ Այս սոսկալի ակնկալութեան միջոցին, Պուա Կիլբէր՝ որ յանկարծ Ռեբեկայի մօտ վազեր էր՝ Մեծ Վարպետին թոյլտուութեամբ, իր ձայնը հնչեցուց օրիորդին ականջին, փսփսուք մ'էր այն, և սակայն այս ձայնն աւելի դող ազդեց անոր քան թէ պատգամաւորին հրաւէրը։

— Ռեբեկա — ըսաւ տաճարականը — միթէ կ'լսե՞ս ձայնս։

— Ես քեզնէ ոչ ինչ չեմ սպասեր, անազորոյն և քարսիրտ մարդ — ըսաւ տարաբաղդ օրիորդը։

— Այո՛, բայց միթէ իմ ձայնս չե՞ս լսեր — ըսաւ տաճարականը — վասն զի իմ ձայնիս հնչիւնն իմ յատուկ ականջիս անգամ ահռելի է։ Ես ևս հպիւռ ուրեմն գիտեմ թէ ո՞ր կեցած եմ և ինչ պատճառաւ քե-

ված են մեզ այս տեղ։ Այս կրկէսը, այս աթոռը, այս փայտակոյտը։ . . գիտեմ թէ ինչ բանի կ'գործածեն, այլ սակայն այս ամէնն իբրև երազ կ'երևի ինձ, իբրև ահռելի աչօք տեսիլ մը, որ իմ զգայարանքս կ'ահաբեկեն իրենց ահարկու պատկերով, բայց բանականութիւնս չեն համոզեր։

— Իմ զգայարանքս և միտքս հաւասարապէս համոզուած են — պատասխանեց Ռեբեկա։ — Կ'ըսեն ինձ որ այս խարոյկն իմ երկրային մարմինս տոչորելու և իմ առջևս վշտալի այլ կարճ ճամբայ մը բանալու սահմանուած են դէպ 'ի լաւագոյն աշխարհ մը։

— Ատոնք ցնորք են, Ռեբեկա, ցնորք — պատասխանեց տաճարականը — տարտամ երազներ են, զորս նոյն իսկ ձեր իմաստուն Սադուկեցիին կ'մերժեն։ Միտ դիր ինձ, Ռեբեկա — ըսաւ նա աւելի ևս բորբոքելով — սա անօրէն մարդոց քեզի պատրաստած ճակատագրէն լաւագոյն ճակատագիր մը, ազատութիւն և կեանք ունենալու առիթ մը ունիս ձեռքդ, եթէ կամենաս։ Հեծիր սա ձիուս գաւակը, այս Զամբէի վրայ, ամէնի երիվարս՝ որ երբէք իր տիրոջ չանսատեր։ Տրապիզոնի Սուլթանին հետ մենամարտելով շահեցայ զայն, հեծիր, կ'ըսեմ քեզ, և մէկ ժամէն ամէն հալածանքէ զերծ պիտի մնանք . . . ուրախութեան նոր աշխարհ մը պիտի բացուի առջևդ, և ինձի համար համբաւոյ նոր ասպարէզ մը։ Թող ատոնք իմ դասալճիուս արձակեն, կ'անգոսնեմ զայն, թող Պուա-Կիլպէրի անունը վանական ստրուկներու ցանկէն սրբեն։ Արեամբ պիտի լուամ իմ զրահիս վրայ ինչ արատ որ ձգելու յանդգնին։

— Քաշուէ դնա, փորձիչ սատանայ — ըսաւ Ռեբեկա — կորի՛ր. այս ծայրագոյն վիճակիս մէջ մտքի չափ անգամ չես կարող խախտել իմ դիտաւորութիւնս . . . թէև թշնամիներէ շրջապատուած եմ, սակայն քեզ իմ ամենէն վատ և անհաշտ թշնամիս կ'համարիմ. . . յանուն Աստուծոյ, հեռացի՛ր, դնա՛։

Մալվուազէն այս բանակցութեան երկարատևութեան վրայ վրդովելով, առաջ անցաւ որ զայն ընդհատէ։

— Միթէ օրիորդն իր յանցանքը խոստովանեցա՞ւ — հարցուց նա Պուա-Կիլպէրի — թէ ոչ միշտ կ'ուրանայ։

— Միշտ կ'ուրանայ — ըսաւ Պուա-Կիլպէր։

— Ուրեմն — ըսաւ Մալվուազէն — պարտաւոր ես, ազնիւ եղբայր, առաջին տեղդ երթալ և գործին վախճանին սպասել։ Ժամերը կ'անցնին, մութը կ'սկսի . . . արի՛, քաջդ Պուա-Կիլպէր, եկո՛ւր, դու որ մեր Ուխտին յոյսն ես և քիչ ատենէն անոր գլուխը պիտի դառնաս։

Այս մեղմ ձայնով խօսելու ատեն՝ Մալվուազէն ասպետին ձիուն սանձին երկնցուց ձեռքը, որպէս թէ զանի իր տեղն առաջնորդել կ'ուզէր։

— Ա՛պիրատ — գոչեց Պուա-Կիլպէր սրտմտութեամբ — ինչպէս կ'յանդգնիս ձեռքդ երիվարիս սանձին տանիլ։ — Եւ ապա իր ընկերին բունէն ազատելով կրկէսին միւս ծայրն արշաւեց։

— Տակաւին արիական հուր ունի — ըսաւ Մալվուազէն Մօնֆիշէի — եթէ այս եռանդը լաւ ուղղէ . . . բայց յունական կրակին պէս, ամէն դպած բաները կ'այրէ։

Դասաւորներն արդէն երկու ժամէ վեր կրկէսն էին, ընդ ունայն սպասելով որ ախոյեան մ'երևի։

— Եւ այս բանիս համար օրինաւոր պատճառներ կան — ըսաւ Դը.ք կրօնաւորը — վասն զի օրիորդը հրէուհի մ'է. բայց դարձեալ, իմ կարգիս վրայ կ'երդնում, որ մեղք պիտի լինի որ այսպէս նորատի և գեղանի աղջիկ մը կորնչի առանց անոր 'ի նպաստ հարուած մը տալու։ Եթէ տասն անգամ վհուկ լինէր, փոյթ չէր, հէրիք էր որ քիչ մը քրիստոնեայ լինէր, այն ատեն իմ դաւազանս սա գոռոզ ասպետին գլխուն պիտի իջեցընէի։

Նոյն պահուն՝ ասպետ մը՝ անձարձակ վարելով իր երիվարը՝ դաշտին վրայ երևցաւ և կրկէսին կողմը դիմեց։ Հարիւրաւոր ձայներ գոչեցին. — Ախոյեա՛ն մը, ախոյեա՛ն մը։ — Եւ ժողովուրդն՝ իր նախապաշարմանց չնայելով՝ ցնծութեան աղաղակներով բարևեց այս ախոյեանն երբ կրկէսը մտաւ։ Սակայն երկրորդ անգամ նայելով այս նորեկ ասպետին վրայ՝ ամէնքն այս պատահմ դալատեանէ յղացած յոյսերը կորուսին։ Վասն զի նորեկ ախոյենին ձին՝ որ անդուլ արշաւելով շատ մղոններ առեր էր, յոգնութենէ կարծես թէ կ'երերար, և ձիավարն որչափ որ կրկէսը մտաւ մեծ յանդգնութեամբ, տկարութիւն սեպէ կամ յոգնութիւն կամ այս երկու պատճառները միասին, հազիւ ուրեմն թամբին վրայ կենալու կարող կ'երևէր։

Պատգամաւորին կոչման վրայ, որ նորեկ ախոյենին կարգը, անունն և նպատակը կ'հարցընէր, օտար ասպետը շուտ և համարձակ պատասխանեց։ — Ես բարի և ազնիւ ասպետ մ'եմ, ատ եկայ որ նիզակով և սրով այս Ռեբեկա, Եօրքցի Իսահակին աղջկան դատը պաշտպանեմ, յայտ առնեմ որ անոր դէմ արձակուած վճիռը սուտ է և զրպարտական, և 'ի մենամարտս կոչեմ Պրայն տը Պուա-Կիլպէրը, իբրև մատնիչ, մարդասպան և ստախօս. և այս ամէնը սա դաշտին մէջ պիտի

հաստատեմանոր հետ դէմառ դէմ մաքառելով Աստուծոյ, Տիրամօր և սուրբ Գէորգ ընտիր ասպետին օգնութեամբը։

— Ամենէն առաջ հարկ է — ըսաւ Մալվուազէն — որ օտարականը հաստատէ թէ ընտիր և տոհմիկ ասպետ մ'է։ Տաճարը չթողուր որ իր ախոյեաններն անանուն մարդոց դէմ կռուին։

— Իմանուն — գոչեց ասպետն իր սաղաւարտին երեսպահը վերցընելով — լաւ ես ծանօթ է, իմ տոհմս քուկինդ աւելի մաքուր է, Մալվուազէն։ Ես Վիլֆրիտ Իվանհօէն եմ։

— Ես այս պահուս չպիտի կռուիմ քեզի հետ — ըսաւ տաճարականը՝ տխուր ու այլայլած ձայնով մը — պնա բուժելտուր վէրքդ, լաւագոյն երիվար մը գտիր, և թերևս այն ատեն զիջանիմ քու տղայական անապարծութիւնդ պատժելու։

— Ա՛հ, գոռոզ տաճարական — ըսաւ Իվանհօէ — միթէ մոռցար որ երկու անգամ տապաստ ընկար այս Նիզակիս ներքև։ Յիշէ Ակքիայի կլկէնները, յիշէ Էշալիի նիզակամարտը, յիշէ Ռոթերվուտի սրահներուն մէջ քու մեծաբանութիւններդ, և քու ոսկի շղթադ զրաւ գնելդ իմ մասնարանիս (reliquary) դէմ, որպէս թէ Վիլֆրիտ Իվանհօէի հետ պիտի մենամարտիս կորուսած պատիւդ գտնելու համար։ Այս մասնարանիս, և անոր պարունակող մասունքին վրայ կ'երդնում քեզ վատ հուշակելու Եւրոպայի ամէն արքունեաց մէջ, քու Ուխտիդ ամէն ժողովարաններու մէջ եթէ անմիջապէս ինձի դէմ չմենամարտիս։

Նախ Պուա-Կիլբէր իր դէմքը դէպ 'ի Ռեբեկայի դարձուց վարանոտ կերպով մը, և ապա գոչեց ղայրագին նայելով Իվանհօէի. — Շուն սաքսօն, նիզակդ առ և մահուան պատրաստուէ։

— Արդեօք Մեծ Վարպետը կ'ներէ ինձ պատերազմիլ — հարցուց Իվանհօէ։

— Չեմ կրնար մերժել — պատասխանեց Մեծ Վարպետը — եթէ այս աղջիկը քեզ իբրև ախոյեան կ'ընդունի։ Սակայն կ'փափաքէի որ կռուելու վիճակի մէջ գտնուէիր։ Միշտ մեր Ուխտին թշնամին եղած ես, սակայն քեզի հետ պատուաւոր կերպով վարուելու կ'փափաքիմ։

— Այս, այս վիճակիս մէջ մաքառիլ կ'ուզեմ, և չէ թէ ուրիշկերպով — ըսաւ Իվանհօէ։ — Այս է Աստուծոյ դատաստանը, անոր պահպանութեան կ'ապաւինիմ։ Ռեբեկա — ըսաւ նա դէպ 'ի մահաբեր աթոռը քշելով ձին — միթէ զիս իբրև ախոյեան կ'ընդունիս։

— Այո՛, կ'ընդունիմ — ըսաւ նա այլայլութեամբ մը զոր մահուան երկիւղը չէր դրդուած անոր վրայ — կ'ընդունիմ քեզ իբրև երկնաւոր

ինձ ղրկուած ախոյեան մը։ Բայց, ոչ, ոչ, վէրքդ բուժուած չեն, մի կռուիր այս անգութ մարդուն հետ, ինչու համար դու ևս ինձի հետ մեռնիս։

Բայց Իվանոէ արդէն իր որոշեալ տեղն էր, իր երեսպահը գոցեր և նիզակն առեր էր։ Նոյնն ըրաւ և Պուա-Կիլպէր, և իր զինակիրը դիտեց՝ երեսպահը կապելու ատեն որ իր դէմքն, իր զգացած այլայլութեանց հակառակ՝ բոլոր առտու մնխիրի գոյն առեր էր, յանկարծ սաստիկ կարմրեր էր։

Այն ատեն՝ պատգամաւորն ամէն մէկ ախոյեան իր տեղը կեցած տեսնելով, ձայնը բարձրացուց, և երեք անգամ կրկնեց. Քա՛ջ ասպետնե՛ր, յե՛ր պարտքը կատարեցէ՛ք։ Երրորդ անգամ աղաղակելէն ետև՝ կրկէսին մէկ կողմը քաշուեցաւ, և վերատին հրատարակեց որ խօսքով, աղաղակով կամ գործով պայքարին միջամտելու կամ զայն վրդովելու յանդգնողն մահուան պիտի դատապարտուի։ Մեծ Վարպետն որ իր ձեռքը բռնած էր մենամարտին դրաւը, այս է Ռեբեկայի ձեռնոցը, այն պահուն կրկէսին մէջ նետեց և դժնդակ նշանն արտասանեց. Օ՜ն, հղեցէ՛ք։

Փողերը հնչեցին, և ասպետներն անձարձակ իրարու դէմ յարձակեցան։ Իվանոէի յոգնած ձին և յոգնութենէ ոչնուազ յոգնած ասպետը վար ընկան, ինչպէս որ ամէն հանդիսականները կ՚յուսային, տաճարականին լաւ ուղղուած նիզակին և կորովի երիվարին ուժգնութենէ. բայց թէև Իվանոէի նիզակը՝ համեմատաբար, դպաւ միայն Պուա-Կիլպէրի վահանին, այս ախոյեանը, զինքը սեանոզներուն զարմանքը պատճառելով, իր թամբին վրայ երերաց, երասանները կորոյս և կրկէսին մէջ գլորեցաւ։

Իվանոէ իսկոյն ոտք ելաւ ընկած երիվարին տակէն ազատելով, իր սրոյշ բաղդը նորէն փորձելու, բայց իր հակառակորդն ոտք չելաւ։ Ոտքը կուրծքին վրայ դրած և սրին ծայրը կոկորդին վրայ, Վիլֆրիտ հրամայեց անոր որ անձնատուր լինի եթէ չէր կամեր նոյն վայրը մեռնիլ։ Բայց Պուա-Կիլպէր պատասխան չտուաւ։

— Մի սպաններ զանի, քանի որ տակաւին խոստովանած և արձակում առած չէ. իր մարմինն ու միանգամայն հոգին մի՛ սպաններ։ Կը խոստովանինք որ յաղթուեցաւ։

Մեծ Վարպետը կրկէսն ելաւ և գիտաւալ ախոյենին սաղաւարտը հանել հրամայեց։ Ասպետին աչերը գոց էին, և արիւնը տակաւին իր երեսին վրայ կ՚փայլէր։ Հանդիսատեսներն որ զարմանքով կ՚դիտէին

Պուա–Կիլպէրը, տեսան անոր աչերուն բացուիլը, բայց այս աչերն անլոյս և անշարժ մնացին։ Յանկարծ արիւնը քաշուեցաւ երեսէն և մեռելատիպ դեղնութեան մը տեղի տուաւ։ Պուա–Կիլպէր, թէև թշնամւոյն նիզակն իրեն չէր դպած, իր բուռն կրից զոհ եղեր էր։

— Արդարև Աստուծոյ դատաստանն է այս — ըսաւ Մեծ–Վարպետը դէպ 'ի երկին նայելով. Fiat voluntas tua։

ԳԼՈՒԽ ԽԴ

Այսպէս՝, արդ վերջացաւ իբր մի պառաւի պատմութիւն։
ՎԷՊՍԴԸՐ

Զարմացման առաջին վայրկեանն անցնելէն ետև՝ Վիլֆրիտ Իվանոէ Մեծ Վարպետին հարցուց, իբրև դատաւորի մարտին, եթէ առնապէս և ուղղութեամբ կատարած էր իր պարտքը պայքարին մէջ։

— Առնապէս և ուղղութեամբ վարուեցար — ըսաւ անոր Մեծ Վարպետը։ — Ահա կ'հրատարակեմ որ օրիորդն ազատ է և անմեղ։ Մեռնող ասպետին զէնքն ու մարմինը յաղթողին իշխանութեան ներքև են։

— Ես չեմ ուզեր անոր զէնքն աւար առնուլ — ըսաւ Իվանոէ ասպետը — և ոչ իր դիակը վատահամբաւութեան դատապարտել։ Քրիստոնէութեան համար կռուեցաւ նա. Աստուծոյ և ոչ իմ բաղուկս այսօր զանի զարկաւ։ Թող իր յուղարկաւորութիւնն պարզ լինի, ինչպէս որ վայելէ անիրաւ դատի մը համար մեռնող մարդու մը։ Իսկ այս նորատի օրիորդին գալով . . .։

Իր խօսքն ընդմիջեցաւ հեծելազօրաց դափրէն, որոնք այնպէս արագ կ'վազէին որ գետինը կ'դղրդէին. յետոյ Սև ասպետը սրարշաւ մտաւ կրկէսը։ Անոր ետևէն մտան բազմաթիւ զինուորներու խումբ մը և սպառազէն ասպետներ։

— Շատ ուշ կ'հասնիմ — ըսաւ նա բոլորտիքը նայելով։ — Պուա–Կիլպէրն իմ բազկիս համար պահեր էի։ Իվանոէ, որչափ անխոհեմ էիր այսպիսի վտանգի մ'ենթարկելուդ, քանի որ ձիու վրայ կենալու անգամ անկարող ես։

— Իշխանս, երկին պատժեց այս գոռոզ մարդն — ըսաւ Իվանհոէ։ Արժանի չէր այն մահուան զոր իրեն վերապահեր էիր։

— Թող՝ի խաղաղութիւն երթայ — գոչեց Ռիչարտ՝ իր աչքը դիակին վրայ սևեռելով։ — Քաջարի ասպետ մ՝էր, և ասպետապէս մեռաւ, իր պողոքական գինուք վառեալ. բայց սուղ է մեր ժամանակը, շտապինք. Պօհուն, պաշտօնդ կատարէ։

Թագաւորին հետևորդ դնդէն մին զատուելով դնաց Ալպէրտ Մալվուազէնի ուսին վրայ դրաւ ձեռքը, և անոր ըսաւ. — Քեզ կ՝ձերբակալեմ իբրև մատնիչ պետութեան։

Մեծ Վարպետն որ ցայն կէտ զսրմացած կ՝մնար այնքան գինուորներ յանկարծ տեսնելուն, վերջապէս բերանը բացաւ և ըսաւ.

— Ո՞վ կ՝համարձակի Սիօնի տաճարին մէկ ասպետը, նոյն իսկ տաճարատան Մեծ Վարպետին ներկայութեան ձերբակալել։ Այս յանդուգն նախատինքն որո՞ւ իշխանութեամբը կ՝կատարեն։

— Ես եմ ձերբակալողը — պատասխանեց ասպետը — ես Հէնրի Պօհուն Էսսէքսի կոմս, Անկլիոյ մեծ սպարապետ։

— Եւ Մալվուազէնը կ՝ձերբակալէ — յարեց Թագաւորը՝ իր երեսպահը վերցընելով — Ռիչարտ Բլանդաժնէդի հրամանաւ, որ ահա աստ ներկայ է։ Գօնրատ Մօնֆիշէ, փառք տուր որ իմ հպատակս ծնած չես։ Բայց դու, Մալվուազէն, դու պիտի մեռնիս, նոյնպէս գիլիպ եղբայրդ աշխարհս եօթներորդ օրը հոլովելէն առաջ։

— Ես այդ վճռոյն պիտի դիմադրեմ — գոչեց Մեծ Վարպետը։

— Հպարտ տաճարական — ըսաւ Թագաւորը — դու այդ իշխանութիւնը չունիս այսուհետև։ Աչքդ վեր վերցուր և նայէ մի անգամ Անկլիոյ արքայական դրօշակին որ կ՝ծածանի քու դղեկիդ վրայ փոխանակ Տաճարի դրօշակին։ Խոհեմ եղիր, Պօմանուար, և պարապ տեղը մի դիմադրեր. ձեռքդ առիւծին կոկորդին մէջն է։

— Հռոմի պիտի բողոքեմ քեզի դէմ — պատասխանեց Մեծ Վարպետը — մեր Ուխտին արտօնութիւններն ու առանձնաշնորհութիւնները գրաւելուդ համար։

— Բողոքէ — վրայ բերաւ Ռիչարտ — բայց քու օգտիդ համար մի անուաններ գիս յափշտակիչ։ Լուծէ ժողովդ և քու ընկերացդ հետ ուրիշ տաճարատուն մը քաշուէ գնա (եթէ կարող ես գտնել տաճարատուն մը) որ Անկլիոյ Թագաւորին դէմ մատնութեան և դաւադրութեան վայր մ՝եղած չլինի . . . իսկ եթէ կ՝հաճիս, իբրև Ռիչարտի հիւր աստ կաց և մեր արդարութեան վկայ եղիր։

— Ինչպէս, հիւրընկալութիւն խնդրեմ այնպիսի վայր մ՚ուր հրամայելու իրաւունք ունիմ — բան տաճարականը։ — Երբէք։ Մարտարանապետներ, սկսէք երգել quare fremuerunt gentes սաղմոսը։ Ապեստներ, զինակիրներ և տուրք Տաճարի հետևորդներ, պատրաստուեցէք Պաս-Սէռանի դրօշակին հետևելու։

Մեծ Վարպետն այնպիսի վեհանձնութեամբ մ՚արտասանեց այս խօսքերն որ կարծես թէ նոյն իսկ Անկլիոյ թագաւորին հաստատ իշխանութիւն մը կ՚վարէր և որ ահաբեկ և դողդոջուն ընկերներուն արիութիւն ներշնչեցին։ Անոր շորս դին գումարուեցան, ինչպէս կ՚գումարուին ոչխարները պահապան շան բոլորտիքն երբ գայլին ոռնալը կը լսեն։ Բայց այս անվեհեր մարդիկ շուարած հօտին երկիւղները չյայտնեցին։ Իրենց ճակատը կարծես թէ դիմադրաւ կենալու համար կը բարձրացընէին և իրենց նայուածքն այնպիսի ապառնալիք կ՚յայտնէին զոր իրենց բերանը չէին կարող արտասանել։ Միւս որեցան ասոնք և նիզակներու մութ դիւծ մը յօրինեցին որոց վրայ ասպետներուն ոսկեսակ վերարկուներն աչքի կ՚զարնէին, իրենց հետևորդներու դրշ հագուստներուն մէջ, նեմ՝ ամպի մը լուսաւոր եղջիւրներուն պէս։ Ժողովուրդն՝ որ տհաճութեան բարձր աղաղակ մը հաներ էր, կայ առաւ և ընդեւայն դիտեց այս փոքր մարտիկներու ահարկու դունդն, որոց գէմ անխոհեմութեամբ բողոքեր էր, և անոնց առջևէն հեռացաւ։ Երբ Էսէքսի կոմսն այս ռազմական պատրաստութիւնը տեսաւ, իր խղճանքներուն երկաթներն երկնաբին կողերուն մէջեց և վեր վար արշաւեց իր զինուորները գումարելու և պաշտպանութեան վիճակի մէջ դնելու։ Մինակ Ռիչարտ, որպէս թէ իր ներկայութեամբը գրգռած վտանգէն կ՚ախորժէր, տաճարականաց ճակատին առջև կ՚ձիավարէր ծանրօրէն բարձրաձայն գոչելով. — Լա՛ռ, պարոններ, վիթէ այսչափ արիասիրտ ասպետաց մէջ չկայ մէկն որ գայ Ռիչարտի հետ նիզակ խաղցընէ։ Պարոն տաճարականներ, ձեր ոսկիններն արդարև շատ սև երես պիտի լինին՝ եթէ 'ի պատիւ անոնց նիզակ մը չկոտրենք։

— Տաճարի ասպետներն — բան Մեծ Վարպետն իր գնդին ճակատին առջև աշտանակելով — այդպիսի մեռած և պիղծ դատի մը համար չեն մաքառիր, և ոչ մէկ ասպետ քեզի հետ 'ի վէգ պիտի գայ, Անկլիոյ Ռիչարտ, իմ ներկայութեան։ Պապն ու Եր բոպիոյ իշխանները մեր դատաստանը պիտի տեսնեն, պիտի վճռեն թէ քրիստոնեայ իշխան մը լաւ գործեց այս օրուան ընթացքը բռնելով, ինչպէս որ դուք բռնեցիք։ Եթէ մեր վրայ չյարձակին, առանց յարձակելու պիտի բա-

շունք։ Քու սլատուոյդ կ՝յանձնենք Ուխտին ղէն ու զարդն և ինչքը զոր այս տեղ կ՝թողունք, և քու խղճիդ վրայ կ՝գնենք քու այսօրուան դրած գայթակղական նախասինքդ բոլոր քրիստոնեայ աշխարհին։

Այս խօսքն աւարտելով և առանց պատասխանի սպասելու, Մեծ Վարպետը մեկնելու նշանը տուաւ, և փողերն արևելեան ոճով վայրենի գնացք մը հնչեցին, որ տաճարականաց ուղևորութեան սովորական նշանն էր։ Այն առեն ասպետներն իրենց շարքն աւրեցին և ուղևորսիւն մը դառնալով ծանր ծանր քալեցին, իբր թէ ցոյց տալու համար որ իրենց Մեծ Վարպետին կամքն էր և չէ թէ գերագոյն զօրութեան մ՝երկիւղն որ զիրենք նահանջելու կ՝պարտաւորէր։

— Մեր Տիրամօր լուսեղէն ճակատը վկայ — ըսաւ Ռիչարտ թագաւորն — ցաւալի է արդարև որ այս տաճարականներն որչափ արիասիրտ և քաղաքակիրթ նոյնչափ հաւատարիմ չեն։

Ամբոխը՝ վեհերոտ շան մը պէս՝ որ հաջելու համար իր թշնամւոյն կռնակ դարձնելուն կ՝սպասէ, թեթև աղաղակ մը հանեց այն միջոցին որ գումարտակին յետին շարքը դաշտէն դուրս կ՝ելնէր։

Տաճարականաց աղմկալի նահանջին ժամանակ՝ Ռեբեկա ոչ բան մը տեսաւ և ոչ լսեց։ Ծերունի հայրը զանի իր գրկաց մէջ սեղմեր էր, գրեթէ շնչասպառ, այս բազմադէպ պարագայից ներգործութենէ։ Բայց Իսահակին մէկ խօսքը զանի վերջապէս սթափեց։

— Երթանք — ըսաւ նա — իմ սիրելի աղջիկս, իմ նորապիտոյ դանձս, երթանք այն քաջ երիտասարդին ոտքն ընկնելու։

— Ո՛չ — ըսաւ Ռեբեկա — ո՛հ, ո՛չ, ո՛չ, ո՛չ։ Ձեմ իշխեր այս միջոցիս անոր խօսելու։ Ափսո՛ս, անոր պէտք եղածէն աւելի պիտի խօսիմ . . . ։ Ո՛չ, հայր իմ, շուտով այս չարաշուք տեղէն հեռանանք։

— Բայց, աղջիկս — ըսաւ Իսահակ — ի՞նչպէս թողուլ երթալ այն ուժեղ մարդն որ իր նիզակով և վահանով զինեալ եկաւ որպէս զի՝ իր մահն աչք առնելով քեզ ազատէ, քեզ որ օտար ժողովրդեան մ՝աղջիկն ես, թէ իրեն և թէ իւրայնոց համար։ Այս ծառայութեան փոխարէն մեր անչափ երախտագիտութիւնն պէտք է անոր յայտնել։

— Հայր իմ, այո՛, երախտագէտ ենք, ընդ միշտ երախտագէտ — պատասխանեց Ռեբեկա — բայց այժմ նոյնը յայտնելու ժամանակը չէր . . . քու ամենասիրելի Ռաքէլիդ սիրոյն համար լինի, հայր իմ, իմ աղաչանքս լսէ . . . ո՛չ այժմ։

— Բայց — վրայ բերաւ Իսահակ միշտ պնդելով — պիտի ըսուի թէ շունելու չափ անգամ շնորհապարտ չենք։

— Բայց տես մի անգամ, սիրելի հայր իմ, որ Ռիչարտ թագաւորն ոստ ներկայ է, և թէ . . . :

— Ստոյգ է, իմ բարեսիրտ, իմ խոհեմ Ռեբեկա : Եկնենք ոստի : Թագաւորը դրամի պէտք պիտի ունենայ, վասն զի Պալեստինէն նոր կ'դառնայ, և լսածիս նայելով բանտէն նոր ազատած է. ուստի իշնէ ստակ ասհանջելու համար կրնայ դիւրաւ պատրուակ մը գտնել, երբ իր եղբօր ճօհնի հետ դրամական յարաբերութիւն ունենալս իմանայ : Օ՛ն, ծ՛ն, երթանք, հեռանանք այս տեղէն : — Եւ իսկոյն աղջիկը քաշելով կրկէսէն դուրս հանեց և արդէն պատրաստած կառքով զանի ռաբբի Նաթանին տունը փոխադրեց ապահովի :

Թէև այն օրն ամենուն ուշադրութեան առարկայն հրէուհին էր, բայց՝ ըստ որում անտես քաշուէր գացեր էր, ժողովուրդն իր աչքը Սև ասպետին վրայ դարձուց. օդը կ'ընտացրնէր սա աղաղակներով. «Կեցցէ՛ Ռիչարտ Առիւծասիրտ : Կորնչի՛ն յափշտակիչ տաճարականները :»

— Բոլոր այս արքայասիրութեան չնայելով՝ — ըսաւ Իվանհօէ Էսսէքս կոմսին — աղէկ որ թագաւորն զգուշութիւն ըրաւ, աղնիւ կոմս, հետը բերելով այսչափ հաւատարիմ զինուորներ :

Կոմսը ժպտեցաւ և գլուխը ցնցեց :

— Արիականդ Իվանհօէ — ըսաւ Էսսէքս — դու որ այնչափ լաւ կը կ'ճանչես մեր թագաւորը, միթէ կարծեցիր թէ այս խոհական զգուշութիւնն ինքն առած լինի : Դէպ 'ի Եօրք կ'երթայի, իմանալով՝ որ ճօհն իշխանն այն տեղ կ'ամրանար, երբ Ռիչարտ թագաւորին հանդիպեցայ, որ ճշմարիտ թափառական ասպետի մը պէս, այս կողմը կ'արշաւէր, որպէս զի իր բազկով միայն տաճարականին և հրէուհւոյն մէջ եղած արկածին վերջ տայ : Ես անոր ուղեկից եղայ գնդովս գրեթէ իր կամաց հակառակ :

— Եւ ի՞նչ լուր կ'բերես, քաջդ կոմս — հարցուց Իվանհօէ — ապստամբները պիտի սպասե՞ն մեզ արդեօք այն տեղ :

— Եթէ դեկտեմբերի ձիւներն յուլիսի արևուն սպասեն, անոնք ալ մեզ կ'սպասեն — ըսաւ կոմսը — բոլորովին ցիր ուցան եղած են : Եւ այս լուրը բերողը ո՞վ կարծես լինի. նոյն ինքն ճօհն :

— Մատնի՛չը. ապաշնորհ, աներես մատնի՛չը — գոչեց Իվանհօէ : — Միթէ Ռիչարտ զանի ձերբակալել չտուա՞ւ :

— Ո՛հ, զանի ընդունեց — պատասխանեց կոմսը — որպէս թէ որսորդութենէ մ'ետք իրարու հանդիպած լինէին. և անոր ըսաւ զիս և

իմ գինակիցներս ցոյց տալով. Ա՛ռեանե՛ս, եղբայր, հետս քանի մը զայրացած մարդիկ ունիմ. բա՛ւ կ՚ընես թէ որ մեր մօր մօտ գնաս, իմ սիրայիրայարգանքս անոր մատուցանես, և անոր քովէն չհեռանաս մինչև որ յուղեալ միտքերը հանդարտին։

— Եւ միթէ այսչափ միայն բաւ — հարցուց Իսմանօէ — միթէ ներելի չէ՞ ըսել որ թագաւորն իր ներողամտութեամբն մնորդիկը մատնութեան կ՚հրաւիրէ։

— Ճիշտ նոյնը կրնանք ըսել — պատասխանեց կոմն — այն մարդուն համար որ մահը կ՚կոչէ երբ՝ ի պայքար կ՚ելնէ իր վէրքը բուժելէն առաջ։

— Այդ կատակիդ կ՚ներեմ, կոմս — ըսաւ Իսմանօէ — բայց միտդիր որ ես միայն իմ կեանքս վտանգի կ՚դնէի, մինչդեռ Ռիչարտ իր տէրութեան ապահովութիւնը կ՚վտանգէր։

— Անոնք որ իրենց յատուկ պահպանութեան համար անհոգ են, հաղիւ ուրեմն այլոց համար ուշադիր կ՚լինին։ Բայց փութանք գղեակն երթալու, վասն զի Ռիչարտ կ՚խորհի իրօք պատժել գաւադրութեան մէկ քանի անդամները, թէև անոնց պարագլխին ներեց։

Այս պարագայիս մէջտեղի ունեցած գատաստանական քննութեանց նայելով, որոնք Վ. ատուրի ձեռագիրը կ՚յիշատակէ երկարօրէն, կ՚երեւի թէ Մորիս որ Պրէսի ծով անցաւ և Ֆրանսայի Ֆիլիպ թագաւորին ծառայութեան մտաւ, մինչդեռ Ֆիլիպ Մալվուազէն, և իր եղբայրն Ալֆէրա գլխատուեցան, թէև Վ. օլտմար Ֆիցու բս, գաւադրութեան հոգին՝ ազատեցաւ աքսոր գնալով, և ճօհն խշխանն, որու՝ ի նպաստ այս գաւադրութիւնն նիւթեր էին, և ոչ իսկ յանդիմանութիւն մը լսեց իր բարեբարոյ եղբօր կողմէ։ Սակայն ոչ ոք ցաւեցաւ երիտ Մալվուազէններու բաղդին վրայ, որոնք իրենց արժանի մահը գտան, քանի որ անհաւատարմութեան, անդթութեան և բռնաբիրութեան գործերով ամենուն ատելի դարձած էին։

Դէնբլոդովի կուռէն քիչ մ՚եաք, Սաքսօն Սէտրիկն Ռիչարտի արքունիքը հրաւիրուեցաւ, որ իր եղբօրը փառասիրութենէ վրդովեալ գաւառներն անդորրելու համար այն ժամանակ Եօրք քաղաքը կը գտնուէր։ Սէտրիկ քանի մ՚անգամ այս հրաւէրը մերժեց, բայց՝ ի վերջ հնազանդեցաւ։ Իրօք՝ Ռիչարտի վերադարձը՝ Անկլիոյ մէջ սաքսօնական արքունի տոհմին վերահաստատութեան յոյսը բոլորովին փարատեր էր, վասն զի, քաղաքական պատերազմի մը դէպքին մէջ՝ սաքսօններն ինչ ճգունք որ թափէին, ակն յայտնի էր որ ոչ ինչ կարելի չէր

գործել Ռիչարտի անվիճելի իշխանութեան օրով, քանի որ ինք շատ ժողովրդական էր իր անձնական ընտիր ձիւք և զինուորական համբաւով, թէև իր կառավարութիւնն անհոգ էր, և մերթ չափազանց ներող, մերթ բռնաւէր։ Ակնոյ զատ՝ Սէտրիկ քաջ զգայեր էր որ սաքսօններու մէջ կատարեալ միաբանութիւն հաստատելու խորհուրդը, Ռովէնայի և Ամէլստէյնի ամուսնութեամբն, այժմ բոլորովին 'ի դերև ելած էր, երկու կողման փոխադարձ գժկամակութենէ։ Արդարև այս այնպիսի դէպք մ'էր, որ՝ սաքսօնեան դասին համար ունեցած եռանդէն, անկարող եղեր էր դուշակելու, և երբ երկու կողմէն գժկամակութիւնն յայտնի եղաւ, դեռ ևս դժուարաւ կ'հաւատար որ երկու արքայատոհմիկ անձեր, անձնական պատճառներով, մերժեն աղջին ամենօգտաւէտ միութիւն մ'ընելու։ Սակայն այս այսպէս էր։ Ռովէնա՝ միշտ Ամէլստէյնի դէմ իր հակակրութիւնը յայտներ էր, և այժմ Ամէլստէյն բացէ 'ի բաց կ'յայտնէր օրիորդ Ռովէնայէն հրաժեշտը։ Նոյն իսկ Սէտրիկի բնական յամառութիւնն այս խոչընդոտներու առջև նկուն մնաց։ Սակայն Ամէլստէյնի դէմ վերջին ուժեղ յարձակում մ'ըրաւ, բայց տեսաւ որ սաքսօնեան տոհմին այս յարուցեալ շառաւիղն, մեր օրուան գեղացի կալուածատէրներուն պէս, կղերին դէմ կատաղի պատերազմ մը բացեր էր։

Կ'երևի թէ Ս. Էտմնտի աբբային դէմ բոլոր այս արիւնալի սպառնալիքէն ետք՝ Ամէլստէյնի զայրոյթը մեղմեր էր, իր թոյլ և անհոգ բնաւորութեան և իր մօրը՝ Էտիթի աղաչանաց շնորհիւ։ Ամէլստէյն իր վրէժը կերպով մը հանած եղաւ՝ աբբան և վանականները Գոնինկսպրրիկի ընդանին մէջ երեք օր պահել և անոնց չոր հաց տալով։ Վանահայրն այս բռնութեան դէմ բողոքեց և սպառնաց զինքը բանադրելու։ Իսկ Սէտրիկ տեսնելով որ իր բարեկամը կրօնականաց դէմ հալածանք հանելով զբաղած էր, հասկցաւ որ անոր մտաց մէջ ուրիշ մտմտուք մը կարելի չէր գրգռել։ Ուստի երբ Ռովէնայի անունը յիշեց, աղնիւ Ամէլստէյն անոր կենդանութեան և Վիլֆրիտի հետ արագ միութեան համար մեծ գաւաթ մը պարպեց։ Հետևապէս յուսահատական էր խնդիրը. ակն յայտնի էր որ Ամէլստէյնը զգաստութեան բերելու հնարը չկար, կամ ինչպէս որ Վամպա կ'ըսէր, այնպիսի ոճով որ սաքսօնեան ժամանակէն մեղի հասած է, աքաղաղ մ'էր որ չէր կամեր կռուիլ։

Սէտրիկի հաւանութիւնը ստանալու համար երկու արգելք միայն կային երկու սիրահարներու միութեան դէմ. իր կամակորութիւնն և

նորման ցեղին դէմ ունեցած ատելութիւնը։ Այս արդելքներէն մին փոքր առ փոքր վերցաւ իր սանին դդուանքէն և իր որդւոյն առած հռչակին վրայ սկսանց ղդացած հպարտութենէն։ Սակէ զատ՝ իր գերդասանը մեծին Ալֆրէտի տոհմին հետ միաւորելու պատոյն անզգայ չէր, քանի որ այժմ Էտուարտի Խոստովանողին իրաւունքն արքայական գահին վրայ 'ի սպառ ջնջուած էր։ Սէտրիկի ատելութիւնը նորման ցեղին դէմ շատ սկարացեր էր, նախ՝ անոր համար որ անկարելի կ'տեսնէր Անկլիան անոնց լծէն ազատել, երկրորդ՝ անոր համար որ Ռիչարտ թագաւորն իր բնաւորութեամբը Սէտրիկի սիրտը շահեր և անոր ազատասէր բնաւորութիւնը սիրեր էր, այնպէս որ հազիւ շաբաթ մ'անցեր էր արքունիքը գալէն վեր, որ արդէն իր հաւանութիւնը տուեր էր իր սանուհի Ռովէնայի ամուսնութեան իր որդւոյն Ալֆրիտ Իվանոէի հետ։

Այսպէս միութիւնը հօրը կողմէն հաւանութիւնը ստանալէն ետև՝ մեր դիւցազնին հարսնիքն Եօրքի փառաւոր եկեղեցւոյն մէջ կատարուեցաւ։ Նոյն ինք թագաւորը ներկայ գտնուեցաւ այս հարսանեաց, և թէ այս թէ ուրիշ պարագաներու մէջ՝ մինչև այն ատեն ճնշուած խեղճ սաքսօններու ցոյց տուած յարգանքն անոնց աւելի ստոյգ յոյսեր տուին ապագային մէջ իրենց իրաւանց տիրանալու, քան ինչ որ կրնային յուսալ քաղաքական պատերազմի մ'անհաստատ արդիւնքէն։

Կիւրթ՝ որ շքեղօրէն հագուած էր, իբրև զինակիր իր նորատի տիրոջ կ'ուղեկցէր, որու այնքան հաւատարմութեամբ ծառայեր էր, և վեհանձն Վամպան, նոր զդակով և փառաւոր բոժոժներով զարդարուած՝ անոնց քովէն կ'քալէր։ Վիլֆրիտի վտանգներուն և ձախորդութեանց մասնակից գտնուեր էին արդէն, և այժմ անոր բարօրութեան մասնակից լինելու իրաւունք ունէին։

Այս երջանիկ ամուսնութեան երկրորդ օրն էր որ Էլկեթա նաժիշտը տիկին Ռովէնային գալով իմացուց որ նորատի օրիորդ մը կ'փափաքէր իր առջևն ելնել և առանձնակի խօսիլ։ Այս լուրը Ռովէնան զարմացուց, կատակի տարաւ, հետաքրքրութիւնը շարժեց և 'ի վերջէ հրամայեց որ օրիորդը ներս հրաւիրեն և նաժիշտները քաշուին։

Նորեկ օրիորդը ներս մտաւ. ազնիւ և մեծարելի կերպարան մ'ունէր. երկայն սպիտակ քօղն որով անձը պատեր էր, կ'ծածկէր քան կը պահէր իր հասակին վայելչութիւնն ու վեհափառութիւնը։ Իր գնացքը պատկառուտ էր, որ և է երկիւղէ կամ նուաստութենէ ազատ։ Ռովէնա միշտ պատրաստ էր աղերսներ ընդունիլ և այլոց վշտակիր

գանուիլ։ Ուստի ուզք ելաւ և սիրասուն այցելուն սթոռի մը պիտի առաջնորդէր, երբ նա Էլկեթայի նայելով նորէն նշանացի իմացուց որ Ռովէնայի հետ մենակ խօսակցիլ կ'փափաքի։ Այն ինչ Էլկեթա քաշուեցաւ ակամայ որ՝ 'ի զարմացումն Իվանոէի տիկնոջ, գեղանի այցելուն մէկ ուզքը ծունր դրաւ, ձեռքը ճակտին վրայ սեղմեց և գլուխը մինչև գետին ծռելով Ռովէնայի ոսկեթել պատմուճանին ծայրը համբուրեց, անոր գիմադրութեան չնայելով։

— Ի՞նչ կ'նշանակէ այս, տիկին — հարցուց զարմանահար հարսը — կամ ինչո՞ւ համար այսպիսի անսովոր մեծարանք կ'ընծայես ինձ։

— Վասն զի ձեզի, տիկին Իվանոէ — ըսաւ Ռեբեկա՝ ուզք ելնելով և իր արժանավայել հանդարտ վարմունքը պահելով — ձեզի պարտաւոր եմ իրաւամբ և առանց յանդիմանութիւն լսելու, իմ երախտագիտութեանս պարտքը վճարել, քանի որ կ'տածեմ առ Վիլֆրիտ Իվանոէ։ Ես (ներեցէ՛ք այս իմ հայրենասիրական նուիրատուութեանս ձևին) ես եմ այն ապերջանիկ հրէուհին որու համար իր կեանքը վտանգի դրաւ ամուսինդ այն Դէնբլոդովի ստսկալի մենամարտներու դէմ։

— Օրիորդ — պատասխանեց Ռովէնա — այն յիշատակելի օրն, Վիլֆրիտ Իվանոէն՝ իր վէրքին և թշուառութեանց դարման բերելու համար ցոյց տուած ողորմասիրութեանդ փոխարէնը հատոյց։ Խօսէ, միթէ նա կամ ես կարո՞ղ ենք որ և է բանի համար քեզի ծառայել։

— Ոչ ինչ — ըսաւ Ռեբեկա հանդարտութեամբ — միայն շնորհ ընէիք անոր հաղորդել իմ երախտագիտութեանս նուէրը։

— Ուրեմն Անկլիայէն կ'հեռանա՞ս — ըսաւ Ռովէնա՝ այս տարօրինակ այցելութենէ զգացած զարմանքն հաղիւ ուրեմն փարատելով։

— Այո՛, պիտի հեռանամ, տիկին, այս լուսինն իր շրջանն ընելէն առաջ։ Հայրս եղբայր մ'ունի որ Կրանատայի թագաւոր՝ Մոհամմէտ Պոապտիլի պաշտպանութիւնը կ'վայելէ, անոր հետ պիտի երթանք, խաղաղութիւն և ապահովութիւն գտնելու յուսով, և մահմէտականաց մեր ժողովրդէն պահանջած փրկանքը վճարելով։

— Միթէ Անկլիոյ մէջ նոյն պաշտպանութիւնը չէ՞ք վայելեր — ըսաւ Ռովէնա։ — Իմ ամուսինս մեծ ազդեցութիւն ունի թագաւորին մօտ, նոյն ինք թագաւորը վեհանձն և արդար է։

— Տարակոյս չունիմ, ազնիւ տիկին, բայց Անկլիոյ ժողովուրդը վայրագ ազգ մ'է, որ իր դրացիներուն հետ կամ ինք իր մէջ կ'կռուի և սուրն իրարու կողը մղելու պատրաստ կ'գտնուի։ Այսպիսի երկիր մը իմ ժողովրդեանս համար ապահով բնակութիւն մը չէ, Եփրայիմ վե-

հերմա աղաւնի մ՝է. Իզաբար շատ բեռնաւորուած ծառայ մ՝է, որ կրկին բեռի ներքև կ՝ճնշուի։ Խորայէլ չկրնար յուսալ հանգիստ գտնել, մինչդեռ քաղքէ քաղաք կ՝թափառի, այնպիսի երկիր մ՝ուր միայն աւրիւն ու կոտորած կ՝պատահին, շուրջ թշնամի գրայիներ կ՝երևին և ներքուստ քաղաքային կռիւներով կ՝պատառին։

— Բայց դու, հորատի օրիորդ — ըսաւ Բոլէնա — արդարև դու բանէ մը վախնալու տեղի չունիս։ Ան որ Իվանհօէի հիւանդութիւնը դարմանեց — յարեց նա խանդագին — Անկլիոյ մէջ վախնալու բան մը չունի, քանի որ սաքսօն ու նորման քեզի պատուելու համար իրարու հետ պիտի մրցին։

— Քու լեղուդ անուշ է, տիկին — ըսաւ Ռեբեկա — և խորհուրդդ աւելի անուշ. բայց անհնար բան է, մեր մէջ անդունդ մը կայ։ Մեր դաստիարակութիւնը, մեր հաւատը կ՝արգիլեն մեզ անկից անցնելու։ Մնաս բարեաւ։ Սակայն՝ մեկնելէս առաջ՝ շնորհ մ՝ըրէ ինձ։ Հայրապետաց քօղը դէմքդ կ՝ծածկէ. բարեհաճէ զայն բառնալու, և թոյլ տուր ինձ տեսնել այդ կերպարանդ զոր համբաւն այնչափ գովեստներով կ՝հռչակէ։

— Ուրիշներուն ակնարկը դրաւելու արժանի չէ — ըսաւ Բոլէնա — բայց չպիտի մերժեմ խնդիրդ, քօղս պիտի հանեմ սա պայմանաւ որ դու ալ նոյն շնորհն ընես ինձ։

Նոյն պահուն երկու քնին ալ իրենց քօղը հանեցին։ Բոլէնա՝ ամբողջապարտութենէ սեպէ, իր գեղեցկութեան ներքին զգայուն մէն սեպէ, այնչափ սառոիկ կարմրեցաւ, որ այտերը, ճակատը, վիզն և ծոցը ծիրանեգոյն դարձան։ Ռեբեկա՝ ևս շիկնեցաւ, բայց վաղամեռիկ էր իր այլայլութիւնն, զոր բարձրագոյն զգացումներ կ՝զսպէին, ուստի այս կարմրութիւնն անցաւ ինչպէս կ՝անցնի ծիրանեգոյն ամպն երբ զանի ներկող արևը հորիզոնն՝ի վար կ՝իջնէ։

— Տիկին — ըսաւ Ռեբեկա — այդ կերպարանդ զոր ինձ ցոյց տալու հաճեցար, ընդ երկար պիտի մնայ իմ յիշողութեանս մէջ։ Դէմքիդ վրայ անուշութիւնն ու բարութիւնը գրոշմուած են, և եթէ աշխարհային մնափառութեան կամ հպարտութեան նշոյլ մը այդ սիրասուն կերպարանիդ խառնուի երբէք, ինչպէս կարելի պիտի լինի զանգատիլ որ ինչ որ երկրային է իր ծագման գոյնը փոքր ինչ կ՝պահէ։ Երկար, երկար ատեն պիտի յիշեմ այդ կերպարանդ, և պիտի օրհնեմ զԱստուած որ կ՝թողում իմ աչքիս աղատարար միացած . . . :

Յանկարծ լուեց . . . իր աչքն արտասուքով լցան։ Իսկոյն զանոնք

արբեց, և Ռովէնայի մտահոգ հարցումներուն պատասխանեց. — Աղնիւ տիկին, շատ աղէկ եմ, բայց իմ սիրտս կ'ելնէ երբ Գօրդիլիպլինի և Դէնբլաղովի պայքարներուն վրայ կ'խորհիմ . . . : Մնաս բարեաւ : Բայց իմ պարտաւորութեանս մէկ ամենաթեթև մասը կ'մնար ինձ կատարել. ընդունէ այս արկղիկն, և մի զարմանար անոր պարունակած բաներուն վրայ :

Ռովէնա արծաթակուռ փոքրիկ արկղիկը բացաւ, մանեակ մ'ու օղեր տեսաւ անդամանդեայ, որոնք անտարակոյս մեծ արժէք ունէին :

— Անկարելի է — ըսաւ Ռովէնա արկղիկն ետ տալով — որ այս մեծագին պարգևն ընդունիմ :

— Ընդունէ զայն, ազնիւ տիկին — պատասխանեց Ռեբեկա : — դուք իշխանութիւն, աստիճան, զօրութիւն, ազդեցութիւն ունիք. մենք ունինք հարստութիւն, որ մեր զօրութեան ու միանգամայն տկարութեան աղբիւրն է. այս գոհարներուն արժէքը, եթէ տատնպատիկ լինի իսկ, չէ կարող քու ամենէն թեթև փափաքիդ հաւասարիլ : Հետևապէս՝ այս պարգևը քեզի համար թեթև արժողութիւն ունի, իսկ ինձի համար թեթևագոյն : Մի թողուր զիս հաւտալու որ ձեր ազգին պէս թշուառ գաղափար մ'ունիս մերինին վրայ : Մի թէ կարծես թէ այս փալփլուն գոհարներն ազատութենէս աւելի կ'գնհատեմ, կամ թէ հայրս անոնց աւելի գին կ'տայ՝ քան թէ իր զաւկին պատուոյն և կենաց : Ընդունէ զանոնք, ազնիւ Ռովէնա, ինձի համար անօգուտ են, վասն զի այսուհետև գոհարներով չպիտի զարդարուիմ :

— Ուրեմն ապերջանիկ ես — ըսաւ Ռովէնա՝ Ռեբեկային այս վերջին խօսքն արտասանելու կերպէն զարմանալով — ո՜հ, մեզի հետ կեցիր. մեր բարեպաշտօն մարդոց խորհրդով քու մոլար հաւատդ պիտի թողուս, և քեզի համար քոյր մը պիտի լինիմ :

— Ո՛չ, տիկին — պատասխանեց Ռեբեկա, որու անուշ ձայնին և դեղանի կերպարանին վրայ նոյն հանդարտ արտմութիւնը կ'տեսնուէր — այդ չկրնար լինիլ. չեմ կարող իմ հարցս կրօնը փոխել իբրև հագուստ մ'որ անյարմար է իմ բնակած երկրիս, և այսպէս ապերջանիկ չպիտի լինիմ, տիկին : Ան որու պիտի նուիրեմ իմ կեանքս՝ իմ միութարս պիտի լինի, եթէ անոր կամքը կատարեմ :

— Ուրեմն վանքեր ունիք, քանի որ անոնց մէկուն մէջ քաշուելու դիտաւորութիւն կ'յայտնես — հարցուց Ռովէնա :

— Ո՛չ, տիկին — ըսաւ հրէուհին — բայց մեր ժողովրդեան մէջ, Աբրահամու ժամանակէն գտնուած են կիներ որ իրենց սիրտն Աստու-

ծոյ նուիրած են, և պթուրթեան գործեր գործած են, հիւանդները խնամելով, աղքատները կերակրելով և դժբաղդները միխիթարելով։ Ահա ասոնց կարգը պիտի անցնի և Ռեբեկան։ Այս բանս ըսէ ամուսնոյդ, եթէ երբէք դիպուածով կամենայ իմանալ այն անձին ճակատագիրն որու կեանքն ապատեց։

Ռեբեկայի ձայնին մէջ ակամայ դողմը կար, և այնպիսի գորովալիր շեշտ մ'որ թերևս իր ուզածէն աւելի սրտին այլայլութիւնը պիտի մատնէր։ Ուստի փութաց Բոլէնայի իր հրաժարական բարևը տալու։

— Մնաս բարեաւ — ըսաւ նա։ — Երանի թէ Այն որ հրէայն և քրիստոնեայն սաեղծեց՝ իր ընտրելագոյն օրհնենքը թափէ ձեր վրայ։ Նաւն որ մեզ պիտի տանի, մեր նաւահանգիստը հասնելէն առաջ առաքաստները բացած պիտի լինի։

Սենեկէն դուրս սահեցաւ Ռեբեկա, թողլով Բոլէնան հիացած որպէս թէ իր առջևէն տեսիլ մը նուաղեցաւ։ Գեղանի սաքսօնուհին այս տարօրինակ տեսակցութիւնն ամուսնոյն պատմեց, որու մտքին վրայ խոր տպաւորութիւն մ'ըրաւ։ Բոլէնային հետ երկար ժամանակ ու երջանիկ ապրեցաւ Իվանօէ, վասն զի իրարու հետ կապուած էին մանկային վաղեմի կապերով, և այնքան աւելի զիրար կ'սիրէին որքան որ կ'յիշէին իրենց միութեան դէմ կանգնող խոչընդոտները։

Իվանօէ երևելի հանդիսացաւ Ռիչարտ թագաւորին ծառայութեան ներքև, և արքայական պաշտպանութեան նոր նոր փորձեր վայելեց։ Թերևս աւելի պիտի բարձրանար Իվանօէն եթէ Առիւծասիրտ դիւցազն Ռիչարտի վաղահաս մահը չպատահէր. Լիմոժի մօտ, քէլոսի բերդին առջև։ Այս վեհանձն այլ յանդուգն և ասպետական թագաւորին կենաց հետ կորան այն ամէն խորհուրդները՝ զոր իր փառասիրութեամբ և մեծանձնութեամբն երևնած էր։ Կարելի է, թեթև փոփոխութեամբ մը, Շուէտի Կարոլոս թագաւորին համար ճօնսընի յօրինած սա քանի մը տողերը Ռիչարտի յատկացընել։

Տար երկիր պիտի գանէր նա իր մահ,
Փոքր բերդի մօտ և ձեռք անդէպ.
Թողուց համբաւ մ'որով դողայ աշխարհ
Որ լինի հրահանգ, կամ զարկէ Պի վէճ։

ՎԵՐՋ

ՀՀ Ազգային գրադարան
NL0171013